նութիւք ևկատարելութիւք։ Երկինք պատմեն զփառս
նոյ, սոյնպէս և որ կոյսն յայտնեաց զնոյն ամ ծին։
Երկինք են բարձր, և անապական. սոյնպէս և
որ կոյսն։ Երկինք են անմատչելի չարաց, սոյնպէս
և որ կոյսն։ Երկինք պարսնակէ զաւմ, սոյնպէս
որ կոյսն պարսնակէ զաւմ հնորհս, զաւմ իմաս-
տութիւն, զաւմ գթութիւն, ևն. Թող զայն՝ զի պա-
տուհակեաց յինքեան զայն՝ որ զաւմ պարապէր՝ այ
գաւծ։ Երկինք բոլորակութիւք իւրով պատէ զերկիր
կիսոց հանդերձ. սոյնպէս և որ կոյսն ողորմութիւք և բա-
րերարութիւք իւրով պատէ զաւմ երկիր։ Երդ ոչ տ-
վորութիւն է մարդոյ ՚ի կոչելն զաւծ՝ զայնս յեր-

կինս

կինս ամբառնալ, այլ՝ զի ոչ միանգամ կամիցի զնա կոչել և յայլ զաղբմունեն խնդրել, պիտոյ է նմա համբառնալ զաչս իւր յայս երկինս, այսինքն՝ ի ոգի կոյսն. (տես և՝ի Ճառն. Ե. Հատ. է. 7։) Յերկնից առուն ծագին մեզ ամ բարիք. միանգ զի նոյն ինքն անհուն բարին՝ ի սմանէ ծագեցաւ. * ի ծագումն երկնից են ելք նր ։ (սաղ. ԺԷ. 6։)

Ոնաւ ոգի կոյսն և իբրև ամպ ըստ բազմապատիկ նմանուեց. ամպն է մայր անձրևոյ և ցօղոյ. սուրբ կոյսն մայր ընդհաց և գթածեաց՝ ևս և ցօղոյն կենաց. ըմ * ցօղոյն հանդարտի ամպ անձրևաձիւք ։ (նարե. կ։) Ամպն է՝ի բարձունս. այլ և ոգի կոյսն՝ի բարձրուէ ընդհաց և այլոց կատարելութեց և գերազանցուեց. նաև զի ցօղական յերկրի էր՝ ի բարձունս քաղաքավարեր. և այժմ՝ի նոյն իսկ՝ի բարձունս փառաւորի։ Ամպն զովացուցանէ զտապացեալն յարեգակնէ. այլ և ոգի կոյսն միջնորդութեբ իւրով զովացուցանէ զմեզ՝ յարժամ բարկութեն արեգականն արդարութե ապառնայ կիզուլ. * սիրեաց ամպ՝ հովանի առնել նմ (՝ի տապիլ նմ) ՝ի տօնէ ։ (սաղ. Ծ. 39։) Ամպն յարմար ենթակայ լինելով՝ եդ՝ի նմա ամ՝ ի ժամանակս ջրհեղեղի զծիածանն, որ է ծնօնդ արեգական և իբր պատկեր նր՝ ՝ի նշան հաշտութե. այլ յարժամ հեղեղաս մեղաց կորնչելոց էին մարդիկ՝ եդ ամ՝ի ոգի կոյսն իբրև յամպ զիւր ծնօնդ և զպատկեր, յոր զմիածին որդի իւր. որով էզձև հաշտուի ըստ ամ և ըստ մարդիկ։ Այս այն ամպ է, զորմէ դրէ մարգարէն (էսայ. ԺԹ. 1.) * ահաւասիկ տէր նստեալ ՝ի վրր թեթև ամպոյ եկեսցէ յեգիպտոս ։ Նովաւ եկն յեգիպտոս և նովին դարձաւ յերկինս իբրև. (մատ. ը. 21.) Վա զի նովաւ եկն յ՞ց, և՝ի ձեռն նր

դալ-

դարձան մարդիկ յեդիպտոսէ կռապաշտութենեն յերկիր ուծապաշտութեան ։ Ոնաւ՝ որ կոյսն ևս և իբրև մատեան կի՛ դիրք ուծային իմաստութեան . և ըստ նարեկացւոյն իբր * մատեան մեծուն ընտրհիւ նկարեալ ‖ . և իբր * օրինի ստուերին տուր ձեմալ տաձառ ‖ . այլ մատեան՝ լրմամբ ձեմարտութեան՝ յայտնիչ խորհրդոյ հին օրինացն ։ Մատեան և դիրք այնպիսի՝ ըստ արտադրեալ միտքն ուծային . վ՛ը դիրքն մտօք արտադրի ։ Ու ըստ այսմ ծնունդն մարիամու նմանութ իմն համ մատի ծննդեան բանին ուր . նա՛ի մտաց՝ անատեղծ ծննդեամբ , սա ևս՛ի մտաց ստեղծական ծննդեամբ ։ Այլ արարածս յառաջ բերէ կարողութեն ուր , և միտքն ասէ զգալ զաւիարն . իսկ զորդին յառաջ բերէ միտքն ուր , և կարողութեն համընթաց լինի ։ Այնպէ և՛ի ծնանիլ նր զայս աբանչելի խորհրդաւոր գիրս՝ միտքն յառաջ եբեր , և կարողութեն՛ի գոյութի եաճ ։ Այ՛ եբ ծնանիմք իբրև քարտէզ կի՛ իբրև Թուղթ * Թուղթ մեր դուք եք ‖ . (բ. կոր. գ . 2.) իսկ ըբ կոյսն իբրև գիրք , որ գաւմ Թղթոց , այ գաւմ մարդկան կատարելութի բոլանդակէ յինքեան ։ Յարգուի գրոց չափի և՛ի հեղինակէն . արդ հեղինակ այսր գրոց է անհուն իմաստութին ։ Ոչիմ ինչ գրեալ կան՛ի գիրս յայս . մեք միայն զգեղեցկուի կազմուածոյն տեսանեմք . բայց ամ բանք իմաստուե գրեալ են՛ի միջի . նա և նոյն ինքն անսահման իմաստութին ։ Ստորագիր այսր գրոց նոյն է որ կայ գրեալ յաւետարանի . * դիրք ծննդեան յի՛ քի ‖ . և վերջաբանութիւն սր է . * յորմէ ծնաւ յա , որ անուանեցաւ քս ‖ . դիրք մեծ և աբանչելի . սկսանի ըստ ծննդեանն յի՛ քի , և աւարտի ըստ ծննդեանն յի՛ քի ։ Ի՛ բանիլ այսր գրոց բացեալ լինի և մեզդուն ողորմութե . (յայտ.

Ե .

Է. 1 = 6.) Այնչափ մեծ համարի եկեղեցի սուրբ
զծնծայիլ ՚ի լոյս այսր մտանելն , մինչև զնոյն աւե_
տարան ընթեռնուլ ՚ի ծննդեանն ն̄ր և ՚ի ծննդեանն
ն̄ր . այն է * գիրք ծննդեան յ̄ի ք̄ի || ։ Ի այս այսմ
առնելով գրեթէ նոյնապատիւ համարի զծնունդ
երկաքանչիւրոցն, ոչ ը̄ ինքեան՝ այլ ը̄ միաբերութե.
յայս սակս սարգիս յերապօլսեցի աս՝ թէ զնոյն գո_
վասանու՛ ընծայեմք ծննդեանն ն̄ր և ծննդեան
մարիամու մօր ն̄ր ։ Որ զայլ ինն ես ՚ի մէջ բերէ
յուլհան ոսկեբերան ը̄ այլ իմն յարմարութե ասելով՝
թէ ծնունդ ն̄րյ կուսին նմանութի ինչ ունէր ծննդ̃ն_
դեան մեծի հովուէ ինն, ն̄ յ̄ի.վ̄ զի համարի ոսկեբե_
րան և այլք ոմանք թէ ծնօղք սրբոյ կուսին ու_
նէին հօտս և հովիւս , և ՚որ կոյսն ծնաւ ՚ի մէջ
ն̄ց . ոչ եղև ՚ի ժամի ծննդեանն յ̄ի , որում մերձ
էին խաշինք և հովիւք ։ Զայն գիտելով և աւե_
տարանչին յայտ առնել՝ ՚ի կամին խօսիլ զծննդենէ
նորա ՚ի մէջ բերէ զծնունդն յ̄ի նախադրեմ բա_
նին զ՝ թէ * յորմէ ծնաւ յ̄ս ||.

Է. Արդ՝ այսմ սքանչելի ծննդեան սպասէր Ե .
սուլաւ փափաքէր ցնծալ . ՚ի սոյն հառաչէր , և
զսոյն տեսանել ցանկայր . յոգւոյն վիճակի էր .
հեծէր և լայր և լսել ցանկայր զաւետիս նորա ,
ոչ որ ՚ի գիշերի նեղեալ գոլով սպասիցէ լսել զձայն
խօսնակի . որոյ վ̄ն կոչէ զնա նարեկացին . * գիշե_
րային մթոյն խօսնակ բերկրանաց ||. եհաս ժամա_
նակին,և լուաւ զաւետիսն.ետես ծնեալ յինքեան զ̄որ
կոյսն , և ցնծացաւ . զի գիտէր՝ թէ ն̄ր միջնորդու_
թե̄ հանդերձեալ է նորոգիլ և իբրև թէ նորոգ_
ծնանիլ . վ̄ն զի * սա ծնանի , և Ե ընդ սմ նորոգ_
ծնանի ||. ասէ սարգիս յերապօլսեցի ։

Ցնծայ այսօր և երկինք ՚ի վերուստ . վ̄զի ետես
՚ի

'ի վէր երկրի երկինք նոր. ցնծան 'ի միասին և սրև և լուսին, և այլ աստեղքընդ նոսին. յորոյ 'ի նշան ըստ դրելոյ Թէոփիլակտոսի, 'ի ծնանիլ անդ տեղ կուսին * արեգական կրկնապատիկ լուսով ձառա ,, գայթեաց, և լուսինն պայծառութիւն արևու ,, վայելեաց ‖ : Ցնծայ և երկիրս. վասն եռես թէ ծնեալն ոչ է ըստ անիծիւք իւրովք, այլ օրհնել յամենայնի երրորդուէ և հաստել Աշմարիտ պատ ,, ճանդան ոտից նոյ. ըստ ասացելումն, Թէ * երկինք ,, (ասէ) աթոռ իմ են, և երկիր (ոյ կոյն տեղ) ,, պատուճանդան ոտից իմոց ‖. (եսայ. կէ. 1։) Երկիր լի ողորմութիւ. ըստ սաղմոսին. լէ. 5. երկիր հաստատեալ բանիւն նոյ՝ զի մի սասանեսցի յաւիտեան. սաղ. ղէ. 2. երկիր այնպիսի՝ որ հանդերձել էր բուսուցանել յիւրմէ զողորմուն անսահման. ըստ (եսայ. խե. 8.) * բղխեսցէ երկիր զողորմութիւն ‖։ եռես դարձեալ՝ զի ասէ պահել զերկինս վասն ինքեան՝ 'ի բնակիլ՝ եռ զերկիր որդւոց մարդկան, ոմանց զոր ծեսցի 'ի նոցանէ. իսկ զոմն կոյն եռ նոյ՝ զի դարմանեսցէ և պաշտպանեսցէ զնոս. ըստ. * երկինք երկնից նոն են, և զերկիր եռ որդւոց մարդկան ‖ սաղ. ճժդ. 16. կիբ 24։) Դարձեալ եռես՝ զի նոր ինն դրախտ երևեցաւ 'ի վէր նոր. ինքն՝ վասն կորուսանելոյ զա ռաջին դրախտն զորմէր և զտերէր. 'ի զոտանէն ասպա զոս՝ յուրախութիւն ի խեցաւ. մանաւանդ զի եռես և՝ զի վերընձիւղել բուսաւ 'ի վէր նոր ծառն կենաց, որոյ պտուղն ունէր կենդանացուցանել զամ երկրաւորս։ Դատես և յինքեան զայնպիսի ոյժ՝ զոր տնկեաց աջ հայր վայելուչ և անսխալ (սաղ. հձ. 16.) ըստ որ հայեցեալ դատերայն ե ւայն՝ սկսան ցնծալ և ծաղկամբք առաքինու թեաց զոհարձանալ, և առ միմեանս դոչել. * այսիքն մեր

ծաղ-

ծաղկեցան. և ետուն զհոտս իւրեանց ‖ . (եբգ. ը. 13 ։) Այսես դարձեալ զի ոչ կոյսն Թէկլէ և երկնից ծնանի, քանզի ծնանի յիւր վը. տղայ զի օրհնեսցէ զինքն, և ժառանգեսցէ ՚ի փրկութէն ։ ՚Ի վաղ ժամկս յորժամ իրաւապէտք վճիռ հատանէին վ՚ը ժառանգութէ երկրի, ստացող երկրին ոսկեք զերկիրն զայն՝ ՚ի նշան ժառանգելոյ. ըզայն սմին և ոչ ոք կոյսն յերկրի ծնանելով և զերկիր կոխելով՝ ստացաւ զայն ՚ի ժառանգութէ ։ Եթէ Թանուք ՚ի ծնանիլն զորդի դնէին զայն ՚ի վը երկրի՝ ՚ի գուշակել՝ Թէ յերկիր դառնալոց է. իսկ ՚ի ծըննանիլ՝ որ կուսին՝ ՚ի վը երկրի՝ ծանեաւ երկիր՝ Թէ նա չէ դառնալոց ՚ի հող, այլ Թէ լինքն երկիրն հանդերձեալ է ընծայել զնա երկնից ։ Ընծայ այսօր և ծուխ կենցաղոյս. վ՚ը զի երեւեցաւ քաղցրացոյց զիչխ. որում մարթէ տալ տարացոյց ինչ փոխադարձական. ասէ զլուտարքոս, Թէ յորժամ բարձաւ Յէ դիոնեսիոս բռնաւոր սիկիլիոյ՝ ջուր ադրիատիկան ծուխն քաղցրացաւ. եթէ ՚ի բառնել Յէ բռնաւոր Թդէի այսպիսի ինչ եղև, որչափ ևս ՚ի մտանել Յ՚ն աստիճան Թէհնոյ. որ ծնեալ եղև վ՚ը քաղցրացուցանելոյ զդառնութէն ծուխս կենցաղոյս, զոլով լինքն ասաղ ծուխս ընծանակուն անուշան իւրոյ. ոմն ասացաք ՚ի վերոյ ։ Ընծան այսօր և կանայք. վ՚ը զի ևհաս սիրելիչ իւրեանց։ Յառաջն յանհնարին ամօթ պաշարէէին. որով հետև մարդիկ ՚ի ձեռն կնոջ հասին ՚ի Թշուառութէն մեծ. որոյ վ՚ը առ ամենին մեղադրելի էին սերք կանանց ։ Վ՚իտէին ևս նոքին իսկ կանայք Թէ միջնորդութէ կնոջ գալոց է փրկիչ Յ՚ն. ապա յորժամ տեսին՝ Թէ ծնաւ նա, ծնաւ և ընծութէ

մեծ

մեծ՝ ի սկզբան նոյն։ Յնմին այսօր ադամ և եւայ. վ՚ա զի ծնաւ բարձոյ անիծիւ նոյ. ծնաւ և փարաթիչ տրտմուե նոյ. ծնաւ և աւետաւորն երանելի նոյ։ Յորժամ մեղաւ ադամ և եւայ՝ բարձաւ ի նոցանէ սկզբնական արդարութիւնն. բայց ոչ բարձաւ ծննդականութիւն. որով կարելի եղեւ՝ զի ծնցի ի նմանէ այնպիսի ոք՝ որ դարձուսցէ առ նա ըզկորուսեալ արդարութիւն, կիճ ղերանութիւն. և լինի նոյ փառք պարծանաց. ուստի յորժամ տեսին զծնունդ նր՝ (այր կուսին), անսպառում ցնծութիւն ունեցան։ Այլ թէ քանի մեծ էղեւ ադամայ և եւայի երեւումն այսր ծննդեան՝ ինքեանք իսկ անկարանային յայտնել. ինքեանք ի մահ ծնանի զորդիս, իսկ նա հանդերձեալ էր ծնանել զնոս և զորդիս նոյ ի կեանս. կամ ոմն ասէ դուերիկոս աբբայ. (Ձառ. ա. յայլ. ծնն. մար.) * ծնեալոցս ի մահ տացէ ծնանիլ ի կեանս ։ Եւս դարձեալ նոյն դուերիկոս. * ծնաւ այսօր նոր մայր, զի ,, ջնոյց մեր զանէծսն լուծանիցէ. օրհնութիւն ,, ժառանգուի յաւիտենական կենաց ստանան նք՝ ,, ոչք անիծիւք նր ծնան ի նեղջոյ յաւիտենական ,, անիծից...նոր մայրնոր սքանչելեօք ծնեալ՝ առ ի ,, կուսութ ծնանել զայն՝ որ արար զնմա և զնա ,, ինքն զմայրն (որ ծնաւ այսօր)։ Եռաւել քան զառաւել ցնծացին այսօր նոքին իսկ ծնօղքն մեր կուսին յովակիմ և աննա. վ՚ա զի յայտնացի տեսին զի չինքեանս լրացաւ ակնկալութիւն ամին. և ինքեանք եղեն այնպիսի երկիր, յորմէ բուսաւ օրհնեալ ծառն այն՝ որոյ հովանաւորութ ունեցին զովանալ ամքն։ Այսօր և նա ինքն աննա ըն նշանակութ անուանի իւրոյ շնորհք եղեւ լսելոց նմա՝ ծը-

նանեալոյ զտիրուհի մի՛ ի միջ ՚ծի, ուստի ասէ գա-
մասկացին (գիրք· ՚ճ· յաղ ուղղ· հաւատ· գլ· 15·)
*ընարհքն ծնաւ զտիրուհին · վ՚ա զի աննա ընարհք
,, թարգմանի, և մարիամ (աստղերկն) տիրուհի՚։
՚Ընծայաւ և ընծայ այսօր և բնուհս մարդկային,
որ կարաց զայսպիսի կենդանի արձան գործել·
ըստ որ հիանալոյ յովհաննու դամասկացւոյն (ճառ·
ա · յաղ· ծնն · կուսին ·) ասէ · * ո՛ կենդանի ար-
,, ձան ՚ընծային , առ որ էկն Ճարտարապետն ՚ամի
,, ՚ընծ· արդարև կենդանի արձան ունող ՚ընծէղէն
,, մտայ, (և ոչ դատարկուն՚ոյն են այլ արձանք)՚։
կիմ ըստ նարեկացւոյն ասացից · * արձան անձնա-
կան լմաստիւք զօդեալ ՚։ ՚Ընծայ դարձեալ՝ զի
կարողացաւ զայսպիսի հրաշս երևեցուցանել· առ
որ հայելոյ ասէ նոյն դամասկացին ՚ի յիշատակել
տեղւոյ· * ո՛վ հրաշք՝ ՚ամ հրաշից նորագոյն · ծնա-
,, նի իբր կին՝ բայց քերովբէից գերագոյն · ո՛վ
,, կոյս ընարհօք ընարհեալ յայլ յուրախուն մարդկա-
,, կինս բնուհ՚։ ՚Ընդ այսոքիւ ոչ միայն ուրախացաւ և
ընծացաւ բնուհս, այլև զարմացաւ ևս։ ՚Ի հացաւ
մահ ՚ի յետին շունչն քոյ · վ՚ա զի ետես՝ զի որք
ըստ ձեռամբ իւրով էին մեռեալքն՝ յառնէին։ ՚Ի հա-
ցաւ և բնուհն ՚ի նախկին շունչն մարիամու · վ՚ա զի
ետես՝ զի ծնեալն չէր իբրև զայլս, այլ յարատեալ
սերմանէն ադամայ անարատ անօթ կազմեալ ։
Ել զարմացաւ ՚ի ծագել հրեշտակաց առանց յան-
ցանայ, զի են անապական բնուհք· զարմացաւ ՚ի
ծագել ՚ընդ կուսին ՚ի յադամայ՝ կարծրացեալ
իբրև անդամանդ՝ առ ՚ի նորոգուհն իւրոյ խա-
խուտ որմոյ և քայքայել չինուհծոյ։ Ցատուհեաց
այսօր ՚ընդ կոյսն մարիամ զ՚ամ ծնունդս վատա-
բախտ բնուհթեա · պարծանք էղև ՚ամին · ՚ընդ

զբերանս քաղցրեցուն ի ցնծուէ. և քարձրացոյց զսիրտս ամէն ի մխիթարուէ և ի փրկուէ։ Ա՛ռ տիցուք այժմ խօսիլ և զանկշռելն ընդհաց նէ։

ՅԱՏՈՒԱԾ ԵՐԿԱՐՈՐԴ։

Թէ ո՛րտեղ ընդհօդ ծնաւ ոբ կոյսն Մարիամ, և ո՛րտեղ ընթացաւ ի նոյն՝ տեղ պատրաստեցաւ։

Ը. Որ միանգամ ծնանի ի վէր երկրի՝ կարդի յայ առ վախճան ինչ, կամ առ գործ ինչ, կամ առ պաշտօն, ոմն կայս և ոմն կայն. ուրեմն և ոբ կոյսն ի ծնանիլն անդ կարգեցաւ և կարգել իսկ էր ի յաւիտենից առ յայ առ վախճան ինչ կամ առ պաշտօն ինչ, այ առ ածամայրուի. բայց զի սահմանել էր զնա ածծ ի ծնանիլ զածծ, և այնու լինիլ մայր այ, կայսմ չիք երկբայուի. ըստ որում և իրօք եղև։ Վասդ որ կարգի առ վախճան ինչ կայնժամ հասանել ի նոյն, յորժամ ունի զկարմար միջնորդս նորին. որ յորժամ փայտ ինչ կարգի գառնալ ի հուր, կայնժամ հասանել ի նոյն այ ի հուր լինիլ յորժամ ունի զկարմար միջնորդ. այ յորժամ ստանայ զայնք ջերմուէն, որով կարմար լինի գառնալոյ ի հուր. ապա թէ ոչ՝ ոչ հրաստնայ. ուրեմն և ոբ կոյսն զայնք ինչ պարտ էր ունել՝ որով կարօղ լինէր զածծ ծնանել և ածամայր լինել. կամ այսպէս ասացից՝ զայնպիսի ինչ պարտ էր ունել՝ որ լինէր կարմար տրամադրուէն առ ածամայրուէն։ Թէ։ Թող այս կարծիք իրս ոչ կարէր այլ ինչ լինիլ՝ եթէ ոչ ընդհօդ հոգւոյն ոբ, որ և հաղորդուի ածնէ ոչն բնուէ. որ հանգոյն ջերմութեան տրամադրէր

դրէր

դրեր զնոր կոյսն, և վերացուցաներ առ Ճշմարիտ
րուն։ Նոյն արդ արժանապատուհուն Ճշմարտութե
կիս ծնանելոյ զնա կիս լինելոյ Հշմարիտ մայր նա,
ըս Ճշմարտին՝ ի վեր ե՛ք զնա կարգ արժանա
պատուհուե ստեղծուհածոց, և փակէ լինքեան զան
հնուի և զանչափուի ինչ. (ոյզ ունիմք ցուցանել
ի Հառն աւետման յՀնջաբան. և ի հատ. ք.) ու
րեմն և ընորհք Հոգի կուսին Հասանելոց էր յայն ա
տիճան, որուհ ոչ լինէր դնել չափ ինչ. ոյզ զի
լոյն յարմար այնմ կարգի արժանապատուհութե,
ք զոր աւելի ոչկարէ տուհել լինիլ սոսկ ստեղծուհա
ծոյ. * լինիլ մայր նա (ասէ ալպերտ. Ք. 4.) և
„ այն ք մեծագոյն պատիւ՝ որ ոչ կարէ Հաղորդիլ
„ սոսկ ստեղծուհածոյ. ուստի Հարկ է (ասէ) զի
„ ընորհն որ պատրաստէ առ այս լոյն մեծագոյն ք
„ զնա՛ր ընորհս սոսկ ստեղծուհածոյ ։ Հայեցուք
այժմ ի սկիզբն կամ ի սկզբնաւորութե ընորհաց
Հոգի կուսին, յայն ասեմ՝ որ Հասանելոց էր ի վեր
ջին չափ կատարելութե իւրոյ։ Հայտ է թէ
սկզբնաւորութե իրին պարտի լինել Համաձայն
կատարածի նորին. զր սկզբնաւորուի պատկերի
պարտի յարմար լինիլ կատարածի պատկերին.
կամ այսպէս ասացից՝ ուրուհականն զր թաւալման
պատկերին պարտի ունիլ զյարմարուի ընդ կատա
րելոյն. եթէ աւարտել և կատարել պատկերն՝
լոյ պատկեր ծննդեան, ակաուհածն ևս պարտի
ունիլ զձև պատկերի ծննդեան. եթէ լոյ պատ
կեր խաչելուե՝ զձև խաչելուե։ Արեմն և սկզբ
ուհած ընորհայ Հոգի կուսին լինելոց էր յարմար
կատարածի ընորհացն. և ըստ չափ կատա
րածին ի վեր է քան զնա չափ, և Հայի ի կարգ
Ճշմարտութե, որ է յաստիճանի անՀուն արժա

նապատուհանքն, ապա և սկսուածն լինելոց էր յայն ձև յարմար կարգի ածամայրուն, այնչափ և այնպէս՝ զի բնաւ ո՛և իցէ շնորհք որչափ և իցէ՝ ոչ կարիցէ հասանել՝ ի չափ նորին, այլ մնալ՝ ի խոնարհ քան զայն ըստ համեմատուն. ըստ որոյ որչափ շնորհս ունէին հրեշտակք, սրչափ շնորհս ունէին ադամ և եւայ, և այլ նահապետք և մարգարէք, ևս և որչափ շնորհս ունէին առաքեալք և այլ սրք, նաև որչափ շնորհս ունին այժմ և ունելոց են քահանայուքն՝ քանական ստեղծուածոց, եթէ բոլորն՝ ի միասին առեալ լինէր ըստ համ կատարելութեանց, ոչ հասանէր՝ ի սկզբնաւորուն շնորհաց Որդոյ Կուսին, այլ անհամեմատաբար՝ ի խոնարհ մնայր։ Եւ այս է անսըտելի վկիւռ ածաբանից. որոյ պատճառն է այսպէս՝ զի այլոց շնորհք ոչ էր կարգեալ առ իրական ընդունելուն անհնուն՝ ի կարգ ածամայրուն. իսկ սկզբնաւորուն շնորհաց Որդոյ Կուսին (ոյր աստուածք), կարգեալ էր առ իրական ընդունելուն ածամայրուն, որ ունի չինքեան զանհնուն արժանաւորուն։ Եւ ոյր զի առաւել զարմանալի ցուցցի աստուածն՝ հանցուք զբան մեր՝ ի բաղդատուն հրեշտակաց՝ զոր յիշեցաք. ըստ աւանդելոյ դիոնեսիոսի արիսպագացոյն և Թովմայի աքուինացւոյն՝ թիւ հրեշտակաց անհամար է. որոյ վասն՝ ի գիրս յոբայ (իե. 3.) ասի ընդ այլում Թարգմանուն. * իսկ թիւ զօրացն ո՞չ կայ նոր ‖. ուստի՝ զբ զիրք կամելով ցուցանել զանհամար լինիլ նոցա՝ ի բաղմ առեղիս ասէ Թէ են * հազարք հազարաց, և բիւրք բիւրուց ‖։ Արդ յանհամար բազմուե իւրեանց մի քան զմի՝ ի վեր են. ոմն Թիւդ երկու՝ ի վեր է՝ քան զմին, և Թիւդ երեք քան զերկուսն, և չորս քան զերեքն. ևն.

ոմն

ոմն տեսանի նաև՝ ի Թուճանշանս այր՝ ի ոտիսաժն՝ ի գրելն 1. 2. 3. 4. 5. 6. 7. 8. 9. 10. 11. 12. ևն, մինչև՝ ի հազարս ցհազարս։ Եւ ոմն՝ ի վեր ևն ոտքս (այր հրեշտակք) մի քան զմի քննութ, սոյնպէս՝ ի վեր ևն և ընտրհօք. մինչդմի ընտրհք վերնոյն փակէ յինքեանս և զընտրհս ստորնոյն. ոմն Թիւնս եօթն՝ փակէ յինքեան զվեցն, ևս զհինգն, ևն։ Այսուհետև այժմ՝ Թէ ուրեմն լինելոց էին ընտրհք ամենեցուն ։ Ասէ առն և ցուցանեն ածաբանք, Թէ այս ամ ընտրհք ևս և ընտրհք այլոց ամենն՝ համանման՝ ի միասին առնել, ոչ հասանեն յաւուրսն աստիճան ընտրհաց ոչ այլ կուսին, կամ առաջին ընտրհն՝ զոր ոչ կոյսն ստացաւ յաւ ուրսն վայրկենի՝ յորում յղացաւ յարդանդի ոչն աննայի ։ Եւ վ՚ս այսպիսի լինն գոլոյ, առաւել մեծ և յարգոյ էր առաջի ամ այս սկզբնաւո րուն ընտրհաց, քան այնքան ընտրհք այլոց և կատարելութիք նոցին. կամ այսպէս ասացից՝ առաւել հաձէր ածէ ըստ այս սկզբնաւորուն ընտրհաց՝ ի ոչ կոյսն, քան ըստ այնչափ լրուն ընտրհաց ոչ ։ Եւ զայս դեղեցիկ լինն նմանաբանութ ցուցանէ մարգարէն ըստ մեկնչին՝ յայն բան զոր ասէ* Հիմունք ,, նէ՝ ի լեառն ոչ նէ. սիրէ ամ զդրունս սիոնի ,, առաւել քան զամ յարկսն յակոբայ։ (սաղ.ձչ.1)։ Այս լեառնս է քարձրագոյն կատարելութիւն ընտրհաց այլ ամ ոչց միանգամայն առնէ՝ ի վեր այսոր քարձրութ ոչ է ասէ հինն ընտրհածոյ՝ այր սկզբնաւորուն ընտրհաց ոչ կուսին. (ըստ որում հինն է օրինակ սկզբնաւորութիք) . մինչդմի ուր աւարտի վերջին քարձրութիւն կատարելութիք ընտրհաց նոյ, անդ սկսանի առաջին կատարելուն ընտրհաց ոչ կուսին ։ Եւ այս այնչափ մինչև առաւել սիրել ամ զդրունս՝ այսինքն զայս սկզբնաւորուն ընտրհաց

սիոնի՝ ի՞ր ոբյ կուսին, քան զնա՛մ յարկիս յակո-
բայ, ի՞ր քան զնա՛մ լըսացէլս և քան զնա՛մ յարկէլս՝
որք արդէն կատարէ՛լ են և աւարտե՛լ ի՛ ընորհս-
վ՛ս զի յարկին զայս ցուցանէ՛ս. եթէ արդարև քան
զնա՛մ յարկիս աղգին յակոբայ՝ յորում երևեր եկե-
ղեցի՛ այ, ո՛րչափ ևս ք՛ զայլ նա՛մ յարկս։ Օ՛՛ր պատ-
ճառն ևս տայ մարգարէն ասելով. * զի մարդ
ծնաւ ի՛ նի՛ ||. ի՞ ա՛ծ մարդացե՛լ ծնաւ ի՛ նի՛՝ ի՛
ոբ կոյս. յոր յաւելու ասե՛լ, * ինքն հիմունս
էարկ նմա բարձրեալն ||. իբրպի ինքն բարձրեալն
միայն կարօղ եղև զայսպիսի ամենամե՛ծ սկզբնա-
ւորուն ընորհաց՝ դնե՛լ հիմն այսպիսի սքանչե՛լի
հոգևոր տաճարի։ Յորոյ օրինակ՝ սողոմոն իմաս-
տուն յորժամ շինե՛ր զտաճարն (ը ասե՛լոյ ոբ
գ՛ըոց. ը՛ Թագ. Է. 17.) եդ ի՛ հիմն նը՛ * վե՛մս
մե՛ծ ամե՛ծս և քարինս պատուակա՛նս ||. որով ցու-
ցանի մե՛ծութի՛ն և պատուակա՛նութի՛ն սկզբնաւո-
րութե՛ն ընորհայ ոբյ կուսին. որ համեմատութե՛ վեր
ջին աձմանն այնչափ մե՛ծ գոլով՝ ոնչ թէ չերևեր
ը՛ օրինակի հիման, այլ՛ եր իբր ծածկեա՛լ լինէ. զա-
կեա այժմ՝ թէ յորժամ սկսաւ աձե՛լ մինչև՛ ի՛
վերջին կատարելուն՝ ո՛ւր եհաս։

Ջ. Ա՛սեն ա՛ծաբանք առ հո՛րկ, թէ ընորհք ոբյ
կուսին յառաջին վայրկենե՛ սկսաւ աձի՛լ յա՛մ նե՛ր
գործունե սիրոյ կրկնապատկաբար. կի՛ ասացից՝
կրկին առաւե՛լութ՛ե. ը՛ր եթէ ընորհք առաջնոյ վայր-
կենի էր ի՛ տասն աստիձանի՝ երկրորդին եղև
ի՛ 20. աստիձանի. ե՛րրդին եղև ի՛ 40. չո՛րդին ի՛ 80.
հինգե՛րդին ի՛ 160. վեցե՛րդին ի՛ 320. եօթնե՛րդին
ի՛ 640. ուԹե՛րդին ի՛ 1280. իննե՛րդին ի՛ 2560.
տասնե՛րդին ի՛ 5120. մե՛տասանե՛րդին ի՛ 10240.
երկոտասանե՛րդին ի՛ 20480. սոյնպ և յորս վկնի։

Ասկ

Նոյն ումանք դնեն աճիլ բազմապատկաբար. զի որոյ
եթէ առաջինն էր 'ի 10. աստիճանի, երկրորդն տաս-
նից տասն, որ առնէ 100. երրորդն հարիւրից հա-
րիւր. որ առնէ 10000. երրորդն տասն հազարից
տասն հազար. որ առնէ 100000000. սոյնպէս և յայլ
աստիճանսն՝ որ զկնի. մինչև լինել անըմբռնելի :
Արդ եթէ առաջին շնորհք սրբոյ կուսին 'ի լինելն
'ի տասն աստիճանի այսչափ աճէր և աճէր, որ-
չափ աճեաց ողջն իւր շնորհք՝ որ պարագրէր զամ
աստիճան շնորհաց այլ ամ արարածոց. այսմ ոչ
հասանեն միտք մեր. զայս միայն կարող եմ ասել,
թէ մօտ յանհունս բարձրացաւ. ուստի և եպի-
փան ('ի Ճառն. գովլ. կուսին.) * անհուն ‖ կո-
չէ զշնորհս նորա. որով տրամադրեցաւ նա յղա-
նալ յինքեան զէական զանհուն շնորհն՝ զի զոր-
դին այ : Յայս հայելով ասէ Թովմաս ագուինա-
ցի. (գ. մասն. խնդ. իէ. պր. 5.) * երանուհին
,, մարիամ զայնքան լիութիւն շնորհաց ստացաւ, որով
,, մերձեցաւ 'ի հեղինակն շնորհաց (յորդին այ),
,, և զնա ինքն՝ որ է լիութիւն շնորհաց յինքն ընկալաւ‖:
Նու զի այսմ որքն աթանաս կոչէ զնա * բովան-
դակեալ յամ շնորհս ‖. մինչև անկարանալ մեզ
բացատրել զայն. որոյ վնաս ասէ ալպերտ. (Ճառ գովլ.
կուս. գլ. 69. 70. 71.) * ոչ ոք 'ի ստեղծուածոց
,, կարէ չափել՝ թէ զոր գերագոյն լիութիւն շնորհաց
,, կարաց ընդունիլ որբ կոյսն. մինչև իրաւամբք եր-
,, գել եկեղեցւոյ. ('ի գիմաց նր.) իսկ և շնորհք ամ
,, կենաց և զօրութե‖: Պարձեալ ասէ. * մարիամ է
,, անօթ լի. յորում չիք դատարկութի (շնորհաց), և
,, ոչ ևս կարէ աւելի ընդունիլ ‖: զի սմին ասէ և
պոնավենդուրա ('ի գիրսն կոչեցեալ հայելի կու-
սին.) *յիրաւի անբաւ եղև շնորհքն, որով լցաւ

,,նա.

,, Նա. վ՛ա ղի անօթն անչափ՝ ոչ կարէ լցեալ լինել
,, եթէ ոչ անչափ իցէ նա՝ որով է լցեալ։(և ղի այն
,, որով լցաւ մարիամ՝ էր անչափ), ապա և մարիամ
,, եղև անօթ անչափ. որով ընդ ինքն՝ որ ամենայն
,, ի քան զերկինս՝ կարաց ունել յինքեան։ Վասր
ձեալ ասէ.*արդարև պատուական էր անչափ լինել շնորհ
,, հաց կուսին, ոմն զի հնար լինէր ընդունել զանչափե
,, լն ըստնակուսին նէր։ վ՛ա ղի * ոչ ղէայեաալ լինել
,, անչափ շնորհս այնմ՝ որ վերաւեալ եղև լինել մայր
,, անչափին։ Այնպէս իսկին և այլ ամենայն։ Վ՛ա-
ձուն շնորհաց ասէ կուսին եղև մինչև ՚ի լրանալն.
*անսպառաց աձելոյն լրման թերութենէ։ (՚ի նարեկն.)
և այս՝ մինչև ցայն վայրկեան՝ որում յաջորդեաց
վայրկեանն յղանալոյ զբանն ամբ. վ՛ա ղի յայնմ
վայրկենի՝ յորում դեռ չէր յղացեալ կուսեաց զնա
հրեշտակն բերկրել, կի՛ լի շնորհօք. իսկ յետ յղնա-
լոյն յանհունս լի՝ ոչ եթէ նոր ինն շնորհօք, այլ նո՛վ-
այնպէ ղի ըստ ասելոյ մեկնչին, ՚ի գտանել՚ն կուսին
զլիուն արբարար շնորհաց՝ եդ ետ զնա կոյս լիուլին
էական շնորհաց. քայց և նա ինքն նոր կոյս նո-
վաւ եդիտ զայն. ուստի ասէ բեռնաւորեաս. (ձառ
՚ի վեր ծննն. կուսին.) * եդիտ զշնորհն (էական)
,, որ արդէն լի էր (սրբարար) շնորհօք... և զինչ
,, զարմանք՝ թէ լի էր շնորհօք, ընդ որում էր տէրն
,, շնորհաց։ Յետ լինելոյ էական շնորհին ՚ի նո՛ր
կոյսն, այ յետ յղանալոյ ՚ի նմ՛ բարդեանն այ՝ այլ ոչ
ևս տանէր զաձումն շնորհք նէր։ Այս թէպետ ար-
դիւնք շնորհաց նէր աձելին յայնժամ յայմ շարժ-
ուածս նորին, քայց նոյն շնորհքն ոչ ևս ունէր
տեղի երթալոյ յառաջ. վ՛ա ղի հասեալ էր յայն
վերջին կէտ, որոյ վ՛ա տուեալ էր սկիզբն այնր շնոր
հաց։ Ալեղս գետ աձէ յամառան (՚ի սկիզբն

օդոստոսի 2.) և յորժամ բոլորի արեգակն 'ի կոյս կենդանակերպ, ('ի 10. սեպտ.) դադարի յաճելոյ. զի սմին և դեռ շնորհաց 'որյ լուսնին՝ սկսաւ աճել 'ի տղայութե իբր յամսեան, և միշտ էր յաճման, մինչև բոլորեցաւ արեգակն արդարութե 'ի կոյս կենդանակերպ, զի 'ի կուսական արգանդի նր. և յայնմհետէ ոչ ևս լինէր աճել. զի դրեթէ չափակցեցաւ ճառագայթից այնր արեգական, զի շնորհաց նր: Այլոց 'որց շնորհք որչափ և աճիցեն՝ արդարև զքանչելի են, բայց չեն ինչ երևելի առաջի քո, ո՛րպ լոյս ճրագի առաջի արևու. իսկ 'որյ լուսին շնորհք այնչափ աճեաց՝ մինչև ինքն ևս նմանակցեցաւ քո՝ իբր նման նմանւոյ յանդիման կալով. ո՛րպ երբեմն տեսանին յերկինս արևանմանունք յանդիման արևու մինչև կարծել՝ թէ ինքեանք ևս արև իցեն: Որ հեռի կալով յարեգակնէ՝ սկսանի մերձենալ առ նա, որչափ մերձենայ՝ այնչափ լուսաւորի. բայց յորժամ հասանէ յարեգակն՝ այնքան լուսաւորի, մինչ ոչ ևս կարէ աճելի լուսաւորիլ. նոյնպ ևս 'որ կոյսն յորժամ եհաս յարեգակն շնորհաց, և յղացաւ զայն յինքեան, և եղև մայր արեգական և ստնտու նմին, բոլոր լի եղև լուսով նր զի շնորհօք նորա նման նմա: Եւ այսպէս իսկ վայել էր. վ՟զի արժան է մօր և որդւոյ նման լինել միմեանց. զի որոյ հասարակաց առած է թէ * մարք են կենդանի գաղափար որդւոց իւրեանց ||: Այլորդ որովհետև նոյն արեգակն արդարութե կուսի և առեալ 'ի տանէ դաւթի՝ կարեմք այսմ օրինակ բերել զայն՝ զոր առնէին եգիպտացիք. իբր զի վ՟ն աճման և դադարման նեղոս գետոյ, նկարէին * կոյս մի և յանդիման նր առիւծ մի || համեմատ նմին. զի

[catchword] սմին

ոմին իմն և զոր կոյսն յանդիման քո իբր հա-
մեմատ նմին, և իբր բովանդակիչ շնորհաց նորին։
Արժան է աստ նկատել, զի այս նեղոս գետ ար-
ձակեալ զբազուկ իւր՝ Եգրկէ զծով հնգեդումբք
մասամբք՝ եւ հինգ առաջիւք. կամ է ոմանց հին
մատենագրաց՝ եօթն առաջիւք. որով ցուցանի
խպառ գրկելն. վն զի ձեռք 'ի հինգ մատունս
տպառին. և թիւս եօթն, 'ի սբ գիրս 'ի բզմ
տեղիս ցուցանէ զլիապառն։ Իսկ այս բերի յորէ-
նակ շնորհաց սրբ կուսին, որ իբր գետ խպառ
գրկեաց զնոյն ինքն զծովն շնորհաց. կամ այսպէս ա-
սացից, որչափ էր մեծուն արժանապատուունն
քսի, այնչափ փարեցաւ զնովաւ, և այնչափ բարձ-
րացաւ 'ի շնորհս նր։ Մին իրի ոմանք աձման
որթոյ և նմանեցուցանեն զաճումն շնորհաց սրբ
կուսին. վն զի որթն առ որով ծառով տնկի՝
հայի 'ի չափ նր. այնչափ աճէ և բարձրանայ, որ-
չափ բարձր է ծառն. սոյնպէս և շնորհք սրբ կու-
սին որ տնկեղ եղև առ քսի՝ այնչափ բարձրացաւ,
որչափ պահանջէր բարձրութին քսի. որով և ցու-
ցանի՝ թէ շնորհք սրբ կուսին եհաս 'ի չափ իմն
անհնունե։ Իսկ արժան իսկ էր այսպէս լինել. վն զի
յայտ է թէ նք կոյսն արժանապտն ծնաւ զած. իսկ առ
'ի արժանապէս ծնանիլ զած պիտոյ է 'ի ձեռն շնոր-
հաց յանհունն արժանաւորուին բարձրանալ. քզի
բառս արժանի՝ զկարգ և առնլի՝ եթէ է ինքեան,
և եթէ է պատշաճի՝ 'ի մէջ բերէ զբան հաւա-
սարութե. խնկարդ ծնանիլ զած է արժանաւո-
րուին անհուն, ուրեմն և արժանաւորուին շնորհաց
կուսին ունէր հասանել իբր յանհունս մինչև
անըմբռնելի լինել 'ի մեզ, և միայն ստեղ-
ծողին ձանաչելի։ Սյ ասէ սբն օգոստինոս.

* քանի՛ արդեօք անձառելի սրբարար շնորհք
,, յաձախեաց ՚ի սէր կոյսն , նա միայն ձանաչէ ,
,, որ ՚ի բնուէ նոր ետաւ ղբնուէն ։ Օ այս ասէ և
սէրն անսեռնոյս , և յաւելու ևս թէ * կամեցաւ
,, յի՛ զմայր իւր այնպիսի և այնչափ շնորհօք պե-
,, ղեցկացուցանել՝ քան զոր մեծադոյն չէ կնաւր ի
,, մանալ ՚ի վայր քան զնա ։ Այլոց սէրն շնորհք
մասնաւոր էին, միոյն այսչափ՝ և միւսոյն այնչափ
ըստ պատշաձողութեան վիճակի իւրեանց. իսկ սէր
կուսին ամենալի , և այնոցիկ ամենեցուն ունողի
իբրև ժողով նոցին ամի. յայս հայելով ասէ սէր
գիրն . (ծնն . ա. 9 .) * ժողովեսցին ջուրքդ ՚ի
,, ժողով մի ։ . այսինքն ՚ի մարիամ. ըստ որում
նոյն սէր գիրն (ըստ ասելոյ մեր ՚ի նախերն-
թաց ձառն . հատ. ք. 7.) վկայէ , թէ այծ * ըզ-
,, ժողովս ջուրց կոչեաց ծովս ։ , այ մարիամ. վ՚ըզի
մարիամ թարգմանի ծով. ըստ որոյ ՚ի լատինն դնի,
*ըժողովս ջուրցն կոչեաց մարիա ։ , այ ծովս. որով
ըստ ասելոյ պետրոսի ոսկեբերանին . (ձառ. 146.)
ցուցանի թէ ամ ջուրք, այ ամ շնորհք ժողովելոցան
՚ի մարիամ. և մարիամ կոչեցաւ ժողով ամ ջուրց
այ ամ շնորհաց, կամ անյատակ խորուէն և անբաւ
լիուքի շնորհաց ։ Եւ յայս սակս յովհան դա-
մասկացին կոչէ զսէր կոյսն՝ անհուն խորք շնոր-
հաց ։

Ը. Ընդարձ այլ սէրք ևս ունէին զմեծուէն շնոր-
հաց, և ասացան ևս լի շնորհօք, ոմն առաքելքն և
աշակերտք , և մանաւանդ սէրն ստեփաննոս .
բայց ոմն ասէ որոգինէս (ձառ . իմ . ՚ի վէր գլուխ .)
* այն էր մեծուէն և լիուէն բաւականուէ , որով ա-
,, ռաքելք և ստեփաննոս ևայլ սէրք ՚ի գործ ա-
,, ծէին զգերագոյն պաշտօն իւրեանց , սակայն է
,, և

,, և մեծութ՚ն և լիութ՚ի շնորհաց մի միայն ա-
,, ռանձին գերազանցութ՚բ. որ ՚ի վեր ՚ք զայլ-
,, ամ՚ս պարգևեցաւ մ՚յն ա՚յ ։ || Իսկ սոփրո-
նիմոս (՚ի ճառ. վերափ. կուսին.) ասէ. այլոց
շնորհք՝ կամ սոսկ ծառայի է, կ՚մ սոսկ աղախնոյ.
իսկ ո՚րդյ կուսին՝ ա՚յ ծնողի. * արդարև ասէ ծնող
,, ա՚յ ընտրեալ. և վ՚ն նախընտրեալ լինելոյ ար-
,, ժանապէս՝ լի շնորհօք ասելով զաւետիս ետ նմ՚
,, հրեշտակն ... յիրաւի ՚ի ՚որբ նախահարս և ՚ի մար-
,, գարէս և յառաքելոց եղեն անճառելի շնորհք,
,, բայց ոչ այն՚ք լիութ՚ք. իսկ ՚ի մարիամ եկն եհաս
,, լիութ՚ն ա՚մ շնորհաց որ ՚ի ՚ք՚ս || ։ Իսկ հեղինակն
գրոց՝ որ մակագրի յանուն եւսեբիոսի եմեսացւոյն
(յաւետ. ղուկ.) ասէ. * ո՛ զայն՚ք շնորհս ստա-
,, ցաւ, զորքան կոյսն մարիամ. այլոց չափով
,, տուեալ լինի, իսկ սա ասի լի շնորհօք || ։ Սմին
նման ասէ և հերոնիմոս. * այլոց մասնաբար տր-
,, ուեալ լինի շնորհք, բայց ՚ի մարիամ զլինքն բո-
,, լոր միահաղոյն եհեղ լիութ՚ն շնորհաց ||. և զպատ-
ճառն տայ յայլ թուղթս իւր ասելով. * որդ-
,, բուհին մարիամ որովհետև յղանալոց էր զայն՝
,, յորում ա՚մ լիութի ա՚ծութ՚ն բնակեցաւ, լի շնոր-
,, հօք աւետարանեցաւ || ։ Ուստի խրիսիպպոս
խօսելով առ ՚որբ կոյսն ասէ. * լի ես շնորհօք. զի
,, ՚ը քեզ է գանձարան ՚ը հանուր շնորհաց, ես և
,, բովանդակութ՚ն շնորհաց, և թ՚գն շնորհաց || ։
Իսկ ՚որբն ամբրոսիոս (՚ի ղուկ. ա.) ասէ. * արժա-
,, նա՚պ կոչի լի շնորհօք, որ միայն բովանդակեաց
,, յինքեան զշնորհս՝ ՚ք զոր այլք կարողացան ար-
,, ժանի լինելոյ. վ՚ն զի զհեղինակն շնորհաց յղա-
,, ցաւ և ծնաւ || ։ Իսկ (գիրք. Է. ՚ի վ՚ր երգոց եր-
գոյն) ասէ ։ * Ջունի մարիամ ոչ ՚ի մէջ հրեշտա-
,, կաց

„ կաց և ոչ՝ի մէջ մարդկան ղիւր նմանին, ոչ յա-
„ ռաջնոց անտի, և ոչ՝ի յետնոց. ամիւր լի շնոր-
„ հօք ընտրեալ։ Այս ասէն զառաքեալն (՝ի Գործս ա-
ւետ. կուս.) ասէ. * Վերապանծէ կոյսն Գառադա-
„ թիւք շնորհայ իւրոց քան զամս՝ սակս ոգւոյ արեգակին
„ քան զամս աստեղս։ Այս ըստ որում դրի յայս-
մաւուրս. (սեպտ. 8.) * ոմն ոք այն էր՝ի հողէ-
„ ղէն և յանցաւոր բնութէս, որ այնքան և այն-
„ պիսի բարձրադոյն շնորհաց հանդիսացեալ և
„ դերադրական փառօք ձօխացաւ. ոմն ոք, և ոչ
„ այլ ոք, քան Թէկղա՝ որ՝ի բանիցն իւրոց դրօճա-
„ տեցաւ, ինքն վկայեալ ինքեան ասելով, յայսմ-
„ հետէ երանիցեն ինձ ամ ազգք։ Յայս բարձ-
րութիւն շնորհաց հասանելով՝ ասի և է
ոչ միայն ընտանեան և բուսանդակիչ շնորհաց ամ
արարածոց, այլև դրեթէ նոյն ինքն շնորհք՝ հայ-
ելով յայլ ամ՝ ըստ. ամին իրի՝ի գիրս երդոց եր-
դոյն. (ՃԻ. 6.) ասի. * Կնդրուկ յամ փոշեաց իւ-
„ ղեփեցաց։ որով նշանակի բուսանդակուն շնոր-
հաց և պարագրութիւն պարգեւաց ամոյն ընկալանի։
Այլոց՝ըզց շնորհք ասին իւղեփեաց. (որ է եփեալ
և խառնեալ միսկ եաղը.) հանդերձ փոշեօք.
որով ցուցանի՝ Թէ Թէպետ և սպատուական են և
անուշահոտ այն շնորհք, բայց համեմատութիւն շնոր-
հաց՝ըզց կուսին՝ են իբրև փոշի՝ ի մանուածոր
և առանձին, իսկ՝ըզց կուսին ընդհանուր. վ՛ա ղի՝
ղորն՝ը մասն մասն ունէին, ըզ կոյսն հաւաքապէս
և ընդհանրապէս ուներ զամ։ Ասաւ՝ըզն պոնա-
վենդուրա (՝ի գիրքն կոչեցեալ հայելի կուսին գլ.
Ը.) ասէ. * շնորհքն մարիամու է շնորհք ընհանուր,
„ շնորհք անչափելի, շնորհք ամենապատիկ, շնոր-
„ հիք ամենաղդուն։ Շնորհք այլոց իբրև Թէ առու
„ են,

են, կամ գետ, կամ ուղիս. և ամքն բովանդակին 'ի
ձեռ կոյն մարիամ իբրև 'ի ծով ոմն ցուցանէ և
ստուգաբանութեն անուանն. որում քարուղք յար-
մարի բանն այն՝ զոր ասէ սողոմոն. (ժող. ա. 7.)
*ամենայն ուղիք 'ի ծով գնան ‖ : Կայօրիկ ուղիք
են ընորհք մեծամեծք և վիրտունք. զորոց ասէ պո-
նավենդուրա. ('ի նախայիշեալ դիրսդ. գլ. ը.) *ամ
,, ընորհք այսոքիկ գնան 'ի ծով եթ 'ի մարիամ: (զի
,, մարիամ ծով թարգմանի). ուղիք ընորհաց հրեշ-
,, տակաց. ուղիք ընորհաց առաքելոց և մարտի-
,, րոսաց. ուղիք ընորհաց խոստովանողաց և կուսաց
,, նաց և այլոց ազգ. վ՛ր զի ամ՛ ուղիք 'ի ծով գնան ‖.
Ո՞ր լինէայիք ունին 'ի ընորհաց, զնմանսինքն հառ
ծովն այս. այլոց ընորհք՝ իբրեանց սեպհական. սա
զնմանն զբովանդակութենն դրաւեաց : Պատմէ
ածաչունչն. (գաս. ձ. 36.) Թէ գեղեցն եդ ղբեղմն
'ի կալի. և եկն անձրև զայն գիշեր, և բովանդակ հաւաքեցաւ 'ի գեղմն յայն. և այս էր օրինակ լինել ընորհաց ազգ կուսին, ըստ որում ընորհք ամ՛ ազգ 'ինիմ բովանդակեցաւ. ոչ եթէ սակաս մնաց նոցա, այլ կատարեալն ամքն 'ինիմ բովանդակեալ գտաւ զերազանցաբար. ոմն կատարելոյն հարիւրապատիկ Թուէր բովանդակի 'ի հազարն՝ Կոցայն նմ էր՝ և 'ի ազ կոյսն պարունակէր. և ազ կուսինն իւր էր, և ընոցայն պարունակէր : Եկ ազ գիրն 'ի նմին տեղւոջ պատմէ Թէ 'ի հետևել գիշերի եկն անձրև 'ի վեր կալին բոլոր, և ոչ էջ 'ի վեր գեղմանն, 'ի ցուցանել՝ Թէ ընորհք այլոց ոչ համեմատին ընորհաց ազ կուսին այլ 'ի նմին պարագրին : Յայս ամ յաւելուն վէպք զայլ ինչ պատճառ լինելոյ ընորհաց ազ կուսին, այն է սէր որդւոյն ամ՝ զոր ունէր առ ազ կոյսն առաւել քան զոր ունէր առ այլս.

այլ ։ զի յայտ է թէ սէր նոր առաւել էր առ այն՝ զոր ընտրեաց իւր մայր , քան առ այլ՝ զորս ոչ էառ ՚ի մայրուէ իւր։ Նա զի որդի գոլով նոր՝ ըստ ոմ որդի միշտ պարտաւորիւր սիրել զնա առաւել քան զայլս ։ և որչափ պարտաւորիւր՝ ոչ պակասիւր յառաւելն պարտաւորելոյ։ զի ըստ արիստոտէլի՝ * այլ և ծնողացդ ոչ կարեմք բաւական հնարհա ,, մատուցանել ‖ ։ զի որչափ և մատուցցուք՝ միշտ պարտաւոր դտանիմք ։ և այս՝ մասամբ ինձ առաւել մտածել ՚ի քէս։ վ՚ասզի պարտաւորուն սիրելոյ նոր զծնօղս՝ ոչ էր բաժանել ՚ի հայր և ՚ի մայր, ոպէս և այլոց, այլ առ մայրն միայն։ այլոցն մտածէ ըստ օրինակի ծաղկանց պարտիզի, որք յառաջ դան յերկրէ և ՚ի գործակցուէ հողագործի ։ իսկ քէսին ըստ օրինակի ծաղկանց դաշտի , որք առանց գործակցուէ հողագործի բուսանին յերկրէ։ յոյր սակս քէս կոչէ զինքն * ծաղիկ դաշտի ‖ , և ոչ թէ ծաղիկ պարտիզի։ (երգ։ ք։ 2։) Ո՛րանիկր և ես , զի սէր որդւոյ ՚ի հասարակի խօսելոյ նուազ է քան զսէր մօր։ ուստի պատուէր եդաւ որդւոյ սիրել զմայրն, և ոչ մօր՝ սիրել զորդին։ վ՚ասզի սէր մօր է իբր յլստակ ջուր յաղբերն , կամ իբր անխառն հուր ՚ի կեդրոնի իւրում։ իսկ սէր որդւոյ ՚ի ստեղծուածս է իբր ջուր պղտորեալ ՚ի վտակի , կամ իբր հուր խառնեալ արտաքոյ կեդրոնի։ և պատճառն է՝ զի այն սէր ընչաւորուէ ինքանելոյ յորդին՝ պակասաւոր կացուցանի ։ Այլ սէրն քէսի ոչ էր այսպէս նախ՝ զի ոչ էջ ընչաւորուէ ՚ի մորէ։ երկրդ՝ զի էր ՚ի նմ իբր ՚ի բուն աղբեր՝ ամենայն մաքուր և առանձնեւին անխառն ։ և այնպիսի գոլով քերիւր առ ինքն կոյսն։ ոպէս և սէր նորին կուսին առ որդին ըստ օրինակի մաքնիսականաց ։ Ի դնել այսր՝ հետևի թէ

քէս

ՔՀս ըն առաւելուե սիրոյն՝ զոր ուներ առ ՝ըբ կոյսն
քան ուռ այլս՝ առաւել քան զայլս հաղորդեաց
գնա իւրում՝ ածոյին բարուե. զի սիրոյ է հաղորդել
բարուց զսիրելին. իսկ այս հաղորդուն հայելով՝ի
՝ըբ կոյսն՝ լինելոց՝ի ձեռն ընորհայ. վ՚ր զի ընորհքն է
այնպէս ինչ՝ որով ըն ածաբանից հաղորդ լինիմք ածե-
զէն բնուե. ոպ գրէ առաքելն. (բ. պետ. ա. 4)։ Ա՚ր
ըն այսմ այնչափ եղև ընորհք կուսին՝ որչափ հնար
եր լինել՝ի լիացուցանել զնա ըն ամ կարելուե . զի
զի այնչափ սիրեաց զնա ՔՀս՝ որչափ կարաց , ասյնպէս
այնչափ լիացոյց զնա ընորհօք՝ որչափ կարաց հա-
ղորդել նմին. և որչափ նա կարաց հաղորդիլ՝ եր նկա-
տել ևս արժան է , զի եթէ կարաց ՝ըբ կոյսն պա-
տապրել՝ի մարմնի (այ յարգանդի)՝ զանպարապրե-
լի որդին, առաւել ևս կարաց պարապրել՝ի հոգին
զանպարապրելի և զանչափելի ընորհս. զի հոգին
առաւել ըստնակ՚է կրել զընորհս այ՝ ՔՀս մարմինն՝ի
կրել զաՀ ։ Ա՚թէ լիապէս կրեաց՝ի մարմնի զՀՔ
զինաւոն ընորհաց, ապա լիապէս ևս կրեաց՝ի հո-
զի իւր զընորհս նր ։

ԼԹ. Լուր և կատարեըուի ընորհայ ՝ըբ կուսին
կարէ դարձեալ մտածիլ ըն հոգեւորին՝ և ըն մար-
մնաւորին. ըն հոգեւորին՝ի հոգին, և ըն մարմնա-
ւորին՝ի մարմինն. վ՚ր զի՝ի հոգի նր բնակէր
հոգին ՝ըբ աղբիւրն ամ ընորհաց, ոպ ասացաք
յառաջադոյն. և յետոյ՝ի մարմնի նր , այ յորովայ-
նի նորին բոլորովին բնակեցաւ որդին այ ամ ընոր-
հօք. զի ասսին հայելով ասեմք՝ Ա՚թէ հայրն երկնա-
ւոր՝ որ արարիչն է ամի՝ լցոյց զնա ըն ամի և յամի.
նախ ըն հոգւոյ հոգւովն ՝ըբ, և ապա ըն մարմնոյ
որդւովն իւրով. վ՚յ նա ինքն հայր ասէ . * միթէ
՚՚ զերկինս և զերկիր ես ոչ ընուցում ‖ . (երեմ.

ին. 24։) Այս եմ ասէ որ ընտրեցի ինձ զմարիամ, ուրախ ոչ կամ չկամիմ լսել զհոգի նոր ըստ ամենայնի հայոց իբրև զերկինք, և զմարմին նոր իբրև զերկիր։ Այս ասի և որդին ասէ. Ես եմ որ բուսանդակաւոր ընծում զմայր իմ, որ է խորհրդաւոր երկինք և երկիր. երկինք ըստ հայոց՝ զորս եառ նմ. երկիր՝ ըստ բնութեն՝ զոր առի ի նմանէ։ Այս այսմ և հոգին ոչ ասէ. Ես եմ որ ըստ ամի ընծում հնորհօք զհարսն իմ ըստ բանական մասին հանդոյն երկնից և ըստ զգայական մասին հանդոյն երկրի. ի բանական մասին ըստ մտաց և ըստ կամաց. ի զգայական մասին ըստ ներքնոյն և ըստ արտաքնոյն։ Հա սոյն այս մայրն է և աստուածաւորեցաւ տիրուհի, որ ծնաւ այսօր. որով և աւետաւորեցաւ դերեզմոյս և դատապարտելոցս ոչ զորմալ և փրկուլիլ. որ ի ծնանիլ դատեր մեծի Թագրի աւետիս սիրոյ բանտարկելոց վ՚ը ազատուել իւրեանց. դադարին նաև հրապարակական առ եանք դատապարտուել. ըստ որոյ յարմար ինն ամսոյ դիպաւ ամիս ծննդեան նր, այն է ամիսն սեպտեմբեր. վ՚ը զի յայսմ ամսեան փակին յերուսաղիա այլ պիսի առեանք. ոմն գրեալ է ի Թէոդոսեան մատեանս։ Յաղագս այսր ամի արժան է մեզ ցնծալ ի սմին աւուր, և ուրախունք կիրել զնոր զայս օր։

* Ի սմին աւուր (ասէ դամասկոսցին.) ընկալցուք՝ ,, եթէ տրտում իցեմք՝ զքաջալերուլիլն. եթէ ,, հիւանդ իցեմք՝ զառողջուլն. եթէ տկարք իցեմք՝ ,, զզօրուլն. եթէ ալքատք իցեմք՝ զիարթամուլն. ,, եթէ ի փորձուիս տառապիմք՝ զարիուլն. եթէ ի ,, նեղուիս վշտանամք՝ զհամբերուլն. եթէ ի ծառայ ,, ութեան նորա հաւատարիմ գտանիմք՝ զանդ ,, ընդհատ պաշտպանուլն, և որ մեծն է՝ զառհա ,, ւատչեայ փառայ ալքայուէ երկնից։ Ասէ.

սէ և սարդիս յերապօլսեցի . * 'ի սմին տօնի (ա_
,, սէ) և 'ի լուսապայծառ հանդիսի ցնծասցուք և
,, հոգևորական փողով գոչեսցուք , և բերկրա_
,, պատար պարեսցուք . վասն զի 'ի սմին աւուր
,, ծնանի մայր կենաց 'ի դաւթեան տանէ նահան_
,, ջիչ խաւարի, նորոգիչ ադամայ, սփոփիչ եւայի .
,, անմահութե՟ աղբիւր , ապականութե՟ եղծիչ . որով
,, և մեք շնորհօք ա՟ծեղէն բնութե՟ն գտանիմք հա_
,, ղորդք , և 'ի դատապարտութե՟ մահու ազատ ||:
Սուրբն պօնավէնդուրա աղաղակէ առ սբ կոյսն .
* ծնունդ քո տիրուհի զգերեալս փրկեաց , զհի_
,, ւանդացեալն ապաքինեաց . զաղտեղեալն սըր_
,, բեաց . զդատապարտեալն ազատեաց , զտարա_
,, գրեալն դարձոյց և զմեռեալն յարոյց || : Սու_
րբն գերմանոս խօսելով առ սբ կոյսն ասէ . * օրհ_
,, նեալ ես տիրուհի և օրհնեալ ծնունդ քո . դու
,, երկինք և աթոռ ա՟յ և ընդունարան ա՟մ մաքրութե՟ .
,, դու աշխարհի ուրախութի՟ւն . դու ցնծալից եր_
,, կարուն կենաց . դու բարձօղ անիծից . դու ձիր
,, օրհնութե՟ . ով տիրուհի կոյս յայսմ աւետաւոր
,, ծննդեան քո շնորհեա՛ մեզ զխաղաղութի՟ւն և զմխի_
,, թարութի՟ւն . և պարգևեա՛ հոգւոց մերոց զշնորհս և
,, զողորմութի՟ւն || : Արդ է մեզ յայսպիսի մեծի ա_
ւուր առաւել քան զա՟մ հեռի կալ յո՛ և իցէ մե_
ղաց՝ մանաւանդ 'ի մահացուացն՝ զի չէ արժան 'ի
ծնանիլ այսպիսի թագուհւոյ գերի գրաւիլ մեղ
մահու . և 'ի լոյս ընծայիլ լուսոյ մօր՝ խաւարիլ և
մեռանիլ հոգւով : Նախնիք յորժամ տօնէին զտօն
ծննդեան մեծամեծաց՝ ոչ առնէին զոհ արեամբ .
այլ ծաղիկս ընծայէին ա՟ծոց իւրեանց . զի ասէ
կենսորինոս . ոչ վայելէ յայնպիսի աւուր , յորում
մեծամեծք 'ի լոյս ընծայեցան՝ բառնիլ լուսոյ
այլոց :

այլոց։ Այրեմն և մեղ չէ արժան յայսպիսի աւուր՝ յորում կեանք ծագեաց մեզ՝ ի մահ մեղաց մատնել զմեզ. ապա թէ ոչ՝ կրկին մահու և դատապարտութիւնք լինիմք պարտաւոր։ Արուսաղէմ՝ քեզ ոչ Հանաչելով զպատիւ այսր ծննդեան՝ ի նմին աւուր՝ ի 8 սեպտեմբերի մատնեցաւ՝ ի ձեռս հեռով մայեցւոց և այրեցաւ։ Արդ թէ նա ոչ Հանաչելով՝ զայսպիսի պատիւ կրեաց, զոր և էր այնչափ դիւրին Հանաչել ոմն այժմ, մեզ ոնգլն պատիւ կարէ հասանել եթէ յետ Հանաչելոյ անփոյթ լիցուք։ Արդ ամի այսմ, այլ զգաստասցուք և զօրասցուք, և խոնարհութիւք դիմեսցուք առ ամենաբաշխ ընդհս ծննդեան աննեղծած մօր, և արժանասցուք ընդունելոյ ընդհսդ նմա։ Ընդքն խոնարհ գոլով առ խոնարհեղեան զեղուս զանձրև ընդհսդ իւրոյ և զհեղեղս պարգևաց. վասն զի ջուրք՝ ի խոնարհ տեղիս իջանեն. եթէ խոնարհիմք առաջի նմա՝ արժանի լինիմք ոչ միայն ընդունելոյ զընդհսն նմա, այլ և բարձրանալոյ՝ ի վեր յերկինս, և վայելելոյ անդ ընդհսդ ընդհսդ, և մեծացուցանելոյ զնա յաւիտեան։

Ի ՎԵՐ ԱՌՈՔԱՆՆ Ա՛ՐԻԱՄԱՆ։

Ջ. Աստանօր արժան է մեզ՝ ի մանկաւորի առաջի առնել նաև զանուն ծնեալ կուսին. զորմէ գիտելի է. զի սովորութի էր հրէից՝ ոնգլ արու զաւակի յութերդ աւուր, սոյնպէս և իգի կամ յութերդ աւուր, կամ յետ երկուց և երից աւուրց ծննդեան զանուն դնելոյն և ծնօղք նոցա կուսին յետ քանի մի աւուր ծննդեան, կամ ըստ նմանութեան յոի յու-

Թէրդ աւուր եդին նմա զանունս Տրխամ։ Ոսկ յայլ մատուրսն. սեպտ. 8. զրի Թէ որբուհին աննա ՚ի կատարիլ աւուրցն սրբուհ անուանեաց զնա մարիամ։ Ոսկ յասպրիլի 7. դնի Թէ զաքարիա քահանայ եդ նմ զանունս մարիամ։ Ա. յս անուն պէսպէս Թարգմանի. ըստ լատինականին Թարգմանի ծով. և ըստ ոմանց ծովային, ևս և ջրային. ըստ ասորւոց՝ տիրուհի. ըստ եբրայեցւոց լուսաւորեալ, կամ լուսաւոր, կամ գառն. կամ ոմն զրե ՚ըզն Հերոնիմոս * լուսաւորիչ իմ, կամ լուսաւորօղ նոց, կամ աստղ ծովային։ զայս ասէն և եւքերիոս. և եսիխան. և դամասկացին. և արնուլդոս, և այլք բազք։ Ոսկ խորհուրդք այսոցիկ Թարգմանուածոց և նշանակուածոց յայտնի լինին ՚ի յաջագոյն դրելոցս։ (Տես և ՚ի նոճադարանն օրհնուածոյ՝ զոր ինչ ասացաք ՚ի ա. օրհ. ՚ի վերջն։) Ա. րդ անուանս Տրխամ լինելով անուն ածմամբ, ՚ի վեր է քան զամ անուանս ազգ. այնպէս՝ զի եթէ զամին նոյ զբարձրութիւն դիցուք ՚ի միասին, քան զամսին գերազանցէ, և ՚ի վեր բարձրանայ իբրև իւղ ՚ի վէր ջրոց. ուստի և կոչի իւղ Թափեալ. ըստ. (ելգ. ա. 21) * Իւղ Թափեալ է անուն քո ‖. զի ոմն իւղն Թափէ ՚ի վէր ջրոյ՝ ՚ի վերոյ մնայ ըստ ջուրս, սոյնպէս ՚ի վերոյ է անունն մարիամու քան զամ անուանս ժողովոց ջուրց, այ առ հնդիկ ամ ազգ։ Յորչափ յերկրի երանգ կայցէ՝ անունս այս իբրև Թէ փակէլ էր յամանի. և յորժամ վերացաւ նա յերկինս՝ Թափեցաւ այս անուն նոր յերկիր ՚ի վէր ամին, և յամենից գերազանց ցուցաւ. և այնքան գերազանց, մինչև յետ անուանն յոյն ոչ գոյ այլ անուն, որով պատեհ լիցի հասանել փրկուԹե։ Ա. յնքան զօրաւոր է անունս, մինչև երբեմն առաւել փոյթ ազգէ ՚ի փրկել, քան զանուն յոյն. ըստ որոյ ասէ ոբեն անսեալ

մոս.

մոս. * փուլ Թագոյն է երբեմն վրկիլ յիշամբք անդ
„ ոճանն մարխամու ՝ք կոչմամբ անուանն յոր ։ ։
և այս՝ վա մայրենի գթոյն. նա պի՝ նման է յանձ
նեալ յա պիրկութի՛ն և զաղատութիւն մեր. Թող
զայն՝ պի փառք մօրն՝ փառաւորութի՛ն է որդւոյն։
Կարձրուե այսր անուան մարխամու երկրպադու
Թիւն տան արարածք ամ. ուստի ասէ խոխոթա
(գիրք. ա. յաղ. մար. գլ. 5.) * ոմ ամենաձք
„ կոյս մարխամ. քեզ է տ ամենաձք երկրպադութի՛ն
„ զայնպիսի անուն՝ որ յետ անուանն որդւոյ քո՛ ի
„ վեր է քան զամ անուն. վա պի քումդ անուան
„ կրկնի ծունր երկնաւորաց և երկրաւորաց և սան
„ դարամետ տականաց ։ Կու յարէ անմիջանի. * Ա. յս
„ անուն կանգնէ զանկեալս, բժշկէ զկիւանդա
„ ցեալս. լուսաւորէ զկուրացեալս. կաղդուրէ զվաս
„ տակեալս, կակղացուցանէ զխստացեալս, օծանէ
„ ընդեմ ախտից զփորձեալս, և խորտակէ զլուծ
„ սոնոյի ։ Կու յաւելու զկնի ասելով. * այնքան զօ
„ րաւոր է և քարձր ամենաձք անուն քո ոմ ամեն
„ օրհնեալ կոյս, մինչդպի յանուանեն զայն՝ ցնծան
„ երկինք, զուարձանայ երկիր, ուրախանան հրեշ
„ տակք, դողան դեւք, և խուովին դժոխք ։ Օ այս
անուն արժան է ամէն առնուլ՛ի բերան ոչ միայն
իբրև զքաղցր մանանեայ սփոփիչ և զօրացուցիչ,
այլև իբրև զդեղ առողջացուցիչ և դարմանիչ։ Կու
և այս արժան է ոչ միայն՛ի բերան առնուլ, այլև՛ի
ձեռս իբրև զգաւազան՝ ՛ի յենուլ՛ի նա յամենայն
ձնդպրս կենաց մերոց և յամ գործս մեր. զ
րով մարթասցուք բարւոք ընթանալ, և անվը
տանգ ձգնել անդ՝ ուր ոչ միայն անուանեսցուք զա
նունն մարխամու, այլև տեսցուք զնա փառաւորել, և
ցնծասցուք՛ի փառս նր յաւիտեան։

ՃԱՌ ԵՐՐՈՐԴ։

՚Ի տօնի ընծայման տ՟ր ա՟ծածնին։

Ո՞վ է սա՝ որ երեւեալս է։ Երգ․ Է․ 9։

Յետ որոյ ջնջեաց ա՟ծ ջրհեղեղաւ զա՟մ մարդ՝ ակն ունէր՝ թէ որք գանն զկնի՝ ուղղեսցեն զինքեանս և լինիցին բարի։ Լանց ժ՟մկ, նայեցաւ ա՟ծ ՚ի բարձրութէ երկնից․ ետես՝ զի ա՟մքն եղծեալ և ապականեալ են վերստին զճանապարհս իւրեանց։ Սորջացաւ և բարկացաւ․ խորհեցաւ կրկին ջնջել զա՟մն իսպառ յաւիտեան։ Յորժամ տեսին մարդիկ՝ զի հանդերձեալ են ջնջիլ և կորնչիլ՝ աստ և անդ անկան՝ որոնել և գտանել զոք առ ՚ի միջնորդ կացուցանել զնա, և նովաւ հաշտեցուցանել զերեսս ա՟յ։ Որոնեցին և ոչ զոք գտին, բայց եթէ զօրհնորդ մի տ՟ր զկոյսն մարիամ․ ահա սա է՝ զոր խնդրեաք ասելով՝ առին և յանդիման կացուցին զնա ա՟յ, և նուիրեցին զնա բարեհաճութեան տ՟ր իբրև ընծայ հաշտութեան, և իբրև միջնորդ խաղաղութեան։ Նայեցաւ ՚ի նա հայրն երկնաւոր և հաճեցաւ ընդ նա․ եհարց* ո՞վ է սա՝ որ երևեալս է։ Զիջաւ ապա ՚ի բարկութէ, և խորհեցաւ ՚ի ձեռն տ՟ր ցուցանել

ատ մարդկի զկիրկուԹի։ Յորժամ միեղջերուն բար-
կուԹԷ յարձակի ՚ի վր բաղմուԷ մարդկան, (ոմն
պատահեցաւ երբեմն կարաւանաց ,) ջիք այլ հնար
աղատելոյ , բայց եԹէ Է առաջ նր հանել զաղջկի
մի կոյս. վ՛ս զի ՚ի տեսանել նր զաղջկին՝ խոկոյն
զինջանի ասէն ՚ի բարկուԹէ և հանդարտի ։ Ա՛հա
քեզ օրինակ ընտիր՝ ընծայուԷ ՚ի ոգոյ կուսին . որով
զինջաւ ամբ ՚ի բարկուԷ , և խոնարհեցաւ նա ինքն
որդին այ . * որ սիրելին Է ոմն որդիս միեղջերուի ։
(սաղ . ի՛ը . 6 ։)

Կարկացաւ արտաշէս արքայ ՚ի վր ասԹինէ տիկ-
նոջ, և մերժեաց զնա . իբրև առաջի ընծայեցին
զկոյսն եսԹեր՝ հաճեցաւ Է նա յոյժ և զինջաւ .
(եսԹեր . ա՛ . 12 ։ Ի՛ . 17 ։) Այնպէս իմն և զընծայուԷ՝ ՚ի ոգոյ կուսին . վ՛ս զի ոմն առաջի՝ բարկացաւ ամբ ՚ի վր ասԹինեայ՝ այ՛ ՚ի վր եւայի և ծնընդոց նր . մերժեաց և ջնջեաց զնա հեղեղաւ . և ՚ի կամին անդ վերստին կորուսանել՝ ընծայեցին մարդիկ առաջի նր զեսԹեր զոբ կոյսն մարիամ, Է որ հաճեցաւ , որով և զինջաւ ՚ի բարկուԷ ։ Ա՛հա այս Է խորհուրդ առաջնիկայ աւուրս՝ զոր տօնա-
խմբէ սուրբ եկեղեցի, պատճառս առեալ յիրա-
պէս ընծայելոյ նոյ կուսին ՚ի տաճարն ՚ն ։ Ա՛ն զի
ըստ աւանդելոյ նոյ Հարց , և երևելի վկայից , և
յայտնաւորաց ամ եկեղեցեաց , ծնօղք նոյ կուսին
յուակիմ և աննա , (ոմն յիշեցաք ՚ի նախընԹաց
Ճառն) ուխտեցին այ՝ զի եԹէ տացէ նց աստ զղա-
ւակ՝ ընծայեսցեն զնա այ . ոմն արարին աննա և
եղկանա ծնօղք սամուէլի մկրտչին . զոր մինչդեռ
երեքամեայ էր՝ ընծայեցին ՚ի տաճարն առ հեղի
քհնյպետ . (ա՛ . Թագ . ա՛ . 28 ։) Ա՛ստ այսմ և
ծնօղք սրբոյ կուսին յետ որոյ ծնան զնա՝

յոր-

յորժամ երեքամեայ եղեւ՝ առեալ տարան 'ի տաճարն, եւ ընծայեցին Այ ձեռամբ քահանայից. որպէս զի անդ մնասցէ, եւ անդ վարժեսցի 'ի հոգեւորական կրթութիւն, եւ յարտաքին իրողութիւն, որպէս սովորութիւն էր եւ այլոց ։ Ուր զի կայր առ տաճարին՝ կից 'ի գաւիթս նորա այնպիսի տեղի, յորում ժողովէին եւ մնային աղջկունք ։ Կային անդ եւ բազում վարժիչք 'ի զգաստ կանանց, որք բարեպաշտութեամբ եւ հաւատարմութեամբ դաստիարակէին զնոսա մինչեւ 'ի հասանել նոցա 'ի չափ հասակի ։ Աւանդութիւն է՝ թէ յորժամ յովակիմ եւ աննա մատուցանէին զսուրբ կոյսն 'ի տաճար Այն՝ կացուցին զնա 'ի վերայ առաջնոյ աստիճանի. եւ 'ի պատրաստել զընծայսն՝ սուրբ կոյսն ինքնին սկսաւ իբրեւ աղաւնի թռանիլ ընդ աստիճանսն. եւ գնաց բերկրալից մինչեւ 'ի սեղանն, որպէս թէ լեալ էր վարժեալ 'ի նոյն եւ ուսեալ ։ Յայն իբրեւ հայեցան քահանայք եւ այլք՝ որք կային անդ՝ զարմացան յոյժ. մանաւանդ զի տեսին զի ամենեւին ուրախ էր սուրբ կոյսն յընծայման անդ իւրում. իբրեւ թէ 'ի բազում ամաց վառեալ էր 'ի փափագ տաճարին ։ Զարմացաւ եւ նոյն ինքն տաճարն, զի ետես յինքեան զկենդանի տաճար Այ ։

Առին ծնողքն զկոյսն սուրբ զերեքամեայ, եւ տարան 'ի վարժարան կուսանաց, եւ յանձնեցին զնա վարժիչ կանանց, որոց մին էր (որպէս ասեն բազումք) Աննա մարգարէուհի դուստր փանուէլի. զոր յիշէ սուրբն Ղուկաս (բ. 36.) ։ Եւ սա մարգարէական հոգւով ծանուցեալ՝ թէ սուրբ կոյսն հանդերձեալ է բարձրանալ 'ի գերագոյն վիճակ, մանաւանդ փոյթ տանէր 'ի վերայ նորա, եւ բազում ուսուցանէր նմա ։ Իսկ յայսմաւուրս մեր ('ի Նոյեմբերի. 21. եւ յապրիլի 6. կամ ը տօմարի. 7.) գրի այսպէս. ծնողքն սրբոյ կու-

սին՝

սին՝ որք ուխտեալ էին *բերին զտղայն ՚ի տա-
,, ճարն երից ամաց . զոր առեալ քահանայն զա-
,, քարիսաս զնոր տղայն ՚ի գիրկս իւր , կոչեաց զա-
,, նուն նո՛ր մարիամ, որ ասի լուսաւորե՛լ... օրհնեաց
,, զաքարիա զնոր տղայն. և մարգարեացաւ վե՛ր նո՛ր՝
,, անուա՛նի լինել ՚ի մէջ մարդկան , և երանե՛լի
,, յաւմատզեաց: Եւ յովակիմայ և աննայի կատարե՛լ
,, զուխտս իւրեանց՝ և առե՛լ զտղայն , դարձան ՚ի
,, տունս իւրեանց. և յաւմատի ՚ի տարեկինն քերկին
,, զտղայն ՚ի տաճարն և տանկին : Եւ երբ եղև եօթն
,, ամաց նոր տղայն մարիամ, քերին ՚ի տաճարն, (և
,, յանձնեցին աննայի մարգարէի ,) և այլ ոչ տա-
,, րան. և մնաց անդէն զամս եօթն, և սնաւ սրբուհի
,, ՚ի տաճարն և ՚ի հրեշտակաց լինէր սպասաւորե՛լ
,, և կերակրե՛լ: Այս ընծայումն նոր կուսին խորհրդա-
ւոր իմն եղև , և պատշաճաւոր յոյժ. իբրզի ոչ լի-
ուին ընորհայ (ըստ ասելոյ մեր ՚ի նախընթաց ճառն.
հատ. ը.) եղև ՚ի նմա ներքին տրամադրուի առ
ած ամայրուին , ոյնպէս և ընծայումն նո՛ր ՚ի տաճարն
եղև ՚ի նմա արտաքին պատրաստուե՛ի առ ՚ինոյն.
նաև նոյն իսկ ներկայուի տաճարին ցուցանէր՝ թէ
նա պատրաստի և շինի տաճար ինչ : Ո՛ր ինչ ա-
ստուածաբնեայ՝ հաստատե՛ն ՚ի բանս երանե՛լի հարց
և վե՛ճպետ. մասամբ իմն միոյն, և մասամբ իմն միւսոյն.
ոմն են գրիգոր նիւսացի , գրիգոր նիկոմիդացի ,
գրիգոր կեդրենոս , ոբն կիւրեղ , ոբն հե րոնիմոս ,
ոբն գերմանոս , եւստիոս անտիոքացի , անդրէաս
կրետացի, յովհան դամասկացի, բեռնարդոս, թէո-
փիլակտոս, սիմէոն մետափր աստէս, թովմաս ազ-
ուինացի, և այլք ոչ սակաւք. ըստ որս և որոգինէս .
ճառ. իգ. ՚ի վե՛ր մատթէի. որ յաւելու և ասել, թէ
ոբ կոյսն նաև յետ ծնանելոյ զյի՛ս երբեմն բնա-

կէր

հայր՝ ի տաճարի՝ ի տեղւոջ կուսանաց, ուր անելն էր։ Այլ ոմն ասեն նախայիշեալ վիպակք, թե կոյսն մնայ՝ ի տաճարի զամս մեռանելոյ. և իբրև լրացոյց զամն չորեքասանեցիդ՝ հայր և մայր նր առին զնա՝ ի տաճարէն, և հարսնացուցին Երկն յովսեփայ։ Առաքա մարդկօրէն խորհելով այնպէս ամուսնացուցին՝ ակն ունելով թէ մեծ ինչ հանդերձեալ է ծագիլ՝ ի նմանէ. իսկ նոքա ամուսնացան՝ ոճօրէն խորհելով, անարատ ընդ անարատի, կոյս ընդ կուսի, արդար ընդ արդարոյ, նման ընդ նմանի։ Այնուհետև ամենաքաջ ապակին՝ և միւսն իբր մաքուր անակն. (որ է սրտ հայելին)։ Այնուհետև յայնժամ կայս մաքուր ապակիս պատկերն այդ որդին միածին յղանալով՝ ինքն մաքուր կուսուքէ. առանց անցանելոյ անակուայն յանձն ապակւոյն, (այն առանց անցանելոյ սրտին ընդ միկլոսն.) որ է ասել, առանց ապականութեան։ Այլ աստ քննել արժան է՝ թէ ընդէր ոչ կամեցաւ ինձ՝ զի սուրբ կոյսն մնասցէ առանց ամուսնութեան՝ ի տաճարի հիւ՝ ի տան, այլ՝ ամուսնացուցի ընդ առն։ Պատճառ այսր մտածի նախ՝ ի կողմանէ սրբոյ կուսին. երկրորդ՝ ի կողմանէ քոյ. եր րորդ՝ ի կողմանէ մերմէ։ Ի կողմանէ կուսին մտածեալ երեք պատճառք կան. մին է այս՝ զի յառաջին ժամանակին ամուսնանալոց էր ամ աղջիկ. ապա թէ ոչ՝ իբր ընդ անիծիւք լինի հաճարիւր վճ լինելոյ անպտուղ իբր ծառ չոր. իսկ այս չէր վայելուչ կուսին, ուստի և արժան էր նմ ամուսնանալ, և կուսուքէ դալարի մնալով տալ պտուղ. որոյ վճ լինքն միայն առացաւ և եղև օրհնեալ՝ ի կանայս։ Երկրդն է այս՝ զի ունիցի իւր արտաքին խնամատար և պահապան։ Երրդն է այս՝ զի մի յետոյ՝ ի ծնանիլ զորդւոյ առանց փեսա

յի՝ քարկոծ լինի ընդ հին օրինաց ։ Ի կողմանէ քսի
ես երեք պատճառք կան. առաջին՝ զի մի՛ կարծես-
ցի ապօրինաւոր ծնեալ ։ Որ ասէ մեկնիչն. * 'ի
,, կուսէ ամուսնացելոյ ծնանելով յաւէտ՝ կամե-
,, ցաւ կարծիս տալ թէ ծնաւ 'ի կնոջէ առանց կու-
,, սութեան, քան յոչ ամուսնացելոյ ծնանելով կար-
,, ծիս տալ պոռնկութեան ։ Երկրորդ՝ զի ընդ սովորական
կարգի յայտնի երևեսցի՝ թէ յորմէ՛ ցեղէ իջանէ.
իսկ առ այս պարտ էր ունել զհայր. զի ցեղ հօրն
ցուցանէր զազգն և ոչ սոսկ մօրն ։ Երրորդ՝ զի բաց
'ի մօրէ ունիցի զարտաքին սնուցիչ և պաշտպան ։
Յաւելու սրբն Իգնատիոս մեծազգեաց և զայլ
պատճառ մի ասելով. * Իմաստութիւն էր կարգա-
,, ւորեաց՝ զի ամուսնասցի տր կոյսն որ զի ծը-
,, նունդն յի ծածկեսցի 'ի սատանայէ ։ Ոչ զի ոչ հա-
մարի սա ինքն սրբն Իգնատ" և այլ բզմ երևելի
վրդպք, ոճ ծածկեաց 'ի սատանայէ զկուսութիւն յղա-
նալն յի . իսկ եթէ առանց ամուսնութեան լինէր՝ ի-
մանայր սատանայ ։ * Դարանօղն և հետամուտն կուսութե
,, իշխան աշխարհիս այսորիկ սատանայ (ասէ բարսեղ. ճառ.
,, ծնն. քսի.) տեսեալ զմարիամ ընդ տեսակաւ ամուս-
,, նութեան՝ պատրեցաւ, և ոչ իմացաւ զխորհուրդն ։
Ի կողմանէ մերմէ ևս երեք պատճառք կան. առա-
ջինն է՝ զի նաև վկայութիւն ամուսնոյ որոյ կուսին՝ ընդ
որոյն յոլովեփայ անտարակոյս լիցուք՝ թէ կուսութբ
ծնաւ նա զյս ։ Երկրորդն է՝ զի ընդ այլաբանական
խորհրդոյն՝ նշանակեսցի հարսնութիւն եկեղեցւոյ
ընդ քսի ։ Երրորդն է՝ զի ընդ բարոյական տեսութեան օրի-
նակ տացի կուսանաց և բարի կանանց՝ զգաստութեան
և զգուշութեան վարել ընդ մարդկան ։ Զննել արժան
է դարձեալ՝ թէ որդեօք յորժամ կայր որ կոյսն
'ի տաճարի կից արտաքոյ տաճարի՝ փորձեաց զնա
ստնյ ։

սնոյ ։ Այս ստոյգ է՝ թէ ՚ի նեղբուստ ոչ մի
այն ոչ կարաց փորձել, այլ և ոչ իսկ մերձենալ
՚ինա . * ոչ հասցեն առ քեզ չարք ‖ . (սաղ. ղ. 10։)
Իսկ ըստ արտաքնոյն ասեն ոմանք, թէ ոչ փորձեաց
նա արտաքուստ զքո և յաղթեցաւ ՚ի նմանէ,
սոյնպէս և արտաքուստ փորձեաց զքո կոյս, և
՚ի նմանէ և յաղթեցաւ և խայտառակեցաւ։
Այլ այս կարծիք չէ ընդունելի և չունի ինչ
հաստատուն. նաև այն հանդիտուն ընդ
քոյ չէ ինչ պատճառ զօրաւոր, վասն զի այն
եր վասն այլ ինչ պատճառի. իբրպէս որովհետև
քո պատերազմունքն ըստ սնոյն՝ պատշաճ էր թոյլ
տալ նմա՝ զի եկեալ ՚ի ձակատ և ՚ի փորձ մատիցէ.
ապա թէ ոչ՝ յաղթուին քոյ ոչ երևէր այնչափ
փառաւոր։ Իսկ ըստ կուսին չէր հարկ պատերազմ
ունել ըստ սնոյն. մանդ զի սնոյ ոչ եդիտ ՚ի նմ
առնել փորձելոյ ինա. և եթէ կամէր և մերձենալ
՚ինա՝ յետս կոչանէր. վ՚ասն զի ըստ ամի և յամ կոչ-
մանդ զօրացուցեալ և ամրացուցեալ էր զնա հոգին
սրբ ամենալի և ամենազօր չնորհօք։ Օ՚ի ոչ ըստ
դրելոյ սլլինիոսի՝ յորժամ խառնի մաքնիս ընդ
ղանգուճած ապակւոյ՝ ամրացուցանէ, սոյն
պէս և չնորհք հոգւոյն սրբ՝ (որ իբր մաքնիս
զամ մարդ առ ինքն ձգէ), խառնելոյ ընդ բնակե-
լոյ ՚ի սրբ կոյսն՝ ամրացոյց զնա. և ամենևին ան-
գծելի և աննեղդոյծելի արար զնա յո՛ւ և իցէ նե-
ւից բանսարկուին։ Իսկ թէ սրբ կոյսն կրեաց
հալածանս ՚ի հրէից, որպէս գրե խորենացին ՚ի
Թուղթն առ սահակ արծրունի՝ և այլք ոմանք,
այդ չայլ ինչ հայի, և ոչ ՚ի փորձուիս սնոյն։
Տեսուք այժմ՝ թէ յորմէ աւուր եղև ընծայ-
ումն սրբ կուսին. ընդհանուր եկեղեցւոյ համարումն

է՝

է՝ թէ եղև 'ի 21 նոյեմբերի. վն զի ամ եկեղե-
ցիք քրիստոնէից 'ի նմին աւուր տօնեն զայս սբ ըն-
ծայումս։ Իսկ թէ երբ սկիզբն եղև տօնելոյ՝
չէ յայտ. երևի թէ յառաջին ժամանակսն 'ի բզմ
տեղիս հռչակիւր օրս այս. բայց սահմանադրուն
տօնելոյ ը ամ տեղիս յետոյ եղև յամի տն իբր
1465. վն զի քահանայապետն պիոս երկդ՝ որ
նստաւ յամի տն 1464, վճիռ արար առ ամ քրիս-
տոնեայս՝ զի տօնեսցեն զայս տօն։ Պատմէ յովհան
դամասկացի՝ թէ հեթանոսք 'ի հնումն տօնէին
տօն մի 'ի յունվարի 30. յորում ընծայէին չծուհ-
ւոյն խաղաղուէ զեգ. գառն. և զայն օր կոչէին
տօնախմբուի մաքուր գառին։ Այս գառն ասէ
դամասկացին իբրև թէ ստուեր իմն էր սբյ կու-
սին, որ ընծայեցաւ այ 'ի տաճարն վն խաղաղուէ
համօրէն ազգի մարդկան՝ ոչ 'ի յունվարի 30.
այլ 'ի նոյեմբերի 21. որով և եղև օրս այս տօն
ամենամաքուր գառին, այ սբյ կուսին։ Արդ 'ի
մնալ սբյ կուսին 'ի տաճարի՝ զարգանայր անդ,
կամ այսպէս ասացից՝ յառաջ գնայր օրըստօրէ
յառաւելուն շնորհաց և առաքինուէց։ Օ առա-
ւելուէ կմ զանձմանէ շնորհաց խօսեցաք 'ի նախըն-
թաց ճառն, աստ խօսեսցուք զառաւելուէ առա-
քինուէց նր յերկուս հատուածս. 'ի միումն 'ի
հասարակի, և 'ի միւսումն 'ի մասնաւորի։

Ար.

ՀԱՏՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ։

'Ի վր առաքինութեանց սբյ հոգւոյն 'ի հաւատարմէն. որոց օրինա-
օրէն ծաղկէր նա 'ի տաճարի տն, և 'ի հեռանս եւր ։

Ա. Բաւ լինէր շնորհաց ունել մբ կուսին և զլիու-
թիւն ամ առաքինութեանց հեղեալ յնյ. և
ոչ օրըստօրէ աճէր 'ի շնորհս, սոյնպէս փայլէր և 'ի
ներգործութիւնս առաքինութեանց. այնպէս զի որքան եկաց
„ զի ՚ի ծ ասէ. ես յո՛ հանդիպայց եթէ ոչ ՚ի հեզս և
„ ՚ի խոնարհն. ՚ի խոնարհն ասէ, և ոչ ՚ի կոյսն. ու-
„ բեմն եթէ մարիամ ոչ եր խոնարհ, ոչ հանդիպեր
„ ՚ի նմ՝ հոգին ս. և եթէնա ոչ հանդիպեր ՚ի նմա՝
„ ոչ յղանայր զորդին. ՚ծ սպասեր խոնարհուէ
„ աղախնոյ իւրոյ՝ ք կուսուէ. եթէ հաձոյացաւ
„ ՚ի կուսուէ, յղացաւ ՚ի խոնարհուէ. որով
„ յայտնի երևի՝ եթէ անտարակոյս խոնարհուէն
„ արար՝ զի հաձոյացաւ կուսուէն։ Խոնարհուէ

ըմբոյ կուսին այնչափ գերազանց ցուցաւ՝ որչափ նա ինքն կոյսն ի գերազանց արժանապատուելոյ բարձրացաւ. նոյնաստ մարդոյ խոնարհութիւն չէ ինչ այնչափ գերազանց. իսկ գերազանց մարդոյ խոնարհութիւն այնչափ է, որչափ է յինքեան. * ոչ ,, է մեծ խոնարհ լինիլ յանարդութենէ (ասէ քեռ ,, նարդոս)։ մեծ և անգիւտ առաքինութիւն է խո ,, նարհութիւն ի գերազանցութենէ ։ Պարձեալ գրէ սոյն այս բեռնարդոս. * որչափ մեծ եղև մարիամ, ,, այնչափ խոնարհեցոյց ինքն . . . եղև առաջին ,, և յետին. վասն զի յորժամ առաջինն եր զամն՝ ,, յետին եցոյց ինքն. յորժամ ախրուհի եղև ամն՝ ,, եցոյց ինքն աղախին ։ Նոյնպէս ամբրոսիոս. (չաւ ք. ի վեր գրուկ.) ասէ. * տեսս զխոնարհութիւն ,, կուսին ըստ գերազանցութենէն. աղախին կոչէ ,, զինքն՝ յընտրելն անդ մեծ ամն. և այս կարի ,, ի դէպ. զի որ ուներ ծնանիլ զխոնարհն՝ ար ,, ժան էր խոնարհութենէ նմին զհետ գնալ ։ Նոյնպէս (գիրք ք. յաղ. կուսութենէ) ասէ. * հոյս՝ յամի խոնարհ ,, և միշտ խոնարհ, մանաւանդ յորժամ ծանեաւ ,, Թէ ընտրեալ է յայն առ այնքան մեծ խոր ,, հուրդ ։ * ահա քեզ խոնարհ Թագուհի ։ ասէ ռուբերտոս ։ Նոյնպէս պօնավէնդուրա ասէ. * Մարիամ կարդի տիրուհի երկնի և երկրի. Թա ,, գուհի հրեշտակաց, իշխանուհի տիեզերաց, դըշ ,, խոյ փառաց, մայր ամ կենդանեաց, և սը ,, նուցիչ հաստչին ամի. ոչ հայի ի սոսին, այլ ,, յամի սքանչելի խոնարհութենէ զինջանելով ասէ. ,, ահաւասիկ կամ աղախին ամն ։ Ռաւեղընտ ,, բեռ

,, բեռնարգոս) թէ յայնժ փառս բարձրացաւ մա_
,, րիամ. վ՛զի յանհաս խորութ ձգեաց զարմաս
,, խոնարհութե իւրոյ‖: Ո՛ ի ը՛ բանի ա՛ն որչափ որ
խոնարհի, այնչափ բարձրանայ. (ղուկ. ԺԸ. 14:)
Ո ա՛ծ յինքեան ունելով զնաց առ եղիսաբէթ.
դաւանեցաւ զնա մայր ա՛յ. իսկ նա յանչափս խո_
նարհեալ զմեծութի իւր ա՛յ ետ, և զխոնարհութի
ինքեան ասելով. * մեծացուսցէ անձն իմ զտ՛ր. .
,, զի հայեցաւ 'ի խոնարհութի աղախնոյ իւրոյ‖:
Որքան արդեօք քաղցր հնչեաց այս ձայն յակա_
ջըս ա՛յ. յոյժ և յոյժ քաղցր, մինչև ասել զնա.
* ձայն քո քաղցր է‖. (երգ. Բ. 14:) Ընդ որ բերկ_
րեալ և հրեշտակք ասելով. * ձայն տատրակի լսե_
,, լի եղև յերկրի‖. (երգ. Բ. 12.) ձայն տատրակի
և ոչ սոխակի. զի տատրակն խոնարհ է: Ըստ
խոնարհ ձայնին և խոնարհ ճանաչմունք իւր. զորոց
ասէ ՟ս 'ի գիրս երգ երգոց. (Դ. 1.) * վարսք քո
,, իբրև զհօտանս այծից, որք երևեցան 'ի գաղաա_
,, դէ‖: Այս վարսք նշանակեն զխոնարհ ճա_
,, նաչմունս, որք 'ի գլխոյ ելանելով ՟ի 'ի մտաց
կ՛մ 'ի հոգւոյ, վարսք կոչին (՟ի գլխոյ մազ:) Ո_
քա ասէ երևին 'ի գաղաադէ՝ որ թարգմանի բարձ_
րութ. որով ցուցանի թէ ճանաչմունք նոյ կուսին
'ի բարձրութէ գոլով՝ էին խոնարհք իբրև զհերս
այծից. վ՛զի հերք այծից 'ի խոնարհ են: (Այս
բան երգոց երգոյն կրկնի և 'ի գլ. Զ. 4. զորմէ ու_
նիմք խօսիլ 'ի ճառն. Ժ. 10:)

Այսպիսի խոնարհութեամբ ոչ միայն յինքեան
բարձրացաւ նբ կոյսն, այլև զմեզ բարձրացոյց:
Եւայ կամեցաւ բարձրանալ և ա՛ծանալ, անար_
գեցաւ և մեռաւ, զմեզ ևս անարգ կացոյց և
մեռոյց. իսկ նբ կոյսն յաղախնութի խոնարհելով՝
բարձ_

քարձրացոյց զինքն յաճախամայրուն, և զմեզ կեցոյց
և վերացոյց յաճախին որդեգրուն : Այս ասէ քե-
զա պատուհասական քննիչ . (ի ղուկ. ա.) * վայելէր՝
,, զի ոչ հպարտուչ նախնոյ ծնողին մերոյ (Եւա
,, յի) մահ եմուտ յաշ, սոյնպէ ի ձեռն խոնարհու-
,, թեն մարիամու չափեսցի մուտ կենաց ։

Պետրոսեան գեղեցիկ աբեղ կոստէն :

Ժ. Ըժան է աստ խօսիլ և զդերազանց գեղեց-
կուէ աբեղ կոստին ի լրումն գովուէ վեհա-
պանծ առաքինուէեց նր : Ո՞ այսմանէ խօսելոյ քա
բարբառի առ նա և ասէ. * գեղեցիկդ ի կանայս ։
(երգ. ա. 7.) ՚ր գերազանցեալ ի գեղեցկուէեն
քան զամ կանայս . զի յայս ակնարկէ յաւելուածք
բառիդ ի կանայս . վ՚ր զի ոչ յասէն՝ օրհնեալդ
՚ի կանայս՝ իմացել լինի ասել, օրհնեալ ես քան
զամ կանայս՝ և յօրհնուէ գերազանցել, սոյնպէ և
յասէն՝ գեղեցիկդ ի կանայս՝ նշանակի ասել գե-
ղեցիկ ես քան զամ կանայս , և ամենևին գերա-
զանցեալ ի գեղեցկուէ : Այս առ ի ցոյց այսր՝ յա-
ւելու քս ասել առ նա . * ամենևին գեղեցիկ ես
մերձաւոր իմ, և արատ ինչ ոչ գոյ ի քեզ ։ (երգ.
դ. 7 :)

Այլք մասամբ ինն գեղեցիկ են, և մասամբ ինն տգեղ-
ձր մասամբ ինն արդար , և մասամբ ինն մեղաւոր .
*եթէ ասիցեմք՝ եթէ մեղս մեք ոչ ունիմք՝ զանձինս
,, խաբեմք և ճշմարտուէն ի մեզ ոչ գոյ ։ . (ա. յովհ.
ա. 8. 10:) Ահա՝ ըզ կոյսն ամենևին գեղեցիկ ,
ամենևին՝ ըզ, ամենևին անարատ : Այս այ՝ այն-
չափ և այնպիսի , մինչև ցանկալ ի գեղ՚նէ երկ-
նա-

նաւոր թգ͞րի · ը͞մ (սաղ · խէ · 12 ·) * ցանկացաւ
„ թգ͞ր գեղոյ քո ‖ · նաև 'ի հայեցուածոյ գեղոյ
նորա յափշտակիլ և ասել · * դարձո զաչս քո ա-
„ ռաջի իմ · վ͞ս զի ն͞ք ըստաուցին զիս ‖ · (երգ · Զ ·
4։) Ինչ որ ապշեալ և երկնայնոց բարբառելին
առնա · * դարձիր դարձիր սոմնացիդ՝ դարձիր դար-
„ ձիր, և տեսցուք զքեզ ‖ · (երգ · Զ · 12։) Օ այսմի
գեղեցկութ͞ի ունելով 'որ կուսին՝ կոչէ զինքն նաև
սեաւ յասելն · (երգ · Ա · 4 ·) * Սեաւ եմ ես և
„ գեղեցիկ ‖ · սեաւ՝ ը͞ս գոլոյ 'ի մարմնի , և գեղե-
ցիկ՝ ը͞ս գերազանցելոյ զերկնայնովք · սեաւ՝ ը͞ս գո-
լոյ ստեղծուած, և գեղեցիկ՝ ը͞ս գոլոյ մայր ստեղ-
ծողին · սեաւ՝ ըստ բ͞զմ ցաւոցն՝ մանաւանդ յայնմ
պահու յորժամ խեթիւ հայեցաւ 'ի նա արե-
գակն արդարութե 'ի խաչէ , և գեղեցիկ՝ ը͞ս հաս-
տատութե հաւատոյ, սիրոյ, և համբերութե ։ Այս
սեւութի և գեղեցկութի այնպ͞ս համեմատի 'ի կոյսն ,
որպ͞ս ստուեր և լոյս 'ի ծիածանն · զի որպ͞ս լոյսն խառ-
նեալ 'ի նմա ը͞ս ստուերի՝ սքանչելի երևեցուցանէ
զնա, սոյնպէս լոյս գեղեցկութե կուսին խառնեալ
ը͞ս յիշատակեն սևութե՝ առաւել սքանչելագոյն
ցուցին զնա, քան եթէ սոսկ լոյսն փայլէր 'ի նմ ·
վ͞սյ և պարծանօք ասէ · * սեաւ եմ ես և գեղեցիկ ‖ ։
Անզգիտելի է , զի կրկին է գեղեցկութի , ո͞ր հոգւոյ
և մարմնոյ, կմ ներքին և արտաքին · զորս լիագոյնս
և բարձրագոյնս ունէր 'որ կոյսն · որոյ վ͞ս ասէ առ-
նա ք͞ս · * ահա ես գեղեցիկ մերձաւոր իմ , ահա
„ ես գեղեցիկ ‖ · (երգ · Դ · 1 ։) Ահան է ձայն կմ
ցոյց բացառութե իրիք յայլմէ · և ըստ այսմ 'ի
կրկնելն զահան՝ ցուցանէ թէ 'որ կոյսն կրկին
գեղեցկութ͞բ 'ի վեր էր քան զայլս՝ եթէ գեղեցկու-
թ͞բ հոգւոյ, և եթէ գեղեցկութ͞բ մարմնոյ · ահա ասէ
գե-

դեղեցիկ ես դու ըստ հոգւոյ մերձաւորիմ. ահա դեղեցիկ ես դու և ըստ մարմնոյ։ Հոգևորական դեղեցկութիւն նշեյ կոսին յերիս փայլէր. մի՝ յանչափելի ընդոհն՝ զորմէ խօսեցաք՝ ի նախընթաց Ճառն. երկրորդ՝ ի կատարեալ ամառաքինութեանց, զոր խօսեցաք յայս Ճառ. երրորդ՝ որ՝ ի վեր է քան զամ՝ յարժանապատում ածամայր գոլոյ, որով ծագեալ զՃառագայթ փառացն ամ՝ զդեղեցկութիւն յաւիտենական։ Նոկ վ՚ը մարմնաւոր դեղեցկութե նշեյ կոսին գրէ մեծն ալպերտ. (գիրք. յաղ. գոլութե կոսին) այսպէս. * անմարթ էր մարդամոյ ,, զարդարել զերազանց տեսլեամբ և անզուգա ,, կան գեղեցկութե. որ բաղմօք առաւել գտաւ ՚ի ,, նմա, քան յեսթեր և ՚ի յուդիթ, քան ՚ի ռա ,, քել և ՚ի ռեբեկա. որք եին նախատիպք մա ,, րիամու. ուներ զծայրագոյն և զամենակատար ,, վիճակ ՚ի գեղեցկութե, որչափ կարէ լինել ՚ի մահ ,, կանացու մարմնոյ ըստ վիճակի կենցաղոյս և ըստ ,, տանելոյ բնութեն. զի որպէս ըստ եղև գեղեցիկ ,, տեսլեամբ քան զամ որդիս մարդկան, սոյնպէս ,, կոյսն ամենագեղեցիկ ՚ի դստերս մարդկան ‖. ըստ ամին խօսեցան և այլք ոմանք։ Նա սակայն զայս ոչ է պարտ իմանալ ըստ շքեղութե կամ ըստ ջքնաղութե, այլ ըստ վեհապանծ վայելչութե, ոպ արժան էր այնպիսի տիրուհւոյ. քանզի ոչ միայն ՚ի հաստուածոյ մարմնոյն ուներ զանհամեմատ չափակցութե, այլ և ՚ի ներքին գեղեցկութե հոգւոյն զեղոյր ՚ի մարմին նը հրեշտակային իմն վայելչութե. որոյ օրինակն տեսաւ ՚ի ծբն ստեփաննոս. քանզի դրի գնմանէ՝ թէ * տեսին զերեսս նը եբրև զերեսս հրեշտակի ‖. (գործ. ը. 15.) ոչ ըստ ջքնաղութե, այլ ըստ վայելչութե ։ Այնպէս և առաւելևս և ՚ի ծբ կոյսն. մինչ

զի որ միանգամ հայեր 'ի նա՝ պատկառէր և խոնարհէր, սքանչանայր և զգաստանայր։ Գեղեցկութիւնք կանանց և աղջկանց իբրև փուշ են և խայթեն զհայեցողսն. իսկ սորա կուսին իբր վայելչութիւն ծաղկանց, որ 'ի զգաստութիւն շարժէր զտեսողսն և 'ի պարկեշտութիւն. որպէս վկայէ սբն Ամբրոսիոս. (գիրք յաղ″ կրթ″ կուսից. գլ. 7։) Ըստ որում կոչի սբ կոյսն * շուշան 'ի մէջ փշոց‖. (Երգ. Բ. 2։) Ասի և՝ թէ * ոչ ոք 'ի նա հայելով՝ ոչ հայեցաւ յած‖։ Ահա սոյն այս սքանչելագեղ կոյս է՝ որ 'ի սմին աւուր ընծայեցաւ նմ 'ի դիմաց ազգի մարդկան ձեռամբ յովակիմայ և աննայի, լինել միջնորդհաշտութեան 'ի մէջ մեր և 'ի մէջ նմ, և բարեխօսութբ իւրով մերձեցուցանել զմեզ առ ած. միայն թէ և մեք մերձեսցուք յառաքինութիւն սորա կուսին, որով և ժամանեսցուք 'ի տեսութիւն երկնային փառաց նր։

ՃԱՌ ՉՈՐՐՈՐԴ։

'Ի տօնի աւետման սբ. ածածնին։

Իջցէ եղբօրորդին իմ 'ի պարտէզ իւր։
Երգ. Ե. 1։

Մեծ է խորհուրդ աւուրս այսորիկ և
անհաս 'ի մէնջ. այս այն օր է՝ յորում
մարդացաւ Ած յորովայն Սբյ կուսին.
և մարդս Ածացաւ յանձն Ածային
բանին։ Յանկացաւ ադամ Ածանալ. և 'ի
հեռանալն յԱծութենէ՝ ասաց Ած. * ահա ա_
,, դամ եղև իբրև զմի 'ի մէնջ‖. (Ծնն. Գ. 22։)
Այս ասացուած հանդիտանայ հանդամանաց
գրութեան կնքոյ, որով կնքեալն տեսանի ընդ
հակառակն կնքոյն. զի որ աջոյ է 'ի կնիքն՝ ձախու
գայ 'ի կնքեալն. և որ 'ի խոր է կնքոյ՝ բարձր
ձևանայ 'ի կնքեալն. յայս համեմատութի հայելով՝
յասելն * ադամ եղև իբրև զմի 'ի մէնջ‖, տե_
սանի բանին կնքի այսմ. * մին 'ի մէնջ եղիցի
,, իբրև զադամ մարդ‖. զոր և տիրամ անօրին_
եաց կատարել. իբր զի փոխ Ածանալոյ մարդոյն՝
նա ինքն Ած մարդացաւ, որով և մարդն Ածա_
ցաւ. իբր զի ցուցմամբ մի և նոյն անձին՝ մարդն

աստ_

ասացաւ և ասի ՀՀմարիտ ած, և ածն ասի ՀՀմարիտ մարդ. յորում և երևեցաւ անհուն իմաստուն ոյ. զորոյ զգեխարդն պատշաճ դատիմ առաջի դնել աստ։ Ի մեղանչելն ադամայ՝ բողոք եբարձ արդարութիւն ոյ դատակնքել զնա և զորդիս նր Ի մահ յաւիտենական. ձայն եբարձ և ողորմութիւն ոյ, խնայեա զի դու արարեր զսոսա. բայց այս ձայն ողորմուե չէզև լսել. զի հարկ էր նախ հատուցումն առնել արդարուե, և ապա ներել ողորմուքն. իսկ այսմ չէր հնար լինիլ. զի պարտաւորութեի հատուցմանն ադամայ անհուն էզև։ Ա՚ր պատձառն է՝ զի յանցանքն՝ զոր արար ևիմ անարգանքն՝ զոր հասոյց նա, եզև անհուն Ի պարտաւորուե. վ՚ր զի այնքա մեծ լինի անարգանքն՝ որքան մեծ է անարգեցն և փոքր անարգողն. իսկ արդ ած է անհուն մեծ՝ և մարդն անարգ էակ յոչնչէ, ապա և պարտաւորուե անարգանայ նր՝ որով անարգեաց զած՝ եզև անհուն, և արար զնա պարտաւոր անհուն հատուցմանն։ Իսկ այս անհուն հատուցումն ոչ կարէր լինիլ այլազգ, բայց եթէ կամ անհուն պատիւ ընծայելով անարգեցելոյն, և կամ անհուն պատիւ կրե լով անարգողին. և զի զանհուն պատիւ չէր կարօղ հատուցանել մարդն՝ վ՚ր զի հոնաւոր էր, հարկ էր զանհուն պատիւ կրել՝ ոչ ըստ սաստկուե՝ զի անըմբռնակ էր, այլ ըստ տեւողուե, ըզ յաւիտեանս յաւիտենից։ Կարէր ած կացուցանել զոք միջնորդ հաշտուե, և նր միջնորդուքն ներել այսմ. բայց այնու ոչ լինէր հատուցումն արդարուե իւրում. զի միջնորդն այն կամ էր սոսկ ստեղծուած, և կամ սոսկ ած. եթէ սոսկ ըստեղծուած էր, ոչ կարէր զանհուն հատուցումն

ցուսմն առնել. իսկ եթէ սոսկ ասէ՝ ոչ կարէր լինել միջնորդ, զի նոյնն ոչ կարէ ինքեան միջնորդ լինել. ըստ որոյ ասէ պօղոս. * միջնորդ միոյ ուրուք ոչ է, ,, բայց աստ մի է ‖. (գաղ. գ. 20։) Յանկնարկին լինել իրացդ՝ սաստկացաւ վէմ արդարութե և ողորմութեն այ. զի արդարութիւն ոչ նահանջէր ի խընդրելոյ զհատուցումն. սոյնպէս և ողորմութիւն ոչ նահանջէր ի խնդրելոյ զներումն։ Ապա ընդ միջ եմուտ աշխարհութիւն այ՝ որ իմաստուն էր, և եգիտ զայնպիսի հնարս, որով լինէր աշխարհիս հատուցումն. իբր զի մին յերից անձանց աստուածութեն՝ անսպասելով ողորմութե՝ լիցի միջնորդ. և զի միջնորդն պարտի հաղորդիլ երկուց ծայրից, պատշաճ դատեցաւ՝ զի անձն այն մարդասցի, և հատուսցէ արդարութեն այ։ Եւ զի ուր լինելի է հատուցումն, ենթադրի՝ թէ հատուցօղն ոչ միայն պարտական էջէ, այլ և կարօղ՝ի հատուցանել. կամ այսպէս ասացից, ոչ միայն պարտ էջէ, այլ և կարէջէ. արդ մարդն պարտիւր և ոչ կարէր. աստ կարէր և ոչ պարտիւր. իսկ եթէ նոյնն լինէր աստ և մարդ՝ մարդ գօրով պարտէր, աստ գօրով կարէր. զի զոր ինչ հատուցանէր՝ էր յանհուն արժողութե. որով լիանալ լինէր հատուցանել, և այնու խաղաղէր արդարութիւն այ. յորմէ ասէ՝ի տաղ. (ձէ. 10.) * ողորմութի և ճշմարտութի ,, թի պատահեսցին, արդարութի և խաղաղութի համ ,, բուրեսցին ‖. իբր թէ ասէր. ՝ի միաբանիլ ողորմութեն այ ընդ ճշմարտութե նորա՝ արդարութիւն գտցէ զխաղաղութի։

Յորժամ այսր խորհրդոյ՝ ոչ թէ վիճակ արկաւ երից անձանց, և էլ վիճակն ՝ի վէր իմաստութե՝ այ ՝ի վէր որդւոյ. ընդ որ հաճեալ նէր ասացեալ. վիճակ էլ ինձ ընդ ածային ընտրելի անձինս, վիճակ

մար-

մարդանալոյ և ժառանգելոյ զմարդկային բնութիւնս. և զի յոյժ հաճոյ եղև նմա այս, յաւելաւ ասել. * ժառանգութիւն իմ հաճոյ եղև ինձ ‖. (սաղ. ԺԶ. 6։) Ի հատարել այսր վիճակընկերացուն՝ իբրև եկն նա յԱ՝ դադարեցաւ խոսելութիւն Ցիս, իբրև ղդատարուսն խոսելուն ծուլու. ոչ դադարեցաւ նա ինքն ծուլն յորժամ վիճակարկութիւնք ընկեցաւ յումնան ի ծուլ անդր. որ և նախանշակարեր ղդալ որդւոյն ասէ յԱ. (յովն. Ա. 12. = 15։) Իսկ թէ ընդր որդւոյ եւ վիճակս այս՝ և ոչ հօր կամ հոգւոյ, այս կախէ զհաճութիւնն այ. և սակայն ըստ մերմ խօսելով՝ յաւէտ որդւոյ վայել էր քան հօր կամ հոգւոյն։ Զի՝ զի հայրն ինաստ ունի հայր, և որդին որդի, և հոգին հոգի. նաև զի որդին ինալով որդի ասի՝ լինելի և որդի մարդոյ. իսկ եթէ հօր կամ հոգւոյն վիճակէր, նոյնն ինալով հայր՝ լինէր և որդի. նաև ոչ լինէր ըստ ամի անսկիզբն և անծին. և հոգին ոչ գոլով ծնուածդ՝ այլ բղխուածն, լինէր բղխեալ և ծնեալ այլեայլ տեսակաւ էլման՝ ի բղխմամբ և ծնընդեամբ. և ասիւր հոգի ասի և որդի մարդոյ. (կամ բղխուածն ասի և ծնուածդ մարդոյ). նաև զի լինելին յաճախային անձինս երկու որդիք։ Զի և ևս զի որդին ըստ կարդի էլմանց՝ էր միջին երից անձանց, ապա նմա պատշաճ էր՝ միջնորդ լինել և միջին ըստ ամի և ըստ մարդ։ Երկրորդ՝ զի մարդիկ ի ձեռն այսր խորհրդոյ լինելոց էին որդեգրական որդի ասի, ապա արժան էր բնական որդւոյն ասի լինել որդի մարդոյ, և առնել զնա որդեգրական որդիս՝ իբրև իւր եղբարս և ժառանգս սոյնը ամի՝ զոր խոստացեալ էր ասել ի կտակի իւրում. իսկ եթէ որդին ոչ մարդանայր՝ մարդս ոչ կարէր ժառանգ լինել. զի

կայր՝

կայր՝ որ ժառանգէր, ըստ որում որդւոյ անկանի ժառանգութիւն. իսկ մարդանալովն՝ ոչ միայն ինքն եղև ժառանգ իբրև մարդ, այլ և զմարդն արար այնմ հաղորդ. ինքն իբրև դուստր և անդրանիկ, իսկ մարդն իբրև անդամ և եղբայր։

Արդ՝ զի բանին է ձայնաւորիլ. ապա և բանին այ պատշաճ եղև ի ձեռն մարդեղութեանն իբր ի ձեռն ձայնի ձայնաւորիլ, այր մարմնանալ։ Այլ ևս բանին է խօսիլ ուսուցանել և առաջնորդել, ապա բանին այ վայել էր գալ, և ուսուցանել Հոգի՝ զի որ մարդանալոյն էր՝ պարտ էր նիմ բարեխօս լինիլ և աղաչել. արդ յաւէտ որդւոյ պատշաճ՝ աղաչել զհայր՝ քե հօր զորդի։ Խնգերդ՝ զի մարդն իմաստութեանցանկանալով անկաւ, ապա արժան էր՝ զի իմաստութիւնն յաւիտենական՝ այր որդին այ եկեալ կանգնեսցէ զնա. և ջաղխեսցէ զգլուխ խաբեբայ օձին, որ ասացաւ լինել իմաստնագոյն ի պատրել։ Ի եղերդ՝ զի ոմն ձարտարապետ ոք զխաթարել տունն նորոգէ նովին գաղափարաւ՝ որով շինեաց զայն, սոյնպէս և հայրն երկնաւոր պատշաճ գտաւ՝ զի զխաթարեալ ցս նորոգեսցէ նովին գաղափարաւ՝ այր այնու բանիւ, որով շինեաց զայն։ Այլ ևս որովհետև նորոգելին էր պատկեր այ՝ այն է մարդն, պատշաճ էր նորոգել ինքնաբուն պատկերաւ նոր՝ այր որդւովն։ Այլ արդ զոր ինչ և խորհեցաւք զայսմ խորհրդոյ՝ և զոր ասելմաթեացաւք, անկարասնամբ հասու լինել. զի այնպիսի իմն է՝ զոր հաւատալ պարտաւորիմք և քննել արդելանիմք. զորմէ խօսելով և ժողովն տոլետեան՝ ասաց. * խոստովանիմք ուրեմն՝ թէ այ կարէ ինչ՝ զոր մեք հետազօտելոչ կարեմք։ Ո այսպիսիս խօսելով և՝ բան օգուտինոս (զիրք ընդեմ փեղկեսի) ասէ. * հաւատքն

դա-

դաւանի . մտօքն մի հետազօտեսցէ ‖ . Ք̃զի է խոր-
հուրդ ծածկեալ և անքննին . * զխորհուրդն որ
„ ծածկեալն էր 'ի յաւիտենից և յազգաց ‖ . (կող.
ա̃ . 26 ։) Զայս խորհուրդ ոչոք ծանեաւ ասէ Ե-
րանոս . (գիրք . Ե̃ . ընդէմ հերետ . գլ. ժը̃ .) * ոչ
„ վաղէնտինիանոս , ոչ մարկիոն , ոչ սատուռնինոս ,
„ և ոչ բասիլիոս , եւ և ոչ հրեշտակք և ոչ հրեշ-
„ տակապետք , և ոչ իշխանութիւնք , և ոչ պետու-
„ թիւնք , այլ միայն որ ծնաւ զնա հայր , և որ ծնեալ
„ եղև որդի , և հոգին Սբ̃ ‖ ։ Իսկ դիոնեսիոս արիս-
պագացի . ('ի գիրս յաղ . ա̃ծային անուանց . գլ.
ը̃ .) ասէ . * Զի ա̃ծաստեղծութիւն է անճառելի է
„ ա̃մ բանի , և անդիտելի ա̃մ մտաց . և նորին
„ նախադունի՝ և առաջնոյն հրեշտակի ք̃ զա̃մ
„ առաջինսն հրեշտակս ‖ ։ Որ ինչ բանք լինին 'ի վե̃
այսր խորհրդոյ՝ առածս համարի կիւրեղ աղեք-
սանդրացին . այս խորհուրդ ասէ՝ ('ի բանսն գրեալ
առ Թադուհիս) առածէ . * ասեն՝ որդի ա̃յ և որդի
„ կնոջ՝ առած է . հայրն յերկինս, մայրն յերկրի՝
„ առած է . յերկինս առանց մօր , յերկրի առանց
„ հօր՝ առած է . որդի մօր ժամանակաւոր , որդի
„ հօր յաւիտենական՝ առած է . յղանայ 'ի կնո-
„ ջէ , և կինն մնայ կոյս՝ առած է . ստեղծուածն
„ ունի որդի զստեղծօղն , ստեղծօղն ունի մայր
„ զստեղծուածն՝ առած է . բան ա̃յ, և տղայ ան-
„ բարբառ՝ առած է . (զի Թէ բան է , ապա և
բարբառօղ) ‖ . և այլ որ ինչ և սոյնպ̃ի զայսմանէ՝
առած է ։ Հեթանոսք ծաղր առնեն զայսպ̃ի առա-
ծս, և հրէայք գայթակղին, ոմ̃ երբեմն գայթակղեին
ը̃ բանս մ̃գեից՝ զինչ է ասելովդ առած ա̃ն . որոց
պատասխանեաց երեմիա՝ մի ասել ը̃ կատակս՝ * առած
„ ա̃ն ‖ . (երեմ . իգ̃ . 36 .) ցուցանելով Թէ * համա-

„ ռօ

,, ստեղծեալ է առածն ‖ . զի որ բազում բանիւք ա-
ւանդեալ լինէր 'ի մարգարէից՝ 'ի մարդանալ որդ-
ւոյն ա՟յ համառօտեաց զայն ա՟ծ յերկուս բանս ,
յասելն՝ ա՟ծ և մարդ . ք՟ս սմին և որք զսովիմբ ասեն .
ք՟ր *անեղ եղեւ . անպարագիր պարագրեցաւ . կցոյ
,, մայր [illegible] ‖ . յոր մէտ ասէ պօղոս . (հռոմ . Ը . 28 .)
* բան մի հակիրճ և հմուտ արդարութբ՟ . զբանն
,, հակիրճ արասցէ տ՟ր 'ի վ՟ր երկրի ‖ : Որով թէ-
պէտ նշանակի ասել , թէ ա՟ծ փութով ունի կա-
տարել զբան իւր՝ զոր վճռեաց արդարութբ՟ , սա-
կայն եղանակ ասութեան հայի յայն՝ թէ ա՟ծ 'ի հա-
կիրճ բան ունի բովանդակել զաւանդեալն 'ի մար-
գարէից և 'ի նահապետաց . այլ որչափ հակիրճ ,
այնչափ անհաս . (եսայ . Ժ . 22 :) Երեք խորհուրդք
են հաւատոյ , ա՟յ երրորդութիւն , մարդեղութեան , և
հաղորդութիւն , երեքին ևս անհաս 'ի մեզ . խոր-
հուրդն երրորդութեան բնական է ա՟յ և հարկաւոր
յա՟ծ . և որ ինչ հարկաւոր է և բնական՝ թէև
անհաս իցէ՝ ոչ է անհաւատալի . նազի և բանիւ կա-
րեմք հաստել՝ թէ ունի ա՟ծ զմիտս և զկամս , որով
ծնանի զբան , և բղխէ զսէր : Խորհուրդն հաղոր-
դութեան կախի զխորհրդոյ մարդեղութեան .
և նոյն է ըստ գոյացութեան : Այլ խորհուրդն
մարդեղութեան՝ գոլով ամենևին ազատ՝ կա-
խի զհաճութենէն ա՟յ՝ եթէ ը՟ս գոյութեան և եթէ ը՟ս
եղանակին . ուստի և առանց կատարման ոչ կարէ
ըմբռնիլ 'ի մէնջ և հաւատացեալ լինիլ . զի ո՞ կարէր
խորհիլ՝ թէ վ՟ն նորոգման արարածոց , անչարչա-
րելին և անմահն և յաւիտենականն զգենլոց է 'ի
կուսէ մարմին չարչարելի , և մահկանացու , և փա-
կելոց է ը՟ ժամկաւ : Արդարև անհասանելի են խոր-

հուրդք

հուրդ է այս, քայց ոչ է անկարելի այ. զի ըստ վէ-
ճաստիայից՝ որ յայտնի հակասուԹիւն ոչ փակէ յին-
քեան՝ ոչ է անկարելի առ ած. զի * ոչ տկարասցի
,, առ յոյ ամենայն բան ||. ոյզ ասաց հրեշտակն ՚ի
հաստատուԹիւն այսր խորհրդոյ. (ղուկ. ա. 37։)
Ա՚հա այս խորհուրդ է՝ որ երևեցաւ այսօր յարդան-
զի սքեայ կուսին, զորոյ զկիշատակն և եկեղեցի սուրբ
մեծահանդէս տօնիւ կատարէ անվրէպ յամենայն
աւուր ՚ի 25 մարտի. առ ՚ի նշան ամենամեծ սքան-
չելեաց, զոր արար ած յաշխարհի։
Ա՚յս զի մեծ էր խորհուրդս այս՝ խորհիլն և դաշտնի,
ոչ կամեցաւ ած վայելաղակի և միանգամայն յայտ-
նել, այլ առ սակաւ սակս դարուց ՚ի դարս. ոյզ զի ոչ
միայն առաւել յայտնի ցուցցի ողորմելի վիճակ
մարդկային կարօտուԹեանն, այլև առաւել վսեմաքե-
լի լինի խորհուրդն, և յարգոյ ընծայեսցի, և ՚ի
կատարելն անդ՝ մի անհաւատալի իմն Թուիցի, և
մի զարհուրեցուսցէ զՅս. ուստի ՚ի սկզբանէ ան-
տի սկսաւ պէսպէս օրինակաւ յայտնել, ոմանց ըստ
միոյ հանդամանաց՝ և ոմանց ըստ այլոյմ։ Յայտ-
նեաց նախ ադամայ՚ի Թէմրուէ նր ՚ի հասարակի
զգալիսն և մարդն լինիլ. (ծնն. բ. 23։) Յայտնեաց
և նոյի՚ի խորհուրդ տապանին, յոր եմուտ նա ինքն
նոյ՝ և փակեաց զինքն ՚ինամա, ՚ի ցուցանել Թէ որդին
այ պարագրելոց է յարդանդի կուսին. եցոյց նմ
և զհանգամանս այսր պարագրուԹեանն յաղեղն ամ
պոյն. յորում ՚ի ցօղել ցօղագին անձրևոյ՝ չառաւ
գայԹ արեգականն տապաւորել և խառնել ընդ ըստ
ուերի՝ երևեցաւ գեղեցիկ ծիածան. (ծնն. Թ. 15.)
՚ի ցուցանել Թէ ՚ի ցօղել ողորմուԹենն այ՝ չառաւ
գայԹ փառացն հօր տպաւորելոց է և խառնելոց է

ըմ մարդկութեանէ իբր ըստ ժողովրդի յամենամաքուր ամուսնութիւն մարիամ. և լինելոց է մարդ՝ իբր ծիածան դեղեցիկ, և սպեղն հաշտութեան։

Յայտնեաց և աբրահամու, և երդուաւ ևս օրհնել՝ ի զաւակին նր ամենայն աղգաց. և խոստացաւ՝ ի ջրհեղեղն աղգի կատարել զերդումն իւր. (ծնն. ԺԵ. 16.) զայսմ ջրհ աղգէ խօսեցաք՝ ի ձառն յղութեան կուսին Հայելով յանարատ յղութիւն նորա. բայց պատշաճ դատիմ այլով ինչ կարգաւ աստ ևս դնել զսոյն առաջի՝ Հայելով՝ ի յղութիւնն քոյ։ Եւ ըստ այսմ առաջին աղգ Համարի այն՝ զի եղև յՅիւ մարդ առանց մարդոյ, այր առանց առն և կնոջ, ոյզ ադամ. երկրդ աղգ Համարի այն՝ զի եղև մարդ՝ ի ձեռն առն առանց կնոջ, ոյզ եւայ. Երրդ աղգ Համարի այն՝ զի եղև մարդ յառնէ և՝ ի կնոջէ, ոյզ աբէլ և այլ մարդիկ. չերրդ աղգն՝ յորում կատարելոց էր խոստումն այն՝ չերևեր՝ ի միջի. զայն ևս երևեցոյց ասծ՝ այր է լինել մարդ՝ ի կնոջէ առանց առն, ոյզպէս եղև որդին այն. որ յղացաւ և ծնաւ՝ ի կուսէ առանց առն. զոր իբր փողով կանխագոյն հրատարակեաց եսայի յաւետն. *ահա կոյս յղասցի և ծնցի որդի ‖. (եսայ. է. 14։)

Յայտնեաց ասծ զայս և յակոբայ՝ ի մեռնամարտին ընդ նմ. զի յոչ թողուլ զնա յակոբայ՝ ասաց. *արձակեա զիս, քանզի այգ եղև ‖. (ծնն. լբ. 26.) իբր թէ ասէր. ահա այգ եղև, և ես մերկ եմ. վասն զի տակաւին չեմ զգեցեալ զզգեստ մարմնոյ, և այսպիսի երևիլոչ կամիմ. զգեցայց՝ ի ժամանակի, և յայտնեցայց։

Յայտնեաց զայս և սամփսոնի՝ յառնուլ նր զօտար աղջիկ մի՝ ի Հարսնութիւն, Թողեալ զիւրոյ երկրին. (դատ. ԺԴ. 1.) յօրինակ որդւոյն այ, որ Թողեալ

զհրեշտակական բնութեն իւրոյ երկրի՝ այսինքն երկնային պալատին, եւ զօտարն՝ այսինքն զբնութին մարդկային ։ Յայտնեաց և մովսէսի 'ի մորենին վառեալ, յորում նկարագրիւր խորհրդս այս․ զի երևէր մորենի և հուր, և հուրն ոչ վնասէր մորենւոյն․ (Ելից․ Գ․ 2։) Մորենին ցուցանէր զմարդկային բնութին, իսկ հուրն զա̃ծութին․ երկաքանչիւրոց 'ի միասին գոլով՝ ա̃ծութին ոչ կիզեաց զմարդկութին ։ Զայն եղև առ մովսէս, թէ տեղիդ՝ ուր տեսանես զմորենիդ վառեալ՝ է երկիր ս̃բ՝ անմերձենալի կուսկաց մարդոյ, ք̃ս ամենեւին կոյս․ որով նշանակի կոյսն մարիամ, որ եբեր զայսպիսի բերս ։ Շարական մեր մորենեաւ իմանայ զնոյն ինքն զս̃բ կոյսն մարիամ, յորում վառեցաւ հուրն ա̃ծ․ այս եւս վայելուչ է և գերազանց ը̃ երկդական տեսութեն, և յարմար եւս առաջիկայ տօնիս ։ Յայտնեցաւ այս նաև 'ի նոյն իսկ յանձն մովսէսի, ըստ որում եդաւ 'ի պրտուեայ տապանի, և արկաւ 'ի խաղի․(Ելից․ Բ․ 3․) որ օրինակէր զծնիլ որդւոյն ա̃յ յարգանդի կուսին'ի ջուր Յ̃ս։ Յայտնեաց զայս և գաւթի բ̃մ իւրով․ մինչև հուսկ յետոյ համարձակիլ նմա և ասել՝ թէ ա̃ծ մարդ եղանելով ծնաւ 'ի սիոն՝ այն է ս̃բ կոյսն․ (սաղ․ Ձ̃Է․ 4։) Յայտնեաց և սողոմոնի 'ի շինութեան տաճարին, որ օրինակէր զս̃բ կոյսն 'ի լինիլ բնակարան բանին ա̃յ․ նաև 'ի շինութեան այնր աթոռոյ, որոյ նմանն ոչ երևեցաւ․ (Գ․ Թագ․ Ժ․ 20․) յօրինակ ս̃բյ կուսին, յորում իբր յաթոռ բազմեցաւ որդին ա̃յ։ Յայտնեաց և եզեկիեայ արքայի 'ի ժամացոյց արեւուն․ (Դ․ Թագ․ Ի․ 10։) զորմէ տես 'ի ճառն

Է̃․ Հատ․ Ա̃․ 2։

Յայտնեաց ա̃ծ զայս և այլոց բազմաց մանաւանդ

մար-

մարդարէից մինչև ՚ի մաղաքիա. (եբր. ա. 1։) Համարձակիմ ասել՝ թէ յայտնեաց զայս նաև Տէրն Յիսուս, ոչ և նաբեւուդոնոսորայ. որ յայտնապէս եառ զորդին այ ՚ի կերպարանս մարդոյ ՚ի մէջ հնոցին բաբելոնի ընդ երիս ոք մանկունսն, և ասաց. * տեսիլ չորրորդին նման է որդւոյ այ ‖. (դան. ե. 92.) Թող աստ զայլևայլութիւնս գուշակուածն և յայտնուածն սիբիլլայից որք զարմանալիս խօսեցան զայսմ խորհրդոյ։ Զորդ սքի ամքն իւրեանց յայտնութիւք և գուշակութիւքն համանեցան այնպիսի նաւասլարաց՝ որք բարձեալ տանին յայլ երկիր զբաբելեցիսն պատուղս ՚ի ներքոյ յորդւոյ։ Ո՛ տանիլն ոչ տեսանեն զպտուղսն, բայց առնուն զհոտ նոցա. և բերեալտան այնոցիկ՝ որք ոչ աշխատեցան։ Այնպէս և հարք հին օրինաց բերէին և բերին զպտուղ խորհրդոյ մարդեղութեանն որդւոյն այ՝ գուշակելով և մաղթելով. առնուին զանուշահոտութիւնն միայն, և զպտուղն եառն այնոցիկ՝ որք ոչ աշխատեցան։ Օ այս խորհուրդ բերէին նոքա ՚ի ներքոյ յարդից՝ այ ՚ի ներքոյ արարողութեց այլևայլ ծիսից, որք դադարեցան և ընկեցան ՚ի քաց. ոչ թաւիին յարդք պտղոյ ՚ի ժամանել նաւուն ՚ի նաւահանգիստ։ Ըստ որդւոյն իւր յորժամ բերէին զողկոյզ խաղողին յերկրէն աւետեաց՝ բարձեալ էին զայն լծակաւ. (Թուոց. ժգ. 24.) նա որ դնայր յառաջոյ՝ ոչ տեսանէր զողկոյզն. իսկ որ ղկնի գայր՝ ոչ միայն տեսանէր, այլև կառներ ուտել. սոյնպէս և հարք հին օրինաց՝ որք բերին մեզ զողկոյզն անմահուն, ոչ տեսին զայն, այլ միայն գհոտն առին. իսկ որք եկին ղկնի՝ որոց նոր օրինաց՝ տեսանեին և տեսին զայն, և ձեռաւ կեցին և առ։ Այս յարմարելով ասէն զբան

իւր՝ ասաց ցառաքեալսն, ընդ որս և ցհետևողս նր. * այլք վաստակեցին, և դուք 'ի վաստակս նոցա մտէք‖, և վայելեցէք: (յովհ. դ. 38.) Արդ յետ որոյ յայտնեցաւ խորհուրդս այս մեծ՝ անհնարին անձկանօք ցանկայր մարդկայինս բնութիւն միաւորիլ ընդ յայտնեցելումն և խանդաղատէր ասելով. * իջցէ եղբօրորդին իմ 'ի պարտէզ իւր ‖ 'ի կոյսն մարիամ. և անդ * համբուրեսցէ զիս 'ի ,,համբուրից բերանոյ իւրոյ‖. (երգ. ա. 1.) Այս համբոյր էր նշան միաւորութեն, որով ցանկայր մարդկայինս բնութի միաւորիլ ընդ նմ, և լինիլ նոյն ընդ նմա:

'Ի փափագիլ մարդկային բնութե և 'ի պաղատիլ նախահարց տեսանել զլրումն այսր խորհրդոյ՝ փափաքէր և ած 'ի գործ դնել զսոյն. բայց ոչ զոք եգիտ 'ի սկզբանէ անտի, 'ի ձեռն որոյ մարթասցի կատարել. բազում դստերք երևեցան, և բազում որք կանայք պանծալի ցուցան. բայց ոչ զոք 'ի նոցանէ հաճեցաւ ընտրել 'ի լինիլ կատարիչ այսր խորհրդոյ, և բարձրանալ 'ի մայրութի այ. վն զի իւրաքանչիւր նք ունէին զարատ ինչ և զպակասաւորութի ոչ սակաւ. որոյ սակս ոչ արժանաւորէին այնմ պաշտաման: Հայեցաւ ապա որդիք մարդկան յերեսս երկ կուսին, և զնա միայն գտեալ ամենևին կատարեալ և արժանի այսմ խորհրդոյ՝ զնա մատուցին առաջի յաւուր ընծայման նորին. ըստ որում ասացաք 'ի ճառի այնր աւուր: Իսկ յընծայելն անդ փութացան և եդին զնա 'ի տաճարի ընդ այլ կուսանս, զի զարգասցի և պատրաստեսցի 'ի նոյն: 'Ի լնանել աւուրց հայեցաւ ընդ նա հայրն երկնաւոր և հաճեցաւ. հաւանեցաւ և ընտրեաց զնա իւր դուստր 'ի մայրութի որդ-

ւոյ

ւոյ իւրոյ: Հաճեցաւ և հոգին սբ իբր Է հարսն իւր և 'ի նոյն յարդարեալ պատրաստեաց զնա: Հաճեցաւ և որդին, և էջ աւետմամբ հրեշտակի և մարմնացաւ յարգանդի նր. և ծնալով որդի այ՝ եղև որդի մարդոյ. և սբ կոյսն ծնալով որդի մարդոյ եղև մայր այ. զորոց խոստացուք յառաջիկայ ճառս յերկուս հատուածս. յառաջնումն զհանգամանաց աւետմանն՝ որով յղացաւ սբ կոյսն զքս. և յերկրորդումն զհանգամանաց ածամայրութե սբյ կուսին:

ՀԱՏՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ:

Հանգամանք աւետման որք տեսանին 'ի յղանալ որդւոյն այ:

Ա. Յետ հաւանելոյն այ և վճռելոյ՝ թէ 'ի ձեռն սբյ կուսին մարմնով կատարելոց իցէ զխորհուրդ մարդեղութե, մարդկօրէն խօսելով՝ պատրաստեցաւ և իբրև թէ գործաւորեցաւ (կմ սոգտորլեցաւ) ձեռն 'ի գործ առնել և կատարել զոր կամեցաւն: Եցոյց նախ հրեշտակաց զսբ կոյսն, դա է ասելով՝ Է որ հաճեցայ. դա է՝ զոր ինձ ունիմ հարսնացուցանել. դա է՝ յորում ծոցածին իմ յղանալոց է կուսութե: Զայս լուեալ հրեշտակաց՝ 'ի հիացումն ըմբռնեցան. և խորհէին թէ զիարդ հանդերձեալ իցէ կատարիլ, արդեօք առանց յայտնելոյ կուսին, թէ յայտնելով նմա. արդեօք անմիջապէս ինքնին յայտնելով՝ թէ 'ի ձեռն սքանչելեաց ինչ. արդեօք միջնորդութե մարդոյ, թէ միջնորդութե իւրեանց: Ի խորհիլ նոցա զայս՝ հրաման եղև գաբրիելի՝ մեծի

հրեշտակն՝ փութալ դնալ առ նոբ կոյն, և զպատգամ իւր դնել առաջի նորա, միանգամայն իմանալ և զիմ տանդ, և սպասել պատասխանւոյ նորին։ Յաջիշ հրեշտակեայ գաբրիէլ զպատգամն. և հերձեալ անցեալ ըն անհամար բազմուն երկնային զօրուն Թեղ՝ կղ դեպ ուղիղ՝ի բարձանց անտի՝ի նազարեթ քաղք՝ի տուն նոբն յովսեփայ, և տեսեալ զնոբ կոյն յազօթս՝ յափշտակեալ զմայլեցաւ ըն սքանչելի տեսիլ նոր։ Ոսկ այլ հրեշտակք յիջանել անդ գաբրիէլի՝ առ հասարակ միաբանական հայեցուածով նայէին՝ի վերուստ անտի՝ի վայր՝ տեսանել՝ Թէզիարդ ողջունէ նա զկոյն. զինչ ասէ նմա, և զինարդ խօսի ըն նմ։ Եւ նոյն ինքն ինձ՝ որ առաքեցայն զգաբրիէլ՝ իբրև Թէ նստեալ՝ի պատշգամբ երկնից՝ դիտեր տեսանել՝ Թէ զինչ պատասխանի ունի տալ նոբ կոյն։ Տեսին ևս և ադամ և եւայ և այլք ըն նո զիջանել հրեշտակին առ նոբ կոյն տալ նմա զաւետիս փրկուեմարդկան. բայց Թէ զինարդ վճարելոց իցէ՝ սպասէին հասու լինել։ Ոսկ գաբրիէլ հայելով՝ի նոբ կոյն, և դիտելով՝ Թէ ահա հանդերձեալ է նա լինել մայր հաստչին իւրոյ, և կարգելոյ է Թագուհի երկնաւորաց և երկրաւորաց՝ պատկառեր խօսիլ ըն նմա. այլ զի պատգամ ցնծութե ունէր՝ի ձեռին իւրում՝ ցնծութիք մատոյց նմա՝ նախ ոչ զպատգամն, այլ զողջոյն իւր ասելով. * ուրախ ,, լեր բերկրեալդ նոր ըն քեզ ‖. կամ որ նոյն է՝ * ողջոյն ըն քեզ լի շնորհօք նոր ըն քեզ ‖. (ղուկ. ա. 28.)

Ո՛յս էդանակ ողջունի այնչափ դերագոյն եղև, մինչև ասել նոբց հարց, Թէ չէղև երբէք նմանն. ուստի ասէ որոգինէս. (Ջառ. ղ. ի վր ղուկ.)

* ար-

* սրդարև զնման ձև ողջունելոյ՝ եթէ առ այր և
„ եթէ առ կին՝ ոչ ուրեք գտի ՚ի գիրս։ և դարձեալ
ասէ. * ոչ յիշեմ թէ ընթերցեալ իցէ իմ այ-
„ լուր ՚ի նոր գիրս՝ լի շնորհօք. միայն մարիամու
„ պահն այս ողջունատուճուն ։ Ի ամբրոսիոս.
(ղուկ. ա.) ասէ * զարմանայ կոյսն ընդ հորաձև
„ ուղին աւետեաց. զի ոչ ուրեք ընթերցեալ
„ եղև (այսպիսի ողջոյն). միայնոյ մարիամու
„ պահեալ եղև այս ։ Ի սոփրոնիմոս (Հառ.
յաղ. աւետ.) ասէ։ * Ոչ պարզ լինչ խոստովա-
„ նիմ՝ կամ սովորական զայս աւետաւորութիւն,
„ այլ ամենևին զարմանալի. զի յարդուճէ եղև
„ ընծայութիւն, և ուղերձումն պարզևաց ։ Ի
՚ի Հառն վերայ՚՚ ասէ. * զաբրիէլ՝ որ աւետեաց
„ ծերոյ կուսին՝ պատկառեալ խօսեր ընդ նմա. զի
„ Հանապազ՝ թէ սրպիսի էր կոյսն, և յոր բարձ-
„ րութիւն վերայեալ. որովհետև գիտէր՝ թէ ամե-
„ նաօծն ած յայլ ամ էից զնա միայն ընտրեաց
„ առ այնպիսի դերագոյն պաշտօն, առ հնորհս և
„ առ փառս ։ Ի պետրոս ոսկևաբան. (Հառ.
„ Ձխ.) ասէ. * յայս քան ուրախ լեր բերկրեալ՝
„ լի շնորհօք՝ ոչ սուակ պաշտօն ողջունի երևի, այլ
„ մանաւանդ ընծայուն պատուոյ ։ Ի ՚ի Հառն
„ Ձխէ. ասէ. * այս ողջունատուճուն՝ հիանալի
„ իմն շնորհաւորուն է յասէն լի շնորհօք. լիու-
„ այնպիսի շնորհաց՝ որ տայ երկնից ղէառս, եր-
„ կրի զաճ, աղբայ զհաւատս, ախտից աւարտ,
„ կենաց կարդ, վարուց կրթուճէն. ահա զայս
„ շնորհս եթեր հրեշտակն, և Հառ կոյսն առ ՚ի տալ
„ տիեզերաց զփրկուճէ ։ Ի ՚ի Հառն. Ձխէ. ա-
սէ. * Նա ինքն հրեշտակն զարմանայ, թէ արդեօք
„ կինն միայն՝ թէ ամ մարդ ՚ի ձեռն կնոջ արժա-

,, նայան կենաց. սարսեցաւ ես թէ զիարդ Ած
,, բովանդակութ իւրով գայ յանձուկ որովայն
,, կուսական. որում արարածք ամ համանգա-
,, մայն անձուկ են‖: Իսկ մեկնիչն ասէ. (ըստ
լաւրենտիոսի յուստինեան. յաղ. աւետ") * Ո լը-
,, րուն այնր շնորհաց՝ որ էր 'ի Մարիամ՝ երկնա-
,, յին դեսպանն ներկայացոյց. և ծանոյց ես,
,, յասելն՝ լի շնորհօք, կմ ուրախ լեր բերկրեալ‖:
Արդ արժանէ գիտել, զի բառս κεχαριτωμένη՝ ըստ ինքեան
նկատեալ՝ նշանակէ զայն՝ որ վերջին ներգործու-
թեն կամաց ժառանգեալ ունի զբարին. և զի ետես
հրեշտակն՝ թէ ոբ կոյսն ժառանգեալ է զլրութի
ամ բարուն՝ ըստ ամ շնորհաց և առաքինուեց և
այլոց կատարելուեց՝ կոչեաց զնա բերկրեալ,
ըստ ժառանգող ամ բարուեց, և լի ամ բարեօք. յոր
միտ ըստ նախադրելոյդ 'ի լատ" փոխանակ բառիս
κεχαριτωμένη՝ դնի լի շնորհօք:
'Ի յոյնն ես կարէ այսպ իմացեալ լինել. զի 'ի
բնագիրս նյ գրի քեխարիթօմենի. իսկ այս ձայն
ըստ որում ելանէ 'ի բառէս χάρις՝ որ է շնորհք, նշա-
նակէ շնորհացեալ, կամ շնորհաւոր, որ է ասել՝
շնորհալի կմ շնորհօք լի. և վնկ լատինք այդպ
եդին: Բայց ըստ որում ծագի 'ի բառէս χαίρω՝ որ
է ուրախութի կմ բերկրութի՝ նշանակէ բերկրեալ.
վնկ թարգմանիչք մեր այսպ եդին: Իսկ իմաստ
երկաքանչիւրոցն ես ըստ ասացելոցս է նոյն. զի
լրումն հոգևոր ուրախուե կմ բերկրուե յառաջ գայ
'ի լրուէ շնորհաց. և լրումն շնորհաց բերէ զկատարեալ
ուրախուի կմ զբերկրուի: Իսկ արդ քզի ըստ առաւե-
լուե շնորհաց առաւելապ բնակի Ած 'ի հոգին, զայն
ես տեսեալ հրեշտակին 'ի ոբ կոյսն՝ յաւել ասել.
* Տր ընդ քեզ‖: Ընդ այս և նա ինքն հրեշտակն

զար-

զարմացաւ. զի՝ ի փուլթալ նը ժամանել վասլ՝ ի կոյն՝ յառաջ քան զհասանել առաքողին, եգիտ զնա անդ. սմին իրի վերացոյց զբան իւր ընդ զբան պատգամաւորի. վ՚ը զի պատգամաւորն առ որ գնայ՝ ասէ ցնա. պատրաստեա զանձն քո, կիր յաղ դարեա զօթևան քո, զի գայ ես իմ առ քեզ. բայց ՚ի գալ գաբրիէլի՝ տեսեալ զօթևան նը պատրաստեալ, և զնոյն ինքն զնորն նախ քան զինքն առ նա ժամանեալ և ընդ նմա լեալ՝ ասաց, ես ընդ քեզ. զի յերկինս թողեալ գնա՝ եգիտ առ կուսին. սորին աղագաւ ասէ բեռնարդոս. * յաղթեցեր սէր հր ,,րեշտակապետ. յառաջեաց ընդ զքեզ՝ որ առաքեցոյն ,, զքեզ՚՚։ Ա՚յլայս յառաջելս և այս լինելս ընդ նմա՝ կրկնակի մտածի. մի՝ ըմ որ եղև, և մի և՝ ըմ որ առ նմին լինելի էր. յեղեալն մտածի ընդ միանալ ըմն ոյ ընդ նոյ հոգևորապէս ՚ի ձեռն շնորհաց. ՚ի լինելին մտածի ընդ միանալըմն ոյ ընդ նմա մարմնապէս և գոյացապէս ՚ի ձեռն իրական յղութե։ Ա՚ստ երկուցս ընդ այսոցիկ ասաց հրեշտակն որ ընդ քեզ. մի՝ զի էր ՚ի նմա հոգեպէս, և մի և՝ զի լինելոց էր ՚ի նմա մարմնապէս։

ք. Ա՚ռեալ ոչ կուսին զողջոյն ՚ի հրեշտակէն՝ զարմացաւ՝ հայելով ՚ի խոնարհութի իւր. ընդ որում ասէ աւետարանչն. * և նա ընդ բանն խռովեցաւ ,, և խորհէր ընդ միտս թէ ոմպէս լինիցի ողջոյնս ,, այս ‖. (ղուկ. ա. 29։) Ա՚ւսայ ՚ի լսել ՚ի բերան հրեշտակին զբան ստուեր՝ ոչ զարմացաւ, և ոչ խռովեցաւ, զի ինքնահաւանութի տեղի ետ նմա. իսկ որ կոյն խռովի, զի ոչ համարեցաւ՝ թէ ընդ րևոյթ լինիլ իցէ չար հրեշտակի ՚ի հրեշտակ լոյս ոյ, ոմպէս եղև եւայի. զի գիտէր՝ թէ չարն առ նա ոչ մերձենայ. այլ զի եղանակ ողջունին ՚ի վեր

հր

էր քան զեզանակ հասարակ պատգամաւորն. և առ՝ ի զայս յայտ առնել՝ ոչ ասէ աւետարանչին՝ թէ խռովեցաւ ընդ տեսիլ հրեշտակին, այլ ընդ բանն. իբր զի ոչ զարմացաւ ընդ այն՝ թէ ո՞վ էիցէ և ո՛րպիսի ոք որ երևեալ ինքեան, այլ թէ ո՛րպիսի ինչ էիցէ այն պերազանց ողջոյն եկեալ՝ ի կոչմանէ այդ, և առ ինչ տուընեալ լինիցի ինքեան. որով և սկսաւ պատկառիլ առաջի մեծավայել ջուխճին այդ։ Կրկին առանձնախօսուն տեսանեմք անմարմնոց ընդ կուսիդ՝ ի բե՛ռ գերս (ասէ ալլեռտ. Բ. 3.) հակառակ միմեանց. մին բերկարայ ընդ եւայի, և միւսն գաբրիէլի ընդ մարիամու. միոյն վախճան էր դըժուարին, և միւսոյն կանդնուածն. միոյն եմուտ մահ յաշ, և միւսոյն կեանք. ՚ի միում տեսաւ հպարտուն՝ անհաւատուն՝ և տիաբուն՝ ընդ որս և գաւառանուն՝ ՚ի միւսում խոնարհ հուն, հաւատաք, և ըղձասուն՝ ընդ որս և ձգմարտուն. ՚ի միում էջ եւայ յանարգուն՝ զի անըղձոյշ գտաւ և անզգաստ, իսկ ՚ի միւսումն գարձրացաւ մարիամ՝ զի ըղձաւոր գտաւ և զգաստ. որով և ցուցաւ լինիլ կինն այն՝ զոր խմաստուն կոչեաց ✻ ըղձաստ և հըս ‖. կի՛ ընդ այլում ✻ ղգօն և ,, լուռ ‖. (սիրաք. իզ. 18.) ըղձաստ և զգօն՝ ՚ի հարցանելն և ՚ի գիտել. հըս և լուռ՝ ՚ի հաւատալ ձգմարտուն, և ՚ի յանսալ ածային պատգամաց. ✻ վասն զի ետ նմա՝ որ հաղորդեաց զինքն նմա՝ ,, զհանձար ՚ի գիտել, և զխոնարհուն ՚ի հաւաս ,, նիլ ‖ ասէ մեկնիչն։ Ընդ տեսեալ հրեշտակին՝ թէ որ կոյս փոխանակ ընդունելոյ զողջոյնն՝ զարմանայ և պատկառի, զօրացոյց զնա ա սելով. (ղուկ. ա. 30.) ✻ մի երկնչիր մարիամ, զի գտեր շնորհս յաշ ‖. մի զարմանար ասէ ընդ բանս

իմ,

իմ, որով կոչեցի զքեզ բերկրեաւ և լի ընդհօք զի գտեր ընդհես յոյժ ։ Եդ ասա զպատգամն ՏԻՆ առաջի նր , և ասէ ։ * և ահա յղասջիր և ծընա ,, ցիս որդի , և կոչեսցես զանուն նր յի. նա եղիցի ,, մեծ , և որդի բարձրելոյ կոչեսցի ։ և տացէ նմ ,, Տր Ած զաթոռն դաւթի հօր նր , և թագաւո ,, ցէ ՚ի վր տանն յակոբայ ՚ի յաւիտեան , և թա ,, գաւորուն նր վախճան մի լիցի ‖ ։ (ղուկ ։ ա. 31 ։) Ա՝եծամեծ բանք էին սոքին , զոր չէր ոք լուեալ ցայն ժամ ։ լուաւ ոք կոյսն , և հաւատաց ։ Այլ քանզի դիտեր՝ թէ յղութիւն և ծնունդ գործակ ցութիւք առն լինի , և դիտէր և՝ թէ ինքն ոչ կա րէր գործակցութիւք առն յղանալ և ծնանիլ զոր դի, նա՝ դիտէր և ՚ի մարգարէութենէ՝ թէ կոյս մի հանդերձեալ է յղանալ և ծնանիլ զորդի, (եսայ ։ է ։ 14 ։) զայսոսիկ դիտելով յայլ ինն զարմացումն վերացաւ , որով և վստահացաւ հարցանել ՅՀրեշ տակն ։ (ղուկ ։ ա. 34 ։) * զիա՞րդ լինիցի ինձ այդ ,, քանզի զայր ոչ դիտեմ ‖ ։ իբր թէ ասէր ։ այդ քո պատգամ որով՛ օրինակաւ կատարելոց է յիս ։ արդեօք առանց գործակցութե առն ՚ը գուշակութե մարգարէից , թէ գործակցութք ։ եթէ առանց գոր ծակցութե , այդ այլ ինչ է ։ իսկ եթէ գործակցութք առն՝ այդ ոչ կարէ կատարիլ յիս , զի ես զայր ոչ դիտեմ, և ոչ իսկ կարեմ դիտել ։ Յայսպիսի բարե գործ մտածութիւն դտեալ զնա Հրեշտակին՝ եդ առաջի նր և զօրինակ կատարելոց իրացն , և ասէ ։ մի կարծեր , թէ այս յղուն լինելոց ինչ գործակ ցութք առն, այլ * Հոգի՝ն սր եկեսցէ ՚ի քեզ և զօրուն ,, բարձրելոյն հովանի լիցի ՚ի վր ։ քզի և որ ծնա ,, նելոց է ՚ի քէն՝ սր է, և որդի այ կոչեսցի ‖ ։ (ղուկ ։ ա. 35 ։) Այս կամելով ցուցանել՝ թէ կարօղ է այն

առ-

առնել զայս, օրինակ եթէր զյղանալ յոլխաննու
յամուէն եղիսաբեթիէ ասելով։ * Եւ ահա
,, եղիսաբեթ աղգական քո. և նա յղի է ի
,, ծերուԹեան իւրում. և այս՝ վեցերորդ ա-
,, միս է նորա, որ ամուլն կոչեցեալ էր. զի ոչ
,, տկարասցի առ յամ ամ բան. ‖ (ղուկ. ա. 36։)
Եւասիկ քեզ պատգամ մեծ. մեծ ի կողմանէ
առաքողին, մեծ և ի կողմանէ նմ առ որ առա-
քեցաւ. մեծ՝ ի կողմանէ նիւԹոյն, մեծ և ի կող-
մանէ եղանակին։ Եւարտեալ հրեշտակին զայս-
պիսի պատգամաւորուԹիւն իւր՝ սպասէր վերջինս պա-
տասխանւոյ կուսին. սպասէին և հրեշտակք յեր-
կինս՝ զինչ ունիցի պատասխանել ըստ կոյն. սպա-
սէին և հոգիք նահապետաց և մարգարէից և այլոց
արդարոց եղելոց ի լիմպոսն, և փափաքէին լսել
ի նմանէ զհաճուն հաւանուԹե. սպասէր և նա
ինքն ամ. քանզի յառաքելն անդ զհրեշտակն
գաբրիէլ առ ըստ կոյն՝ բարձրացեալ ի դիտա-
նոց երկնից՝ նայէր. և ի խօսակցիլ հրեշտակին
գրեթէ ելեալ էր ի ձանապարհ գալ առնա։ Ասա-
տն և հրեշտակն փուԹացեր և փուԹացուցանէր
առնուլ պատասխանի ի ըստ կուսէն։
Եւ արդ մի՛ ևս յամեր ըստ կոյս՝ տալ պէտանի մե-
ծի պատգամաւորիս. զի ահա ամենեքեան սպա-
սեն քումդ հաւանուԹե. հայեաց և ի տառապեալ
ազգ մարդկան, որք ի տուռունս մեղաց պաշարեալ,
և ի բռնուԹէ բեւիարայ կաշկանդեալ՝ ակնուն
արձակիլ քոյին բանիւդ։ Ընանեաւ ըստ կոյն ըզ-
կամն ամ. հասու եղև և խորհրդոց նր. գիտաց ևս
Թէ յայսմ իրողուԹե ունի խաչակից լինել ըստ այնմ՝
զոր հանդերձեալ էր ծնանիլ. ետես՝ զի ընտրի
լինել տիրուհի երկնի և երկրի, Թագուհի հրեշ-

տա-

տակաց և մարդկան, մայր ամէ և աղքատկան ա-
մենաքեր երրորդուհե։ Ո՞յսոսիկ առաջնիկայ տե-
սանելով՝ հպատակեցոյց զանձն իւր հաւանութե
պատգամացն ամ՝ ոչ իբր իշխանուհի, այլ իբր
աղախին՝ սպասաւոր լինել ահագին խորհրդոյս.
ուստի ասաց. * ահաւասիկ կամ աղախին ամն,
„ եղիցի ինձ ըստ բանի քումմ։ (ղուկ. ա. 38։)
Յայսմ հաւանութենէ առաւել մեծ երևեցոյց զինք
կոյսն ղնոնարհուն իւր, քան թէ հրաժարեալ
լինելր ի հաւանելոյ։ Խոնարհութենին մովսէսի ի
հրաժարիլն ի մեծագործուէ անտի չեղև մեծ.
զի կարծեր թէ յիւրմէ ևս ունի ինչ առնել. և
յետոյ ի սպառնալ ամն հաւանեցաւ։ Այնպէ և
յովհաննուն ի մկրտելոյ ղքէս, և պետրոսին ի
լուացմանէն. զի՞նք ևս համարէին ունել ինչ յան-
ձանց իւրեանց. բայց յետոյ ստիպեցան, և բռնա-
դատեալ հաւանեցան. իսկ՝ նք կոյսն չունելով ինչ
ստիպումն՝ և միայն յայ գիտելով զնրան՝ անկշռե-
լի խոնարհութե հաճեցաւ հաւանիլ, և նովին քարձ-
րանալ։ Մեծ երևեցոյց սովին և զլեհանձնուեն
իւր՝ ի հաճիլն վստահիլ և հաստանելայսպիսի ան-
հաւանելի քարձրուն։ Մեծ երևեցոյց և զայլ առա-
քինութիս, որով զարդարեցոյցաւ ի սմին ժամու։ Ա-
այս կարի իրաւամբք. զի պր օրհնդք ի ժամ հարս-
նախօսուե զարդարին փառաւոր զարդուք, և ար-
ևանեն ի պարանոց իւրեանց զմեծագին յօրի-
նուճաս ոսկւոյ և ականց, սոյնպէս և սբ կոյսն ի
ժամ հարսնախօսուե իւրոյ, ամ ի ժամ աւետման՝
յորում խօսեցեալ եղև հոգւոյն սբոյ, երևեցոյց
յինքեան զսքանչելի զարդս առաքինուեց, եթէ
ի յընտրողուե, և եթէ ի հաւանուե. ոմն գրէ
(ալլերտ. ՀԵ. 3։) Յընտրողուե՝ ոչ եղև վաղվաղ-

կոտ

կոտ ըստ եւայի (ծննդ. իշ. 1.) ոչ գտաւ երկեսայ ըստ ղաքարեայ. (ղուկ. ա. 18.) ոչ երեւեցաւ դանդաղ ըստ սարայի. (ծննդ ԺԸ. 12։) ՚ի հաւանուել եղոյգ նախ զյօժարակամ հնազանդուելն, յասելն. * ահաւասիկ կամ ‖. երկրորդ՝ զծայրագոյն խոնարհուելն՝ յասելն. * աղախին ես ‖. երրորդ՝ զկատարեալ սէր առ այն՝ առ որ պատրաստեալ էր զանձն՝ յասելն. * եղիցի ինձ ‖. չորդ՝ զամենալի հաւատոյ՝ յասելն. * ըստ բանի քումմ։ Որ կոյսն՝ աղախին կոչելով զինքն ասէ՝ եղոյգ այծ զընտրիլ իւր ՚ի ծնեալսն առաջնիակայ խորհրդոյն, քայց սովին իսկ եղոյգ նաեւ զլինիլ իւր միշտ աղախին ոյ. և զայս յայտ արար յետոյ յայն բան՝ զոր ասացաւ առ եղիսաբեթ. զի հայեցաւ ՚ի խոնարհութիւն աղախնոյ իւրոյ. յորում համարի զինքն միշտ աղախին լեալ ոյ, և ոչ երբեք իւիք աղախին սկզբնաջարին՝ ոյր եղև այլոց. որք գոնէ ՚ի յղանալն զրաւել գտան ընդ աղախնութիւն կամ ըստ ծառայութիւն նորա. որոյ վասն միշտ երանեցաւ յամ աղգաց, եթէ յաւրացն ՚ի նահապետացն և ՚ի մարգարէից գուշակութիւք և փափաքմամբ, և եթէ զինքն՝ յամ մարդոց մարդկան և ՚ի հրեշտակաց։

ե. Ուրդ ՚ի հաւանել՝ որ կուսին և յասել, * ա,,հաւասիկ կամ աղախին տեառն՝ եղիցի ինձ ըստ ,,բանի քումմ‖, ՚ի նմին վայրկենի ամբողջապէս յղացեալ եղև յարդանդի կուսին էմմանուէլ Աստ և մարդ կատարեալ. և այն՝ յարենէ նոյն որ կուսին հոգւով սրբով. որով և նա ինքն Աստ անհաս ինն առաւելութիւք եղև ՚ի նմ և ըստ նմ։ Ուստ զինեալ՝ ՚ինմին վայրկենի. զի ոչ եղև թէմ առ ըստ հաստարակ յղութիւն մարդկան. զի որովհետև մարդիկ ՚ի սերմանէ յղանան, առ որամադրուի յղու-

թե

Թէ նոյ աւուրք պիտոյանան. արդ՝ աւուրք իբր քառասուն, և իգաց՝ իբր ուղտուն կիր Հօթանասուն: Նակ ՚քսին ոչ այսպէս, այլ ՚ի նմին վայր կենի. և զայս յայտնի ցուցանէ քան հրեշտակին՝ զոր ասայ.* ահա յղասջիր ‖. յորում քանի ահան ասուածի առնէ ընդ կայն՝ կիր զայն ինչ լինելին: Ո այս ցուցանէ և քան եղիսաբեթին, որ խոստովանեցաւ Թէ յաւետման անդ ՚ի հաւատալ կուսին՝ յղացեալ էր որդի ՚ի ծեր ամուսնոյն: Ա. սացին երկրորդ՝ ամբողջապէս. զի ՚ի վայրկենի անդ՝ ամենամաքուր արիւն կուսին որ ՚ի հոգւոյն սրբոյ նախապատրաստեալ էր՝ կերպացաւ մարդ կատարեալ՝ ստեղծմամբ քանական հոգւոյն և միաւորութեամբ քանին աստ. ուստի ոչ ասի՝ Թէ յղացեալ եղև մորմինն քրիստ, այլ Թէ յղացաւ քրս յարգանդի կուսին. և այն՝ ՚ի ջուր այնր կատարելոյն, յորում յղացեալ լինի մարդ յարգանդի, այլ կիրեղուն. ըստ որոյ ՚ի սկզբան ասի և ծնեալ ըստ այնմ. (մատ. ա. 20.) * որ ՚ի նմայն ծնեալ է ‖. ասին ակնարկելով ասէ նարեկացին առ աբգ կոյն. ոմ երջանիկդ ծնօղ, * որ զնայն և անմոլ ,, պահեաւն հոգեշունչ երկօք, (այ հոգւով սբով ,, երկեղով զայն քան՝ Թէ ահաւասիկ կամ աղաչ ,, խին ան՝ եղիցի ինձ ըստ քանի քում) ՚ի քեզ ընդ ,, կալար, ոչ ՚ի մանկէ՝ այլ ՚ի լրումն, ոչ հատմամբ՝ ,, այլ հաստատուն, ոչ բաժանաբար՝ այլ ամ ,, բողջեալ, ոչ փոխոխմամբ՝ այլ փոխատրուն, ոչ ,, ՚ի ծերս սահմանի տեղւոյ, այլ ՚ի սենեակ լայ ,, նատարը տղւոյ ‖: Ա. սացին երկրորդ՝ * նմանապէս ընդ՝ նոյ և մարդ կատարեալ ‖. զի Թէ չէր այսպէս՝ այլ յառաջն գոյանայր մարդ կուսին՝ և յետոյ միաւորէր ընդ քանին, երկուս անձնաւորութիւնք միաւորեալ

ընդ

Նային ընդ միմեանս ըստ նեստորի. վասն զի յետ անձնաւորելոյ մարդկութիւնէ՝ չէր հնար քաւ ժանիլ յանձնաւորութէ անտի և միանալ ընդ այլում անձնաւորութե։ Եւ թէպէտ ասէ ամենակալ ծոզ գոլով՝ կարէր քաւժանել, բայց այս լինելը ընդդէմ բնութե. զի լինելը եղծանել զմարդն՝ կալով նմա ի մարդկութե։ Եւ դարձեալ՝ մարդկութիւնն այն լինելը այլոյ մարդկուէ, և ապա լինելը մարդկութ որդւոյն ասէ. այլ արդ եթէ զայս կարէր, զայն դիւրաւ ևս։ Ասացի չէր. *յարենէ կուսին ॥. զոր մէ գիտելի է՝ զի այն արիւն՝ յորմէ յղացաւ քս, չէր արիւն երակաց, այլ արիւն արգանդի. վ՛ն զի արիւն երակաց ընդ բժշկաց չէ կարգեալ առ յղուն, այլ միայն արիւնն տեսակաւորել յարգանդի, ոյք լինին յայնոսիկ՝ որք յղանան զորդի. բայց և այս ոչ եղև ի՛ բր կոյսն ընդ օրինի հոսմանն կանանց, այլ ըստ գոյացուէ արեանն. իսկ եթէ չէր յայսոսիկ առբենէ՝ բր կոյսն ոչ լինէր ձշմարիտ մայր՝ այլ ընդ պատահման։ Ասացի հինգերորդ. *հոգւով սբով ॥. վ՛ն զի հոգին սբ կատարեաց զայս գործ յղուե. զորմէ գիտելի է, զի արիւնն արգանդի՝ զորմէ խօսեցաք, թէպէտ և կարգելէ առ յղուն, բայց հարկ է՝ զի յատուկ ինչ արարօղ զօրուբ տրամադրեսցի կամ ասացից եփեսցի յարգանդի անդ՝ ոյք լինի և ի նիւթ կաթին ի ստինս. իսկ այս տրամադրուբ կամ եփուածն լինի ի ծնողականն զօրուէ՝ եթէ նրին և եթէ արուինն. և զի հոգին սբ լցոյց զտեղի այսր արարողական զօրուբ, իբր զի ինքն պատրաստեաց և յարմարեաց զայն, ասի հոգւով սբով։ Այլ գիտելի է ևս, զի այս գործողուն իրբում մտածեալ ոչ է ասսկ հոգւոյն սբոյ կամ հօրն, այլ գործ ամենասբ երրորդուե. վ՛ն զի ո՛ և իցէ

գործ ամենակարողութեն այ՝ նմին է և այս, ոչ
սոսկ Հօր է և ոչ սոսկ որդւոյն կամ սոսկ Հոգ-
ւոյն սրբոյ, այլ երիցն ես. զի թր եթէ երեք մար-
դիկ ունէին զմի ևեթ ձեռն և նովին գործէին,
այն գործ ոչ լինէր միոյն, այլ երիցն ես. և
կամ եթէ ունէին զմի ևեթ ակն, ոչ կարէր մին
տեսանել զայս ինչ առանց տեսանելոյ միւսոյն,
զի մի է զօրութիւն տեսանելոյ և մի տեսութիւն. սոյն-
պէս է և յարտաքին գործողութիւն երից անձանց
ամենասուրբ երրորդութեան. զի յերեսին ես մի է էու-
թիւն և մի զօրութիւն գործելոյ: Սակայն գործողու-
թիւն ինչ ՟է յարմարութեան իմիք ընծայի Հօր, և գործո-
ղութիւն ինչ որդւոյ, և գործողութիւն ինչ Հոգւոյն սրբոյ.
թր ստեղծանելն՝ Հօր. յարուցանելն՝ որդւոյ. սըր-
բելն՝ Հոգւոյն սրբոյ. ևն:

Ըստ սմին յարմարութեան և յղութիւն քնի որ եղև յար-
գանդի կուսին՝ թէպէտև է գործ ամենասուրբ եր-
րորդութեան, բայց ընծայի Հոգւոյն սրբոյ ՟է այլևայլ
պատշաճողութեան. մի՝ զի Հոգին սուրբ է սէր Հօր և
որդւոյ. և զի ՚ի սիրոյն այ եղև մարմնանալ որդ-
ւոյն. ըստ (յովհ. գ. 16.) * այնպէս սիրեաց այ զաշխարհ,
,, մինչև զորդին իւր միածին ետ ||. սմին իրի ասի
թէ այս գործ եղև Հոգւով սրբով: Երկրորդ՝ զի այս
գործ կատարեցաւ ՚ի շնորհացն այ և ոչ յարդեանց
մերոց. ես և տրամադրութիւն շնորհաց, (որպէս առա-
ցի ՚ի Ճառն. ժ. համ. ը.) և զի շնորհքն սեպհական-
նի Հոգւոյն սրբոյ, ասի լինել Հոգւովն սրբով: Երրորդ՝ զի յղա-
ցեալն էր սուրբ և որդի այ. և քանզի սուրբ լինել և որդի
այ լինել՝ է գործ Հոգւոյն սրբոյ, (գաղ. դ. 6.)
վասն նմա ընծայի այս: Մեք Հոգւովն սրբով որդե-
գրիմք այ. իսկ որդին ոչ եթէ որդեգրեցաւ՝ զի
արդէն իսկ բնական որդի այ էր, այլ զի լցեալ

եղև հոգեւով՚եբվ.ըմ (ղուկ. Ը. 1.) * և յո՛ւ լի հոգեւով՚եբվ՝. (եւս և ղուկ. Ը. 14. և 18.) որոյ վ՚ա և յղուեն՚ն՚ն ասի հոգեւով՚եբվ՝ կամ՚ ի հոգեւոյն եբվ. ըմ * որ՚ ի նմանէ ծնեալ է՝ ՚ի հոգեւոյն սբվ է՝։ (մատ. ա. 20։) Օ այսոսիկ յայտ է թէ պարտ է իմանալ ըզ գործողուե՚ն կամ ըզ արարողուե՚, և ոչ ըզ եղերողուե՚ն կի՛ ըզ մարդեղուե՚. զի գործողուե՚ն էր ՚ի հոգեւոյն եբվ, իսկ եղերողուե՚ն կի՛ միաւորուե՚ն, որով բանն աճ միաւորեցաւ ըզ մարդկայն՚ն քնուե՚ ոչ հոգեւոյն եբվ էր և ոչ հօր, այլ միայն որդեւոյն ա՚յ. զի նա մարդացաւ, և ոչ թէ հոգի կի՛ հայր։ Ա՚սացի վեցե՚րդ՝ թէ աճ անհաս ի՛ն առաւե՚լուե՚ք եղև ՚ի նի՛, և ըզ նմա. զի թէ պէտ յա՛մի և ըստ ա՚մի է աճ, սակայն հայե՚լով՚ի կոյն՝ լինե՚ն ա՚յ՚ի նի՛, ՚ի մէջ բերէ զառաւե՚լուե՚ն ի՛նչ անբաւ՚ական թէ զի՛արդ՝ ծանի՛ր, զի աճ երբա՛կի ասի լինի՛լ յա՛մի. մի՛ գոյացուե՚ք իւրով որով կ՚՚ի նո՛ւ ըստսկս ոմն հոգին՚ ՚ի մարմնի՛՝ և առաւե՚լ ևս. երկրդ՝ ներկայուե՚ք, որով տեսանել զա՛մ ըզ ա՚մի. երդ՝ իշխանուե՚ք՝ որով կառավարե՚ զա՛մ ըստ ա՚մ շարժմանց և հանգամանաց իւրեանց. և այսոքիք եղանակք լինելոյն ա՚յ յայլ՝ ՚ի հնո՛րկի մտածին, և ասին հանրական։ Իսկ ՚ի մասնաւորի՝ այլևայլ օրինակաւ ևս ասի լինի՛լ յայլ. ՚ի սրբազան իւս օրհնուե՚ք. ՚ի քանակա՛նս ձանձրամբ. յարդարս սիրով. յերանելս տեսուե՚ք. և յայլս այլազգ։ Իսկ ՚ի ձեռ կոյն այլով ի՛ն գերազանց լրուե՚ք. հայրն երկնաւոր իբր՚ ՚ի գուստր՝ հոլանաւորուե՚ք իւրով. հոգին՚ն՚ իբր՚ ՚ի հարսն՝ շնորհօք և զօրուե՚ք իւրով. իսկ որդին կրկնակի. մի՛ հաձոյական ներկայուե՚ք իբրև ՚ի մի միայն իւր սիրե՛լի. և երկրդ՝ ձշմարիտ մարդեղուե՚ք իբրև ՚ի ձշմարիտ մայր, հանդիպե՚լով յորովայնի

նո՛ր

ներ։ ըմ (սիրաք։ լիդ։ 12։) * որ արարն զինս՝ հանդ-
„ եաւ՝ի տաղաւարի իմում ‖։ոչ զոյր հոստչին տեղի
յիջևանի ձիս, բայց միայն բանաւորս այս մսուր։
յորում պատեցաւ մարմնով, և եդաւ մարմնով-
անաւ մարմնով, և եկաց մարմնով ամսօրեայ ժամաւ-
որով և եղև ըմ գրելոյ նարեկացւոյն՝ * երանաւոր
„ խոստմանն տեղի ‖։ * երկիր անձ նակատ բանա-
„ կան քուսոյն։ և զգայական անդաստան կենացն
„ հացի։ և վառարան բորբոքման անչէջ կայծա-
„ կան։ և վայր դալարաբեր հայրական ծոցածին
„ ծաղկին։ և ծառ երկնուղէշ անթառշամ խնձո-
„ րին։ և գործարան գոյութեանէ լուսատու մարգար-
„ տին, և լեառն արձանունակ երկրալիր վիմին
„ ։։։ և արքայարան լուսակերտ անմահ թագին ‖։
ևս և * հարսնարան անլուծանելի անժամանակա-
կանն փեսայի ‖։ * եղեալ կառք անճնաւորն՝ կայից
„ բաղմելոյն յաթոռ քրովբէից ‖։ ոչ միայն ըմ նմա
լինելով, այլև՝ի նմա։ որոյ վ՚ը ասէ առ նա նոյն
երանելին։ * ոչ ըմ քեզ միայն, այլ և՝ի քեզ։ ոչ միայն
„ փառեցաւ քաղմել ըմ, այլև բնակեցաւ տաղաւարել ‖։
Ա՚րդ եթէ երանել է ժէգն այն՝ որոյ ոտ է նոյ,
(սղ.Ձնգ.15.)առաւ քանի՛ ևս երանել եղև՚ը կոյսն,
յորում իրաւ և գոյացաւել բնակեցաւ ոտ՚ի նմա՝
առաւել քան յերանեալս և՚ի հրեշտակս, նաև՚ի
նոյն իսկ՚ի պատգամաւորն գաբրիէլ։ Աստի ըզն
օգոստ։ (Ձառ յաղ։ ծննդ։ կուսին։) խոսել լով՚ի դի-
մաց գաբրիէլի՝ ասէ։ * որ ըմ քեզ՝ բայց առաւել
„ քան ըմ ևս։ դի է և՚ի հոգիդ և յորովայնիդ։ որ
„ զհոգիդ ընդ՝ ընդ և զորովայնդ ‖։ Ո՚յոյն գրէ
և՚ի Ձառն յաղագս ժամանակի։ (բան։ 18։) * որ
„ ըմ քեզ, բայց ոչ ոգի ըմ ևս։ կիս է ստեղծմամբ,
„ ՚ի քեզ է ծննդեամբ ‖։ Որ է յայլ պարագրելով

զնա. ՚ի ձբ կոյն է, պարապրել լինելոյ ՚ի նմանէ՝ ոչ ինքն ևեթ, այլև զօրութիւք իմն ամբն նը որք ին ՚ի նմա. զի որ պարագրի յիմիք պարագրին ՚ի նոր և որք եննն ՚ի պարագրելն։ Տը է յայլ՝ տալով նոցա զգոլ, և ոչ թէ առնլով ինչ ՚ի նոցանէ. ՚ի ձբ կոյն է՝ առնլով ՚ի նմանէ զգոլ մարդկային։ Տը է ը այլ՝ զի էն ՚ի նմանէ. ը ձբ կուսին է՝ զի է ՚ի նմանէ։ Տը է ը այլ՝ իբր ը տիարս և ը հաբօտս. ը ձբ կուսին է՝ իբր ը հզօրի և ը անկարծի. առ որ կարէ յարմարիլ բանն այն՝ զոր ասաց սաղմոսերգուն. (սաղ. ՃՁ. 3.) * ը քեզ է սկիզբն յաւուր զօրութե՛ն։ ՚ի թէ ը քեզ է սկիզբն ամի որդին ՚ոյ՝ որ վկայեաց զանձնէ՝ թէ ես եմ նախնին՝ ՚ի սկիզբն ամի. (յովհ. ը 25.) և այս՝ յաւուր զօրութե՛ն. ՚ի յայնմ աւուր, յորում լը ամի զօրացեալ եղև կոյն զօրութե՛ն հոգւոյն ձբ և հովանաւորութե՛ն հօր, ՚ի կրել յինքեան զբանն ՚ած բովանդակ՝ լինելոյ իբր մի ը նմ. ուստի ասէ անդրէաս եղմայի. (Ճառ յաղ. կուս.) խօսելոյ ՚ի բերանոյ զաբրիէլի առ ձբ կոյն. * որ յառաջն է քան զքեզ, ,, այսօր մի է ը քեզ, և յետ փոքու ծնանի ՚ի քէն. ,, որ սկիզբն է ամի՝ սկիզբն առնու այսօր ՚ի կուսէդ։ և դարձ թէ * անժամանակն անժամանակաբար ՚ի ,, քեզ երևեցաւ ՚ի ժամանակի։ ուր անժամանակաբար ասելն ցուցանէ՝ թէ ոչ ՃՄՒ՝ ՚ի թէ ոչ բնմ աւուրբք յղացաւ ձբ կոյն զքս, այլ ՚ի վայրկենի, ոպ ասացաք այժմ։

Ա՛յլ թէ յորմէ վայրկենի՝ գիտելի է, զի հաստատակաց աւանդուն է, և հաստատուն կարծիք եկեղեցւոյ՝ թէ եղև յայնմ վայրկենի, յորում ետ կոյն զՀաւանութե՛ն ասելով. * ահաւասիկ կամ ,, աղախին ՚ան, եղիցի ինձ ը բանի քումմ։ (ղուկ.

ա՟ծ . 38 .) զի ցայնժամ առաջի միայն եղեալ էր հրեշտակն զպատգամ ա՟ծն , և սպասէր պ՟ինւոյ , և ոչ մեկնեւ լինէր 'ի նմանէ ։ Իսկ ՟ըզի յասել կուսին * ահաւասիկ կամ աղախին ա՟ծն եղիցի ի՟ն ‖, մեկնեցաւ նա 'ի նմանէ , (ղուկ . ա՟ . 38 .) աստի յայտնանէ յայտնի երևի՝ թէ յայնմ ժամու՝ յասելն եղիցի՝ եղև յղութիւն ։ Ի սոսին հայելով Նարեկացւոյն գնէ զ՟ք կոյսն * ախիթ մարդկութեան բանի ա-
,, նեղին . գործի մարմնումն վեհին ընութեան ։ Արժան է աստ զարմանալ , թէ զիարդ այսպիսի մեծ խորհուրդ 'ի հաւանութենէ օրիորդի միոյ եառ զկատարումն . և յասելն ՟ըր եղիցի՝ եղև ։ Ասաց ա՟ծ . եղիցի լոյս, և եղև լոյս . ասաց կոյսն, եղիցի ա՟ծ մարդ, և եղև մարդ . հիացան վերնականք , հիացան և արարածք ա՟մ . զի ինքեանք 'ի հաւանութենէն ա՟յ եղեն , իսկ ա՟ծ 'ի հաւանութենէ կուսին եղև . գուցէ և ա՟ծ հիացաւ ընդ այս . զի ինքն զա՟մ արար այս ինչ 'ի հրամանէ իւրմէ , իսկ ինքն եղև մարդ 'ի հրամանէ կուսի միոյ ։ Հիացաւ և նա ինքն կոյսն . զի յասելն եղիցի , ետես՝ զի եղև Ճշմարտին , և ինքն եղև մայր եղելոյն , և այն՝ մայր ընտրութ՟բ իւրով, որի ինչ չէր բնաւ երբէք լեալ ։ Այլ թէ յայնմ վայրկենի՝ յորպիսի ցնծութիւն յափշտակեցաւ ո՟ր կոյսն, ինքն միայն գիտաց՝ ոչ միայն 'ի հոգի իւր, այլ և 'ի մարմնի , մինչև ասել . * անձն իմ ցնծասցէ 'ի տ՟ր,
,, ուրախ եղիցի 'ի փրկութ՟ն ն՟ր . և ա՟մ ոսկերք իմ
,, ասասցեն , տ՟ր ո՞ նման իցէ քեզ ‖ . իբր թէ ասէր . ո՞ իցէ նման յղացելոյդ յիս ա՟ծ և մարդ կատարեալ ։

Դ . Արժան է ևս քննել աստ , թէ ըՙնէր ա՟ծ զայս խորհուրդ անմիջապէս ոչ ծանոյց ա՟րյ կուսին՝ և կամ 'ի ձեռն մարգարէի ուրուք , այլ կամեցաւ 'ի

՚ինն՝ փոխանակ լուսաւորելոյ՝ անկան ՚ի կուրութի.
վ՚ն զի յանդգնեցան պաշտել զնա իբրև զած կամ ՚ի
տեղի այ. ոմն դրէ եպիփան (՚ի գիրս հերձուա-
ծոց. հերետ. ՀԲ. կամ ՀԹ.) * լո՛ւաք ասէ՝ զի ոմանք
„այնչափ յանդգնեցան՝ մինչև արկին զանձինս ՚ի
„մոլորութի՛ւն մեծ (զքեզ կուսէն). զարմացաք՝
„մինչ դարձեալ լո՛ւաք՝ թէ ոմանք ՚ի ձառէն ըղ-
„միշտ երբ կուսէն, ՚ի տեղի այ զնա հասուցին.
„և տակաւին կատաղութիւն ՚ի նոյն նկրտին, և
„չմարութի՛ւն ՚ի նմին յածին ‖ : Յայս մոլորութի՛ւն
կարէր հակիլ և երբն դիոնեսիոս արիսպագացի,
եթէ յառաջն չէր ծանուցեալ զչմարիտն ած.
զի՛ւ ըստ պատմելոյ դիոնեսիոսի կարթուսեան կրօ-
նաւորի՝ եւ՚ելաւ՚ն յերուսաղէմ, և տեսեալ անդ զերբ
կոյսն՝ ՚ի հիացման եղև. և եւս զնա ՚ի հիացման
անդ շուրջ պատել ՚ի հրեշտակաց, և լցեալ ան-
ձառելի փառօք. և ապա լինքն եկեալ երկիրեպագ
նմ և ասէ. եթէ ձչմարտուի՛ հաւատոյ ոչ նահան-
ջէր զիս՝ զքեզ պաշտէի իբրև զած ձչմարիտ ։
Ա՛յս դերապանցութի՛ւն սրբոյ կուսին ստիպ-
եաց և զոմանս յաւիշտակիլ և խօսիլ զայնպիսիս,
որք գրեթէ հաւասար ցուցանեն զնա աստուծոյ ։
Ա՛յլ և երբն եպիփան ՚ի ձառն ածածկի ասէ.
* Ա՛րդ զի՞նչ ասացից, և կամ զինչ խօսեցայց, զի
„արդ երանելոյ զամէ նաբոլոր արմատ փառան.
„զի բայց միայն յայ, այլ քան զամ վեհագոյն
„ևս ‖. իբր թէ ասէր. այնչափ դերապանց է մա-

րիամ,

րիամ, զոր չէ հնար իւիք բացատրել. այսչափ միայն ասեմ՝ թէ նա չէ ուծ. գերազանցութիւն նոր ստիպէ՝ ուծ ասել, այլ չգիմարտութիւնն պահանջէ՝ ստեղծուած ոչ դնել։ Վարձեալ ասէ եսկիան. (Հերետ, ՀԲ), թէ քո վնաս զգուշացուցանելոյ զհաւատացեալս՝ կին կռնեաց զմայր իւր. զի մի՛ ասէ գերազանցութիւնն նոր յորդորեսցէ զնա առաւելքան զկին պաշտել զնա իբրև զաստուածն։ Այս զգուշացուցն վերածի և այն՝ որ առանդի՛ ի սաղ. ձղ. 4. յորում վինակ ասելոց մարգարէին, ուծ ծնաւ՛ ի սիոն՝ այր՛ ի մարիամ, զրէ. * և մարդ ծնաւ՛ ի նմա ||. զի եթէ ուծ դներ, համարէին և զծնօղն ուծ լինել։ Վասն այսու որչափ զգուշացաւ մարգարէն՛ ի չըկարծեցուցանելոց զնոր կոյսն լինիլ ուծ, այնչափ գերազանց եղոյց զնա. զի այսու յայտ արար՝ թէ այնքան մեծ ետես զգերազանցութիւն նոր, մինչև կասկածիլ՝ թէ գուցէ ուծ համարեսցի նա, վասն եդ՝ թէ մարդ ծնաւ՛ ի նմանէ. զի ծանիցեն թէ կին ոմն է ծնօղն՝ և ստեղծուած, և ոչ ուծ։ Այլ քզի զոր ծնաւ նա՝ էր միանգամայն և ուծ, կարէր ոք հարցանել, թէ զիարդ հնար եղև կնոջ ծնանիլ զուծ. ասէ՝ թէ * ինքն հիմունս էարկ ,,նմա բարձրեալն ||. իբր թէ ասէր. այս է հնարք և գործք միայնոյ բարձրելոյ։ Վասն որում՝ այսչափ գերազանց է նոր կոյս ուծածինն՝ գերազանց սպաշտօն և երկրպագութիւն մատուցանի նմ։ Որմէ դիտելի է՝ զի չորեքկին է երկրպագութիւն. մին՝ մատուցանի մարդոյ՝ վասն բնական կատարելութիւն թէ կիսիշխանութիւն, և ասի մեծարանք. որպիսի եղև երկրպագութիւն աբրահամու՝ զոր մատոյց որդւոյն քետայ. (ծնն. իդ. 7.) Երկրորդ՝ մարդոյ կամ հրեշտակի վասն գերբնական կատարելութեն. որպիսի

եղև

եղև այն՝ զոր մատոյց աբրահամ հրեշտակաց ետն.
(Ծնն. ԺԸ. 2։) Արդարդն՝ ձշմարտին այ. որպիսի
եղեն այն ամ՝ զոր աւանդե՛ սբ գիրն։
Խակ էրդն՝ այնմ՝ որ՝ ի վեր է նաև քան զկարգ շնոր.
հայ և քան զլինձակ գերբնականն, և՝ ի վայր
քան զնա՛ծ. և այս պաշտօն յա՛ծաքանից կոչի գեր.
ծառայութիւն, և յունարէն հիպէռատուլիա՛. և զի
միայն սբ կոյսն մարիամ դաւանի յայսպիսի գե.
րապանցուե՛, նմա միայնոյ ընծայի այս պաշտօն և
երկրպագութիւն. այնպէս զի սովին պաշտամամբ
մատուցանեմք նմ՛ զայնոսիկ գովաստանական բանս՝
զորս մատուցանեմք ա՛յ, յասելն առ նա. օրհնեմք
զքե՛զ, վերօրհնեմք, մեծացուցանեմք, բարձր
առնեմք, բարեբանեմք, պաշտեմք, երկրպաշտ.
նեմք. ևն. զորս այլոմ սբոյ ոչ ընծայեմք, և ոչ
խակ կարեմք ընծայեցուցանել։ Այսպա զայսպիսի
պաշտօն և զբարձրագոյնն ևս քան զսոյն մատու.
ցանելով նմ՛ դիցուք՝ ի նա զկոյս մեր ասպատ ինե.
լով՝ ի գիաստիրուհի նր։ Աւելի միոյն մեր լեցի յա.
ւետ յուսալ՝ ինա և սիրել զնա, քքննել զանքննե.
լին և զծածկեալ բարձրուե՛ նր։ Եզոս գետ յա.
ռատանայն բարձրանայ. և ըստ սլինիոսի սկիզբն
նր ծածկեալ կայ՝ ի բարձրագոյն լերինս մօտ՝ ի
սահմանս բարիյուսոյ, կամ մօտ՝ ի հրէանդանն
բարեյուսոյ։ Արդ ե՞ կոյժ գերազանցուե՛ սբոյ
հուսին՝ սուսատացեալ յա՛ծուէ անտի, և ծածկել
կայ՝ ի մէնջ. առ որ ոչ ժամանեն միտք մարդկա.
կին, այլ միայն բարի կոյս մեր. սովաւ մատե.
ցուք առ նա իբրև առ ապատինուե՛ բարի յուսոյ.
որով և կարասցուք ժամանել առ նա և ժառանգել
զգերազանցուե՛ նր՝ ի միառն իւրում յաւիտեանս
յաւիտենից. ամէն։

ՃԱՌ ՎԵՑԵՐՈՐԴ.

՚Ի տօնի ծննդեանն քրիստոսի։

Ահա կոյս յղասցի և ծնցի որդի. և կոչեսցեն զանուն նր՟ Էմմանուէլ. որ թարգմանի ընդ մեզ ա՟ծ ։
Եսայ. Է. 14.

՚Ի բարբառիլ մարգարէին և յաղաղակելն * Ահա կոյս յղասցի, և ծնցի որդի և կոչեսցեն զանուն նորա Էմմանուէլ ‖, զքանչացան յայս ձայն երկինք և երկիր. զի անհաւատալի իմն լուր առա, և անիմանալի ևս. քանզի ո՞ կարէ հաւատ լինել և կամ հաւատալ՝ թէ արարածական բնութի կարիցէ զարարիչ ծնանիլ. որդարև սոյն այս անկարելի իմն երևի. զի ո՟պ անբան էակ ոչ կարէ ծնանիլ զբանական, սոյնպէս և ոչ արարած զարարիչն ա՟ծ. վ՟ զի ա՟յ միայն է զա՟ծ ծնանիլ։ Նաև թէպէտ յայս բան, ծնունդն՝ ոչ դնի ը՟ ա՟ծութեն լինել այլ ը՟ մարդկութե, ը՟ որոյ ծնեալն կոչի Էմմանուէլ, սակայնյայտ է թէ մարգարէն ոչ զմարդկութին համարի ծնանիլ կամ զսոսկ մարդն, այլ զԷմմանուէլն՝ ա՟յ զա՟ծ ը՟ մարդկութե, կամ զա՟ծ մարդացեալ։ Իսկ առ ՚ի ծնանիլ զա՟ծ՝ նաև ըստ մարդ-

մարդկութե պարտ է ծնողին լինիլ՝ եթե ոչ այծ գէթ այծապետ լինի. վ'որ ալ ծնունդն պահանջէ զնմանութի՝ ի մէջ ծնողին և ծնիցելոյն. ալ թէ չկայցէ նմանութի՝ ծնունդ ոչ ասի. ոայ որդունք՝ որք գոյանան՝ ի կենդանիս՝ ոչ ասին ծնունդ, ալ չունին նմանութի ընդ ծնողին: Այլ այժմ եթէ կատ՚ղոյ ինչ իցես կշռեա և չափեա՝ թէ ալինչ պարտ իցէ խորհիլ և խօսիլ ընդ կուսէն, զորմէ է գուշակուն մարգարէիս, յասելն՝ թէ ահա կոյս ալ ծնանիցի է ալծ. չիշխեմք արդարև ասել ինչ, այլ միայն հիանալ և ափշիլ:

Ալպաքէն երկաթ ոչ կարէ ինքնին ծնանիլ ալհուր, եթէ ոչնահս հրացոյն, և ոայ թէ թողցէ ալերկաթ գոլն իւր, և ալգեցցի ալգոլ հրոյ. ապա՝ ի ծնանիլ ալդոյ կուսին ալծ՝ ոայն ինչ պարտ է երևիլ բայց եթէ օրպէս ասացի՝ լինիլ իւր ալծապետ լինի՝ ոչ բնութե, այլ հաղորդութե. ապա թէ ոչ՝ կամ հարկ լինի ասել՝ թէ նա ոչ քաւականացաւ ծնանիլ ալծ, և կամ պարտ է հաւատալ՝ թէ ուհաս նա յայծութենէն մերձաւորութի անբմբռնելի՝ ի մէնջ, և անքննելի. ուստի նարեկացին, անքննին ծնող կոչէ ալնա յասելն. * արարչին անհաս ,, տնօրէնութե անքննին ծնող՚՚: Ցեսանեմք՝ ալ կենդանիք՝ ոչ ծնանին ալորպէս մինչև հասեալ իցեն ի կատարել հասակ՝ ի կարգի բնութե. այս կանոն պահի և՝ ի կարգի ընծորհաց. ապա և առ՝ ի ծնանիլ ալծ պարտ է ծնողին հասանել՝ ի չափ այնպիսի կատարելութե, որպէս մարթասցի ծնանիլ ալնա. իսկայս չափ՝ ի վեր է քան ալծամ չափ. ալ չափն մեծութեն այդ: Այլ թէ ալիարդ մարթ իցէ այսմ լինել՝ անկարանամք ձառել, և ոչ միովիւիք արժանաւոր բանիւ ալայսպիսի արժանաւոր ծնող

քարոզել, ոչ երկրաւորքս միայն՝ այլև ոչ երկնա-
յինք. վասն որ ըստ երջանիկ Հռետորին, * ան-
„ձառութ անհասանելիանաւ վեհապոյն ամենի վա-
„կեալ գոյանի. և ոչ զօրեն երկնայինք զարար-
„չին անհաս տնօրինութիւնն ծնող վե-
„րաքարոզել ։ (նարեկ. ի գովել. կուսին) Այս-
անիմանալի և անհաւատալի խորհրդոյ հաձեցաւ
խնամատուիչին այնոր լման նշան տալ. էառ ի ձեռս
կուսուհին, և զայն ետ. այս ասէ լիցի ձեզ նշան
մեծի խորհրդոյս, զի որ ծննանելոցն է զէմմա-
նուէլն ածծ կոյս է, և կուսութ ծննանելոց է գնա։
Այս ասաց եսայի առ աքազ՝ յորժամ միաբա-
նեցան ընդէմ նմա ասորւոց, և փա-
կէհ արքայ իսրայէլի՝ որդի ռոմէլոյ. (եսայ. է.
1. 10։)

Ծանիր սակայն, զի ոչ աքազայ ետ զայսպիսի մեծ
նշան, զի անարժան էր, այլ տանն յուդայ։ Ասաց
նախ ցաքազ. խնդրեա դու քեզ նշան, ոչ որ ի
ներկայն՝ և ոչ որ յայսմանէ է, այլ ի խորութեան
կամ ի բարձրութենէ. և յոչ խնդրել նմա՝ եսայի ետ
ի խորութենէ և ի բարձրութենէ. ի խորութենէ՝ յատեանն.
* ահա կոյս յղասցի և ծնցի զորդի ։ ի բարձրու-
թեան՝ յատեանն. * և կոչեսցի անուն նորա Էմմա-
նուէլ ։

Այս առ ի ցուցանել՝ թէ ոչ աքազու տայ զայս նշան
խոր և բարձր՝ այլ տանն դաւթի, յատեանն ասէ
(է. 13.) * լսե՛արասք տուն դաւթի ։ . . . տացէ ձեզ
տէր ինքնին նշան։ նաև զի ի լռանալ նշանին՝ չէ-
րևեր աքազի միջի, զի անցեալ էին ամք իբր վեցհա-
րիւր. այլ կայր տունն դաւթի, յորում կատարե-
ցաւ։ Այս ըստ ոմանց խորհրդոյն կարգեալ էր յա-
զատութիւն մարդոյ ի ձեռաց մահու և սատանի, սմին

ԻՐԻ ՀԱՅՍ ՆՇԱՆ ԵՏ ԱՅՍ՝ Ի ՊԱՇՏՊԵԼ ՌԱՍԽՄԱՅ ԵՒ ՎԱՂԵՍՈՅ,
ՅՈՐ ՄԱՀՈՒ ԵՒ ՍՏՆՈՒՑ: ՅԱՅՍ ԲԱՆ ՄԱՐԳԱՐԷՆՆ՝ ԵՐԿՈՒ
ԻՆՉ ՏԵՍԱՆԻ. ՈՐՈՑ ՎԻՆ ՀԱՅԻ Ի ԾՆԵԱՑՆ, ԵՒ ՎԻՒՍՆ
Ի ԾՆՈՂՆ. ՄԱՐԳԱՐԷՆՆ Ի ԾՆԵԼՆ ՀԱՅԵԼՈՎ, ԵՒ ԶԸ ԲԱՐՁ-
ՐՈՒԻՆՆ ՀԻԱՆԱԼՈՎ ՂԱՅՆՈՊԻՍԻ ԻՆՉ ԱՍԱՑ՝ ՈՐ Ի ՎԵՐ Կ ՔԷ
ՂՄՏԱԾՈՒԹԻՆ ՄԱՐԴՈՑ. ՅՈՐ Կ ԵՄՆԱՆՈՒԿԼ, ՈՐ ԼԱՐՈՒ-
ՄԱՆԻՆ՝ ԸՆԴ ՄԵՂ ՅԱԾ, Ի ՆՇԱՆԱԿԵԼ ԹԷ ՆԱ ԻՆՔՆ ՅԱԾ
ՀԱՆԴԵՐՁԵԱԼ Կ ՄԱՐԴԱՆԱԼ: ՈՅՆՊԷՍ ՀԱՅԵԼՈՎ Ի ԾՆՈՂՆ
ԵՒ ԶԸ ԳԵՐԱՂԱՆՑՈՒԹԻՆ ՆՈՐ ՂԱՐՄԱՆԱԼՈՎ ՂԱՅՆՈՊԻՍԻ
ԻՆՉ ԵՂԱ ԱՌԱՋԻՆ, ՈՐՈՎ ՂԱՐԹՈՑՑ ՁԱՐԱՐԱԾՆ, ԱՅՆ Կ
ԿԱՏԱՐՈՒԹԻՆ ԾՆՈՂԻՆ: Ի ԼՐԱՆԱԼ ԱԶԱՆ ԽՈՐՀՐԴՈՑՆ՝
ՄԱՏԵԱՒ ԻՇԽԱՆՆ ԽԱՒԱՐԻ Ի ՂՆՆԵԼ ՅԱՅԵՑԱՒ ՅԱ-
ՌԱՋԻՆՆ ԵՒ ՅԻՄԱՐԵՑԱՒ, ԵՒ ՈՉ ԿԱՐԱՑ ԻՐԻՒ ԸՄԲՌՆԵԼ՝
ԹԷ ԾՆԵԱՑՆ ԻՑԵ ԵՄՆԱՆՈՒԿԼ. ՈՒՊ ԱՍԵ ԻՄՆԱՏԻՈՍ
ՀԱՅՐԱՊԵՏ Ի ԹՈՒՂԹԱՆ ԻՒՐ. ՂՈՐ ԵՒ ՀԱՍՏԱՏԵՆ
ԲՂՄՔ, ԶԸ ՈՐՈՒՄ ԱՍԱՑՈՒՔ Ի ՁԱՌՆ ՔՐ. ՅԱՌԱՋԱԲ:
ՅԱՅԵՑԱՒ ԵՒ ՅԵՐԿԻՂՆ, ԵՒ ՈՉ ԿԱՐԱՑ ՀԱՍՈՒ ԼԻՆԵԼ ԵՒ
ԿԱՄ ՀՆԱՐԱԼ ԹԷ ԿՈՅՍ ԻՑԵ ԾՆՈՂՆ. ՔՐ. (ՅՈՎ. ԻԱ. 5.)
*ԵՒ ԽԱՒԱՐ ՆԻՓՈՂԵՂԵՒ ՀԱՍՈՒ||. ՅԱՅՍ ՍԱԿԱՒ ԱՍԱՑ ԵՂԵ-
ԿԻՒԼ. (ԽՂ. 2.) * ԱՅԴ ԴՈՒՌՆ ՓԱԿԵՔ ԿԱՑՑԿ||, ԸՆԴ-
ԴԵՄ ԻՇԽԱՆԻՆ ԽԱՒԱՐԻ. ՂԻ ՄԻ ԿԱՐԱՑՑԷ ՄՏԱՆԵԼ ԶԸ
ԴԱ. ՅՈՐ ՂԻ ՄԻ ԿԱՐԱՑՑԷ ԻՄԱՆԱԼ ՂԻՈՅ ՄՆԱԼ ԴԸ: Ո՞Վ ՅԱՅՍ
ՀԱՍՏԱՏԵՆ ԲԱՂՈՒՄՔ. ՈՐՔԱՆ ԵՆ ՍՈՒՐԲՔՆ ԲԱՐԵՊԱՐՏ.
ՅՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆ. ԹԷՈՓԻԼԱԿՏՈՍ. ՅՈՎՀԱՆ
ԴԱՄԱՍԿԱՑԻ. ԵՒ ՆԱԽԱՅԻՇԵԱԼ ԻՄՆԱՏԻՈՍ ՀԱՅՐԱ-
ՊԵՏ. ԶԸ ՈՐՍ ԵՒ ՄՅԼՔ ԲՂՄՔ, ՈՐՔ ԱՍԵՆ ԹԷ ՍՏՆՈՒ Ի
ԲԱՆԻՑ ԵՍՈՒՅԵԱՅ ԻՄԱՆԱԼՈՎ ԹԷ ՄԵՍԻԱՅՆ ԾՆԱՆԵ-
ԼՈՑ Կ Ի ԿՈՒՍԷ, ԱՊԱՍԷՐ ԵՒ ՈՐՈՆԵՐ՝ ԹԷ Ո՛Ւ ՈՒՐ
ԵՐԵՒԵՍՑԻ ԱՅՆ. ԲԱՅՑ ՈՉ ԿԱՐԱՑ ՍՏՈՒԳՈՒԹԵՔ ԻՄԱ-
ՆԱԼ ԵՒ ԳՏԱՆԵԼ. *ՁԻ ՈՐ ՀԱՃԵՑԱՒ Ի ԿՈՒՍԷ ԾՆԱՆԻԼ
,, ՈՉ ԿԱՄԵՑԱՒ Ի ՍՏՆՈՒՑ ՁԱՆԱՁԻԼ||: ՆՈՒ ԱՐԴ ՈՐՈՎ.
ՀԱՏԱԿ ԶՆ ՆԱԽԱԿԱՐԳԵԼ ԲԱՆԻՑԴ ԵՐԿՈՒ ԻՆՉ ԱՌԱՋԻ

ԴՆԻՆ

գնին ՚ի բանդ եսայեայ վ՚ը ծննդեանն Յիս, ՚ի վ՚ը այսոցիկ երկուց խօսեացուք և մեք յառաջիկայ Ձառիդ յերկուս հատուածս. յառաջնումն ՚ի վ՚ը հանդամանաց ծննդեան ելմնանուելի. յերկրդումն ՚ի վ՚ը կուսուԹե՛ն ած ածնին. ցուցել Թէ նա կուսուԹը ծնաւ զքո և մնաց միշտ կոյս.

ՅԱՂԹՈՒԹԻՆ ՅԱՒԱՍՏԱՆԻՆ։

Յանգամանս ծննդեանն քեր։

ած. Լսկե զլեզի ած ՚ի սմին աւուր առաջի առնէ տիկակ ընԹերցուածոյ զայն բան պօղոսի՝ զոր ասէ. * քանզի երևեցաւ շնորհն ած փրկիչ ամ ,, մարդկան ‖. (տիտ. ք. 11։) Ցնյարմար երևի այս բան առաջիկայ տօնիս. զի որովհետև ՚ի սմին աւուր տօնեմք զծնունդ որդւոյն ած ՚ի ՚ե՛ջ կուսէն, պարտ էր զայնպիսի ինչ յառաջ բերել՝որով ցուցցի ծնունդ նր. իսկ յասէ՝ * երևեցաւ շնորհն ած ‖. այս բան ուղղակի ոչ ցուցանէ զծնունդ նր, այլ անուղղակի. իբրպէ ՚ի ծնանիլ որդւոյն ած ՚ի ՚ե՛ջ կուսէն, յայտնի երևեցաւ Թէ ած շնորհս արար մեզ։ Ցայլ դիտելի է՝զի յասէն աստ՝ * երևեցաւ ,, շնորհն ած ‖, բառս շնորհ՛՝ ոչ նշանակէ զբուն շնորհն, այլ զբանն ած. որ ՚ի ծնանիլն՝ մեզ շնորհեալով՝ շնորհք կոչեցաւ. ըստ որոյ տուրք ևս ասացաւ. ոպէ տեսանի ՚ի ԹուղԹին յակոբայ. (ած. 17։) Ցայլ արդ եԹէ շնորհք ասացաւ ևս և բան՝ դիտելի դնէ Թէ երևեցաւ. զի շնորհքն ոչ երևի, այլ սպարգևի. ոպէ և բանն ոչ տեսանի՝ այլ լսի։ Օ այս տարակոյս լուծանել յոլհաննէս աւետարանիչ յասէն.

* և բանն մարմին եղև ։ (Յովհ. ա. 14.) իբր զի
բանն աճ՝ որ ընդոհ կոչեցաւ՝ մարմին զգենուլով ՝ի
ոգւոյ կուսէն՝ երևելի եղև, մինչև աչօք ևս տեսանել
և ձեռամբ շօշափել. ըստ այնմ՝ զոր ասէ սա ինքն
Յովհաննէս յառաջին Թուղթն իւր. (ա. 1.) Թէ
* որում ականատեսն իսկ եղաք. ընդ որ հայե-
,, ցաքն. և ձեռք մեր շօշափեցին ՝ի վէր բանին կե-
,, նաց ։ Այսմ և Տովհիւք տգէտք մասամբ ինն
հասու եղեն. լուր զինչ ասեն. * երթիցուք և տես-
,, ցուք զինչ է բանս այս՝ որ եղև, զոր ինձ եցոյց
մեզ ։ (ղուկ. բ. 15.) Տովհիւք անբանիկ, զբանն
կամիք տեսանել. եթէ բան է՝ փութասջիք լսել,
և ոչ թէ տեսանել ։ Այլ քզի * փառք ինն ծագե-
,, ցան առ նոսա ։, ծանեան Ճշմարտիւ, թէ բանն
աճ ինձեալ՝ի ստորինս զգեցեալ է մարմին, և նովին
մարմնով ծնեալ ՝ի կուսէ՝ լեալ է տեսանելի ։ Այլ
թէ զիա՞րդ՝ տացու արտաքին ինչ օրինակ. իբրզի ոմն
բանն որ՝ի միտս մեր է յորժամ մեք բանաւ գրի՝ի թղթի՝
լինի տեսանելի, սոյնպէս և բանն աճ յորժամ գրեցաւ
յարգանդի կուսին մեքանաւ մարդկութեամբ՝ եղև
տեսանելի. դարձեալ՝ ոմն մտաւոր բանն ՝ի ձեռն
բերանոյ լինի զգալի խօսք՝ և ծնանի ՝ի բերանոյ
անտի, սոյնպէս և բանն աճ ՝ի ձեռն որովայնի կու-
սին եղև մարմին՝ որ է մարդ, և ծնաւ՝ինքեան անապա-
կան։ Այլ սակայն մտաւոր բան մեր՝ի լինիլն խօսք՝
լսելի միայն լինի, և ոչ տեսանելի. իսկ անեղական
բանն տեսեալ ևս եղև միջնորդութեամբ մարմնոյն, զոր
եթէ չէր առեալ՝ չէր մեզ հնար տեսանել
զնա աչօք՝ ոչ միայն վասն անմարմին լինելոյն,
այլև վ՛ն անչափ փառացն, որով անհնարին է մար-
մնաւորաց տեսանել զնա. ոմն և ինքն ասաց առ
մովսէս. * ոչ տեսանէ մարդ զերեսս իմ և ապրի ։.

(Եւիտ.

(Ելից. գլ. լՁ. 20։) բայց յաւելու և ասել. * Եւ անց-
ցից առաջի քո փառաւք ... և ապա տեսցես զկե-
,, տոյսն իմ։ իսկ և թէ առեր. եկից փառաւք ահաւոր ի
մոյ. բայց ոչ կարասցես անմիջապ տեսանել զիս, այլ
տեսցես զկետոյսն իմ, այր զմարմնաւորութիւնս իմ. որ
է ասել, միջնորդութիւք մարդկութեանս տեսցես զիս և
զփառս իմ, զի նուաւս երևեցայց. ոչ և յետոյ երև-
եցաւ նմա ՚ի Թաբոր լեառն պայծառացեալ լու-
սով ՚ի մարմնի. (Մատ. ԺՁ. 3.) որով և մեք * տե-
,, սաք զփառս նր՝ զփառս իսկ զմիածնի։ (Յովհ.
ա. 13։)

Զինջանել մովսէսի ՚ի լեռնէն սինայ, քոզ էարկ զի-
րեսաց իւրովք, և այնպէս խօսեցաւ ընդ ժողովրդեան.
զի առանց այնր քոզոյ ոչ կարէին տեսանել զնա որ-
դիքն իսրայէլ ՚ի լուսոյ փառաւորութենէ երեսաց նորա.
(Ելից. լՁ. 33։) | ուսաստեսին մովսէս՝ որ Թարգ-
մանի ելեալ ՚ի ջրոյ՝ նշանակէ զանեղական լոյսն
փառաց՝ զբանն աստ, որ եղ ՚ի ջրոյ, այր ՚ի բովանդա-
կիչ ձանաչմանէ հօր. ըստ որում և ինքն վկայէ.
(Յովհ. ԺՂ. 28.) * Ելի ՚ի հօրէ ||. և էկ ՚ի լեռնէ
բարձրութենէ երկնից. ընդ որում և ասէ։ (Յովհ. Ղ.
38.) * Իջի ես յերկնից||. և էարկ զերեսոք այր զնա-
ւութիւք իւրով զկերպարանս մարդոյ՝ զի էառ զբնու-
թիւն մարդկային, և նուաւս ծնեալ ՚ի կուսէ՝ երևե-
ցաւ մարդ կատարեալ. * որ ՚ի կերպարանս այ էր,
,, ոչինչ յափշտակութիւն համարեցաւ զի լինել ին հա-
,, ւասար այ. այլ զանձն ունայնացոյց զկերպարանս
,, ծառայի առեալ, ՚ի նմանութիւն մարդկան եղեալ,
,, և կերպարանօք գտեալ իբրև զմարդ||. (փիլ. Բ.
6։) | Ընդ ահա սուլին այսու կարացաք մեք հայիլ ՚ի
նա, և համարձակ տեսանել զնա։

Բ. Բայց թէ զինչ երևեցաւ ընորհն այ՝ յայտ առ-

նէ առաքեալն ասէ լսել Թէ փրկիչ երևեցաւ. ոմն զի աղատեսցէ զմարդիկ ՚ի մահացու հիւանդութենէ հոգւոյ, և ՚ի յաւիտենական մահուընէ, (եսայ. կը. 2.) յորս մատնեալ էին և լսէին։ ՚Ի հիւանդանալ եղեկեայ Թագաւորի՝ իմացեալ Թէ մեռանի՝ դարձոյց զերեսս իւր յորմն անդր, և ելաց լալիւն մեծ՝ ՚ի գտանել զփրկութիւն ՚ի մահուընէ անտի. և ասծ լուաւ լալոյ նորա առաքեաց առ նա զեսայի. և ետ նշան կենդանութենէ զկնդումն լուսոյ ՚ի ժամացոյցի ՚ի ձեռն ստուերի մինչև ցտասն աստիճան. (Դ. Թագ. ի. 1։)

Ա՚յդպարև հիւանդացաւ բնութենի մարդոյ՝ (որ Թգէր ի սպրդեցաւ երկրի,) հիւանդութենի յաւիտենական մահու՚ի ձեռն մեղացն ազատայ. և չգտեալ հնարս բժշկուե՝ դարձոյց զերեսս իւր յորմն անդր առաջի ումն, այ՚ի խորհուրդ մարդեղութե որ լինելոց էր միաւորութենէ մարդկութե. և այս օրինակեր յորմն. ըստ որոյ ասէ Տարան ցօրիորդան. * ահաւասիկ սա է ,, կաց յետուստ որմոյն մերոյ ‖. (երդ. ը. 9.) իբր Թէ ասէր. ահա բանն ասծ եկաց յետուստ բնութե մերոյ. որ է ասել մարդանալոց է ասծ։ Յայս հոյակերտ աղաչէր և պաղատէր. զի երևեցուսցէ զինքն և կենդանացուսցէ. * ցոյց ասէ զդէմս ,, քո. և լսելի արա ինձ զբարբառ քո ‖. (երդ. ը. 14.) * երևեցո՛ զերեսս քո՚ի մեզ և ողորմեա մեզ ‖. (սաղ. կէ. 1։) ‖ ՈՀնէ՚ն այ Թագաւորն նոր, առաքեաց զեսայի հնդձայլովք մարգարէիւք՝ տալ նշան կենդանութե հիւանդացելոյն զկնդումն յաւիտենական լուսոյն ստուերաւ մարդկութե յարեգակնային ժամացուցի այ յարգանդ՚ոքոյ կուսին՝ մինչև ցտասն աստիճան, որ ցուցանէ զխոնարհիլն մինչև խսպաս. (զի Թիւս տասն՝ ցուցանէ երբեմն զխսպասն.) և

միա-

միաւորէլ ընդ ստուերի այր ըստ մարդկութեանն ծնեալ
՚ի կուսէ անապական ծննդեամբն։

Ա. յամ փափաքէին մարդիկ, և ՚ի սոյն հաւաչէին։
Ձայեցեալ և նախահարց ՚ի փափաքումն սորա՝ ակսան
բազում մտածմամբ զսոյն նկարագրել, և պէսպէս
բանիւք յանդիման հայցուցանել։ Զայնակից եղեն
այսմ և մարգարէք, և քարոզ կարդային ՚ի ցոյց
կատարման խորհրդոյս։ Ա. յլ սոքա գոլով ՚ի ստուե
րի այր ՚ի մարմնի, թէպէտև աւետարանեցին զմար
մնանալ անմարմին բանին, բայց ոչ ցուցին մեզ
զնոյն մարմնացեալն՝ զի անմարմնոց էր զանմարմին
բանէն աւետել։ Ա՚ինչդեռ բանն ասծ չէր մարդա
ցեալ՝մարդիկ այնմ կարօտեալով զնոյն դուշակեցին,
յորոց և անմարմինք ծանեան. իսկ յորժամ բանն
մարմին եղև, նախ անմարմինք զնոյն աւետարա
նեցին, յորոց ծանեան մարմնաւորք. զի որովհետև
՚ի սկզբան անդ ՚ի ձեռն անմարմին բեւեռացեալ մա
տուցաւ ադամայ մուտ մահու յաշխարհ, վայե
լուչ էր ՚ի ձեռն անմարմնոց աւետել մուտ կենաց
յաշ. (տես առաջաբ ՚ի Ջատն. ՚ը. հատ. ա։) Ա՚յլ
և յերևիլ անդ փրկչին՝ աւետիս տուաւ նոքօք առ
մարդիկ. * ահաւասիկ աւետարանեմ ձեզ զուրա
,, խութիւն մեծ ‖. (ղուկ. ՚բ. 20։) Ա՚ինչդեռ էր ա
ւետարանէ զայս հրեշտակաց՝ մարդս չուներ զոք
իւր փրկիչ. անկեալ կայր ՚ի թշուառութեն անօգ
նական. և սպասէր աւետաւորութեն հրեշտակաց։
Ա՚ել և եղոյց զայս երեանևութեամբ հիւանդն այն
ամենատիկար՝ որ անկեալ կայր առ սրոբատիկէ
աւազանին։ Ա՚հարց ցնա քէն, կամիս ողջ լինիլ. և
նա ասէ մարդ չունիմ որ օգնիցէ ինձ։ Ա՚յս ասէ
աւետարանիչն,թէ * անկէր դներ (անդ) բազմութի
,, յոյժ հիւանդաց, կուրաց, կաղաց, չօսացեալոյ‖.

որք ակն ունէին իջանելոյ հրեշտակին, և զջուրսն յուզելոյ: (Յովհ. Ե. 3:) Նմանի քեզ պատկեր թշուառութեան մարդկայինս բնութեան. զի առ հնրկ ա̃մ մարդիկ ոչ եթէ երեսնեւութ ամ, այլ ը̃ հազարի հրեից երեսնեւութ հարիւր ամ, (ը̃ 3760. ամ) անկեալ կային յանհնարին ցաւս պէսպէս ախտից և հիւանդութեանց. և իւրաքանչիւր 'ի նոցանէ աղաղակէր, մարդ չունիմ որ օգնեսցէ ինձ, և հնարեսցէ ինձ բժշկութի. զի դեռ ևս զա̃ծ չունիմ մարդ, ը̃ թէ տակաւին ոչ է մարդացեալ ա̃ծն իմ. այնմ սպասեմ, այնմ փափաքիմ, այնմ կարօտիմ, նովաւ բժշկիմ, նովաւ սրբիմ; և նովին նորոգիմ. և ահա սպասեալ ժամ իջանելոյ հրեշտակաց, ոչ զի ինքեանք փրկեսցեն զիս, այլ զի զջուրս մեծամեծ խորհրդոց յուզեսցեն. ը̃ է աւետարանեսցեն ինձ զխորին խորհուրդ մարդանալոյն ա̃յ, և երևելոյ նր̃ ինձ փրկիչ. այժմ ակնունիմ լսել 'ի հրեշտակաց ոչ զայն զոր 'ի մարդարէից լուայ՝ թէ ծնանելոց է ա̃ծ, այլ թէ ծնաւ նա ինձ փրկիչ: Եւ ահա յայսմ ակնկալութեան մարդկայինս բնութեան աւետարանեցաւ նմա այսօր 'ի հրեշտակաց ցանկալին այն աւետարանութի. *ահաւասիկ աւետարանեմ ձեզ ուրախութի մեծ. զի „ ծնաւ ձեզ այսօր փրկիչ": Ասեմ ցանկալի, զի այնմ աւետեաց անձկանօք փափաքէր բնութիս 'ի սկզբանէ անտի ստեղծման իւրոյ յետ մեղացն ադամայ: Աստի և եկեղեցի նր̃ ամ̃ը ամէ արժանա̃ կատարէ զտօնախմբութի աւուրս 'ի 25 դեկտ". առ 'ի յիշատակ այսպիսի մեծ և ուրախական աւետեաց, զոր ետուն հրեշտակք կարկամեալ բնութես 'ի զանազան ախտից: Յորոյ աւետարանիլն, ոչ ևս կարօտացաւ մարդս արկանել զինքն յաւազանն պրոբատիկէ ը̃ խտրական օրինաց, այլ բանիւ̂ մար_

դա

զայնչափն անդէն թժշկել կենդանացաւ յաւակնին
մկրտութենէ։

Ե. Ա՛տիցուք այժմ տեսանել՝ թէ յորմէ՞ մեծութենէ երևեցաւ ընդհէն այս։ Եւ զի առաքեալն վկայէ զանձնէ՝ թէ ետես զնա, հարցցուք ընդ իւրեւ ցակատաւես վկայ. և սակայն կարէ նա պնդել՝ թէ ոչ պիտեմ. ես միանգամ տեսի զնա մարմնաւոր աչօք և կուրացայ. հարցեալք ցանմարմինն, և նոքա պատասխանեսցեն. իսկ նոքա զինչ ասիցեն. * այս նշանակ ձեզ, գտանիցէք (զնա) մանուկ պատեալ ,,՝ի խանձարուրս, և եդեալ՝ի մսուր ։ Օ արմանալ արժան է աստ. զի յորժամ մեծ ինչ մեր՝ն դնի, մեծութենէ նորա յայտնի տեսանի. իսկ արդ ամենամեծ էր երևեալ ընդհէն, մինչև ասել. *միթէ զերկինս և զերկիր ոչ լնուցում։.(երեմ.ԻԳ.14.)ապա զինարդ՝ լմեր՝ն դնիլն առ մե՞՝ի մանկան չափ երևի։ Ա.յս չափ փոքրկացար տէր, զի զմե՞զ մեծացուսցես. հինառնիրդ՝ մանուկ յայտնեցար, զի մի՞ զարհուրեցուսցես զմե՞զ. ահաւոր թագաւորդ՝ տղայ յուցար, զի գորովալի և սիրելի ընծայեսցիս. անպարագիրդ էակ՝ի տղայութե՞ հասակ պարագրեցար՝ զի ծածկեսցես զքե՞՝ի սկզբնաչարէ։ Ա.յլ ծանիր ևս, զի որովհետև պատճառ յայտնելոյ որդւոյն այդ եղև փրկութե՞ մարդկան՝ի դատապարտութէ անիծիցն, պատշաճապոյն ևս եղև՝ի սկզբան անդ՝ի չափ մանկան երևելով կատարել զայս. վ՞ը զի մարդ՝ի մանկութե՞ մեռաւ, զի զեռ ևս մանուկ էր ըստ ձևակին, քզի նոր էր ստեղծեալ. ապա արժան էր և նորոյս ադամայ՝՝՝ի չափ մանկան երևելով՝ինքնին կենդանացուցանել զմեռեալն։ Ա՛եռաւ մանուկն սոմնացի. և եղիսես մարդարէ առաքեաց զծառայ իւր հանդերձ գաւազանաւն՝ կենդանացուցանել զնա.

այլ

այլ ոչ կենդանացաւ մանուկն ։ Ապա եկն ինքն Ե-
ղիսէ՝ և խոնարհեցաւ *անկաւ 'ի վ͞ր մանկանն . և
,, եդ զբերան իւր 'ի վ͞ր բերանոյ ն͞ր . և զաչս իւր 'ի վ͞ր
,, աչաց նորա . (և զձեռս իւր 'ի վ͞ր ձեռաց ն͞ր .) և կծկե-
,, ցաւ 'ի վ͞ր ն͞ր ‖ . և ձևացոյց զինքն 'ի չափ մանկանն .
*և դարձաւ և գնաց 'ի տանն յայս կոյս և յայն կոյս ‖ .
իբր խաչաձև . և աՀա եբաց մանուկն զաչս իւր ,
և կենդանացաւ . (Դ . Թագ . Դ . 34 :) Մեռաւ
մարդկայինս բնութ͞ի 'ի մանկութ͞ե անդ ըստ խոր-
հրդոց , ըստ բանից , և ըստ գործոց . առաքեաց ա͞ծ
զծառայ իւր զմովսէս ը͞ն այլոց մարգարէից՝ գաւա-
զանաւ առաջնորդութ͞ե և խրատու առ 'ի կենդա-
նացուցանել զնա , այլ ոչ կենդանացաւ մեռեալն .
Ապա 'ի գութ շարժեցաւ եղիսէ ա͞ծ փրկիչ մեր .
զի եղիսէ ա͞ծ փրկիչ թարգմանի . եկն խոնարհե-
ցաւ առ մեռեալ մանուկն . անկաւ 'ի վ͞ր ն͞ր , միա-
ւորեաց ը͞ն բնութ͞ե նորին . եդ զաչս իւր 'ի վ͞ր աչաց
ն͞ր՝ որ է միտքն՝ առ 'ի բժշկել զնա 'ի բծոտեալ
ախտից . եդ զբերան իւր 'ի վ͞ր բերանոյ ն͞ր՝ առ
'ի ուղղել զբանս ն͞ր . զձեռս իւր 'ի վ͞ր ձեռաց ն͞ր ,
առ 'ի հաստատուն առնել զգործս ն͞ր . և ձևացոյց
զինքն 'ի չափ նորա , և մանուկ երևեցաւ ,
և խաչաձև շրջեցաւ . զի 'ի մանկութեան անդ
յուս իւր եբառ զխաչանմանն իշխանութ͞ի իւր . ըստ
որում ասէ . * մանուկ ծնաւ մեզ . . . որոյ իշխա-
,, նութիւն իւր եղև 'ի վերայ ուսոց իւրոց ‖ .
(Ես . Թ . 6 :)

Եւ աՀա եբաց զաչս իւր մեռեալ մանուկն սոմնա-
ցի , և կենդանացաւ 'ի մեռելութ͞ե մեղաց . 'ի խոր-
հուրդս լուսաւորեցաւ . 'ի բանս իւր զգաստացաւ .
և 'ի գործս բարիս առաջնորդեցաւ . ը͞ն որ հիացեալ
երկնային զօրաց ասէին . * զի՞նչ տեսանիցէք 'ի սոմ-

նա

,,նացիդ ‖. (երգ. Է. 1։) և այլք զկնի աղաղակելին.
* դարձի՛ր դարձի՛ր սունամացիդ, դարձի՛ր դարձի՛ր, և
,, տեսցուք զքեզ ‖. (երգ. Է. 12.) և կեսք վկայելին.
* աչք քո աղաւնւոյ . . . խօսք քո գեղեցիկ ‖. (Դ.
1.) և այլք ևս թէ * յարմարումն բարձից (այսինքն
,, գործոյ) քոյ նմանութիւն ուլանց յեռելոյ
,, գործոյ ձեռաց արուեստաւորի ‖. (Է. 1։) Այլ
արդ եթէ նա առ 'ի կենդանացուցանել զմեզ այս-
չափ խոնարհեցաւ՝ մինչև մանուկ երևիլ, ապա և
մեք պարտիմք նմա հետևիլ առ 'ի կենդանանալ.
զնո՛ր խաչն բառնալ, և խաչիւ նմին նմանիլ։ Օնա
ետ մեզ ա՟ծ տարացոյց, և կամի զմեզ ևս նման ն-
մին տեսանել. * ահա մանուկ իմ ասէ՝ զոր ընտրե-
,, ցի, և սիրելի իմ ընդ որ հաճեցաւ անձն իմ ‖.
(մատ. ժբ. 18.) զսա ետու ձեզ ոչ միայն փրկիչ,
այլև օրինակ կենդանի. * եթէ ոչ դարձջիք և ե-
ղիջիք իբրև զմանկտի (հանգոյն այսմ մանկան).
,, ոչ մտանիցէք յարքայութի երկնից ‖. (մատ.
ժը. 2։) Այլ թէ քանի՛ հզօր իցէ նորածին մանու-
կըս այս, մատի՛ր 'ի տեսիլն դանիելի. (բ. 34.)
տե՛ս թէ զիա՛րդ իբր ամենալանից վէմ''ի ծնանիլն
անդ 'ի կուսական պարարտ լեռնէ անտի՝ առանց
ձեռին՝ ու՟ առանց գործակցութե առն, եհար՝ կործա-
նեաց՝ և մանրեաց զպատկեր կռամոլ պաշտամանց.
և զհնարիչն այնր ամպարշտութե և սատակման
յաւիտենական մահու զօձն չարախանձ՝ էառ ընդ-
ոտիւք, եհար զքարի և սատակեաց։ Ու եթէ չի-
ցէ անտեղի զմեծն փոքումբ ցուցանել՝ յայն ար-
կից ձեռն յօրինակ. պատմի թէ քաջն հերքիւլես
'ի մանկութե անդ՝ յորժամ յօրոցի էր՝ սպան զօձ
մի. զի՛նչ ապա մանուկս այս. 'ի ծնանիլն անդ''ի
խանձարուրս պատեալ գոլով՝ սպան զօձն իմանա-
լի,

լի, և աւար եառ զամ զօրութի նր, և եբաշխ զպաշտօն մահու ։ Օ՛ր և կանխաւ տեսեալ մարգարէին ծանոյց հիացմամբ՝ ասելով. (Եսայ. Ը. 4.)
* մինչև ծանուցեալ իցէ մանկանն կոչել զհայր՝ կմ
,, զմայր, առցէ զզօրութի Դամասկոսի և զաւար Սամա-
րիայ ‖. ոչ է թէ 'ի ծնանիլ որդւոյն ոչ 'ի խանձարուրս գոլով՝ (ուր ոչ է յարմար կոչել զհայր կմ զմայր,) բարձցէ զզօրութի Դամասկոսի, որ այն ինքն է ասոյ . զի Դամասկոս թարգմանի նմանութի հրդեհման, որ յուցանէ զանյ. և աւար առցէ զանօրէնութին Սամարիայ, ոչ զպաշտօն չանձց. Է որում

մեկնէ Երևելին Տերտուղիանոս ։

Գ. Տեսցուք այժմ թէ ուր երևեցաւ շնորհն այ. արժան է հարցանել զայս ցսրբն պօղոս, որ վկայեաց զնմանէ . բայց նա չգիտեմ ասէ. ես զայն յերկինս տեսի ։ Հարցցուք ապա ցածարեալն դաւիթ, զի նմա խոստացեալ եղև այս երևումն. պատասխանէ դաւիթ. և ես ասէ զնոյն խնդրեմ, և զհետ մտեալ եմ գտանել . ոչ մտից 'ի յարկս տան իմոյ, ոչ ելից յանկողինս մահճաց իմոց, ոչ տաց քուն աչաց իմոց, կամ նինջ արտևանաց իմոց, կամ հանգիստ իրանաց իմոց, մինչև գտից զտեղի նր. (Սաղ. ՃԼԱ. 11 ։) Խնդրեաց արդարև, և եգիտ . ուստի և աւետիս տալով մեզ՝ ասէ . * ահա լուաք զնմանէ յեփրաթայ, և գտաք
,, զնա 'ի դաշտս մայրեաց ‖ . լուաք ասէ հաւաստեաւ՝ զի ծնեալ է 'ի յեփրաթ . որ է բեթղեհէմ. ո՛չ յայտ է յայն բան միքիայ. (Ե. 2.) * և
,, դու բեթղեհէմ տուն եփրաթայ սակաւաւոր
,, իցես լինել 'ի հազարաւորս յուդայ. 'ի քէն ել-
,, ցէ ինձ լինել իշխան իլի . և ելք նր 'ի սկզբա-
,, նէ աւուրց յաւիտենի ‖ ։ Նորջանիկ գտաւ բեթղեհէմ

քան

քան զՀաղարաւոր քրիստոս յուդայ. զի զոր սա եւս՝
դերազոյնք քան զնմա|յրկկրն խոստացեալ մեզ զկեանն
բղխեցուցաներ. իսկ սա զպարգեւիչն ամ քաղցր
րուն, զլիացուցիչն բնաւին բարուն, և զամե-
նասնունդն հոգւոց զՀայն պարարտութիւն: |Ա-
կարի յիրաւունս. զի եփրաթա պարարտուն լսի, և
բեթղէհէմ տուն հացի. ապա կարի ինձ վայել-
ջանալ ընծայեաց յիւրմէ զամենապարարտ հացն ան-
մահուն: |Որդիք նորոյ սիոնի՝ * եկայք երթիցուք
,, մինչև ցբեթղէհէմ, և տեսցուք զինչ է բանս
,, այս ||. ՚ի սիոնէ մինչև ցբեթղէհէմ կարճ է
ճանապարհն. եթէ ՚ի սիոնի եմք՝ եկայք երթի-
ցուք անդր. տեսցուք և գտցուք զփրկիչն մեր,
և զիաւք մեր: |ՈՒիցուք անդ ՚ի հրեշտակաց.
փառք ՚ի բարձունս՝ այլ, և յերկիր խաղաղութիւն.
անդր ընթացցուք, զի անդ ծնաւ խաղաղութիւն
մեր, որ եկն աւետարանել զխաղաղութիւն հեռաւո-
րաց և զխաղաղութիւն մերձաւորաց. (եփես. բ. 17.)
և ՚ի ծնանիլն անդ մատոյց զանձն պատարագ խա-
ղաղութեան ՚ի հաշտեցուցանել զՀայր ընդ մարդիկ, որք
էին յերկրի. ընդ որոյ յաւետլուն ասել. * ՚ի մարդիկ
հաճութի||: |Ա՝մտանել սամուէլի ՚ի բեթղէհէմ,
հարցանէին ցնա. * խաղաղութի՞ն ելեն մուտդ
,, քո տէ՛ր ասողդ||. և նա ասէ. * խաղաղութի՛ն է.
,, զոհել ինն եկի. սրբեցարո՛ւք, և ուրախ լե-
,, րուք ընդ իս այսօր||. (Ա. Թագ. ԺԶ. 4:) |Սրբեցուք
և մեք ցերկնաւորն սամուէլ, որ թարգմանի
շնորհք այլ (կամ տուրք այլ.) խաղաղութիւնն ելեալ
մուտ քո ՚ի բեթղէհէմ տեսանօղդ ամի. խաղա-
ղուի է ասէ. և խաղաղուի իմ յերկնից քարոզի.
սրբեցարո՛ւք ՚ի չարեաց ձերոց, և ուրախ եղէ-
րուք ընդ իս այսօր: |Այլ գիտելի է՝ զի թէպէտ
՚ի

'ի Բեթղեհէմ ծնաւ Քս, բայց Դաւիթ մարգարէ 'ի գիրս սաղմոսաց՝ գնէ զծնունդ նր 'ի Սիոն, յասելն. * Մայր Սիոնի ասէ մարդ. և մարդ ,, ծնաւ 'ի նմա ||. (սաղ. ձէ. 5.) ոչ թէ ասէր. մարդկայինս բնութ ասաց ցմայրն Սիոն. զի մարդ եղև, զի ած՝ մարդ ծնաւ 'ի նմա։ Բայց այսու ոչ ցուցանի թէ 'ի քաղաքն Սիոն ծնաւ Քս, այլ 'ի սահմանս Սիոնի 'ի Բեթղեհէմ. և այս դնի ըստ այնմ ոճոյ Ճարտասանից՝ որ կոչի փոխանունութի. որով անուն գլխաւոր տեղւոյ դնի փոխանակ անուան այնոցիկ՝ որք են առ նովաւ. և զի Սիոն էր գլխաւոր քաղաք և մայր քաղաքացն Հրէաստանի, 'ի ծնանիլ Քի 'ի Բեթղեհէմ՝ ասի ծնանիլ 'ի Սիոն, այսինքն 'ի սահմանս Սիոնի։

Է. Տեսցուք 'ի վերջոյ՝ թէ որոյ երևեցաւ շնորհն այ, կամ որոյ ծնաւ։ Հրեշտակ տն 'ի յաւետարանել զծնունդն Քի՝ ասաց. * Ձեզ ծնաւ ||. ոչ ասաց սոսկաբ՝ թէ ծնաւ, այլ թէ ձեզ ծնաւ. զի մեզ ծնաւ, և մեզ տուաւ. զորմէ և Եսայի կանխաձայնեալ ասաց. (Թ. 6.) * Մանուկ ծնաւ մեզ ,, որդի տուաւ մեզ ||։ Յիրաւի մեզ ծնաւ՝ և մեզ տուաւ. զի մեք էաք յանբժշկելի ախտս ախտացեալ, և ախտի ծնունդք. և եկն նա 'ի բժշկել զմեզ, և ազատել. ուստի ասի 'ի շար. Գ. * որ գթացար ,, յերկիր և ծնար անախտ ազատելով զախտի ծնունդս ||։ Մեզ ծնաւ՝ զի մեք էաք մեռեալ և կորուսեալ զկեանս. և եկն նա առ մեզ՝ առ 'ի տալ մեզ ոչ միայն զկեանս, այլ առաւել ևս քան զկեանս. որպէս ինքն ասաց. * Ես եկի զի ,, զկեանս ունիցին, և առաւել ևս ունիցին ||. (Յովհ. Ժ. 10։) Մեզ ծնաւ՝ զի մեք էաք խաւարեալք 'ի մեղս և յանօրէնութիս, և նստեալ 'ի

ստ-

ատուածերս մահու, և եկն նա ի լուսաւորել զմեզ
ոյզ և ինքն ասաց*ես լոյս յաշխարհի եկի ։ (յովհ. ժբ. 46.)
որով և լուսաւորէ եկեղեցի ուրախութիւն երգէ. (ի
շար. ե.) ասելով* յինծուխ տօնեսցուք զծնունդ քո՛ տեր.
,, որ յայտնեցար մեզ լոյս ի լուսոյ. և լուսով-
,, քո լցեր զտիեզերս ։ Արդ ծնաւ՝ զի մեք կաք
աղքատացեալք աղքատուն յետին, և եկն նա բաց-
նալ զաղքատուն մեր. * վ՛ա ձեր ասէ աղքատա-
,, ցաւ՝ որ մեծատունն էր. զի դուք նիր աղքա-
,, տութեն մեծասջիք ։ (բ. կոր. ը. 9)։ Յիրաւի ոչ
միայն վ՛ա մեր աղքատացաւ, այլև քան զմեզ առա-
ւել աղքատացաւ, և քան զնմա՛ որդիս մարդկան,
մինչև ոչ գտաւ նմա տեղի ի ջիջևանին. (ղուկ.
բ. 7 ։) Արդ ծնաւ՝ առ ի բառնալ ի մէնջ զըն-
դունայն փառասիրուն մեր. վ՛ա և ի խոնարհ և
յանարգ տեղւոջ ծնաւ անծանօթ ի մարդկանէ ։
Արդ ծնաւ՝ առ ի բարձրացուցանել զերկրաթր-
րուն մեր յերկինս, և ջերմացուցանել զզրտա-
ցեալքս. վ՛ա յայնպիսի ժամանակի ծնաւ, յո-
րում Թէպետ և ցուրտ էր սաստիկ, բայց արե-
գակն սկիզբն առնէր բարձրանալոյ և ջերմացու-
ցանելոյ ։ Արդ ծնաւ՝ առ ի խաղաղացուցանել
զխռովուն սրտից մերոց, և առ ի հաշտեցուցանել
զհայր ընդ մեզ. զի * նա է խաղաղութի՛ն մեր ։
(եփես. բ. 14.) ըստ որում և եսայի կոչէ զնա * իշ-
խան խաղաղութե ։ (ծ. 6 ։) վ՛ա և յայնպիսի
ժամանակի ծնաւ՝ յորժամ ի խաղաղութե՛ էր ա-
յաւուրս օգոստոս կայսեր։ Արդ ծնաւ՝ առ ի յա-
դեցուցանել զմեզ իւրև իրրև երկնային մանանա
յիւ. վ՛ա ոչ մանանայն ի գիշերի ինջանէր յանա-
պատի անդ, ոյնպէս և ինքն ի գիշերի ծնաւ.
ոչ ցուցանեն քանքարչն ղուկասու. (բ. 8։) Արդ
ծնաւ՝

ծնաւ՝ առ 'ի ձգել զմեզ զհետ իւր՝ անուշահոտու-
թե՟ իւրով. վ՟յ և ը՟ երգողին, (Բ. 1.) իբրև ա-
նուշահոտ շուշան հովտաց և իբրև ծաղիկ դաշ-
տաց 'ի բացի ծնաւ: Նեղ ծնաւ՝ առ 'ի ցուցա-
նել մեզ զճանապարհ վերին երկնի. ըստ որում
ինքն եղև ճանապարհ, ճշմարտութի՟ւն և կեանք.
վ՟յ և 'ի ճանապարհին եղև ծնաւ: Նեղ
ծնաւ՝ առ 'ի սրբել 'ի մէնջ զանասնական գործս
մեր. ուստի և 'ի մէջ անասնոց ծնաւ. և ըստ
յարմարելոյ բանիցն եսայեայ (Ա. 3.) և ամբա-
կումայ. (Գ. 2.) 'ի մէջ երկուց անասնոց երևե-
ցաւ: 'Ի սկզբան 'ի շինուած տապանակին ա՟ն
կանգնեցան երկու քերովբէք 'ի վ՟ր կափարչի ն՟ր,
որ քաւութի ասիւր: Իսկ այսօր զտ՟րմբ մերով՝ որ
եղև մեզ քաւութի՟ն, երևեցան երկու անասունք. առ
'ի յայտ առնել՝ թէ տ՟րն մեր քաւելով զանասնա-
կան գործս մեր՝ կամեցաւ զմեզ զանասնացեալքս
'ի փառս քերովբէից վերացուցանել: Արդ թէ-
պէտ և այսպէս կարէ խորհրդածել այսպիսի օրի-
նակաւ ծնանիլ ք՟ի, բայց հայելով յորպէ-
սութի այժմու ժամանակի քրիստոնէից՝ կարեմ ող-
բալով ասել, թէ յայն սակս տ՟րն մեր 'ի մէջ
անասնոց ծնանի՝ և ոչ 'ի մէջ մարդկան, զի
մարդիկ գրեթէ մոռացեալ են զնա. և յայսմ
մասին արժանաւորութի մեր անարգ երևի քան
զչարժանաւորութի անասնոց: Նեղ ծնանի՝ և
վ՟ մեր ծնանի՝ և 'ի միջի մերում ոչ ծնանի, զի
մեք ոչ խնդրեմք զնա, այլ յաւէտ հալածեմք 'ի
մէնջ: Այլ արդ եթէ կամիցիմք՝ ծնանի արդա-
րև և 'ի մեզ և 'ի հոգիս մեր, և այն գերազանց
իմն օրինակաւ և սքանչելապէս. իբր զի նա՝ որ ծնաւ
'ի հօրէ առանց մօր առ 'ի ներքս ը՟ ա՟ծութէն, և

ծնաւ 'ի մօրէ առանց հօր առ արտաքս ի ժամա-նոյ, ծնանի 'ի մեզ 'ի ներքս հարբ և մարբ ի հոգւոյ ։ Եւ եմք հայր և մայր ծնանելոյ նորա 'ի մեզ 'ի ներքս, միայն թէ պահեսցեմք զբանս նր. ի որում ինքն ասաց. * որ առնիցէ զկամս „Այ՝ նա է իմ եղբայր և քոյր և մայր‖. (մարկ. գ. 35 ։ ղուկ. ը. 21 ։) Այսու օրինակաւ ծնանելով 'ի մեզ՝ տպաւորէ 'ի հոգիս մեր զհաւատ, զյոյս, և զսէր. առաջին ծնունդ նր՝ որով ծնաւ 'ի հօրէ առանց մօր՝ ի յամի գոլով մեզ անհասանելի և աներևոյթ, ծնանի 'ի մեզ զհաւատս ։ Երկրորդ ծնունդ նր՝ որով ծնաւ 'ի մօրէ առանց հօր վն անչափ սիրոյն իւրոյ՝ ծնանի 'ի մեզ զսէր ։ Երրորդ ծնունդ նր որով ծնանի 'ի հոգիս մեր, ծնանի 'ի մեզ զյոյս. զի որովհետև պահպանութի օրինաց լինի այս երրորդ ծնունդ, տայ յոյս ժառանգելոյ զծնեալն ։ Տես արդ՝ և քննեա, գտանիցի՞ արդեօք 'ի քեզ տեղի՝ ուր ծնանիցի ք͞ս. արդեօք կարէ՞ առնել զքեն ք͞ս, աշխատասիրիկ հայր իմ և մայր. տես զի մի փոխանակ քոյ՝ այլոյ ծնանիցի 'ի քեզ. և ասասցէ աշխատասիրիկ հայր իմ և մայր ։ Աստանօր ոչ ծնաւ վն մեր. ասա մի նա, այլ որ ծնաւն վասն մեր՝ նա ծնցի, և նա բնակեսցի ։

ՀԱՏՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ.

Հանփամանք կուսութեաց ընդ ամուսնին ի ծնանիլն պատ.

Ը. ԱՒԵԱ եղև ՚ուրբ կուսին ծնանիլ զնաճ մարմ
նով. սակայն զդերագանցութիւն այսր մե
ծութեան պանծալն եղոյց ծնանիլ նոր զնա կուսու
թիւն, և մնալն ՚ի կուսութեան. արդ Թէոփէտ և խօսե
ցաք զկուսութէն նոր ՚ի Հառն ի ՚ի հասարակի (՚ի
Հատ. ք. 8.), բայց աստ ևս խոսեցցուք զայնմա
նէ իբր ՚ի մասնաւորի՝ հայելով ՚ի ծնունդ ան մե
ծոյ ։ Որպէսզի ՚ի հեթանոսաց՝ կարծելով թէ
անհնար է կուսի յղանալ և ծնանիլ, ոչ միայն ոչ
հաւատան, այլ և ծաղր առնեն զմեզ՝ թէ զնաւթ
հաւատոյք այսպիսի անհաւատալի բանի։ Որոյ
բարւոք պատասխանէ ռուփինոս ՚ի գիրս ընդէմ
հեթանոսաց. * զինչ զարմանք Թուի ասէ՝ եթէ
,, կոյս յղասցի և ծնցի. զի աւասիկ և արևեղէան
,, հաւն՝ զոր փիւնիկ կոչեն՝ սովոր է առանց դիտե
,, լոյ զայր՝ ծնանիլ կամ վերածնանիլ. և միշտ մի է
,, և ծնանօղ ինքեան և յաջորդօղ. մեղու ոչ դի
,, տէ զամուսնին, և ոչ բերէ զաւակ զուգաւորու
,, ոնի յայտ է ամենեսեան՝ հեթանոսք հաւատային՝ թէ
,, աստեղնաս ծնաւ յուղղոյ արամազդայ. ապրոդի
,, տէ ՚ի փրփրոյ ծովուն. պողոսք և կաստոր ՚ի
,, ձուոյ. մրջնաւուծ ՚ի մրջնոյ. մղիկ ՚ի քարանց
,, ձգելոց ՚ի դևկալիոնէ և ՚ի պիւռռայ ։ Ուստ սմին
պրէ և կիւրեղ եղմոյի (՚ի կոչ. ընծ. ժբ. 38.) * Ասէ
,, դարուվէն զմեզ հեթանոսք և հրէայք և ասեն՝
,, ոչինչ էր հնար քեզ ՚ի կուսէ ծնանիլ. արդ զհեթա

,, նոսսն

,, նոյնն 'ի նոցուն առասպելեաց անտի կարկես-
,, ցուք. որք ասեն՝ բայ քարինս թաւալեցուցանէին
,, և մարդիկ, զիարդ ասեն եթէ չէ մարթ այ
,, մարմին զգենուլ. Մարդիկ՝ որ յուղղոյն գըլ-
,, խոյն դուստր ծնեալ բարբանջեն, զիարդ 'ի կոյս
,, յարգանդէ անտի՝ որդի ծնանել անհնար համա-
,, րին. որ յերանաց անտի արամազդայն ձերոյ
,, յղացեալ ծնեալ ասեն զդիոնեսիոս՝ զիարդ
,, զմեր Ճշմարիտն անարգել իշխէք ||: Նա և 'որն
Հերոնիմոս ('ի Ա. գիրս ընդդէմ յովինիանոսի) ասէ.
կարծիք էր առ նախնիս, թէ * պղատոն ծնաւ 'ի
,, կոյս մօրէ ||. ուրեմն նաև Քս կարծեաց հեթանո-
սաց հնար է կուսութբ ծնանիլ: Հրեայք ևս ժըխ-
տեն զայս Ճշմարտութի. և սակայն եթէ անկարե-
լի էր կուսի յղանալ և ծնանիլ՝ զիարդ ասէր ե-
սայի յառաջիկայ բնաբանիս. * ահա կոյս յղաս-
,, ցի և ծնցի որդի ||: Պատասխանեն այսմ՝ թէ
այդ ոչ ցուցանէ զկուսութբ յղանալն և զկուսու-
թբ ծնանիլն, այլ թէ կոյսն սաղմն առեալ ծնա-
նիցի: Բայց այդ պատասխանի ունայն է. զի թէ
միտք մարգարէին այդ էր, ոչ 'ի մէջ բերէր զայս-
պիսիս իբր նշան՝ ասելով. ինքնին տէր տացէ
նշան. զի կարէին պատասխանել լսօղքն. զինչ
նշան իցէ այդ. զի ամքն գիտեմք թէ կոյսն սաղ-
մնաւորութբ յղանայ և ծնանի. իսկ զոր ամքն գի-
տեն՝ ոչ տուեալ լինի այն 'ի նշան: Զոր և ասէ
կիւրեղ եճմացի 'ի վերոյգրեալ տեղին՝ խօսելով
'ի վերայ բնաբանին մերոյ՝ * Ահա կոյս յղասցի.
,, Նշան իսկ նորօրինակ ինչ պարտի երեւիլ. նշան
,, ջուրն որ 'ի վիմէն հոսեցաւ. նշան ծովուն պատա-
,, ռելն ||: Նա և դարձեալ գրեալ է յօրէնս. * կին
,, որ եթէ սերմն առցէ և ծնանիցի արու, պիղծ

,, լինի... և յորժամ ընուցուն աւուրք սրբուե՛նք՝։
ևբ. (ղևտ. ժե. 2.) Ա՛րդ՝ յորժամ էին դնի
յօրէնս կա՛ր՝ ի խոստմունս, ցուցանի թէ այն
թէուն՝ ի դիպուածս ինչ կարէ լինիլ և ոչ լինիլ.
ասպա թէ ոչ՝ ոչ էր կարօտ թէուե՛. ա՛ր յասէլն,
կին ոք եթէ ըմպիցէ գինի՝ և վտանգեսցի՝ ի մահ,
էնթադրի՝ թէ կարէ և առանց ըմպելոյ զգինի՝
վտանգիլ։ Ա՛ստ այսմ և յասէլն աստ, * կին ոք
,, եթէ սերմն առցէ և ծնանիցի՝ պիղծ լինի ևբ՝։.
էնթադրէ թէ կարէ և առանց սերմն առնլոյ
ծնանիլ՝ որ է ծնանիլ կուսուե՛. ասպա թէ ոչ՝ ընդ
դնէ՝ * եթէ սերմն առցէ՝։. և յայս միտ բառդ
եթէ՝ ոչ դնի աստ՝ ի վե՛ր ծնանելոյն, ասպա թէ
ոչ՝ պարտ էր դնել՝ * կին եթէ ծնանիցի՝։. այլ
դնի՝ ի վե՛ր սերմնառուե՛ ծնանելոյ. ը՛ ոլոյ կամ
ասել. կին եթէ սերմն առնուցու և ծնանիցի, պար-
տի սրբիլ. իսկ եթէ առանց սերմնառուե՛ ծնանիցի՝
ոչ պարտաւորի սրբիլ. ուրեմն հնար է և առանց
սերմնառուե՛ ծնանիլ։ Ա՛յց ծանի՛ր, զի հրէայք և
հեթանոսք ոչ եթէ ը՛ ինքեան անկարելի համա-
րին կուսի ծնանիլ՝ այլ զի ոլովհետև մեք հաւա-
տամք թէ՝ ո՛ր կոյսն զի՛ծ ծնաւ՝ ի մարմնի, ոչ կա-
րելով հաւատալ թէ ի՛ծ կարիցէ մարմին զգե-
նուլ և ծնանիլ, զկուսուե՛ ծնանիլն ե՛ւս ուրանան։
Ա՛յլ զի՞նչ ը՛դեմ էր նո՛ր հաւատալ այսմ. ասպա-
քէն ը՛ դրելոյ Հոմերոսի յոդիսեան գիրսն, (է.
8.) * կարծիք էր նախնեաց՝ թէ ի՛ծք՝ ի ձև և
,, ի զգեստ աղքատաց երկին առ՛ մե՛զ՝։. եթէ զայս
կարծիս ունէին՝ ասպա ոչ համարէին անկարե՛լի՝
թէ կարէ գալ ի՛ծ՝ ի ձև և՝ ի զգեստ մարդկուե՛։
Հրէայք հաւատան՝ թէ ի՛ծ մարմնաւոր տես-
լեամբ երևեցաւ աբրահամու, մովսէսի, ևբ. ասպա

կա՛

կարէր երեւիլ և ճշմարիտ մարմնով, ուրեմն կարէին եւ հաւատալ զԱծ 'ի մարմնի. և եթէ այսմ կարէին հաւատալ, ընդէր ոչ կարիցեն հաւատալ՝ թէ կարէ կուսական ծննդեամբ եւ երեւիլ ։ Իսկ չէ ինչ այն՝ թէ պայման ծնողին է կորուսմամբ կուսութե ծնանիլ. զի որպէս ասէ Տէրն Ղեւոնդ, ('ի Բ. Ճառ. ծնն. ՏԵՆ.) * սաստ ոչ միածի պայման ծնո-
„ ղի, այլ կամք և կարողութի ծնիցելոյն. որ կամէր,
„ և կարէր կուսական ծննդեամբ գալ յաշ‖ ։ Իսկ թէ գաւազանն ահարոնի կուսութբ ծաղկեցաւ առանց արմատոյ և առանց ոռոգման՝ և ետ պտուղ ընկուզի, (Թուոց. ԺԷ. Ը.) ընդէր ոչ կարասցէ օրիորդ մի կուսութբ յղանալ և կուսութբ տալ ըն-պտուղ ։

Է. Օ այս կուսական ծնունդ այլով իմն բանիւ եւ առաջի առնէ եսայի յասելն. (Կզ. Է.) * մինչչեւ
„ իցէ յղւոյն ծնեալ, և մինչչեւ իցեն հասեալ ցաւք
„ երկանց՝ ապրեցաւ և ծնաւ արու‖. ջ թէ մինչչեւ իցէ ծնեալ բնական կարգաւ՝ առանց հասելինելոյ ցաւոց երկանց՝ ապրեցաւ 'ի կուսութէ, և 'ի կուսութէ անդ ծնաւ զարու ։ Իսկ առ 'ի սաստուգել զայս յարէ անմիջապ. * ո՞ լուաւ ո՞ ետես այսպի-
„ ինչ՝ եթէ երկնեաց երկիր և ծնաւ ազգ մի ող-
„ ջոյն միանգամայն‖. ջ թէ յղացաւ կոյս երկիրն մարիամ, և ծնաւ. ուր զերկնելն դնէ փոխանունութե ձեւով՝ փոխանակ յղանալոյ. զի երկնելն է հետեւորդ յղութե. իսկ հետեւորդն դնի երբեմն փոխանակ նախընթացի. և ըստ այսմ կամի ասել. ո՞ լուաւ, ո՞ ետես՝ թէ երկնեաց՝ ջ յղացաւ կոյս երկիրն, և ծնաւ կուսութբ զազգ մի ողջոյն. և այն՝ * 'ի միում աւուր‖. զի ինննամսեայ յղութին իբր մի օր էր առ Տր կոյսն. վն զի թէպէտ և յղացեալ էր,

բայց ոչ ծանրացեալ: Այլ յաւելու ասել. * ծնաւ
ապա մի ողջոյն միանգամայն॥. ա՟յ թէ ծնաւ զորդի
մի՛ սկիզբն նորոյ ազգի միոյ. ուր զանուն ազգին դնէ
փնիկ սկզբան ազգին. որոյ ժողովուրդք պարագրին
՚ի մի սկիզբն՝ ա՟յ ՚ի ք՟ս. ո՟չ բազմութիւնք ոստոց ՚ի մի
արմատ, և բազում շառաւիղք ՟է մի կէտ ապակ-
ւոյ: Ի հարցանել աստ մարգարէին, ո՞ լուաւ, ո՞
ետես, թէ առանց երկանց և առանց ապականութե՟
լինիցի ծնանիլ, պնդնեմք՝ թէ մեք լուաք և մեք
տեսաք, զի կոյսն ծնաւ զ՟քս առանց ցաւոց եր-
կանց և առանց ապականութե՟. զի ո՟չ ասէ պետ-
րոս դամիանեանն, * որ կոյս մնաց ՚ի յղանալն,
„ոչ զգաց զցաւ ՚ի ծնանիլն॥. յոր յաւելու բեռ-
նարդոս. * ոչ ամուլ մնաց և ոչ ցաւ ծննդեան
„զգաց॥. ՟է որում այսպէս վայել էր պատուոյ
այնպիսի մօր: Նաև զի նոյն ինքն որդին՝ որ եկն
՚ի բառնալ զցաւս և զապականութի՟ երկանց եւա-
յի, անարժան համարեցաւ ցաւօք և ապակա-
նութ՟բ ծնանիլ ՚ի մօրէ. որպէս և պատշաճողութի՟
իւրն պահանջէր այսպէս լինիլ ՟է այլևայլ գլխոց:
Նախ՝ զի որպէս նա ինքն որդին առանց ապակա-
նութե՟ ծնաւ յարգանդէ հօր յառաջ քան զյա-
ւիտեանս, սոյնպէս պատշաճ եղև նմա յարգանդէ
մօրն ևս ծնանիլ ՚ի ժամանակի առանց ապակա-
նութե՟: Երկրորդ՝ զի որդին ա՟յ եկն իբրև լոյս.
ապա ո՟չ լոյսն առանց ապականութե՟ անցանէ ընդ
ապակի, սոյնպ՟ և որդին ա՟յ առանց ապականութե՟
եանց ՟է կուսն. * ոչ բեկանէ զհայելին շառաւիղ
„արեգականն. (ասէ օգոստինոս.) սոյնպ՟ և ոչ
„խախտեաց զամբողջութի՟ կուսին մուտ և ել
„ա՟ծութե՟ն॥. ՟է որոյ կուսուհի ն՟ր օրինակեցաւ յա-
պակին յայն որ ՟է աւանդելոյ բազմաց եդաւ ՚ի

պա-

պատուհան տասպանին. զի տասպանն էր օրինակ
հուսին, իսկ ապակին օրինակ հուսուն ընդ
որ անցեալ յաւիտենական լուսոյն՝ լուսաւոր ա
րար և ապրեցոյց զմեզ կենդանիս, յոր զմեզ մարդ
Լսրդրդ՝ զի քո ասէ բան. ապա ոմն բանն առանց
ապականուն Ծնանի՛ի սրտէ, այնպէս և բանն ած
առանց ապականուն Ծնաւ՛ի հուսէ։ Կարձէ՛
ոմն բանն ձայնաւորել առանց ապականութե՛ն ան
ցանել ընդ ականջս՝ և և առանց ապականուն ելա
նել ընդ բերանն, այնպէս և բանն աՀծ ձայնա
ւորեալ՝ յոր մարմնացեալ, առանց ապականութե՛
ել՛ի՛ծոց հուսէն։ Ոչ սոսկ իբր ընդ խողովակ ան
ցանելով՝ այլ Հղմարտապէս Ծնանելով. որով և եղև
որ կոյս Հղմարիտ մայր Հանդերձ հուսուն, և
Հղմարիտ կոյս Հանդերձ մայրութե՛ն. մայրութի՛ն
զհուսուն՝ փարելով, և հուսուն՛ի՛ն ընդ մայրաւ
միանալով։ Կ՚ուր Հայելով առաքեալն ասէ. (երդ.
է. 2.) * պորտ քո Թաղոյկ Հախարակ եայ ։ ՛ի
Թաղոյկի գինի գինի և ջուր, որք այնպէս միանան,
մինչև լինիլ մի. այնպէս և յորովայն հուսին միացան
հուսուն և մայրուն (Համ բեղմնաւորուն) ան
բաժանելի. ոչ՛ի կոյս միայն պահասեցաւ՛ի բեղ
մնաւորութէ Ծննդեան, և ոչ՛ի Ծնանիլն նուա
զեցաւ՛ի կատարելութէ հուսուն։ Յորոյ ապացոյց
՛ի գրախտին միացան գարուն Ծաղկալից, և աշուն
պտղալից. ոմն է տեսանել և՛ի Ծառս ինչ՝ Ծաղիկ
և պտուղ՛ի միասին. ըստ որում և՛ի ոք կոյսն միա
յեան Ծաղիկ հուսուն գարնայնոյ, և պտուղ բեղ
մնաւորուն աշնայնոյ։ Կ՚ուր լինի եղև այս և սքան
չելի. որոյ վ՚ա ասէ ած բերանով մարգարէին.
(եսայ. խե. 19.) * ես առասիկ նոր գործեմ. որ
այժմ յայտնեսցի ։ Կ՚ըդարև նոր. աղջիկ մի Ծնցի

զորդի կուսուհւոյ. և 'ի մնալն անխախտուն 'ի կու-
սութե՛ եղիցի բեղմնաւոր 'ի մայրութե, 'ի մայրութե
կոյս, և 'ի կուսութե մայր. զուրախութի մայրական
ժառանգելով, և զցնծութի կուսութե վայելելով. և
ոմն ասէ մեկնիչն. * մայրութբ 'ի վր որդւոյն ցնծա-
,, լով, և կուսութբ 'ի վր իւր բերկրելով ||:
Ըստ կուսութեն կոչի քոյր, և ըստ մայրութեն հարսն.
* քոյր իմ հարսն ||. (երգ. դ. 11:) Ըստ մայրու-
թեն պարտէզ բարեբեր, և ըստ կուսութեն փակեալ.
* պարտէզ փակեալ ||. (երգ. դ. 12:) Ըստ
մայրութեն աղբիւր ջրոյն կենդանութե, և ըստ կու-
սութեն կնքեալ. * պարտէզ փակեալ քոյր իմ
հարսն, պարտէզ փակեալ և աղբիւր կնքեալ ||.
(երգ. դ. 12.) Ըստ մայրութե՛ դուռն մտից և ե-
լից որդւոյն այ, և ըստ կուսութեն՛ փակեալ. (եզեկ.
խդ. 1:) Եւ զի մեծ են այս սքանչելիք կուսութե
'ի մէջ այլոց հրաշից, նմին իրի ասէ նիւսացին.
* ո՛ հրաշք մեծ՛ (մի և նոյնն) իցէ կոյս և մայր.
,, զորդի ծնցի, և կոյս գտցի. տեսանեմ արդեօք
,, նոր գործ բնութե. յայլ կանայս ցորչափ ոք 'ի նմ
,, կոյս իցէ՛ ոչ է մայր. զի յետ որոյ մայր եղև՛ ոչ
,, ունի զկուսութի. իսկ աստ երկաքանչիւր ոք 'ի
,, միասին զուգընթանան. զի նոյնն՛ և մայր և կոյս.
,, ոչ կուսութին զծնունդն արգել, և ոչ ծնունդն զը-
,, կուսութին եղծ ||: * ո՛ դուստր 'ի վերք զնմ դըր-
,, տերս օրհնեն. (ասէ օգոստ. Ճառ. ծնն. քրի.) զայր
,, ոչ գիտաց, և զայր յորովայնի պարագրեաց ||:
Եւ ինքն ամբրոսիոս. (Ճառ. յաղ. կուս. գլ. Է.) ա-
սէ. արդարև 'ի մէջ հրաշից մեծ է 'ի մահուանէ
'ի կենաց վերածել. բայց մեծ քան զայն է՛ կոյս
յղանալ, կոյս ծնանիլ, և կոյս մնալ. եղիա
յարոյց, եղիսէ ևս յարոյց. այլ կուսական ծը-
նունդ

նուագդ մի միայն է, մի միայն եղև, և ոչ երբեք լինի
ցի. Հոգևոր կուսութիւն դուստր. մարմնաւոր կուսու-
թիւն մայր ։ Այս որոյ գրէ սուրբն Լեհ դուստր
լինիլ ուսուք միանգամայն և մայր, չէ հնար՝ բայց
եթէ երկոքին ևս կուսութիւն իցէ. մարիամ հոգևոր
կուսութիւն դուստր եղև այ, և մարմնաւոր կուսութիւն
մայր նորա ։

Այլ ոմն այսու կուսութիւն ՚ի կոյն կոչի Թագուհի
կուսանաց, և ևս կոյս կուսանաց. զի այլ կոյսք՝ կոյս
մնալով ոչ ծնանի և ոչ կարեն ծնանիլ. ուստի և ևս
միայն դուստր հոգևոր, և ոչ մայր բեղմնաւոր՝
այլ խորհրդաւոր ։ իսկ ՚ի կոյն դուստր զոլով
եղև մայր բեղմնաւոր, ուստի և եղև կոյս պե-
րազն քան զկոյսս. յոր միտ կոչէ զինքն * մայր
բարձրացեալ ՚ի լիբանանն ։ (սիրաք. ի՛է. 17.) ուր
մայրին նշանակի Թագն ծառայ. և ըստ այսմ ՚ի
կոյն եղև Թագր կամ Թագուհի լիբանանու,
այր Թագուհի կուսութե հաւօրէն կուսից, պարա-
գրելով զնա իբրև զշեղջ ցօրենոյ ՚ի մայրական կու-
սութե, և ՚ի կուսական մայրութե. առ որ Հայն բանն
այն՝ զոր ասաց սողոմոն. (երգ. է. 2.) * որովայն
քո ոսկի շեղջ ցորենոյ փակեալ շուշանաւ ։ իբր Թէ
ասէր՝ որովայն քո օրհնել՝ ծնաւ զցորեանն կենաց
և զշեղջս կուսանաց և ամ փրկելոց ։ Ո՛ շեղջ ցորե-
նոյ ասելով կամի յայտ առնել ևս, Թէ որովայն
կուսին ուրախութի մեծ ետ ամին. զի ամքն կարօտ
էին պտղոյ որովայնի նր. և զայս ուրախութի ցու-
ցանէ շեղջն. վ՛ր զի շեղջն է՝ որ ուրախ առնէ զվաս-
տակաւորն. քանզի որ սերմանէ զցորեան՝ ոչ ուրախա-
նայ ՚ի ցանելն, զի ոչ գիտէ Թէ զինարդ բուսանի
ցին. ոչ ուրախանայ և ՚ի հասուննալն, զի կան
դեռ ՚ի վտանգի. ոչ ուրախանայ և ՚ի հնձելն, զի

չէն

չէն աղատ յարկածից. իսկ յորժամ ժողովէաք
շեղջակուտէ՝յայնժամ ակսանի ուրախանալ՝ և ա՛ղի
և քաղաքք ոչ այնչափ ուրախանան՝ ի վերայ այլոց
իրաց՝ որչափ՝ ի վէր լիուռե շեղջակուտեալ ցորենոյ.
՝ի սոյն սակս առաջի առնէ զշեղջ ցորենոյն հանդ
դերձ յաւելուածովք յասէն.* փակեալ շուշանաւ։
այր պարիսակեալ կուսութեաբ. զի շուշանն է նշան
կուսուէ. (զայսմանէ տե՛ս և՛ ի Ճառն Ժ. յօդ. Է։)
Ը. Եւսկ թէ ընդէր կամեցաւ Քս՝ զի՛ ի կուսէ ծընի
ցի և կուսութէ կատարեսցի այս խորհուրդ, պատաս
խանեմ՝ թէ վա՛ զի չէր պատեհ այլազգ լինել. քան
զի ըստ առածին, * չէր արժան այր ծնանիլ՝ եթէ ոչ
,, ի կուսէ. չէր արժան և կուսի ծնանիլ՝ եթէ ոչ
,, զայծ ։ նա զի և պատշաճողուն իրին այսպէ պա
հանջէր ըստ բազում դէպոց. նախ՝ ի կոզմանէ
խորհրդոյն. երկրորդ՝՝ ի կոզմանէ քսի. երրորդ՝՝ ի
կոզմանէ ծ՚ա կուսին. և չորրդ՝՝ ի կոզմանէ մերմէ։՝՝ ի
կոզմանէ խորհրդոյն մտածել, սովին այսու պատ
կառելի յուցաւ առ ամենն այս խորհուրդ. վա՛ զի
եթէ առանց կուսութէ լինէր՝ չէրևէր մեծ ինչ
և գերազանց. իսկ կուսութէ լինելով այնչափ մեծ
երևեցաւ և այնչափ գերազանց, մինչև գժուարիլ
՝ի հաւատալ։ Ուր ասէ՝ զբն իդնատիոս ածաղ
գեաց. (՝ի թուղթն առ հերոմէնէս սարկաւագ.)
* արժան էր արարչին ոչ ըստ հասարակ կարգի
,, (ծննդեան), այլ գերազանց և զարմանալի ծնընդ
,, դեամբ՝(այր կուսական ծննդեամբ), գալ իբր Ճար
,, տարապետ ամի, և իբր հաստիչ ծննդեան ։՝՝ ի
կոզմանէ քսի մտածել՝ այլևայլ պատճառք են. մի՝
զի ըստ ամբրոսիոսի և ըստ օգոստինոսի և ըստ այլոց, ոմն
առաջին ադամ եղև՝ ի կոյս երկրէ, (զի դեռ չէր
գործեալ երկիր). սոյնպէս և երկրորդն ադամ՝ ի
կոյս

կոյս մօրէ . (Ծնն. ք. 7։) Արկրորդ՝ ըստ տերտուղ-
անոսի . (՚ի Ջատ . յաղ՚ մարմնոյն քնի .) * պատ-
,, շաճ էր քնի, ոչ ՚ի մարդկային սերմանէ ծնանիլ .
,, զի մի՛ ըստ ասի՝ (այ առենևին յառնէ և ՚ի կնոջէ)
,, լինելով որդի մարդոյ՝ ոչ երևեսցի կատարել որդի
,, այ, և չունիցի ինչ առնել (յայտմ մասին՝ քան զսո-
,, ղոմոն ‖ ։ Արդ՝ ըստ նմին տերտուղիանոսի . որով-
հետև ՚ի սերմանէն այ եղև՝ այ ՚ի հոգւոյն սրբոյ, ոչ
էր արժան լինիլ և ՚ի սերմանէ առն ևս ։ Ըստ՝
զի մի՛ ունիցի զերկուս բնական հարս, այլ մի հայր
միայն՝ և մի մայր միայն. հայր յերկինս անմայր, և
մայր յերկրի անհայր ։ Իսկ եթէ առանց կուսու-
թեէ ծնանիլ՝ այլազգ լինէր։ Հինգերդ՝ զի քո ծը-
նաւ թէր և ոչ թէ թագրելի. ըստ այնմ (մատ. ք. 2.)
* ուր է որ ծնաւ արքայն հրէից ‖ . ուրեմն պարտ
էր՝ այնպիսի ծննդեամբ ծնանիլ՝ որ իցէ թագ և
թէր ծննդեան ՚ի կարգի բնութե. իսկ այս ծնունդս
է կուսութէ ծնանիլն, որ գերազանցէ քան զամ ծը-
նունդս , և թագրէ ՚ի վէր ամ ծննդոց ։ Վեցերդ՝
զի որովհետև որդին այ էր անմահ և մահկանա-
ցու , պատշաճ եղև ծնանիլ յայնպիսւոյ՝ որ իցէ
անմահ և մահկանացու . անմահ ՚ի կուսութէ՝
այ անխախտելի ՚ի կուսութէ , և մահկանացու ՚ի
մարմնաւորութէ . ոչ զի ՚ի մահկանացու մօրէ ծնցի
իբր մահկանացու, և յանմահ մօրէ՝ այ ՚ի կոյս մօրէ
ծնցի իբր անմահ ։

Եօթներդ՝ զի ցուցցէ՝ թէ ինքն Աշմարիտ մարմին
զգենուլով՝ կարօղ է նուիրն մարմնով իբրև ամ մար-
մնոյ թափանցել ըստ մարմին կուսական ոչ ձայն ըստ
որմն. յորոյ ասպայոյց թափանցելով էլ՚ի գերեզմա-
նէ , և թափանցելով եմուտ ՚ի վերնատունն . ուր
ասէ օգոստինոս, (Ջատ. Ջիբ. ՚ի վէր յոլիբ.) * դրունք
,, փա-

,, փակեալք ոչ ընդհմայեան մարմնոյն քան՝ յորում
,, եր ածուածին. ոչ կամեցաւ ընթեալ դուռն
,, մտանել, զի ցուցցէ՝ թէ՝ ի ծնանիլ իւր ան-
,, խախտելի մնաց կուսութի մերն։ Այս զի անհաս
լիմն է այս՝ի սոյն ակնարկելով սողոմոնի ասէ. (ա-
ռակ. Ը. 19.) թէ * անհնարին է ինձ իմանալ...
,, զձնունդսն առն յերիտասարդուե իւրում։ այ ըզ-
ձանասպարհորդել քան ընթ կոյսն՝ի ձեռն թափան-
ցուե՝ի կոզմանէ կուսին մտածել՝ այլևայլ պատ-
ճառք բերին՝ի մէջ. մի՝ զի ոմն գրէ Թովմաս ագուի-
նացի. (յայտ. Ը. 37.) արժան էր * զի ոչ միայն
,, միտք մերն այ լինիցի նը՝ի մեղաց, այլև մարմին
,, նը հեռի իցէ յամ ապականութէ մարմնական
,, ցանկութէ։ Երկրորդ՝ զի արժան էր նը կու-
սին՝ի մայրուե իւրում զարդարել այ առաքի-
նութք. և զի կուսութին է հրեշտակային՝ ինն առաքի-
նուի, ուրեմն արժան էր և՝ի մայրուե անդ կու-
սութէ զարդարել. իսկ այս ոչ կարէ այլազգ լինիլ՝
բայց եթէ կուսութէ ծնանելով։ Երրորդ՝ զի այն
պիսի անձն պարտ էր ընտրիլ՝ի բովանդակ ցեղ՝ի
մայրութէն այ՝ որ իցէ՝ի վերք քան զնա. իսկ զի իցէ
յայ՝և չիցէ մտեալ յայ, այլ ամենևին կոյս. այնպէս
կուսութ՝ (ասէ բարսեղ. Ձառ. յաղ. ծնն. այն.) որ
չունիցի ինչ հաւասարուի ընթ կանայս, և միայն այ
իցէ հաձոյ։ Չորրդ՝ զի մարմինն՝ որ ընդունարան եղև
բանին այ, մի լիցի ընդունարան երկրաւոր զօրու-
թէ (այ սերմանն առն). որով ընթ ասելոյ գրիգորի
նիւսացւոյ (՚ի Ձառն. ծննն. այն.) դերագոյն ցու-
ցի մարմին կուսին ընթ զկոդիս այլոց. * յայլս ասէ
,, հաղիւ հոգի նայ ընդունի զներկայութէն հոգւոյն
,, այ. իսկ՚ի կոյսն նաև մարմինն եղև ընդունակ
,, հոգւոյն։ Հինգերորդ՝ զի ոմն՚ի ձեռն կուսի ե-

մուտ

մուտ մահ յ՚ի՝ քզի դեռ կոյս էր եւայ, սոյնպէս ՚ի ձեռն կուսի մտոյէ կեանք յ՚ի. եւ որպէս կործանումն մեր եղեւ ՚ի ձեռն կնոջ ելելոյ յառնէ առանց խառնման, սոյնպէս եւ կանգնուածն մեր լինէր ՚ի ձեռն առն ելելոյ ՚ի կնոջէ առանց սերման։ Քանզելի ինձ եղեւ այն, զի ած միայն յաղագս եհան զկինն. բայց այս աքանչելիս փոխեցաւ այժմ զի միայն ՚ի կնոջէ եհան զերկրորդն ադամ։ ՚Ի կողմանէ մերմէ մտածեալ՝ առաջինն պատճառն այս է. զի ըն նախադրելոյդ՝ ոչ ՚ի ձեռն կոյս մօր ապականել եղաք և անկաք յերեսաց ած, սոյնպէս ՚ի ձեռն կոյս մօր նորոգեսցուք և հաճոյասցուք ած. ևս և ունիցիմք մեզ կոյս մայր։ Այլ պատճառն է՝ զի ցուցցի մեզ՝ թէ քանի՛ մեծ իցէ և յանկալի վճարակ կուսուէ. մինչև նա ինքն որդին ած ևս ցանկացաւ ծննանիլ ՚ի կուսէ. և ետ մեզ օրինակ հետևիլ կուսուէ և ծնուլթէ։ Երրորդ պատճառն է՝ զոր տայ ըզն օգոստինոս ասելով. (՚ի Ճառն յաղ. կուսուէ. յոդ. 6.)*արժան էր գլխոյ մերում ,, վանն երևելի նշանայ՝ (այ առ ՚ի տալ զերևելի ,, նշանս,) ծննանիլըն մարմնոյ ՚ի կուսէ, զի ցուցցէ՝ ,, թէ անդամք իւր հանդերձեալ են ծննանիլ ըստ ,, հոգւոյ ՚ի կոյս եկեղեցւոյ։ Ո՞ սոյն գրէ և մեծն գրիգոր. (՚ի սաղ. ապաշխ։)

Լե. Կուսուի՛ ըզ ածածնին մտածի ըն անցելոյ, ըն ներկայի և ըն ապագայի. այ նախ ըզ զծնուածդն, ՚ի ծնընդեան, և յետ ծննդեան. և ըն այսմ՛ ըզ ածածինն ասի միշտ կոյս. և այս ոչ է սոսկ աւանդուի եկեղեցական կիր աւանդուի առաքելական, այլ աւանդուն ածային, և բան հաւատոյ ըն դաւանելոյ կաթուղիկէ և առաքելական՛ ըզ եկեղեցւոյ։ Այ՛ եթէ ոք ուրասցի զայս՝ է հերետիկոս և նզովեալ։

եալ. զի նա եկեղեցին ոչ դաւանի զնա կոյս մայր ՚ի, սոյնպէս դաւանի զնա միշտ կոյս։ Այլ նախ այն՝ թէ յառաջ քան զծնանիլն զնա՝ կոյս էր, յայտնի աւանդեն մատթէոս և ղուկաս աւետարանիչք. (մատ. ա. 22։ ղուկ. ա. 35.) և այնպիսի բանիւք հաստատեն, զոր և հերետիկոսք ոչ կարացին ուրանալ։ Ո՛ ոչ կարաս աւետարանիչ քաց ՚ի յայտնի դնելոյ զայն՝ զայլ ինչ և ՚ի մէջ բերել. զոր արժան է ուշ քննել աստ. լաւ զի հայելով նմ ՚ի ծնունդս երկուց՝ վասն եղիսաբեթի ասէ. * և եղիսաբեթի լցան ժամանակք ծնանելոյ ‖. (ղուկ. ա. 57։) Իսկ վ՚ա՛ռ կուսին ոչ ասէ ձեռնադիր, այլ ա՛ռ՚ յայտնէ. * լցան աւուրք ծնանելոյ նորա ‖. (ղուկ. բ. 6.) և ընդ երեք այս զանազանութիւն բառից. վ՚ա՛ռ զի ժամանակք փակեն եթէ զտիւս և եթէ զգիշերս. իսկ աւուրք ասին տիրապէս տիւքն, որք են լոյս, յորում չկոք խաւարք գիշերոյ։ Եղիսաբեթի կանխեաց գիշեր անկուսութեան. իսկ ՚ի՛նչ կոյսն ոչ եղև այսպիսի գիշեր. ՚ի ժամանել ատա ժամու խոստմանն և ձայնի մարգարէութեանն, լցան լուսաւիսակ աւուրք ծնանելոյ նորա։ Այս սակս ասէ քրիստոս. * մարիամ պարտի առնել օր, յորում վայելեաց միշտ լոյս ճշմարիտն, և ոչ երբեք կալաւ խաւար ՚ինձմէ տեղի ‖. և յարէ և ս, թէ նա է * օր ամենապայծառ՝ ոչ երբեք խաւարեալ ,, բեալ ‖։ Իսկ թէ պատշաճ էր այսմ այսպէս լինել, տես ՚ի ձառն. ՚ձ. հատ. ՚ք. յոր արժան համարիմ յաւելուլ և զայս, թէ որովհետև վախճան մարդեղութեանն էր ծնանիլ որդւոց մարդկան յորդիս ՚ի՝ ոչ յարենէ մարմնոյ և ոչ ՚ի կամաց առն՝ (յովհ. ա. 13.) այլ ՚ի զօրութենն ՚ի, պատշաճ էր՝ զի և նոյն իսկ խորհուրդն սկսանիցի ոչ յարեն

նէ

նէ մարմնոյ զուգակցութիւն առն, այլ միայն ի զօրութենն այ՝ կուսական յղութիւն. յորում չգուցէ մանր խաւարի մարմնաւոր ներգործուն։ Իսկ վասն կոյս մնալոյ յոբ ասծածնին ի ծնանիլն անդ զյ՝ յայտնի աւանդի յաւետարանին. (մատ. ա. 22։ զուկ. ա. 35.) զոր և աներկբայ դաւանի յոբ եկեղեցի, ըստ որում և յոբ հարք քարոզեն։ Իրանոս. (գիրք ճ. ընդէմ վարդենտիանոսի. գլ. 31.) և մեծն թարսեղ. (գիրք յայտ. ՃՂ" կուսութեն.) միաբան գրեն ընդ այլ յոբ հարս, թէ ոչ ազամ կուսութիւն ստեղծաւ, այլ նաև և քս կուսութիւն ծնաւ։ Ասէն հիլարիոն. (ի քանն ընդէմ ռուփինոսի) ասէ. * յոբ կոյսն „ ոչ այլապէս՝ եթէ ոչ հոգւով յոբվ ծնաւ դէս ի „ կուսական արգանդէ ։ և առ եպիտեկտոս՝ կոչէ զկոյսն * անխախտելի ի ծննդեան. յորում ասէ „ այնպիսի նոր ինչ եղև, որպիսի ոչ երբեք եղև „ յայլ կանայս. (այ կուսութիւն ծնանիլ) ։ Իսկ փան. (գիրք. ճ. գլ. ը. հերետ. 78.) գրէ. * զհայրդ „ ասէ կարեն արատս դնել անարատ կուսին՝ որ „ արժանի եղև լինիլ բնակարան որդւոյն այ, և „ անխախտ ծնանիլ զնա. յոյր սակս իսկ ընտրեալ „ էր ի հաղարատորացն ինչի ։ Գրէ և մեծն գրիգոր (ի սաղ. ապաշխ.) * մարիամ ծնաւ կոյս. „ և յետ ծննդեան միայ անապական ։

Ճ. Իսկ թէ հիրաւի նաև յետ ծննդեան միայ կոյս, ի բազմ գլխոց կարէ յուցանիլ Իսկ՝ զի է թէ յառաջ քան զծնանիլն և ի ծնանիլն կոյս էր, ապա ևս առաւել յետ ծննդեան. զի ոչինչ հարկ կայր խախտելոյ կուսութե. վասն զի եթէ յղուհին և ծնունդն՝ որ բնականաբար պահանջէ զբաղձուհի կուսութե՝ կուսութիւն եղև, որչափ ևս ոչ յղացեալն և ոչ ծնանիլն. արդ յայտ է թէ յոբ կոյսն

յետ

յետ քնոյ ոչ յղացաւ և ոչ ծնաւ զոք. ապա մնաց կոյս. * այդ դուռն փակեալ կացցէ, և մի բաց-
,, ցի, և մի ոք անցցէ ընդ դա. զի տ՟ր ա՟ծ ի՟ղի մտցէ ընդ
,, դա, և եղիցի փակեալ ‖. (Եզեկ. ԽԴ. 2։) Երկ՟դ՝ զի ոչ վայել էր կուսին՝ զկուսութիւն իւր՝ որ հրաշագործեցաւ 'ի նմա՝ կամովին կորուսանել։ Երր՟դ՝ զի ինքն այնք՟ մեծ համարէր զկուսութիւն իւր, մինչ զի հրաժարեցաւ 'ի ծնանելոյ զա՟ծ՝ եթէ լինէր նմա այն կորուսմամբ կուսութեան. ապա որչափ ևս սոսկ զմարդ ծնանելոյ։ Ապաքէն նա 'ի սկզբան անդ յաւետիսին ասաց՝ թէ չէ հնար լինել այդմ, զի ինքեան ոչ է պատշաճ գիտել զայր. և յորժամ իմացաւ թէ առանց առն լինելոց է յղութիւն յոր՝ յայնժամ էառ յանձն. զիարդ ապա յետ ծնանելոյ զա՟ծ յօժարէր գիտել զայր։ Չորր՟դ՝ զի եթէ նա յետ ծնանելոյ զա՟ծ կամէր ամուսնանալ ընդ այրում՝ այդ լինէր նմ՟ ևս ցանկութե՟ն. իսկ այս ա՟մ իրօք և ը՟ն ա՟մի հեռի էր 'ի նմանէ. ո՟չ հեռի է ցրտութի 'ի հրոյ։ Հինգեր՟դ՝ զի այդ նախատինք լինէր նաև հոգւոյն ս՟րբոյ. ը՟ն որում նա ինքն եղև փեսայ ս՟րբ կուսին, և գործեաց յարգանդի ն՟ր զգործ մարդեղութեա՟ն. ապա չէր վայել փառաց ն՟ր թողուլ՝ զի ունիցի ս՟ր կայան և զայլ փեսայ խախտիչ կուսութե՟ն. և ապականեալ լիցի յայլմէ, կ՟մ բեղմնաւորեալ, ուր ինքն բեղմնաւորեալ էր զնա և սրբեալ։ Վեցեր՟դ՝ զի այդ կորուստ կուսութե՟ն յաւէտ 'ի յովսեփայ էր լինելոց քան յայլմէ. իսկ այս ամենևին անվայել էր յովսեփայ. զի որովհետև ինքն գիտաց՝ թէ հոգին ս՟ր արդասաւոր արար զարգանդ ն՟ր, յանդգնութի լինէր նմ՟ մերձենալ 'ի նա. մանաւանդ զի և ինքն բոլորովին կոյս էր՝ զորմէ ունիմք խօսել 'ի վախճան գրոցս։ Եօթն-

երորդ՝ զի այս կորուսեալ կուսանէ հնձեցարերը ՚ի ոք կոյսն զկամս ունելոյ զայլ որդի ևս. իսկ այս ընդէմ եր նախ՝ կատարելոյն ծրյ կուսին. զի կամին ծրյ նանիլ և զայլս, նշանակեր՝ թէ զառաջինն ծնեալն ոչ համարի ամենևին կատարեալ, հիմ թէ չեր նիմ բաւական, և հիմ թէ ոչ շատանայր նա այնպիսի որդւով՝ զոր պիտեր լինիլ ածծ, և վ՚ո անկատար համարելոյ զնա՝ յօժարեր ունել և զայլ։ Ընդդէմ եր երկիդ՝ և որդւոյն. զի նա ոչ ըստ ածծային բնու- թեն եր միածին որդի հօր, մինչև անհնարին լի- նիլ նիմ ունել և զայլ եղբայր, սոյնպէս ևս կամեր լինիլ միածին որդի մօր։ Ընդդէմ եր երրորդ՝ և կատարելոյն ծննդեանն. վ՚ո զի որդին այ՝ որ եղև եղբ ծննդականուն ծրյ կուսին՝ իւրով գերազանցու- թէ գրաւեաց զայն. և ըստ այսմ ոչ հայրն երկնաւոր ոչ կարէ զայլ որդի ծնանիլ սոյնպէս և ոչ մայրն երկ- րաւոր զայլ։ զի որպէս որդին ՚ի ծնանիլն ՚ի հօրէ՝ լրացեալ հաւասարեցաւ ծննդականուն հօրն ըստ ածծու- թեն, սոյնպէս և ՚ի ծնանիլն ՚ի մօրէ՝ լրացեալ հաւա- սարեցաւ ծննդականուն մօրն ըստ մարդկուն. ոչ զի պակասեր կարօղականուն ՚ի հայրն և ՚ի մայրն, այլ զի ոչ գոյր պակասուն ՚ի ծնեալն, մինչև բո- վանդակել նմա զծննդականուն հօրն իւրով անբաւուքն, և զծննդականուն մօրն իւրով դերազան- ցուքն։ Յայս ամ բովանդակի առաքն այն՝ թէ * ոչ ոք մարմնացաւ ՚ի կուսէն՝ եթէ ոչ ածծ. ոչ ,, ոք ծնաւ յարդանդէ նր՝ եթէ ոչ ածծ. ոչ ոք դիե- ,, ցաւ կաթամբ նր՝ եթէ ոչ ածծ ‖։ Առարկեցէ ոք. քո ասի լինիլ անդրանիկ որդի ծրյ կուսին. ու- րեմն ծր կոյսն ստուգաւ և զայլ որդի։ Պատաս- խանեմ. յասելն զքեզ անդրանիկ՝ ոչ նշանակի լինիլ այնպիսի որդի՝ զկնի որոյ ծնեալ իցէ այլ որդի,

այլ այնպիսի՝ քան զոր յառաջ չիցէ ծնեալ. զի
ոբ գիրն (Ելից. լՂ. 20.) զայսպիսիս կոչէ անդր-
նէ, և հրամայէ զայսպիսիս սրբել ամն, որք և կո-
չին նախածին. անդրանիկ ասի և նա՝ որ լիցէ մի
միայն. յոր միտ որդին այ ասի և անդրանիկ հօր.
(տես ՚ի մեկն. մատ. գլ. ա. ՚ի վերջն։) Այորհըր-
դաբար՝ անդրանիկ ասի քն՝ հայելով յորդեգրա-
կան որդիս, որք որդիացան հօր այ և ոբ ա՛ծած-
նին. (տես ունիմք ասել ՚ի Ճառն. ՚ի. յօդ. 5։) Այսկ
թէ քն ունէր զերբարս և զքորս, այդ ասի ըստ մեր
ձառոր արենակցուե, և ոչ ըստ բուն եղբայրուե. տես
՚ի Ճառն ոբոյն յովսեփայ ՚ի վերջ գործոյս։ Ա՛ռար-
կիցէ ոք գարձեալ. գրի յաւետարանի, թէ ոբն
յովսէփ ոչ գիտէր զնա՝ մինչև ծնաւ զորդին իւր
զանդրանիկ. ուրեմն յետոյ գիտաց։ Ա՛յսմ պատաս-
խանի առնեն ոմանք՝ թէ այդ ասի ըստ ոչ Ճանա-
չելոյ ոբոյն յովսեփայ զգերապանցուի կուսին. իբր
թէ ասացեալ էր. ոչ գիտաց, այ ոչ եղև հաստա՝
թէ քանի՛ արժանապատիւ իցէ ոբ կոյսն, մինչև
ծնաւ զյն, և յայնժամ գիտաց զարժանապատ-
ուՃուի նո։ Ա՛յլ այս մեկնուի զոր և աւանդէ ոս-
կեբերան. (՚ի մատ. ա. տեսուի. ք. 2.) ոչ հաւասար
ըմ բանիդ գրոյն. զի ոբ գիրն զբաւդ գնոել՝ ՚ի
նիւթ ամբաստանուե, ՚ի կիր առնու փոխանակ զու-
գակցելոյ. արդ յաւետարանի աստ զամուսնուե
ն բանն, և ոչ թէ զՃանաչմանէ կամ զոչ Ճա-
նաչմանէ արժանապատուՃուե։ Ա՛յլք իմանան
ըստ ոչ տեսանելոյ, կամ ըստ ոչ հայելոյ. վ՚ա զի ասեն
ցորքան ունէր մարիամ զյն յարգանդի, լոյս Ճա-
ռագայթէր ՚ի նմանէ, մինչև ոչ կարել՚ երբեմն յով-
սեփայ հայիլ ՚ի նա. ոչ ասի զերեսացն մովսէսի.
(Ելից. լՂ. 30.) բայց յետ ծննդեանն համարձակ

տեսա-

տեսանէր, ևն։ Յ. յս կարծիք ևս է անտեղի. զի ոչն այս տեղեաց էր զամիսս լինն. և զայն ուշեին տեսանել ոչ միայն ՚ի ձեն յովսեփ, այլ և այլք. յորմէ ծագէր ունկարդ կարծիք, համարելով զայն՝ եր. ևոյթ լինչ կախարդական։ Յ. պա ասելի է՝ թէ յայդ քան բառս ոչ գիտաց՝ գնի փոխանակ ոչ մերձենալոյ ոչ յառաջ և ոչ զկնի։ Ոսկ թէ յաւելեալ լինի բառս գնէլ, այդ առաւել ևս հատատե զոչ մերձենալն. վ՚ս զի այդ բառ ոչ ցուցանէ ասա զՀետևումն այլազգ լինելոյ, այլ զհատատութեան եղելոյն. զրյասելն՝ (՚ի սաղ. ՃԽԹ. ւ.)
* նո՛ստ ըս աջմէ խամէ՝ մինչև եդից զթշնամիս քո
,, պատուհանդան ոտից քոց ‖, բառդ գնէլ՝ ոչ ցուցանէ՝ թէ յետ գնելոյ զթշնամիս ըս ոտիւքն քո՛ի՝ ոչ ևս է նստելոյ ըս աջմէ հօր, այլ թէ նստէր ցայնժամ՝ և զկնի ևս նստելոյ է ըս աջմէ հօր յՀիտն։ Յ. ստ սմին և աստ յասելն՝ * ոչ գիտեր զնա՝ մինչև
,, ծնաւ ՚ի, բառդ գնէլ՝ ոչ ցուցանէ՝ թէ յետոյ այլազգ լինչ եղև, այլ թէ ոչ երբեք գիտաց յովսէփ զմարիամ. ոչ յառաջ քան զծնունդն, և ոչ յետ ծննդեան. (զայսմանէ տես ՚ի մեկն. սաղ. ՃԽԹ. ւ։) Օ այսոսիկ եղեալ զկուսուէ՝ զբ ասծածնէն ըս ասծային աւանդուէ՝ և ըս անստերիւր դաւանուէ կաթուղիկէ եկեղցւոյ՝ կինքեմք զբան մեր ՚ի խոստովանուի Հնմտոյ՝ թէ՝ զբ կոյսն մնաց միշտ կոյս. և ըս այսմ անուանս կոյս՝ ընծայի նմա իբր առասպական յորջորջումն. մինչև յարտասանելն և կի՛ ՚ի գրելն՝ Դեղ կոյս, կի՛ զբ կոյս, իմանալ այնու զբ ասծածինն, դաւանելով զնա ամենևին անարատ ՚ի կուսութէ՝ եթէ ՚ի յղանալն, եթէ ՚ի ծնանիլն, և եթէ յետ ծնանելոյն։ Յս այսու դաւանութ երգեմք առ նա ՚ի շարականի՝ յասելն.

* երկս խորհուրդս (այսոքիկ) սոսկալիս 'ի քեզ
,, տեսանի Ածածին . (որ են) յղութ̃ անսերմնական .
,, ծնունդ անարատ . կուսութ̃ յետ ծննդեան' մնա
,, լով անապական ‖ ։ Այսոքէս և յայլ բազում տեղիս
շարականին, միշտ կոյս կոչելով զնա' ապաւինիմք
'ի նա . զի որս և ես աղաատան լեալ 'ի սրբութ̃
նո՞ աղաղակեմ առ նա բանիւ ուխտաւորի նորին .
* ահա կաթիլ մի կաթին քումդ կուսութ̃ յանձն
,, իմ անձրևեալ' կենաց ինձ զօրէ ‖ . որ հանդոյն
կենաց զօրէ , այնպիսի կենաց' որով վստահացայց
զի արժանաւոր ծնդյս նո՞ պաշտել զնա, և զի նոսա
հասանել 'ի վայելումն անհասանելի փառաց նորա
'ի կեանսն յաւիտենականս ։

ՃԱՌ ԵՕԹՆԵՐՈՐԴ·

’Ի տօնի յայտնութե՟ն Տ՟ն ։

Յայտնեցան երկինք շքեղութեամբ փառաց ն՟ր · և օրհնութեամբ
ն՟ր լցան տիեզերք ։
Ամբակ. Գ. 13. ’ի Սաղ. ՃԽԵ. 5 ։

Երրեակ կատարելութի՟ն տեսանի ’ի վա֊
յելչութե՟ն լուսոյ. մին է պայծառութի՟ն
յինքեան. երկրորդն է յայտարարու֊
թի՟ն յառարկայն. երրորդն է անցումն
ը՟ն թափանցիկ մարմինս ։ Այս երրեակ կատարե֊
լութի՟ն տեսանի և ’ի լուսապայծառ յայտնութե՟ն տ՟ն, որ ’ի
մին աւուր երրակի փայլեցաւ . առաջինն՝ ’ի գա֊
լստեան երից մոգուց պայծառութ՟բ երկնային աս֊
տեղ. երկրորդն՝ ’ի մկրտութե՟ն տ՟ն ’ի յորդանան՝ թափան֊
ցութ՟բ երկնային փառաց. երրորդն՝ ’ի կանայ գալիլեաց֊
ւոց ’ի հարսանիսն յայտարարութ՟բ ամենակարողու֊
թե՟ն տ՟ն ։ Յառաջնումն՝ ցնծացաւ հոգի ն՟րյ կու֊
սին՝ տեսանելով թէ թագք ազգաց հանդերձ ըն֊
ծայիւք գան յերկրպագութի՟ն որդւոյ իւրոյ. (Մատ.
Բ. 1. = 12.) Յերկրորդումն՝ յափշտակեցաւ հոգի
ն՟ր ’ի լսելն անդ զվկայութի՟ն զոր վկայեաց հայր

ի յերկնից ի վե՛ր ծնեցեալն իւրոյ, թէ զա՛ն ոչ
դի իմ սիրելի. (մատ. ՟ճ. 13. = 17.) զի առ՚ին
վկայուբ՚ եառնս զինքն մայր այնպիսի որդւոյ՝ որ ն
ծնունդ հօրն երկնաւորի. որով և՝ ի կարդի ծնող
դեան ցուցանիւր հաւատարուն ինչ. իբր զի (ը
ասելոյ մեր՝ ի Ճառն. ՟ճ. հատ. ը.) զոր հայրն ա
ուց՝ * զա՛ն որդի իմ սիրելի ||, զնոյն և կոյսն ա
ուր. զա՛ն որդի իմ սիրելի. հայրն ը՛ ասէ, և
մայրն ը՛ մարդկուե՝ ։ Յերդումն փառաւորեցաւ
հոգի նը. զի յայտնեցաւ փառք որդւոյ իւրոյ՝ ի
Ջանայինն անդ՝ թէ ո՛ր ն նա ա՛մն և ամենակալող,
ոմն և կամի փոխոխել զաւրաւործս. (յովհ. ը. ։.
= ։։.) Եւ որովհետև այսոքիկ երբեակ յայտնու
թիւք՝ ի սմին աւուր եղեն, արևմտեան եկեղեցիք
ը՛ անուամբ տօնի յայտնութե՛ն զերեսին զտոսա՝ ի
միասին տօնախմբեն այսօր. իսկ մեք և այլ արևել
եան եկեղեցիք զաւազինն և զերկդն հանդիսա
ցուցանեմք։ Զրդ՝ ի յայտնութե՛ն՝ որ եղև՝ ի մկրտ
տուե՛, չորս ինչ են տեսանելի. առաջինն ն ցնծումն
կի բացումն երկնից. որով ե՛թէ նշանակեսցի երա
կան բացումն, առ՚ին ցուցանի՝ թէ՝ ի մկրտել քե՛ն,
ոմն լուսեղէն հովանի եղև՝ ի վերուստ, ոմն եղև
՝ի ճաբօր. և պատառմամբ ամպոյն էջ հոգին նը
՝ի վե՛ր քե՛ն, և հնչեաց ոմն ձայն հայրական
առ քե՛ն։ Իսկ ե՛թէ նշանակեսցի փոխաբերութի՛ն,
առ՚ին ոչ ցուցանի՝ թէ յերեաւ պատառեցան
երկինք, այլ թէ փառաւոր երևեցաւ հանդէս
յայտնու՛ն հոր և հոգւոյն նը՛ յերկնից։ Եւ այս
էզանակ խօսից դնի ը՛ ձևոյ փոխադարձուե կի
փոխանունուե. որով անուն գործողուե իրիք դնի
փոխանակ այնը՝ որ չէ՛տ գոյ գործողուե. և զի
գործողուե պատառման համ բացման չէ՛տ գոյ

յայտ-

յայտնել այնը որ ծածկեալ կայ, փոխանակ դնելոյ յայտնել՝ այլաբանութեամբ ասի պատառիլ. ըստ այսմ է և առաւել քան զի աւետարանչին տեսանել զյայտնութիւն փառացն այլ յերկինից երևեալ, փոխանակ ասելոյ՝ երևեցան փառքն այլ յերկինս, ասէ՝ բացան երկինք, կիմ ցելան : Ա. յսմ օրինակ՝ յորժամ որ յայտնէ զգաղտնիս սրտի իւրոյ՝ սովոր եմք առնլ պատառեաց կամ եբաց զսիրտ իւր : Ապրիդաբար, այս բացումնս երկնից ցուցանէ՝ թէ որք մկրտինն՝ բացեալ լինի նոցա երկինք, և ևս և եկեղեցի՝ որ յերկինս օրինակի :

Երկրորդն է խօսիլ հոր ՚ի վերուստ զգալի բանբ առաւել թէ * զա է որգի իմ սիրելի, զմիս լուար ,, րուք .‖ ոմն արար և ՚ի Թաբոր : Ա. յս ձայն որ դարև հոր այլ էր, բայց ոչ եթէ բերանով հնչեալ, զի չիք յաճ նիւթեղէն բերան . այլ առ արտաքս կերպարանեալ ՚ի հրամանէ նէր, կամ ինքնին որ ծելով, և կամ՚ի ձեռն երկրորդ պատճառաց, կամ սպասաւորութեամբ հրեշտակաց : Ա. յս ձայն խնամալապէս հնչէ և առ այմ մկրտեալս . ըստ որում որք մկրտինն՝ լինին որդի այլ : Երրորդն է և ջանել հոգւոյն սրբոյ մարմնաւոր տեսլեամբ ՚ի ձև աղաւնւոյ , որ կերպարանեալ եղև ՚ի տարրերէն նաց զօրութեամբ հոգւոյն սրբոյ ՚ի ձեռն սպասաւորութեամբ հրեշտակաց : Պատճառ ՚ի ձև աղաւնւոյ լինելն այս էր՝ զի վկայեսցէ զանմեղութիւն մկրտեցելոյն . և ևս և յայտնեսցէ զբարեգթութիւն իւր . միանգամայն և ևս ցուցցէ՝ թէ որք մկրտինն՝ աղաւնիանան , և լինին տաճար հոգւոյն սրբոյ : Նակ տեսիլ մարմնաւորութեանն՝ յայտ առնէր թէ ամ մարմինն հանդերձեալ է տեսանել զերկուսին այ , և վերանալ ուրն յերկինս հանդոյն աղաւնւոյ : Զրդն

է խոնարհիլ որդւոյն այ 'ի մկրտութիւն, և սյն 'ի ծա-
ռայէ իւրմէ․ և որ աղբիւրն էր՝ 'ի յառուէ․ և
* լիութին 'ի կաթիլ մի ջրոյ ‖․ ոմ ասէ ալպերտ․
(Գ․ 13։) Մկրտեցաւ՝ ոչ զի կարօտ էր, այլ զի կա-
րող էր․ իբր զի ոչ վն կարօտութե մկրտեցաւ, այլ
զի իւրով ամենակարող զօրութբ 'ի մկրտիլն անդ
սահմանեաց զխորհուրդն մկրտութե․ քանզի շօ-
շափմամբ ամենամաքուր մարմնոյ իւրոյ, արար՝ զի
ջուրն լինիցի նիւթ մկրտութե 'ի ջնջել զսկզբնա-
կան՝ նաև զներգործական մեղս մարդկան և ծնանիլ
որդիս այ։ Իսկ որովհետև 'ի մկրտիլ իւր՝ հայր 'ի
վերուստ վկայէր՝ և հոգին 'ի վրն երևէր՝ և ինքն
որդին 'ի ջուր իջանէր, կամեցաւ՝ զի և 'ի մկր-
տութե մերում լինիցի յիշումն անուան հօր և
որդւոյ և հոգւոյն սրբ․ ըստ այնմ (մատ․ իը․ 19․)
* մկրտեցէք զնս յանուն հօր և որդւոյ և հոգւոյն
„ սրբ ‖։ Մեք 'ի մկրտիլն ծնանիմք յորդիս այ․ իսկ
քս գոլով բնական որդի այ՝ ոչ եթէ նորոգ ծնաւ
որդի, այլ ծնաւ ծնօղ որդւոյն այ․ զր յայտնեցաւ
թէ ինքն է հեղինակ ծնանելոյ որդւոյ մարդկան
յորդիս այ․ (տես 'ի մեկն․ սաղ․ Բ․ 7․ յայն բան՝
թէ * ես այսօր ծնայ զքեզ ‖։)

Ըստ սմին սակի և 'ի յայտնութեն՝ որ եղև 'ի կանայ
գալիլեացւոց՝ չորս ինչ է տեսանելի․ առաջինն է
միջնորդութին սրբ կուսին․ զի տեսեալ նր թէ պա-
կասեցաւ գինի 'ի հարսանիսն՝ յորում էր, ասաց
ցյս․ * գինի ոչ ունին ‖․ իբր թէ ասէր․ սք հրաւի-
րեցին զքեզ 'ի հարսանիս, և այժմ ամաչեն 'ի քէն․ զի
չունին գինի, և ոչ գիտեն՝ զինչ արասցեն․ դու՝ որ
զամ գիտես, և յամի կարես, արա ոմ և կամիս։
Սովին յայտնի արար սբ կոյսն՝ թէ ամենակարող է
որդի իւր․ որով և բաւական է նաև 'ի չգոյէ գոյա-

ցու

ցուցանել զի ինքն, և զամ ինչ։ Այրէդն է քանն քան՝ զոր ասաց առ նոբ կոյսն. * զի՞ կայ իմ և քո կին ,, դու, չև է հասեալ ժամ իմ ‖. ոյզ Թէ ասացեալ էր. դու կամիս յայտնել զիաւս իմ, բայց տակաւին չէ հասեալ ժամանակ փառաւորելոյ իմոյ։ Այսպէս ոք Թերևս. եԹէ չև էր հասեալ ժամանակն, զիարդ առա կամեցաւ կատարել արտաքոյ ժամու։ Պասեմ նախ. ոչ եԹէ ժամ կամելոյն, այլ ժամանակ գործելոյն չև էր հասեալ. վ՚ոյ և գործելն հետևեցաւ կամելոյն։ Պասեմ երկրդ՝Թէ վ՚ա զի ոչ կարէր յո ընդէմ կալ կամաց մօր իւրոյ, մինչև ստիպել նմ փոփոխել նաև զժամանակն։ Այս ցուցանէ այն սաստկական եղանակ զոր դնէ. * զի՞ կայ իմ ,, և քո ‖. իբր Թէ ասէր. ընդէր բռնադատես զիս մայր իմ. գիտես՝ զի ես ոչ կարեմ անտես առնել զկնդրուճածս քո,Թէ և արտաքոյ իցէ ժամանակի. և գիտես ևս՝զի ժամանակ իմ չև է հասեալ՝ի յայտնել զիս. բայց քանզի քոյդ հասեալ է ժամանակ, հարկ է ինձ փոփոխել և զիմ ժամանակ՝ի նոյն, որ՝ի ժամանակ գՅաստիրուԹէ քո։ Այրէն է փոխարկումն ջրոյն՝ի գինի. զի յետ ասելոյ սրբոյ կուսին ցյի՝ գինի ոչ ունէին, գիտելով Թէ նա անտարակոյս կատարելոց է զկնդրուճածս իւր, և Թէ զայն ունի առնել իւՀք արտաքին գործողուԹՀ, ասաց ցսպասաւորան՝ զոր ինչ ասիցէ ձեզ՝ արարէք։ Այս յո տեսեալ՝ Թէ մայր իւր տրամադրէ զիրան, հրամայեաց սպասաւորացն լնուլ զվէցեքին Թաղկոյկան ջրով, և ասաց բերել՝ի ջրոյ անտի առ տաՃարապետն. և նա չիմացաւ Թէ իցէ հրաշագործեալ գինի, այլ բնական. բայց զարմացեալ ընդ աղնուՀուԹՀն գինւոյն՝ խօսեցաւ ցփեսայն՝ Թէ ընդ պահեալ իցէ ցայնժՀ զայսպիսի գինի. և իբրև

խմացաւ զիրսն 'ի սպասաւորաց՝ զարմացաւ յոյժ, զարմացան և նմքն որք էին անդ. Ջրդն է յայտնութ փառացն Յսի. Ըստ որում ասէ աւետարանիչն՝ թէ * յայտնեաց զփառս իւր ||. ուր բառս ճառէ՝ դնի փոխանունաւէ ձևով՝ փխն կարողութեն փառաւորելոյ. յոր միտ կամի ասել. այսու գործով յայտնեաց զամենակարողութի իւր, որով և փառաւորեցաւ իբրև տէր ջրոյ և գինւոյ, և տր ամի. զոր և յայտնի տեսեն աշակերտայն, *հաւատացին 'ինա||: Ասի 'ի բազմաց՝ թէ նաև փեսայն սքանչանալով և հաւատալով եթող զփեսայութ իւր, և աշակերտեցաւ Յռի. այն է սիմոն կանանացի, կմ ըստ հաստատելոյ ոմանց՝ նաթանայէլ որ 'ի կանայ գալիլեացւոց. զորմէ ասի՝ թէ իցէ բարթուղիմէոս առաքեալ: Այլ թէ 'ի լինել այժմ՝ զորպիսի պատիւ ցուցին տրյ կուսին՝ որք անդն էին, կարեմ ինքնին խորհել և իմանալ: Իսկ 'ի յայտնութեն՝ որ եղև 'ի գալստեան մոգուց, երկու ինչ է տեսանելի|| Առաջինն է երևիլ աստեղն և առաջնորդել նր մոգուցն մինչև յեղմ. Երկրն է գտանել նց զքս 'ի բեթղեհէմ, և երկիրպագանել նմ, և մատուցանել զընծայս խորհրդոյ: Ո յայսմ յայտնութեն է առաջիկայ ճառս. զոր ունիմք բաժանել յերկուս հատուածս. յառաջնումն խօսեսցուք զմիոյն, և յերկրորդումն զմիւսոյն:

ՀԱՏՈՒԱԾ ԱՌԱՔԵԼՈՅ

Հանգամանք ասպեղեն՝ որ երևեցաւ երկոցունց, և առաջնորդեաց նոցա մինչև յերկիր։

ա. Ի ծնանիլ յոի քոյր՝ ի բեթղեհէմ հրէաստանի՝ երևեցաւ աստղ մի՝ ի բարձունս. ըստ որում մարգարէացեալ էր բաղաամ բէովրեան՝ յաւելեալ. * ծագեսցի աստղ յակոբայ ||. (Թուոց. կիդ. 17.) աստղ նորատեսիլ. աստղ այլաձև. աստղ յայտարար. աստղ խորհրդաւոր. աստղ հրաշալի. աստղ յաղթանակօղ. աստղ ահագին։ Աստղ՝ նորատեսիլ՝ զի ոչ էր ոք զայլ աստեղս՝ ի հաստատուածէ, կամ՝ ի կամարս մոլորակաց, և կամ՝ ի դոլորշեայ դոյացեալ. այլ հրամանաւն ոմն ձեռամբ հրեշտակաց նորոգ կազմեալ՝ ի հրոյ իբրև զբոց, կամ մանաւանդ՝ ի յօդոյ, առ՝ ի ցուցանել զնորածին արքայն, որ՝ ի կուսէ եբեր յանապական հրոյ և յանխառն օդոյ նորոգ կերպացաւ վճռ մեր։ Աստղ այլեայն՝ զի այլ աստեղք բոլորակ ցուցանին՝ և ոմանք դխաւորք. իսկ սա յոյնպիսի ինն ձև՝ որ իբր նետ արձակեալ յերկնից՝ ցուցանէր զինքն ուղղեալ դէպ՝ ի բեթղեհէմ. և հաւանական է՝ թէ սա ևս ունէր գէտ, բայց այլեայ ձև, որ ոչ միայն՝ ի գիշերի (ոչ այլ աստեղք,) այլ և՝ ի տուընջեան փայլէր, որով կարէր առաջնորդել մոգուցն. զի թէ չէր այսպիսի ասէ շնորհալին (՝ի մեկն. մատ.) ոչ մեծ ինչ երևեցուցանէր, և ոչ կարէր՝ ի տուէ ևս առաջնորդել Աստղ յայտարար՝ զի այլ աստեղք գոյացան՝ ի ջուրց երկնից. իսկ սա եղև լեզու երկնից, որ լուսեղէն բարբառով քա-

ըս-

բողեաց ՚ի, թէ լոյս յաւիտենական ծագեսցաւ ձեզ, թողէք արդ զխաւարն մեղաց. ած ՚ի մարմին ծնաւ ձեզ, փութասջիք ՚ի պաշտօն նը, և թողէք զկուռս. փրկիչ երևեցաւ ձեզ, ՚ի խնդիր լերուք նմ, և թողէք զգերութեն սիրոյն. կեանք յայտնեցաւ ձեզ, ՚ի նա մերձեցարուք, և թողէք զծառայութեն մահու։ Ա՛ստղ խորհրդա՛ւոր՝ զի այլ աստեղք եղեն յորոշումն ժամանակաց. իսկ սա նոր դրէնչ երկնից դրեաց ՚ի սիրտս հեթանոսաց զլրումն ժամանակայ խորին խնդրոյ մարդեղութե։ Ա՛ստղ հրաշալի. զի այլ աստեղք եղեն յազդումն ենթալուսնեայց. սա եղև փող երկնից, և աղբեաց ՚ի զհաշտուն ՚ի։ Ա՛ստղ յաղթանակո՛ղ՝ զի այլ աստեղք եղեն ՚ի պատմեզփառս ՚ի ըզհոգերգոյնն. (սաղ. ԺԸ. 1.) իսկ սա եղև դրօշակ քեզ կանգնեալ ՚ի բարձունս առ ՚ի ցուցանել աշխարհի զփառաւոր յաղթութիւն ընդդէմ բռնութեան սատանայի։

Ա՛ստղ աջա՛յին՝ զի թէպետ և այլ աստեղք՝ ՚ի են, այլ ՚ի քնական կարգի. իսկ սա կարգեցաւ և առ գերբնական յայտնութիւն. ուստի և ասացաւ աստղ նը. և վ՚ոկ մոգքն ոչ ասացին՝ թէ տեսաք զաստղ ՚ի այսպիսի, կամ այնպիսի, այլ թէ տեսաք զաստղն նորա. իբր թէ ասէին, տեսաք զաստղն զայն՝ որ առ ՚ի ցուցանել զնա դոյացեալ եղև, և ոչ յայլ պէտս։ Ա՛րդ աստղս այս թէպետ և ամենն կարեր երևիլ, բայց մարդիկ ոչ այնքան ուշ եդին այնմ. այլ նք միայն՝ որք ՚ի քննուն աստեղաց պատրաստին. որպիսի էին երեքին թագաւորքն, զորս յոլհ. ոսկեբ. կոչէ մեղքոն, դասպար, և բաղտասար. մեղքոն Թրգմանի արքայական. դասպար Թրգմանի հետամուտ. բաղտասար Թարգմանի դաղտ դանձօղ. և յիրաւի երեքին նք արքայ դոլով՝ հետամուտ եղեն

եղեն երկնաւոր արքայլին, և գաղտ 'ի Թշնամեաց գանձեցին յանձինս իւրեանց զգանձ ածայլին շնորհաց և պարգևաց ։ Օ՛ի նախ տեսեալ զաստղն զարմացան . և հետամուտ լեալ քննեցին և տեսին՝ թէ այն չէր աստղ հսրկ, այլ նոր ։ Եւ գիտելով ևս թէ ած տր է ամի, և կարէ առնել ինչ 'ի վեր քան զբնութի, եգին 'ի սիրտս իւրեանց՝ թէ աստղն այն է նշանակ մեծի ինչ իրի՝ զոր արարեալ է ած 'ի վր երկրի ։ Եւ թէպէտ կայր 'ի մէջ նց աւանդութիւն մարգարէութեն բաղաամայ՝ թէ ծագելոց է աստղ յակոբայ, բայց այս յայտնի և որոշակի ոչ ցուցանէր ինչ. վն որ ասելոյ բղխ վրայ հարկեցան դիմել յաղօթս առ ած, և ած 'ի ներքուստ լուսաւորեաց զնս. և 'ի լուսաւորութե անդ՝ աստղն ևս արտաքուստ երևեցուցանէր զայն՝ զոր առ 'ի յայտնել կարգեալ էր . և մանաւանդ ոպ ասէ սրն ղևոնդ . այնուհետև նա ինքն *աստղն ներգործէր 'ի սիրտս նց ‖ . բայց առաւել ևս նորածին աստղն քս, որ ծագեալ 'ի սիրտս նց . որ որոյ ասէ լաւրենտիոս յուստինեանն. քս *ձգեր զնս շնորհօք, զորս երևեալ
,, աստղն հրաւիրեր լուսով ‖ ։ Ի?րդ վնի աստեղը կոչեաց ած զայսոսիկ մոգս, զի սք էին իմաստուն աստեղագէտք, որք յայն ժամանակին մոգք անուանէին . (Թէպէտ և յետ Քիս անունս մոգ՝ արատաւորեցաւ վն բզմ առասպելաբանութեց աստեղաբաշխից, և ընծայեցաւ նաև կախարդից ։) Եւ Քղի ած կոչէ զամն յարմար միջնորդօք, զաստեղագէտ մոգսն ևս հաճեցաւ կոչել նոցին յարմար միջնորդաւ, որ աստեղը . ոպ գրէ Թէօփիլակտոս յասելն . *զաստեղագէտ մոգսն կամե-
,, ցաւ ած աստեղը հմտացուցանել իբր նոցին յար-
,, մարագոյն և ընտանի իրօք ‖ .

Սր

Ա՛ՍՏ. Է. 1։

Ա՛ ղն ըստ գրելոյ Թովմայի ադուճնացւոյ. * «ոչ
„ծանօթ ունին հաւաքաբանական լինի այնոքիւք՝
„որք առաւել յայտնի են նմա՝ որում յայտնել ի
„ինչ, այսպէս ևս յայտնութեան՝ որ լինի նշանօք, սակ
„տի լինիլ այնպիսեօք՝ որք ընտանի իցեն նմա՝ որոց
„յայտնի։ Այլ ըզդի մոգուց յարմար և ընտանի է
քննել զաստեղս, և նոքիմբք զնմ տեղեկութիւն
ստանալ իբր ինքեանց յայտնի եղելովք, այծ ևս
կամեցաւ՝ ի ձեռն աստեղ յայտնել նոցա նաև
զայն՝ զոր ոչ գիտէին. վասն սոկ Թէոդորոս եպիս
անկիւրիոյ. * ուսաւ գիտութիւնս ուսանելոյն քաղդէ
„այիք, անտի ուսանիցին և զոր ոչն գիտէին։

Ը. Այլ քննել արժան է նախ՝ Թէ ե՞րբ երևեցաւ
նոցա այս աստղ՝ և երբ հասին նո՛ք ի բեթղեհէմ.
երկրդ՝ Թէ յո՞ր կողմն երևեցաւ աստղն. երրդ Թէ
զի՞արդ երևեցաւ, արդեօք երիցն՝ի միասին՝ի միու
ժամկի, Թէ առանձինն առանձինն յայլ և այլ ժամկի.
չորդ՝ Թէ զի՞արդ գտին նո՛ք զմիմեանս։ Ա՛ռ առաջ
նոյն ծանի՛ր, զի եթէ հեռի էր տեղին՝ուր յայտնե
ցաւ նո՛ց աստղն, հարկ է ասել՝ Թէ յառաջ քան զծնա
նիլ փրկչին երևեցաւ նո՛ց այն։ Ո՛ իարդ և լեալ իցէ՝
ժամանել նո՛ց յեղէմ և՛ ի բեթղեհէմ ոչ յաժեաց
երկար, այլ միևդեռ յիջևանի ծննդեան էր քո.
կիմ քան շարականին և քան աւանդելոյ բնմ վզնոյ,
յորժամ էր յայրին, և միևչդև էր ածեալ՝ ի տա
ճարն. կիմ Թէ միևչդև էին լցեալ աւուրք քառաս
նից. զի Թէ լցեալ էր՝ոչ ևս միայր ևս կոյսն՝ի բեթ
ղեհէմ, այլ գնայր՝ ի տուն իւր՝ի նազարէթ. որ
պէս և վկայէ ղուկաս՝ Թէ դնաց. (զուկ. Բ. 39.)
վասն զի՝ ի ժողվիլ մոգուցն՝ և՛ ի լրանալ քառաս
նից՝ ածեալ զյի՝ և՛ ի տաճարն, յորում անտի՝ և՛
նազարէթ. Այլ՝ ի խնդրել հերովդէի կատուսանել
զյի՝

զյն՝ հրեշտակ ՚ն աղդ արար յովսեփայ՝ փախու-
ցանել զնա յեգիպտոս։ Եւ հերովդէս կարծելով
թէ յո՛ ի բեթղեհէմ էին, առաքեաց կոտորեաց
զմանկունս բեթղեհէմի։

Ո՞ երկիղն յայտ է՝ թէ աստղն այն երևեցաւ յա-
րևելս. ըստ որում վկայեցին մոգքն, թէ * տեսաք
„ զաստղ նո՛ր յարևելս ‖. և ինքեանք իսկ յարևելից
եկին. զի ասէ աւետարանիչն՝ թէ * ահա մոգք
„ յարևելից եկին յերկրմ ‖։ Իսկ թէ ո՛ր ՚ն էր այն՝
դժուարանամք լսանելոք. քանզ սաղմոսին և եսայեայ
ևս և բազաամու՝ յուցանեն լինել ՚ի սահմանս
մա-դիամու, արաբայ, և սաբայ. բայց զսոսին ևս
դժուարին է որոշել. (տե՛ս ՚ի մեկն. սաղ. հ՚ա. 10։)
Իսկ ընդհակառակն մեր (՚ի մեկն. մատ. բ. 1.) ասէ
լինել ՚ի պարսս, ըստ որում երկիրն պարսից անկանի
յարևելից կուսէ եղեմի։

Ո՞ երդին և վ՚ո՛ երդին՝ չունիմք ինչ ասել՝ զի չէ
յայտ։ Ի՚նուանել եւսեբիոս եմեսացին ասէ թէ երե-
քին թագք ևս առանձինն առանձինն տեսին զաստ-
ղըն ՚ի միում ՃԼՒԻ, և ծանեան զկարհուրդն, և
վերնային ազդեցութ՚ եկին առ միմեանս։ Ի՚այլ արդ
՚ո կարէ պատմել՝ թէ ՚ի տեսանել աստղոյն զերեսաց՝
ոչ ճաշակ ուրախացան, և զիարդ իւրաքանչիւր յայտ
առներ՝ թէ որպէս եղև նմա տեսանել զաստղն,
և զինչ զգայր ՚ի սրտի. և ևս թէ որպիսի ՚ո՛
բնաւիսաւ եղև ինքեանց գալ առ միմեանս։
Յետ խնդալոյ և ցնծալոյ ՚ոյ ՚ի մէջ իւրեանց՝
կարհուրդ արարեալ միտգան հաւանութ՚ կազ-
մեցան և պատրաստեցան գնալ զհետ կոչման աս-
տեղն. և զորս պատշաճ տեսին՝ յարդարեցին զայնս
սրընծայս. և ելեալ ՚ի ձնոյնէ ընթանային զկնի
շարժման աստեղն, և աստղն առաջնորդէր հրեշ-

տաւ

տակի հաճ ընծայ մինչև ի քաղաքն եղիմ, և անդ
կիսոյ առեալ դատարեցաւ յերևելոյ. զի թէ ոչ
դատարկ՝ ոչխանդային յետոյ յորժամ տեսին զնա
յելանել նուրեանոյ յերուսաղէմ։

Ք. Ի. ստանօր աղաղակեն ած հարք՝ հայելով ընդ
գործս այսոցիկ թէրեզ և ընդ գործս մեր. զարմանք
է՝ զի ած մի միայն աստեղը կոչեաց ընծ, և ն՚ք թո-
ղեալ զայս գործս նուրեանոյ՝ ուրախասուք սրտի գնաք
ընդ գտանել զնա՝ որ կոչեր ընծ. իսկ ի սկզբան մեր
հանապազ ծարկ զբազմադիմի չարութիւնս աս-
տեղ երևնային ընծոյ նշոյ. և մեք ոչ միայն
չքարժիմք, այլև զրեթէ չզգամք և։ }ամ ժամու
կոչէ զմեզ պետպետ նրօք. * կոչէ նուրև, (ասէ մեծն
„ գրիգոր,) կոչէ հրեշտակօք, կոչէ հարբք, կոչէ
„ մինչրեւնք, կոչէ առաքեալովք, կոչէ հովուօք, կոչէ
„ սքանչելեօք, կոչէ պատուհասուք, կոչէ յաջողու-
„ կոչէ ձախորդու||ս. ահա մի մի աստղեն ած քո՝ որք
կոչեն զմեզ. և մեք ոչ որ շարժի և գնայ։ * }ամանթ
„ ըմբ քրիստոնեայդ ապերախտ (ասէ սբն թեոդոր
„ գոռ,) որ ոչ գիտեն գնալ մոգուցն՝ յետ որոյ քան ոչ
„ միով աստեղը, այլ բիւրապատիկ հրաշիւք, որք
„ նախօք ածէ, յաղթանակաւ մարտիրոսաց զթմրուն
„ քո զարթուցանէ և զկուրրութիւնդ լուսաւո-
„ րէ ։ }ն սիրոս թուլացեալոյ և մեղուցեալոյ քա-
զում աստեղս երևեցուցանէ ած ի ներքս ի
խիղճ մտաց նոյ, և սակայն ոչ առնեն՝ այս այն
աստղ է՝ որ կոչէ զմեզ. ուստի և ոչ գիտանեն ի ձա-
նապարհ ած. ի գտանել զկոչողն. ոչ հարցանեն ի
մեջ եղեմ՝ յր ի մեջ հովուոց իւրեանց, ածր կոչէ ար-
դեօք արքայն հրէից։ Խոտովին և ած երթեմն ի քա-
րուէ սրտից իւրեանց, և առաւել և ած անկարպա-
նան, ուր այլք բազմօք շահին։

Ի տեսանել երից Թգրատ զաստղն լուսաւորելոյ և ուրախացան. իսկ քաղաքն՝ որ լիներ չարեօք, խաւարեցաւ և խռովեցաւ : Ա. ստեղք ներգործեն ըստ որամատրութիւն եղանակային. ոչ ահա արեգակն զմամ կանխացուցանէ և զնոդ կարծրացուցանէ. սպիտակ ծնանի յասխա և յեղրոպիա, և սեաւս յեթէովպիա, զի տրամադրութիւնք եղանակային այսպէս առնեն : Այնպէս ներգործէ և աստղ ածային ընտրհաց. եթէ տեղի տացես այնմ, և ոչ ընդեմ դարձցիս, լուսաւորիս և զօրանաս մեկնիլ ի չարէ և առնել զբարին. և ոչինչ հանարիս զդժուարսն Թին որք ընաւաջ ելանեն քեզ :

Տե՛ս Թէ երեքին Թգրեքս այսոքիկ զհարդ զօրացան, և զնրպիսի դժուարութիս յանձն առին եւ անե լեր կրէ եւ գտանե լզքս. *ոչ Թմրեցոյց զնա ,, երկարուն Հանապարհն (ասէ բեռնարդաս.) ոչ ,, դժնէութիւն ժամանակին, ոչ սէր փափկու- ,, Թեան մարմնոյ, ոչ վտանգ անձանց. զի եռանդն ,, հաւատոյ այնպէս բորբոքել էր զնա, նոյնպէս և սր- ,, տաքին պայծառութիւն լուսոյն և ներքին Հուռա- ,, պայԹուն, մինչև և ոչ վայրկեան մի ժամանակի ,, կարել նմա յամել : Ա. յլ որ մեծն է՝ վարձս ինչ ոչ խոստացաւ նմ՝ այլ միայն նշանաւ միով եցոյց զնա, զի նովնդ իւր՝ զի եկեսցեն երկիրպագանել նմա. *որ պատճառ զմոգան շարժեաց. (ասէ ոսկեբ.) որ յոյս ,, վարձուց յորդորեաց զայլ երկիրպագանել Թգրին՝ ,, որ իւր անհուն ընարձակութ Հեռի էր ի նմանէ. բայց այսու ամիս յօժարութ եկին. իսկ մեզ զմեծամեծս խոստանայ, և մեք Թուլանամք. նք կատկին երկ- բայիլ և անփոյթ լինիլ, իսկ մեք աներկբայ գե- տեմք Թե կարեմք գտանել զնա, և սակայն խնդրել անհոգանամք : Ինդ որ գժդ նեալ լիմն ասէ պր-

նամէնդուրա. զարմանք է. զի *ահա թագիք եմ
,, զնդօրճ թագաւոր թողին և խնդրեցին զթագն
,, երկնից. և սակայն գիմք կան՝ որք թէև ուսեալք
,, իցեն և կրօնասէրք ոչ խնդրեն ։ Իրամայեաց
ամէն աբրահամու. (ծնն. ԻԵ. 1.) և ասէ. *ել դու
,, յերկրէ քումմէ և յազգէ քումմէ և ի տանէ հօր
,, քո, և եկ յերկիրն՝ զոր ցուցից քեզ. և արարից
,, զքեզ յազգ մեծ, և օրհնեցից զքեզ, և մեծաց
,, ցուցից զանուն քո, և եղիցիս օրհնեալ ։ և աբ-
րահամ հնազանդեցաւ, եւ գնաց, առն ունելով
և վարձուցն. իսկ ի կոչելն զմոգս եւանել յերկրէ
խուբեանց՝ ինչ ոչ եցոյց նոյ. ոչ խորհրդածէ լաւբեն-
տիոս յուստինեան։ Արդ եթէ ամէն և մեղ ինչ ոչ
ցուցանէր ի վարձուց՝ պարտ էր մեզ հետևիլ թա-
գաւորացս այսոցիկ, և լուսով աստեղն շնորհաց դի-
մել առ քա, քանի՛ առաւել ապա արժան է մեզ ե-
լանել ի չարեաց, որովհետև զայնքան մեծամեծ
բարիս խոստանայ մեզ ամէն։ Արդ յերկրէ փախ-
կուէ քո՝ եթէ կամիս գտանել զլուսն ամէն բարեաց,
և զգուշարուի առաքինուեց. զի ի փախկուիս ոչ
գտանին նոքին. եւ ասէ՝ *և արարից զքեզ յազգ
մեծ ։ ի զանազան աղգս առաքինուեց։ Արդ յոչէ
քումմէ ի սիրոյ ձիս. զի անդ օրհնուին այլ ոչ գտա-
նի. եւ ասէ. և *օրհնեցից զքեզ ։ Արդ ի փանէ հօր
քո ի սիրոյ մարմնոյդ. զի անդ մեծուին քնի ոչ ե-
րեւի. եւ ասէ. և *մեծացուցից զանուն քո ։ Ար-
զայս հաւաստապէս գիտասջիր, զի եթէ կամիս հե-
տևիլ թագաւորացս այսոցիկ, հարկ է քեզ ի ծագել
աստեղն շնորհաց եւանել յերկրէ արծաթասիրուեճ,
յոչէ փառասիրուեճ, և ի փանէ մարմնոյ ցանկուեճ։
Արդ եւանելով յերկրէ արծաթասիրուեճ և ոսկեսիրուեճ, ն-
ման ինչ այնմ թագին՝ որ մատոյց պատարագ զոսկի
որ

որ յերկրի կղկղի ։ Այլանեւլով յոչՓե փառասիրութ՚
նմանիս այնմ Թզենի՝ որ մատոյց զկնդրուկ , որ ՚ի
փառաւորուի ոչ ընծայի։ Այլանեւլով ՚ի ոչՓե մարմնա-
պաշտութե եւ բղջախոհութե՝ նմանիս այնմ Թզենի՝
որ մատոյց զմուռս . որով մեռեալոց մարմինք պա-
տին . եւ ի՚ եւս նշան մեռեալութե մարմնոյ ։ Կիտաս-
ջիր՝ զի մելութիք խաւարեցուցէին զհոգի քո, եւ ոչ ք
փակեալ են զաչս սրտի քո. որով ոչ տեսանես զլոյս
աստեղ հոգւոյն ՚ձեզ . լուսաւորեաց լուսաւորեաց
ով մարդ . արի ՚ի Թմրութէ , եւ ել ՚ի մեղացդ Քրիս-
ոՓառուի՚ե եւ ՚ի մելութեց չար ծառայուի՚ե ։ Ո՞ինչու ոչ
ելցես յայսպիսեաց աստի՝ ոչ գտանես զխոստացեալն
յոյժ ։ Ոսկ եԹէ ելանիցես՝ քաղուս քարեօք լիաս-
ցիս . զի և աբրամ յետ ելանելոյ յերկրէ իւրմէ,
լիացաւ խոստմամբ քարեաց և կոչեցաւ աբրահամ,
որ Թարգմանի հայր բազմութե . * ոչ կոչեսցի անուն
,, քո այսուհետև աբրամ, այլ եղիցի անուն քո աբ-
,, րահամ ։ (ծնն . ԺԷ . ե .) Ոսկ աբրամ Թարգմա-
նի հայր՝ վերամբարձ՝ այ հայր քարձրացեալ ՚ի գետա-
կաց , որ ե ասել, հայր անգաւակ ։ Ոերեմն եԹէ վե-
րամբարձիս և դու՚ի չար գաւակաց՝ այ ՚ի մելութեց,
կոչեսցիս աբրահամ , այ հայր բազմ քարեաց և գա-
նազան առաքինութեց . յոյս գտանես գքե . զի ինքն
ե ՚ձեր զօրութեց , այ ՚ձեր առաքինութեց . (սաղ. ԺԷ. 10։)
Այս ոնդ ՚ձեր Թզենւոյն իրիք ՚ի Թզենւոյն անդ իւրում
գտանի, սոյնպէս և քե գոլով ՚ձեր Թզենւոյն առաքինու-
Թեց՝ ՚ի նմին գտանի . ուստի ասե վերարացին .
* ոնդ Թզենն ե ՚ձեր քաղաքաց իւրոյ Թզենւոյն , այսպէս
,, և քե ՚ձեր ե ՚ամ առաքինութեց , որք ասին քաղաքք
,, նր . ապա եԹէ կամիմք զնա խնդրել ըն ՚ձեզ Թա-
,, գաւորաց՝ խնդրեսցուք զնա յիւրում Թզենւոյն. զի
,, Թզենն հասարակօրէն յիւրում Թզենւոյն դեգերի։

Սուրեամ փոյթ կալցուք զհետ լինիլ զանազան առաքինութեց, խոնարհութե, համբերութե, եղբայրսիրութե, և որ 'ի կարգի. զի սքն են քաղաքք թգ̃րութնն, և 'ի սոսա ընծայի քս: Եւ մեք երթիցուք այժմ ը̃ երից թգ̃րցս այսոցիկ յեղ̃մ, և անտի ուղցուք ը̃ նն զա̃մ:

Դ. Յորժամ ելին ի՛նոցեք յեգիպտոսէ գալ յերկիրն աւետեաց՝ յերկիր պարարտ՝ որ բղխէր զկաթն և զմեղր, ամպ միլուսեղէն առաջնորդէր նց̃ 'ի գիշերի իբրև սիւն հրեղէն լուսատու լինելով նց̃, և 'ի տունջեան հովանի: Եւ ստ սմին օրինակի 'ի կոչելն մ̃ զերիս թգ̃րսն գնալ 'ի նոյն երկիրն աւետեաց 'ի բեթղեհեմ՝ որ թարգմանի տուն հացի, որ և ասի եփրաթ և թարգմանի պարարտութի (ը̃ որում ետ մեզ զամենապարարտ հացն անմահութե,) առաջնորդեաց նց̃ աստղն սքանչելի՝ ոչ միայն 'ի գիշերի լուսատու լինելով՝ և 'ի տունջեան Հ̃նդրհ ցուցանելով, այլ և զխաւարն հեթանոսութե 'ի նց̃է փարատելով, և զտիրէ ուրախութե սրտից նց̃ և լուսաւորութե մտաց նոցին առաւելլով, և յամ̃ նեղուծս նոցա մխիթար լինելով. մինչև եբեր հասոյց զնս յեղ̃մ: Սրախացան նք̃ յոյժ 'ի ժամանել իւրեանց անդ. զի այն էր քաղաք թագաւորացն հրէից, ուրում փափաքէին. ը̃ որում և եկեալ էին 'ի խնդիր թագաւորի նր̃ նորոգ ծնելոյ: Եւ եհաս և տրտմութի առ նս. զի ոչ̃ տեսցաք այժմ անդէն աներևոյթ եղև 'ի նց̃է աստղն: Բայց ը̃ այս ոչ երկբայեցան նք̃, թէ գուցէ խաբեալ ինչ իցեն, այլ աներկբայելի խորհրդով համարձակեցան մտանել 'ի ք̃ղքն՝ համարելով թէ անդ իցէ ծնեալն՝ զոր խնդրեն: Մտին և ոչինչ տեսին. խնդրեցին և ոչինչ գտին. հայեցան աստ և անդ և նշան ինչ ծննդեան թգ̃ի ոչ

նշմա-

նչմարեցին. և [քանզի] ոչ տեսանէին՝ սակ-
պէցան քարոզելով հարցանել և ասել. *ուր է՝ որ
ծնաւ արքայն հրեից. զի տեսաք զաստղ նորա յարև-
ելս, և եկաք երկիրպագանել նմա։ (մատ. բ. 1։)
Պատշաճ երևէր՝ թէ աստղն՝ որ առաջնորդեաց
մոգուցն, հասուսյէ զնա մինչև ի բեթղեհէմ. և
սակայն ոչ արար այսպէս. մի՝ զի մոգքն հարցանե-
լով առաւելև հասու լինէին խորհրդոյն այլ, և
առաւել ևս բորբոքեսցին ի սէր նորածինն արքա-
յին. և մի ևս՝ զի լինիցին քարոզք ի թդրեական
քաղաքի։ Ցգետ հովուաց առաքեաց ամբ գհրեշ-
տակս՝ քարոզել նոցա զնորհուրդն. զի որովհետև ան-
դեպ էին՝ ոչ կարէին իմաստուն ճնդիրհաւ հասա-
նել առ ծնեալն. ուստի հարկ եր կամ աքանչելիօք
լինչ, և կամ տեսլեամբ հրեշտակաց տեղեկացու-
ցանել զնա։ Նոքա աղքին հրէից՝ մանկիդ գտրաց նոց
և փարխսեցւոց, զիմաստուն մոգս առաքեաց ի
քարոզուլ. զի դիտուն էին նոքա, և վարժք ի
քննուլս ժամանակաց գալստեան մեսիային. ուս-
տի և չէր հարկ զաքանչելիս ցուցանել առ նոսա.
մանաւանդ թէ և ոչ խոկ հարկ եր քարոզիչս առա-
քել։ Նոյց որովհետև թմրեալ էին նոքա ի տգի-
տուե, հայրն երկնաւոր կամեցուլ ցուցանել նոցա՝
թէ ինքն զնոսոտումն իւր կատարեալ է՝ առաքե-
լով զորդի իւր յաշ, աղդ արար նոցա ի ձեռն
իմաստուն մոգուց՝ դիտելով միանգամայն և զթըմ-
րուբն անմտուե նոց զարթուցանել ի ձեռն հեթա-
նոսաց։ Ա՛ա զի՝ որովհետև հեթանոսք հանդերձել
էին ժառանգել զնոսոտումն զոյն՝ հայրն երկնա-
ւոր զնա առաքեաց ի սկզբան անդ՝ քարոզել նոց
զեկեալ հասեալ խոստումն այլ։ Եւ արդ զինչ
քարոզեն նա. *ուր է ասեն որ ծնաւ արքայն

,, Հրեից, զի տեսաք զաստղն նր յարևելս. և եկաք
,, երկիրպագանել նմա: Որպէս սպայծառ և յայտնի խօսին՝ ոչ սպայծառ և յստակ տեսին զաստղն. այլ * զարմանք է՝ (ասէ Հուկնոն) զի պանդուխտ-
,, քըս այսորիկ զծնեալն քարոզէին և զտեղին ոչ
,, գիտէին: Բայց առաւել ևս զարմանալի ցուցաւ համարձակութիւնք. զի 'ի Թագաւորանիստ քաղաքի՝ ուր նստեալ կայր Հերովդէս Թագաւոր՝ սոքա աներկիւղ քարոզէին. և զոր քարոզէին՝ աներկբայ լինել ցուցանէին. զի թէ երկբայէին համարէին՝ ոչ ասէին՝ ուր է որ ծնաւ արքայն Հրէից. այլ թէ արդեօք ծնաւ: Այս զի՝ և քաղաքն ոչ խռովէր. զի 'ի մնոտի բանից, և 'ի սուտ քարոզութէ ոչ խռովի քաղաք հանդերձ թգաւ: Ածողզայն՝ զի որ թգրն էր անդ Հերովդէս՝ 'ի քարոզութէ նց այնչափ համոզեցաւ, մինչև պատկառել 'ի նցէ, և խաղաղութ արձակել զնս. ապա թէ ոչ՝ անարգանօք դարձուցանէր զնս իբրև զխաբեբայս և զխռովարարս: Այլ թէպէտ անխոհեմութի և յանդգնութի համարեալ լինի յանդիման Թագաւորի որ կենդանի է և Թագաւորէ, քարոզել 'ի ներկայութե նորա՝ թէ ծնեալ է նոր Թագաւոր այնր տրուե. զի սովին երևի քարոզել թէ ներկայ Թագաւորն չէ օրինաւոր Թագաւոր, սակայն մինչ մոգքն ճանաչէին՝ թէ ծնեալն այն է Թագաւոր երկնի և երկրի և Թագաւոր Թագաւորաց, արժան համարեցան յայտնի քարոզել զծնունդ նորա առաջի երկրաւոր Թագաւորի. նա զի՝ և մեծութի ջերմեռանդութե և սիրոյ նց զոր ունէին առ նորածին Թագաւորն՝ ոչ թողոյր զնս չքարոզել յայտնի և չվկայել համարձակ ըստ համարձակելոյն դաւթի՝ թէ * խօսէի զվկայութիւ

,, քո

,, քո առաջի Թագաւորաց, և ոչ ամաչէի ‖ . (սաղ. ճԺը. 46։) Այս ոմն ինքեանք Ճանաչէին և վառեալ էին ՚ի սէր նը , կարծէին՝ Թէ ամքն՝ որ էին յեզիբ՝ ոչ միայն Ճանաչէին՝ Թէ ո՞եր ծնաւ . այլև Թէ յամ սրտե սիրէին զնա , և փափաքէին երկիրպագանել նմա ։ Այս որովհետև այսպէս համարէին՝ ոչ ևս զանգիտէին համարձակապէս հարցանել. ո՞եր է արքայն հրէից որ ծնաւ . ո՞ւր ծնաւ , յորմէ տան, կամ յորմէ քաղաքի ։ Ճ շարժէը զմոգան հարցանել՝ ոչ զի ուսցին՝ որովհետև յայլ էին ուսեալ , այլ զի տեզուցն հասու լինին, նաև զի ուսուցեն զՀրէայս. վ՚ա զի՞նչ ծնաւ. և զի անդիտանային նոքա՝ ամ տայր զարթուցանել զնա ասելով. ո՞եր է արքայն՝ որ ծնաւ . ո՞չ աստղքէն ձեզ ծնաւ, ընդէր անփոյթ էք՝ և ոչ խնդրէք զնա ։ Ցեսեալ Թագաւորայ՝ Թէ ամենևին սաստուցեալ են սիրտք նը, և Թմրեալ խորհուրդք նոցին, և բնաւին անփոյթք և անտեղեակք, անարժան համարէցան զնա տեսանե այնր Թագաւորի նը. վ՚ոյ ոչ ասեն առ նոսա . եկայք երթիցուք երկիրպագցուք նմա , այլ ասեն . եկաք մեք երկիրպագանել նմ։ ոմն Թէ ասէին. մեք առ ձեզ եկաք, զի ձեզ ծնաւ. ոմն զի՛ ի միասին երկիրպագցուք նմ. բայց քեզի ձեզ չէ ինչ փոյթ վ՚ա արքային ձերոյ , մեք երկիրպագցուք նմ, մեք պաշտեսցուք զնա , մեր լիցի , և մեք նորա ։ Կարծեմ Թէ և նոքին իսկ հրէայք զարմանային ՚ի վե՛ր խրեանց՝ Թէ զիարդ անգէտ գտան այսմ. որովհետև այնչափ ինչ ուսեալ էին յայ վ՚ա գալստեան մեսիային . զարմանային և ՚ի վե՛ր հեթանոսաց՝ Թէ զիարդ միով աստեղբ իմացան և եկին տեսանել ։

Ըստ սոցին և բաղմագիտք՝ եԹէ յուլսացին և անս

հոգացին, թէեւ տեսցեն բզմ ինչ, եւ լուիցեն զպարմանալիս, ոչ դառնան. իսկ միամիտք եւ անգէտք միանգամ տեսեալ զլոյս շնորհացն այ՝ դառնան՝ եւ դտանեն զնա: Արդ. որովհետեւ հրեայք անփոյթք եղեն զքսէ, իսկ հեթանոսք 'ի ձեռն մոգուց խնդրեցին զնա, եւ քարոզ եղեն զնմանէ, վնկ եւ ած զխոստումն իւր դարձոյց առ հեթանոսս. կամ այսպ ասացից. յորժամ կամեցան հրէայք 'ի բաց ընկենուլ զխոստումն այ, նաեւ զխոստացեալն զքս, հեթանոսք յափշտակեցին զայն. յորս առաջին դտան երեքին այսոքիկ թգրք. * սոքին
,, են առաջինքն 'ի հեթանոսաց (ասէ ռուբերտոս
,, աբբայ) որք 'ի քս հաւատացին ||: Ի սոսա հայելով իշխեմ ասել. ամօթ երեսաց մերոց. զի հեթանոս թագաւորք թողեալ զպաշտօն կռոց յարեւելից դան, հաւատան, եւ քարոզեն մեզ՝ դտանել եւ պաշտել զճշմարիտն ած. իսկ մեք ոչ միայն չթողումք զկռապաշտութի մեր, զի զպաշտօն ածտից, այլ չար վարուք մերովք քարոզեմք հեթանոսաց պաշտել զկուռս իւրեանց. * բայց ասեմ
,, ձեզ ասէ քս (մատ. ը. 11.) զի բզմք յարեւելից
,, եւ յարեւմտից եկեսցեն եւ բազմեսցին ը աբրա-
,, համու եւ ը սահակայ եւ ը յակոբու յարքայուե
,, երկնից: Իսկ որդիքն արքայուե ելցեն 'ի խա-
,, ւարն արտաքին ||:

Է. Ի քարոզել մոգուց յայտնապէս՝ թէ ծնեալ է արքայն հրէից, եւ թէ ծնեալն այն ած է, որում եկեալ են երկիրպագանել, լուեալ զայս հերովդի եւ այլոց՝ վրդովեցան. ը որում ասէ աւետարանիչն.
* իբրեւ լուաւ արքայ հերովդէս՝ խռովեցաւ եւ
,, ամ երղմ ը նմա ||: Հերովդէս խռովի. զի ինքն հաճակեալ էր զանձնէ իւրմէ՝ թէ իցէ մեսիայ. եւ

'ի

'ի սոյն կարծիս մոլորեցուցեալ էր զբ̄մս, որք և
հաւատալովն նմա՝ հերովկիանոսք անուանեցին. վ̄ոյ
և 'ի լսելն 'ի մոգուց՝ թէ ծնեալ է արքայն
հրէից, և ծնունդ նր̄ վկայեալ եւ է յերկնից՝ դի-
տաց հաւատեաւ՝ թէ եկեալ է մեսիայն. սմին
իրի շփոթեցաւ յոյժ. մանաւանդ զի մեծ խոյտա-
ռակումն կայր առաջի վ̄ո յայտնելոյ խարեբա-
յութե իւրոյ: Խռովի՝ և ա̄մ եղի̄ է̄ նմա, ո̄ր իշ-
խանք և ծերք, դպիրք և քահանայք եղիբի. զի ո̄ք
որոյհետև ընկղմեալ էին 'ի մոլութիս և 'ի փափկու-
թիս և յախտս ագահութե, համարելով, թէ մե-
սիայն 'ի գալ իւրում մարմնաւորապէս թագա-
ւորելոց է, և ը̄մ պատերազմունս յարուցանելոց,
և զոյլեայլ փոփոխութիս մուծանելոց, յորմէ ան-
հանգիստ լինելոց էին, յայսմանէ կարի իմն շփո-
թեցան, մինչև ոչ կամիլ իսկ՝ թէ գայցէ յայն-
ժամ մեսիայն. վ̄ոյ և խռովեցան. և յաւետարա-
նութէ մոգուցն ոչինչ շահեցան: Սա այսմ և
ը̄մ կան, որք յորժամ լսեն զքարոզութի ինչ խռո-
վին, երբեմն 'ի բարին և երբեմն 'ի չարն. իբարին
խռովին՝ յորժամ բարւոյն ժամանել ցանկան. բայց
կապեալ գոլով 'ի շղթայս մոլութեց՝ ոչինչ շահին: Իսկ
'ի չարն խռովին՝ յորժամ է̄ բանս քարոզչին ոչ
հաճելով դժուարին, եզժգմին եւ՝ թէ ը̄է̄ր
այդ̄ խօսի կի̄ր յանդիմանէ. վ̄ոյ և ոչինչ օգտին:
Այլ մեք հայեսցուք այժմ 'ի զարմանալի հաւատ
այնոցիկ թ̄է̄րայ. արդարև զարմանալեաց իրք.
զի ո̄ք յայսչափ խռովութե միջի անխռով մնացին.
հերովդէս կատաղի. իշխանք բարկանան. փարի-
սեցիք շփոթին. քահանայք դժուարին. զինուորք
հերովդի ծաղր առնեն. ժողովուրդք պժգան և
արհամարհեն. և բովանդակ քաղաքն յայլ իմն
կեր-

կերպարան փոխի. իսկ Թագաւորքս այսոքիկ ուրա-
խութ̄ և համարձակութ̄ քարոզեն և որոնեն. զի
զոր խնդրէին՝ ճանաչէին. մ̃տ զի ը̃ տեսլոյ նշ̃ին
օգոստինոսի * ոչ երբեք այնքան ջերմեռանդութ̄
„ խնդրէին զայն, և ոչ այնքան յօժարակամ բա-
„ րեպաշտութ̄ ցանկային այնմ՝ եթէ ոչ ճանա-
„ չէին զնա‖: Նա զի առաջի աչաց ունելով զնոյն՝
ոչինչ երկնչէին յայնքան խռովութենէ. զի ո̃պ ասէ
ոսկեբերան * հայելով 'ի Թագաւորն բացակայ՝
ոչ երկնչէին 'ի Թագաւորէն՝ որ էր ներկայ‖. և
ը̃ գրելոյ դարձեալ նորին յովհաննու ոսկեբերա-
նի. յօժար էին մեռանիլ ևս մ̃տ ն̃ր զոր դեռ ոչ
էին տեսեալ: Իսկ խռովեալն Հերովդէս առաւել
ևս շփոթեալ, և 'ի զայրոյթ սրտին չհանդուր-
ժեալ՝ ժողովէ առ ինքն՝ ոչ զխաղաղիչս, այլ զը-
յուզիչս խռովութենց, և զլցեալսն խռովութ̄՝ զմե-
ծամեծս հրէից. ը̃ որում ասէ աւետարանիչն. * և
„ ժողովեալ զամ̃ զքահանայապետս և զդպիրս ժողո-
„ վրդեան՝ հարցանէր 'ի նց̃է՝ թէ ուր ծնանի-
„ ցի քս̃ն. և նոքա ասեն ցնա 'ի Բեթղեհեմ Հրէ-
„ աստանի. զի այսպէս գրեալ է 'ի ձեռն մարգա-
„ րէին (միքիայ. Ե. 2.) և դու Բեթղեհեմ եր-
„ կիր յուդայ. ոչինչ կրսեր ես յիշխանս յուդայ.
„ 'ի քէն ելցէ ինձ իշխան, որ հովուեսցէ զժղ̃ովրդ
„ իմ զիս̃լ‖. (մատ. Բ. 4.): Զայս բան մարգա-
րէին (միք. Ե. 2.) նաև այլուր յիշեցին հրէայքն
ո̃պ ասի. (յոհ. Է. 42.) * ոչ գիրք ասեն եթէ
„ 'ի զաւակէ դաւթի, և 'ի Բեթղեհեմ դեղջէ,
„ ուր դաւիթն է՝ գալոց է քս̃ն‖: Իբրև լուաւ
Հերովդէս զայսպիսի բանս՝ խորհեցաւ գնալ՝ի Բեթ-
ղեհեմ առ 'ի գաղտ սպանանել զմանուկն. բայց
ք̃զ ոչ գիտէր թէ յորում տան, և ո՛վ որդի է՝ հնա-

րէ-

րեցաւ առաքել նախ զմոգսն. զի 'ի մոգուց անտի տեղեկացեալ ինքն ևս երթիցէ անդր՝ երկրպա֊գութե՛ աղագաւ, և անդէն սպանցէ զնա. ուստի ասէ աւետարանիչն. *յայնժամ հերովդէս գաղտ
„ կոչեաց զմոգսն և ստուգեաց 'ի նոցանէ զժամն աս֊
„ տեղն երևելոյ. և արձակեաց զնս 'ի բեթղեհէմ
„ ասէ. գնացէք ստուգեցէք վ՟ մանկանն. և յորժամ
„ գտանիցէք, ազդ արասջիք ինձ զի և ես եկեալ եր֊
„ կրպագից նմ ||: (մատ. բ. 7 8.) Յիմարեցաւ աստ հերովդէս, զի ինքն կի՟հաւատաց՝ թէ ծնեալն իցէ թագաւոր հրէից քս՟ մեսիայ, և կամ ոչ. եթէ ոչ հաւատաց, զի՞ զարհուրեր 'ի նմանէ. կարէր և 'ի ձեռն միոյ ուրուք 'ի ծառայից իւրոց բառնալ զկեանս նր՟. իսկ եթէ հաւատայր, հարկ էր նմա հաւատալ ևս, թէ որ թագաւոր ծնաւ՝ կարէ պահել զինքն 'ի հնարից նորա, սակայն ախտ իւր կուրացուցեալ էր զնա, և ոչ կարէր զուղիղն խորհիլ. և 'ի նոյն ախտ կապեալ գոլով արձակեաց յիւրմէ զմոգսն, և վարանէր 'ի սրտի յանբերելի տագնապ: Արդ տեսցուք այժմ՝ թէ զիա՞րդ գը֊տին մոգքն զքս և զինչ մատուցին նմա:

ՀԱՏՈՒԱԾ ԵՐԿԱՐՈՐՊ։

Ասէ ցնոսա Հոգին Սուրբ. Սահմանեցէք ինձ զՊաւղոս եւ զԲառնաբաս
ի գործն՝ յորում կոչեցի զնոսա, եւ պահեցէք նոցա ։

Ապա երբեմն Թագաւորք իբրեւ արձակեցան ի Հերուսղէմ գնալ՝ ի բեթղեհէմ՝ եկեալ բաստ դուռն քաղաքին՝ անկան ի տարակոյս. խորհէին ի միտս իւրեանց՝ Թէ գնիցեմ այս, զի յեղեմ եղեալքն առաւել պարտական էին գտեալ գծնունդ մեսիային՝ քան գայնոսիկ՝ որք էին արտաքոյ եղեմ. և զի նք ոչ գիտէին՝ եւս իսկ գիտել կամէին, ո՞ այլոք յօտա րաց կամ՝ ի բեթղեհեմացւոց ցուցանելոց էր նց գծնեալն կամ զտունն յորում ծնաւ. զի գուցէ յայնմ առուր քանզի էին ծնեալք անդ, և ո՞ կարէր որոշել՝ ի նցէ զմեսիան ։ Այարէին առնուլ զոք յեղեմացւոց՝ առաջնորդ լինել ինքեանց՝ գնՀԹ մինչև՝ ի բեթղեհեմ, զի զա ռաջին առաջնորդ իւրեանց եւս յայ զաստղն՝ կորու սեալ էին. բայց քանզի ոչ գտին յեղեմ զբարեյօժար ոք, նա զի և ոչ՝ ի մարդ ոք յուսայեալ էին, այլ յայն ևԹ՝ որ կոչեր զնա, ի նոյն եղեն ապաստան ի գտանել զնա ։ Եւ ահա անդէն տեսին զցանկալին իւրեանց զաստղն զայն, որ արձակէր զՀառա գայթ իւր՝ ի կողմն բեթղեհեմի՝ գնծուԹեամբ մեծ Հրաւիրեր զնա գալ անդր, բարբառելով առ նա իբ րև լեզու. զի տրտմեալ և տարակուսեալ եք. աւասիկ Հասի. եկայք ընդ իս ժամանել առ անձկալին ձեր ։ Իբրև տեսին Թագքն զաստղն՝ խնդացին յոյժ յոյ ժամուխ մեծ. զի տարակոյս նց բարձաւ, և տրտ

մու-

մուտ նոցին փարատեցաւ. և այնուհետև յապա-
հովս եղեն՝ թէ ստուգիւ գտանելոց են զնա՝ որոյ
վն եկեալ են. մանաւանդզի տեսին զմասնաւոր նա-
խախնամութի և զայցելութի ո̄յ 'ի վ̄ր իւրեանց՝ պար-
գևելով նո̄ց վերստին զառաջնորդութի աստեղն ։
Ո̄յ ուրախութ̄ սրտի սկսան գնալ զհետ առաջնոր-
դութե աստեղն մինչև 'ի բեթղեհեմ. և տեսին զի
աստղն եկաց մնաց անշարժ 'ի վ̄ր այրի միոյ ոչ յոյժ
'ի բարձունս, այլ իջանելով 'ի խոնարհ. որպ̄ ասէ
շնորհալին ('ի մեկն. մատ.) ապա թէ ոչ՝ զիարդ
կարէր յայնք̄ բարձրութե անտի երևեցուցանել
զայրն փոքրիկ ։ 'Ի տեսանել նո̄ց զայս՝ ծանեան թէ
այն է տեղին՝ յորում ծնեալ է ակնկալուն իւր-
եանց։ Պատրաստեցին ապա զընծայսն, և յորդա-
նօք մտեալ ի ներքս՝ տեսին զնորածին արքայն 'ի գիրկս
կուսին. զի ասէ աւետարանիչն. * և իբրև մտին 'ի
,, տունն՝ տեսին զմանուկն հնդ̄րձ մարեմաւ մարբն
իւրով. ուր է թէ մանուկն ոչ էր 'ի գիրկս կուսին, ոչ
ասէր, * հնդ̄րձ մարեմաւ. այլ՝ առ առաւելն, զմա-
նուկն և զմայր նո̄ր ։ Անկեան ապա յո̄ջ, և երկիր-
պագին նմ ։ Ոչ տարակուսին՝ թէ արդեօք սա՞ իցէ
արքայն նորածին. նշան ինչ ոչ տեսին, և աներկ-
բայ հաւատացին՝ թէ նա իցէ թգ̄ր թգ̄րց, և ած
ճշմարիտ. վ̄յ և իբրև ո̄յ երկիրպագին նմ ։ Ո ար-
մանայ աստանօր ոսկեբերան. * միթէ տեսի՞ն ասէ
,, զապարանս մարմարոնեայ փայլեալ. միթէ տեսի՞ն
,, զմայրն թագուհի պսակեալ կամ յոսկեհուռն մահճի
,, ընկողմանեալ. այլ զինչ, զկոյս աղքատ, զմանուկ
,, մերկ, զիջևան մթին և անարգ, առաւել անաս-
,, նոց ք̄ մարդկան յանկաւոր. բայց այսու ամենայնիւ
ոչ երկբայեն, և ոչ խորհին, մի՞ արդեօք չիցէ սա
զոր խնդրեմք. մի՞ արդեօք պատրեալ գտաք. մի՞ ար-

դեօք

դեօք յայլում տան լիցի նա : Այսպիսի ինչ ոչ խոր-
հին. այլ ճշմարիտ Աստուած ճանաչելով զնա, Աստուծոյին
երկրպագութիւն ՚ի գետին խոնարհել երկրպագա-
նելին նմ. զոր եթէ Աստուած ոչ ճանաչէին՝ այսպիսի յար-
գութիւն ոչ երկրպագանելին նորածին մանկան միում:
Դշխոյն հարաւոյ՝ այն է տիկինն սաբայ՝ եկեալ
յԵրուսաղէմ և տեսեալ զսողոմոնն նստեալ յաթոռ բարձ-
րութեան՝ զարմացաւ, և զարհուրեցաւ, և զընծայս
մատոյց նմ. (Գ. Թագ. Ժ. 3.) զի ետես զնա ՚ի գե-
րագոյն փառս թագաւորութեան, և գիտէր եւս զլինել նորա
թագաւորին : Իսկ սոքա յաղքատութեան գտին զՏէրն փա-
ռաց ՚ի գիրկս աղքատ մօր. և զորինչ միանգամ տե-
սին անդ՝ ցոյցք աղքատութենէին և նուաստութեան, և ոչ
իմիք նշան մեծութեան կամ թագաւորութեան, և սակայն իբր Աստուծոյ
հաւատային. և որ հիանալին է առաւ Ոսկեբերան.
(Մատ. Բ.) *մարդ տեսանէին և Աստուած երկրպագանէին||.
Նա զի այնպիսի ճանաչելով զնա՝ եկին առ նա : Ոչ
հայեցան ՚ի նշանսն աղքատութեան, և ՚ի կերպարանս
մարդկութեան, զոր աչօք տեսանէին, այլ ՚ի նշանսն
Աստուածութեան՝ զորս մտօք ըմբռնէին : Դշխոյն հարա-
ւոյ առաւ օգոստինոս՝ եկն ՚ի լսել միայն զիմաստու-
թիւնն սողոմոնի, և ոչ թէ յերկրպագանել նմ.
զի գիտէր զնա՝ թէ մարդ է. իսկ սոքա գիտելով
թէ Աստուած է, եկին՝ ոչ թէ լսել զիմաստութիւնն, այլ
երկրպագանել նմ, զոր ծանեան լինել իմաստութիւն
անսահման. այս * ծանեան զոր գտին, և գտին զոր
,, ծանեան. և զոր Աստուած ծանեան իբրև զԱստուած գտին. և
,, զոր իբրև զԱստուած գտին՝ իբրև Աստուծոյ երկրպագեին||: Աս-
տանօր արժան է մեզ հայիլ ՚ի մեզ, և քննել եւս, թէ որ-
դեօք և հաւատք մեր հեռիցի հաւատոյ մոգուց. որով
յարգութեամբ մատեան նոքա առ Քրիստոս ՚ի խանձարուրսն
անդ, և որով յարգութեամբ մատչիմք մեք առ Քրիստոս ՚ի
խան-

խանձարուրս խորհրդոյ հաղորդութե։ յիրաւի կա-
միմք գտանել զնա և երկիւղածանել նմա, բայց
կարծեմ թէ ոչ ունի այսոքիկ Թղթքն, այլ ունի զհե-
ղինակս. զորմէ ասէ ոսկեբերան * երկիւղածանել
„ խոստանայր, և զսուր իւր արել փուլթայր. և զբա-
„ րուն սրտի իւրոյ գունով խառնարհուե պատրոնա-
„ կեր ... նման են սմին ասէ՝ որք անարժանութ
„ մերձին առ խորհուրդն հաղորդուե ։ Այլ մեք
տեսցուք այժմ թէ այսոքիկ Թուգասորք զինչ մա-
տուցին քեզ։

Է. Սոկրատ՝ ի եր յարևելեայս՝ ի հին ժամանակս՝ (նաև այժմ իսկ՝ ի քէզմ տեղիս.) զի առանց ընծայի ոչ լինէր մտանել առջև Թղթի. ուստի և յակոբ նահապետ յառաքելն զորդիս իւր առ իշխանն եգիպտոսի՝ (յո առ յովսէփ որդի իւր, որում անդիտանայր) ասաց ցնա. (Ծնն. խբ. 11.) * առէք՝ ի պատուական պտղոց երկրիս ... և տարայք առն, նե։ Նոյնպես ասէ՛ զի Թղթին պարթևաց, * ոչ „ ոք կարէր ողջունել զԹագաւորս պարթևաց առանց ընծայի ։ Ո՞յս նաև ՚ի հրամայեաց առնել վա՛ր իւր. (Ելից. ին. 15.) * մի երևեսցիս առաջի իմ „ դատարկաձեռն ։ Այսպա և այսոքիկ Թղթքն՝ ի կա-
միընյանդիման լինել Թղթին Թղթոյ, և երկիւղածա-
նել նմա՝ ընծայիւք եկին առնա, և յերկիւղա-
ծանելն անդ՝ մատուցին նմ զայնս իւրաքանչիւր ըստ
իւրում պատշաճի. այ զայնպիսի ընծայս՝ զորպիսիս
քեզրեր երկիր իւրեանց. ոմն զոսկի. ոմն զկնդրուկ
աղնիւ. և ոմն զմուռս պատուական. այլ ոմանք
առեն՝ Թէ երեքին յերեցունց էս մատուցին. զի ոչ
եԹէ իւրաքանչիւր միոյն ոսկի, և միոյն կնդրուկ,
և միոյն զմուռս ընծայեցին այլ յերիցն էս. քայց
զմին առաւել։

Ու զի ծանիցուք թէ այսորիկ ընծայք ոչ էին նը-
ուաղ կամ անարգ՝ այլ առատ և ազնիւ յոյժ , ա-
ւետարանիչն գանձս կոչէ զայնս՝ յաւելն. * և բացեալ
,, զգանձս իւրեանց մատուցին նմա պատարագս (այսինքն ընծայս)
,, ոսկի և կնդրուկ և զմուռս ||. զորմէ և դաւիթ մար-
գարէացեալ էր ('ի սաղ. հա. 9.) ասելով. * առաջի նո-
,, նախ հնդիկք անկցին, և թշնամիք նորա (հերով-
,, դիանոսք) զհող կերիցեն. թագաւորք թարսիսի և
,, կղզեաց պատարագս մատուսցեն նմա. թագաւորք արա-
,, բաց և սաբայ պատարագս բերցեն նմա ||: Արդ թէպէտ
ըստ պատշաճի երկրի իւրեանց մատուցին զընծայս ,
բայց ընծայքն եղեն ցուցակք բազում խորհրդոց. վասնզի
և շարական մեր կոչէ զսոսին * ընծայս խորհրդոց ||.
յաւելն. ('ի ծ. կան.) և * մոգքն աստեղք նշանաւ
,, եկին 'ի բեթղեհեմ. երկիրպագին նմա , և 'ի յա-
,, րին մատուցին զընծայս խորհրդոյ ||:

Առաջին խորհուրդն եղև այս. զի ոսկի մատու-
ցանելով՝ խոստովանէին զնա իմաստութիւն յաւի-
տենական. վասնզի ոսկին համեմատի իմաստութեան:
Կնդրուկ մատուցանելով՝ խոստովանէին զնա քա-
հանայապետ մատուցող և ընդունող արդեանց և
աղօթից. վասնզի կնդրուկն համեմատի մատուց-
մանց, այսինքն պատարագաց: Զմուռս մատուցանե-
լով՝ խոստովանէին զնա ազատիչ ազգի մարդկան
'ի դառնութենէ յաւիտենական տանջանաց դառնու-
թեամբ չարչարանաց իւրոց. զի զմուռսն համեմատի
դառնութեան և նեղութեան: Երկրորդ խորհուրդն այս
եղև , զի կնդրուկ մատուցանելով՝ խոստովանէին
զնա աստուած ճշմարիտ. վասնզի կնդրուկ և խունկ՝ այ
մատուցանի: Ոսկի մատուցանելով՝ դաւանէին
զնա թագաւոր. վասնզի թագաւորաց ընծայի ոսկի. նաև զի
յատկապէս տէր ոսկւոյ և հանգաց ոսկւոյ թա-

գաւառք են. ուստի և՝ ի վեր ասէ տալ Տէրն պատիւը կամ անուն Թագաւորի։ Որ մուտս մատուցանելոյ Հանապազին զնա մարդ ջարբարել և մեռանել. վ՚ր զի զմուտ պատուի մարմին մեռեալ մարդոյ։ Ասաի ասէ՝ ձեզ զևոնդ. * մատուցանեն ,, կնդրուկ ոմն՝ այ, և զմուռս ոմն մարդոյ, խառ ,, զասկի՝ ոմն Թագաւորի։ և Հուհնոն ասէ. * ոս ,, կին Թագաւորի. զմուռն մարդոյ. կնդրուկն ,, այ։ Սոյնպէս և օգոստինոս գրէ. * ասկի վճարի իբր ,, մեծի Թագաւորի. կնդրուկ մատուցանի իբր ,, այ. զմուռս ընծայի իբր մեռանողի վ՚ր վիրաւո ,, ձէ՝ ամին՝ որք մեռանելոց էին (զմահն յայտնե նական)։ Երանելի Թագաւորքս այսոքիկ՝ ի քա րոզէն Իւրեանց յԵՀՄ քաղաքի ասացին. * մեր է ,, որ ծնաւ աղքայն հրեից.պի... եկաք երկրպագա ,, նել նմի։ Ասելով՝ մեր է որ ծնաւ, խոստովա ,, նէին զնա մարդ. զի մարդոյ է ծննդիլ։ Ասե ,, լով աղքայն հրեից՝ ձանաչէին զնա Թագաւոր, զի աղքայն Թագաւոր լսի։ Ասելով եկաք երկիր պագանել նմա, դաւանէին զնա աստ. զի այ ըն ծայի ձշմարիտ երկրպագուն է։ Եւ ահա ղոր բա նիւք քարոզէին՝ զնոյն ընծայիւք Իւրեանց հաս տատէին։ Երդ խորհուրդն այս է՝ զի ըստ այլաբանական մեկնութեանն՝ երեքին ընծայքս այսո քիկ ցուցանէին զերկրակն ընծայմունս՝ որովք ըն ծայեաց քս զինքն Հօրն երկնաւորի՝ ի վեր խաչին. նախ՝ զի ոսկւով սիրոյ մատոյց զինքն պատարագ. երկրդ՝ զի իբրև կնդրուկ բուրվառաւ խաչին բու բեցաւ առաջի Հօր մինչև՝ ի սպառումն՝ այ մինչև՝ ի մահ. երրորդ՝ զի զմուռով չարչարանաց մատոյց զինքն ողջակէզ ընծայ։ Երդ խորհուրդն այս է՝ զի ըստ բարոյական մեկնութե՝ երանելի մոգքս

պայողքիկ ընծայելով զպայտոսիկ ընծայս՝ ուսուցին
մեզ՝ զի և մեք մատուցուք ա̃յ զընծայս համեմատս
սոցին՝ ըստ մերում կարի ։ Եթէ չունիմք ինչ մա-
տուցանել՝ բարի կամքն լնուցու զտեղի նորա .
ուսուի ասէ մեկնիչն . * չունիմք զոսկիս , չունիմք
,, կնդրուկ , չունիմք զմուռս . գոնէ զբարի կամս
,, մեր ընծայեսցուք նմա ‖ . զի ո̃չ ասէ մեծն գրի-
գոր . * առաջի աչացն ա̃յ չէ բնաւ դատարկա-
,, ձեռն յընծայից , եթէ տապանակ սրտին իցէ
,, լցեալ բարի կամօք ‖ : Բայց արդ ես ոչ խօսիմ
աստ զմարմնաւոր ընծայից , այլ զհոգևորացն՝
որք մեծ են առաջի ա̃յ , և հաճոյ նմա ։ Զունիս
զոսկի մատուցանել ա̃ն , ա՛ռ ՚ի նմանէ զնոյն՝ և
մատո՛ նմա . * ա՛ռ ասէ՝ գնեա՛ յինէն զոսկի փոր-
,, ձեալ ՚ի հրոյ , զի մեծասցիս ‖ . (յայտ. Գ. 18.)
կամի ասել . սիրեա՛ զիս ոսկւով ա̃ն մաքուր սիրով .
և զայդ սէրդ մատո՛ ինձ փոխանակ ոսկւոյ ։ Զու-
նիս կնդրուկ կամ խունկ , մատո՛ նմա զաղօթս
քո . ըստ որում և դաւիթ փոխանակ խնկոյ զայն
մատուցանէր ասելով . * ուղիղ եղիցին աղօթք իմ
որպէս խունկ առաջի քո տ̃ր ‖ . (սաղ. ՃԽ . 2 :)
բայց յայնժամ իբրև խունկ մատուցանես զաղօթսդ ,
յորժամ ոսկեղէն բուրվառաւ սիրոյ նուիրես . ըստ
որում ետես յոհաննէս ՚ի տեսլեան . (Է. 8.) զի
* քսանևչորս երիցունքն . . . ունէին . . . բուրվառ
,, ոսկի լի խնկով . որ է աղօթք սրբ̃ց ‖ : Զունիս
զմուռս , ՚ի ձեռին քո է մեռուցումն ախտիցդ . զայդ
մատո՛ նմ̃ . պատրաստեա՛ և զինեա՛ զքեզ զմռսով
ճնշման , ՚ի պատերազմ ընդդէմ ախտիցդ . ո̃չ ասի .
(՚ի Գ. մակ. Է. 1.) թէ զմռսով պատրաստէին ըզ-
փիղսն ՚ի պատերազմ . և յորժամ յաղթես ախ-
տիցդ , զյաղթութի̃ քո մատո՛ նմա ։ Ահա քեզ ու-

կի ,

կի, ահա կնդրուկ, ահա զմուռս . մատո՛ զայ-
սա փրկչին քում. կի՛մ լաւ ես ասացից՝ մատո՛ ըզ-
քեզ նմա ոսկւով սիրոյ, կնդրկաւ աղօթից,
և զմռսով մեռուցման վատթար յօժարութեց
բնութեդ ։ Ընդէ՞ր խորհուրդն է այս՝ զի ըստ յար-
մարական տեսութե մատուցուք նմա զերիս կարո-
ղութիս հոգւոյ մերոյ, զմիտս, զկամս, և ըզ-
յիշողութիս . փոխանակ ոսկւոյ զմիտս մեր, փո-
խանակ կնդրկի զկամս, և փոխանակ զմռսոյ ըզ-
յիշողութի մեր ։ Զի հոգին իբրև ոսկի 'ի միտս
պայծառանայ, և իբրև կնդրուկ կամօք բերի առ-
ած, և իբրև զմուռս դառնանայ ընդդէմ մեղաց՝
յիշելով զմեծամեծս նոյ ։ Մատուցուք դարձեալ
զոսկի ճշմարտասիրութե, զկնդրուկ ողորմութե, և
զմուռս պահոց։ Մատուցուք և ևս զոսկի բարի
խորհրդոց, կնդրուկ բարի բերանոյ (այս է ուղիղ
խօսից), զմուռս բարի գործոց ։ Եւ զի՞նչ մեծ է՝
եթէ զայս ոսկի մատուցուք քնի. ո՛չ ապաքէն զնմ
զոր ունիմք՝ 'ի նմանէ ունիմք, և նորա է ամ .
այլ ընէր իցէ մատուցանել զոսա հաճութե մե-
րում կամ մանաւանդ թելադրութե դիմաց, և
ոչ հաճութեն քնի ։

Թ . Երեքին թագաւորք ոչ հայեցան 'ի հաճոյս
իւրեանց՝ այլ 'ի հաճուի կամացն քնի . և զորս ու-
նէին մատուցին նմա . մատուցին և զաշխատասնա
ծանուցնս՝ զորս կրեցին վն նր . մատուցին և զան-
ձինս իւրեանց՝ հանդերձ գործովք։ Մատուցին և
և ընկալան, ետուն և առին . և որք ոչ երևեցան
դատարկաձեռն առաջի քնի, սոյնպէս և ոչ դա-
տարկաձեռն ելին յերեսաց նր . զի ոչ վայել էր
քնի ունայնս արձակել զնս։ Իսկ զինչ արդեօք այն
էր՝ զոր ընկալան . պատասխանէ Մխիթար ար-

բայհայլն ('ի մեկն. մատ. երես. 34.) * փոխանակ
,, աշխատանաց և նեղութեց և վաստակոց զորս 'ի
,, ճանապարհի կրեցին . . . ընկալան 'ի քէն զմխի-
,, թարութի սրտի, զլուսաւորութի մտաց, և զանէնչ
,, երկնային փառաց . իսկ վն ընծայիցն՝ զորս մա-
,, տուցին ՟ն իւրեանց՝ ծամիր զի փնկ ոսկւոյ՝ ընկա-
,, լան զաճումն իմաստութե և զեռլբոքումն սիրոյ որ
,, առ ՟ծ . փնկ կնդ րկին՝ զպարգևս աղօթից , և
,, փոխանակ զմռսոյ՝ զջան մաքուր և անապական
,, կենաց ||. Ոգիմբք լիացեալ և զարդարեալ այ-
սոցիկ թգոց սքանչելի եղեն 'ի մէջ հեթանոս
իշխանաց, որպէս երբեմն 'ի մէջ թգոցն հրէից
երեքին թագաւորք միայն, դաւիթ, եզեկիա, և
ոսիա. ՟ը որում ասէ սիրաք (խթ . 5 .) * բաց 'ի
,, դաւթայ, յեզեկեայ, և յոսիայ ամքին կատա-
,, րեցին զմեղս .

Երեք թագաւորքս այսոքիկ նմանեցան երից հա-
րիւրապետացն՝ որք գովին 'ի նոր կտակարանս .
որոց առաջինն պատմի . (մատ. ՟ը. 6.) որ վառեցաւ
'ի սէրն քի , և ճանաչելով զնա ՟տր՝ ասաց առ նա
խոնարհութ՟բ . * ՟տր չեմ բաւական՝ եթէ ՟ընդ յար-
կաւ իմով մտցես ||. և սմա համեմատի նա, որ մա-
տոյց քի զոսկի՝ ցուցակ սիրոյ և ՟ածածանօթութե.
և ընկալաւ վն հեթանոսաց զերշխուն Երկրորդ
հարիւրապետն պատմի 'ի գործս առաքելոց . (ժ. 1.)
որոյ աղօթք լսելի եղեն առաջի ՟այ, և ընկալաւ ըզ-
հաւատս . և այսմ համեմատի նա՝ որ մատոյց քի
զկնդրուկ ցուցակ աղօթից, և ընկալաւ վն հե-
թանոսաց զհաւատս . Երրորդ հարիւրապետն պատ-
մի . (մատ. իէ . 54 .) որ 'ի ժամանակի խաչելութե՝
տեսեալ զմեռանիլն քի, վկայեաց՝ թէ իցէ որդի
՟այ . և սմա նմանի նա՝ որ մատոյց զմուռս՝ ցուցակ

մե-

մեռեալ է. որով հնարաւոր եղեւ նմա առնել զամենայն քան, և եղեն վկայք ճշմարիտ նորա։ Այլ նմանեցան և երից զօրավարացն դաւթի՝ որք վտանգաւ կենաց իւրեանց՝ անցեալ ընդ մէջ թշնամեացն դաւթի՝ և մտեալ ի բեթղեհէմ, հանին ջուր ի ջրհորոյն բեթղեհէմի, և բերին առ դաւիթ. (ա. մնաց. ժա. 15։) Այնպէս և երեքին թագաւորքս այսքիկ վտանգաւ կենաց իւրեանց Հանապարհորդեալ և անցեալ ի մէջ թշնամեացն քոնի՝ որք էին յերէմ, մոնի՝ ի բեթղեհէմ՝ և հանին ջուր ի ջրհորոյն բեթղեհէմի. այլ թէ առին զջուր ուրախանէ և մխիթարէ և լուսաւորէ ի ջրհորոյ խորին խորհրդոյն այ. մանաւանդ թէ ի նմին իսկ այ՝ անմիջապէս ընդունելով ի ձեռանէ նորա զառաքութիւն օրհնէ հոգևորական բարեաց. կամ ըստ եսայեայ ասացից. (ժբ. 3.) առին զջուր ուրախանէ յաղբիւրացն փրկչի։

Ժ. Աստանօր արժան է խորհիլ՝ թէ ի տեսանել մադուց զյն և զմայր նր, և ի հաւատալ նմ զնա աճ ձշմարիտ, զինչ հատարումն առին զնր կուսէն. ձպղի պատկառանօք հայելին առ նա. և որով երանուէք երանէին զնա. և զինչ արդեօք խօսէին ընդ նմա. զի ոչ կային անդ պատանձեալ, այլ զոր արժան տեսանէին՝ խօսէին, և բնչմ ինչ ևս ոտից էին տեղեակ՝ հարցանէին։ Ա. Հարկ և ծր կոյսն պատմէր նմ զեղանակ կուսական յղուէնն և ծնընդեան, թէ զիարդ աւետեօք հրեշտակի յղացաւ զնս ի նազարէթ, և զիարդ ի գնալ նր յայցելուի եղիսաբեթի՝ խաղաց յովհաննէս յարգանդի մօրն, և թէ վ՛ր ինչ պատճառի եղև նմա գալ ի բեթղեհէմ և անդ ծննդիլ զնս. յայտներ ևս՝ թէ զիարդ հովիւք ուսեալք ի հրեշտակէ՝ եկին յեր-

կըրպագուն յինէ. եցոյց և զայլ բզմ ինչ՝ որք պա-
տահեցան և գործեցան շուրջ զայսու խորհրդով.
զի արժան էր նմա զայս ամ յայտնի պատմել նմ,
վկայ ունելով անդէն զնքն յոլովս. զորմէ թէպէտ
ինչ ոչ գրեն աւետարանիչք վս լինելոյ անդ, բայց
հաւանական է՝ թէ նա ոչ մեկնէր անտի երկար
միջոցաւ, զի չէր վայելուչ աւանձին թողուլ զնա
նոյսն և զմանուկն. իսկ թէ կայր ս արդեօք անդ
և ոմանք յազգական կանանց՝ չէ յայտ։ Յետ
յետ վճարելոյ մոգուց զգործ պաշտաման իւր-
եանց, և յետ խօսելոյ Ը օրոյ կուսին, ես և յետ
օրհնելոյ 'ի քնէ՝ հրաժարեալ մարմնով և ոչ հոգ-
ւով՝ ելին անտի գնալ յերկիր իւրեանց։ Նա սա-
կայն յեղանելն անդ խորհէին թէ՝ արդեօք արժան
իցէ ինքեանց դառնալ առ Հերովդէս, և ի խոր-
դրոյ նը ծանուցանել նմա՝ թէ նորածին մեսիայն
յայս ինչ տան է, ևն։ Յայսմ տարակուսի գիտե-
ցին առ ած աղօթիւք՝ զի ցուցցէ նց թէ զինչ ա-
րասցեն. և ած տեսլեամբ յայտնեաց նց չդառ-
նալ առ Հերովդէս. ի որում ասէ աւետարանիչն.
* և հրաման առեալ 'ի տեսլեան չդառնալ անդ-
,,րէն առ Հերովդէս՝ ընդ այլ ճանապարհ գնա-
,,ցին յն իւրեանց ։ Այսու գործով ուսու-
ցին մեզ ոք, թէ յետ որոյ գտանեմք զՔս, ոչ եւս
պարտիմք դառնալ յայնպիսի գործս՝ յորս ոչ
գտաք զՔս՝ այլ զթշնամիսն քնի՝ դ զմեղս և կամ
զառիթս մեղաց. և մի եւս գնալ ընդ այն ճանա-
պարհ՝ որ ածէ զմեզ անդր, այլ Ը այնպիսի ճա-
նապարհ՝ որ ածէ զմեզ 'ի հայրենիս մեր. յոր 'ի
ժամանելն ունիմք օրհնել 'ի քնէ, և օրհնել զնա
յաւիտեանս յաւիտենից։

ՃԱՌ ՈՒԹԵՐՈՐԴ·

'Ի տօնի քառասնօրեայ գալստեան տն 'ի տաճարն · այն է՝ տնըն առաջ:

Ցնծա և ուրախ լեր դուստր սիոնի, զի ահա ես եկից և բնակեցայց 'ի միջի քում: Զաքար. Բ. 10:

'Ի դառնալ որդւոյն իսլի 'ի գերութէ բաբելացւոց՝ որ երտարացւոյ դարձի որդւոց մարդկան 'ի գերութէ սատանայի՝ իբրև կանգնեցին զտաճարն՝ ամենայն ձայն բարձեալ ողբային՝ ոմանք 'ի խնդութէ, և ոմանք 'ի տխրութէ. զի որք չէին տեսեալ զառաջին տաճարն զշինեալն 'ի սողոմոնէ՝ ցնծային ընդ յօրինուած նորին, և 'ի խնդութէ լային. իսկ որք 'ի ծերոց տեսեալ էին զառաջին տաճարն՝ ընդ այն տխրէին, և 'ի տխրութէ լային. զի յոյժ անհամեմատ տեսանէին առաջնոյն. վն զի առաջինն փառաւոր էր յոյժ և ամ մասամբք կատարեալ: Զայս տեսեալ մարգարէիցն, անգեայ, զաքարիայ, և մաղաքեայ՝ որք էին յայնմ ժամանակի, բզմ բանս աւետեաց խօսէին առ ժողովուրդն 'ի քաջալերութի նց, ցուցեալ

Թէ

Թէ փառք այսր յետին տաճարի լինելոյ է յոյժ առաւել քան զառաջնոյն. վ՟զի ներքին և տեսական փառք առաջնոյն էր այն՝ զի անուն ա՟ծ էր 'ի վ՟ր ն՟ր, և տապանակն ա՟ծ 'ի նմա. իսկ փառք երկրորդին լինելոց էր այս, զի ոչ միայն անուն ա՟ծ և կամ տապանակ ա՟ծ, այլ նա ինքն ա՟ծ գալոց էր անդ։ Եւ այս էր անհամեմատ փառք գերագոյն

քան զառաջինն։

Սո՟յ մին 'ի նշ՟է աղաղակէր.* խնդա և ուրախ լեր
„ դուստր սիոնի. զի ահա ես եկից ('ի տաճար քո)
„ և բնակեցայց 'ի միջի քում‖. (զաքար. բ. 10։)
Եւ կրկին ևս գոչէր.* ուրախ լեր յոյժ դուստր սիո-
„ նի . . . ահա Թագաւոր քո գայ քեզ. ('ի տաճար
„ քո)‖ (զաքար. Թ. 9։) Եւ այլ ո՟մն յառաւելն
բերեւ ասէր.* յանկարծակի եկեսցէ 'ի տաճար իւր
„ տ՟ր . . . և հրեշտակն ուխտի (այն է ք՟ս) զոր դուք
„ կամիք, ահաւասիկ գայ ասէ տ՟ր ամենակալ‖.
(մաղաք. գ. 1։) Ընքեալ ապա անգեայ մարգարէի
զաւետաւորութիւն ն՟ց ասէ.* մեծ եղիցին փառք տանդ
„ այդորիկ վերջինն քան զառաջինն ասէ տ՟ր ամենա-
„ կալ. ('ի գալ ն՟ր այդր)‖. (անգ. բ. 10։)

Նա այսմ աւետեաց ն՟ց սպասէր ազգն տառապեալ, մանաւանդ թէ համօրէն ազգք մարդկան. և փափաքումն ն՟ց որ քան զոր զօրանայր. իսկ՞ թէ եկեսցէ, Երբ արդեօք և զիարդ եկեսցէ։ Յայսմ ակնկալութե և 'ի փափաքման ն՟ց իբրև լցաւ ժամանակ գալստեան ն՟ր՝ 'ի սմին աւուր, յորում կատարէ եկեղեցի զտօնն, ինքնին եկն 'ի տաճար իւր, ոչ ահաւորութբ և ոչ արքայական շքեղութբ, այլ խոնարհութբ և 'ի տղայական հասակի. 'ի ցուցանել՝ թէ անդէն ունի լրացուցանել զհասակ իւր, մինչև հանցէ 'ի լրումն զ՟մ օրէնս, և

փո-

փոխադրեսցէ զՆուռնիի տաճարին ի նորոգութիւն
փառաց։ Այս ոճն ըստ ասելոյ հնաշնորհն վարդա-
պետացն, և միւսերևելի ոճնիւ, զոր ընկալաւ եկե-
ղեցի յառաքելական աւանդութենէ. որով յիշատա-
կութիւն գտանի ի դիւրս հորց սկսեալ ի չըմ-
գարու։ Ոճի Տն ընդ առաջ. կամ ըստ յունաց՝
խոնարհ ընդ առաջք. ի յիշատակ այնր գործո-
ղութե, որով սիմէոն ծերունին և աննա մարգարէ
խոնարհութիւն ընդ առաջ եղին քրիստոսի, ն
ի տաճարն։ Ոճ այս ոճն արևելեան եկեղեցիք՝ որ-
պէս և մեդիօլանցիք յարևմուտս կարգեն ընդ
ոճոս քոյ, անուանելով զայն քառասնօրեայ
ընծայութիւն քոյ ի տաճարն։ Ոճ հռովմէական
եկեղեցին թուէ զայն ընդ ոճոսխմբութիւնս ըստ
ծածանին, կոչելով զնոյն՝ ոճն մատրոնէ սըբ կուսին։
Նա կատարէ զհանդիսութիւնն ի 2 փետրվարի. յետ
քառասուն աւուրց ծննդեանն քոյ։ Արտիս յիշէ
բենեդիկտոս. ժէ. (ի Ճառս ոճոյ ըստ կուսին. դէ
քէ։) ի ոճոսախմբութե այսր աւուր լինին Ճրագա-
վառութիւն և թափոր յաւմեկեղեցիս քրիստոնէից.
ի խորհուրդ և ի նշանակ բանից սիմէոնի ծերուն-
ւոյն. որով դուշակեաց զփրկութիւն ամ ժողովր-
դեան, և զքոս ասացյ լինել* լոյս ի յայտնութիւն հեթա-
նոսաց։ Ոստոյ։ Ոստորութիւն հաւաքէ ի բանից ծերոյն կիւր-
ղի Հայրապետին երուսաղէմի, յասելն, (ի Ճառ.
ոճոն քէ առաջինն.) * զստերք երուսաղէմի՝ եկէք քէ
,, առաջ քոյ. խոնդամիտ լերկրութէ՝ Ճշմարիտ
,, լուսով վառեսցուք զլապտերս մեր . . . Ոողո-
,, վուրդք հեթանոսաց՝ ջահ ի ձեռին ընդ առաջ
,, եկցուք ի տաճարն . . . դուք՝ որք քոյ և ոչ ցան-
,, կացօղ և բարեկամքդ եք, եկայք ոչ որդիք լուսոյ
,, վառեալ մնամք զնոսա ընծայեսցուք քոյ . զի լոյս ի
յայտ-

„ յայտնուի հեթանոսաց ծագեաց աշխարհի ‖ ՚ի բանից սոսի, որպէս և այլ եբեց հարց, երևի՝ թէ այս Ջրադաւառութիւն է հնաւանդ սովորուի ինչ՝ խորհրդական իմն նմանութիւն յարմարեալ տօ նախմբուճ աւուրս։ Ասայց ըստ ասելոյ ոմանց, այս Ջրադաւառուին՝ որ կայր և ՚ի ծէսս տօնի նախնի հեթանոսաց՝ զոր առնէին յամենայն փետրվարի՝ ամպռուռալիալէ անուճանեալ, էր տօն մաքրութիւն քաղաքին. զոր ՚ի հարք յաւուրս քրիստոնէուճ փոխադրեցին ՚ի հանդէս եկեղեցական տօնի քա ռասնօրեայ գալստեանն քրի ՚ի տաճարն։

Ա՛յլ թէ ոմն եղև այս գալուստն, պատմէ զուկաս աւետչիչ այսպէս. յորժամ լցան ասէ քառասնօրեայ աւուրք ծննդեանն քրի՝ յորում պարտ էր մօր ծը նեցելոյն սրբիլ ըստ օրինացն մովսէսի՝ և նմին խակ ծնեցելոյն ընծայիլ ՚ի, ծնօղք նր առեալ տարան զնա յերկս՝ ՚ի տաճարն, յանդիման առնել տէն և սրբել զնա՝ և ընծայել զնա ՚ի. զի հրամայեալ էր ՚ի՛ն՝ թէ ՚ի ծնանիլ անդրանիկ արու զաւակի՝ ՚ի քառասներդ աւուր ծննդեան նր ընծայեսցի ՚ի, և ՚ի՛ն կոչեսցի, ՚ի՛ թէ ՚ի՛ն լինի. վասն զի ՚ի կո տորիլ անդրանկացն եգիպտացւոց՝ պահեաց ՚ի՛ զանդրանիկան իշրայելացւոց։ (Ա Եսո. ԺԳ. 6։ Ելից. ԺԳ. 2։ Թուոց. Ը. 16։) Յայսմ ընծայման պարտ էր մատուցանել զոյգս տատրակաց, կամ երկուս ձագս աղաւնեաց. (ղևտ. ԺԲ. 8.) ոմն թէ նոքօք կամելոյ ծնողացն գնել զորդին իւրեանց յ՚ի՛, և դարձուցանել զնո անդրէն ՚ի տուն։ Ա՛յլ ըստ խորհրդոյն զոյգք տատրակացն՝ ըստ ասելոյ ՚ի՛ն կիւրղի, (՚ի գիրս պարապմանց. գլ. իե.) յանդիման առնեն զ՚ի՛ն և զմարդկութիւն քրի։ * Յաւուցն „ երկուցնման եցուցանէ (՚ի՛ գիրն) զքո՝ ոչ ոմն եր „ կուց

„կուց գոլով որդւոց, այլ ոչ միոյ յերկուց՝ յածուէ
„ և ՚ի մարդկութենէ եկելոց ՚ի միութիւն ||. և ձագք ա-
ղաւնեացն ըստ ասելոյ մեկնչին՝ զմաքրութիւն մեր կու-
սին և զզգածուած ցաւոց սրտի նորա՝ զոր կրեաց
այսօր։ Իսկ պատճառ քառասնօրեայ ընծայելոյն,
այս էր նախ՝ զի հասարակօրէն ՚ի քառասուն ա-
ւուրս հոգեւորի արու մանուկ. (որպէս էգն ՚ի
Ձ. կամ ՚ի Հ. աւուրս)։ Երկրորդ՝ զի ՚ի քա-
ռասուն աւուրս համբերէր սրբել մօրն յաղտե-
ղութէ ծննդեանն. (ղեւտ. ժբ. 6. 7։) Աստի և ղուկաս
յայս սրբութիւն մօրն հայելով, ասէ զայն բան՝ թէ
* Եւ իբրև լցան աւուրք սրբութեան նորա ||. (ղուկ. բ.
22.) ուր դերանունս նց՝ դնի փոխանակ մարիամու,
ըստ որում յիգական սեռի դրի ՚ի յոյնն. և մ՚նկ լատինք
զայս տօն ոչ ասացաք կոչեն սրբութեան կամ մաքրու-
թեան մարիամու։ Իսկ քչի այս արարողութեան հայեր և
՚ի սբ լինել մանկանն՝ յաւելու աւետարանիչն և
զայն սրբութի ասելով. * Ամ արու՝ որ բանայ զար-
„ գանդ՝ սբ Տն կոչեսցի ||. (ղուկ. բ. 23։) Ի կա-
տարել ծնողացն յիհ զայս հանդէս, էր ՚ի քաղա-
քի անդ սիմէոն ծերունին, ում յայտնեալ էր
հոգին սբ՝ թէ ոչ մեռցի՝ մինչև տեսցէ զՔս. և
սա ՚ի նմին ժամու յազդեցուէ հոգւոյն սբյ, եկն
՚ի տաճարն տեսանել զցանկալին իւր. և առեալ
զնա ՚ի գիրկս գոհացաւ զԱյ, և բաւական համա-
րելով ինքեան զտեսութիւն զայն՝ խնդրեաց ՚ի նմանէ
արձակել ՚ի խաղաղութի ասելով. աւասիկ տեսի՝
զոր ցանկայի. զի՞ ևս պիտոյ է ինձ կեալ ՚ի վր
երկրի. արձակեա՛ զիս գնալ ՚ի տեղին խաղաղութե,
և անդ սպասել քեզ, զի եկեալ ածցես զիս ը քեզ
յերկինս հանդերձ Ամ սրբովք քովք։ Իսկ յաւել
ևս ասել. երանի հեթանոսաց՝ զի լոյս յայտնեցաւ
նց.

նց․ երանի և ժողովրդեան քում իլն, զի փառք
եղեր նց։ Նու 'ի զարմանալ ծնողացն յոր ը բանս սի-
մէոնի և ը բանս այլոյ՝ օրհնեաց զնս սիմէոն, և ասէ
ցմայր նր․ սա է նա՝ զոր ընդունելոց են հեթանոսք
և մերժելոց են հրէայք․ և 'ի մերժել նց զսա, * և ը
,, քո իսկ անձն անցցէ սուր ‖․ (ղուկ․ բ․ 35։)
Այս յետին բան սիմէոնի եղև արդարև ամենա-
սայր սուր 'ի սիրտ սբյ կուսին․ (զորմէ խօսե-
ցուք 'ի ը․ հատուած ճառիս։) Այլ թէ ո՛ էր սի-
մէոն ծերունին՝ և որպիսի օրհնութի նորա, տես
զորս ասացի 'ի մեկնութե բանից նորա՝ 'ի նուագա-
րանն օրհնութեց․ (օրհ․ ժա։) Գրէ աւետարանիչն
և զայս՝ թէ 'ի տաճարի անդ էր աննա մարգարէ
դուստր փանուելի յազգէ ասերայ․ որ յետ կա-
լոյ ը առն իւրոյ զամս եօթն՝ մնացեալ էր այրի,
և էր իբր ութսուն և չորից ամաց․ որ և միշտ կայր
'ի տաճարի․ և սա 'ի նմին ժամու տեսեալ զյս
և զմայր նր՝ գոհացաւ զածէ, և խօսեցաւ զնմանէ
առ այնոսիկ՝ որք փափաքէին՝ թէ երբ եկեսցէ
փրկիչն իլն։ Ի լինել այսր ամի՝ դարձան ծնողքն
յն 'ի գալիլեա 'ի քաղաք իւրեանց 'ի նազարեթ․
(ղուկ․ բ․ 36 = 40։) Այլ աստ գիտելի է՝ զի այս
օրէնք սրբութե ոչ պարտաւորէր՝ ոչ զոք կոյսն և
ոչ զյն․ նախ՝ զի այս օրէնք հայէր յանոքս, զի ոչ
ոք սրբի եթէ ոչ անոքն․ իսկ կոյսն մարիամ ամե-
նևին սբ էր, և հոգւով սբվ մաքրազարդեալ․
նոյնպէս և 'ի յն ոչ գոյր ինչ արատ, այլ ամենևին
սրբութի․ զի էր * նշոյլ մշտնջենաւոր լուսոյն ‖․ ը
պայծառութե հօրն։ * և հայելի անարատ այ
,, ազդեցութեն ‖․ ը անարատութե մարմնոյն։ * և
պատկեր առատութե նորա ‖․ ը ածութեն․ (իմաստ․
է․ 26։) Երկրորդ՝ զի օրէնքն սրբութե ենթադրէր
զա․

զառումն սերման. զի ասէ.* կին որ եթէ սերմն առ-
ցէ ‖. (զևտ. ԺԲ. 2 ։) Այլ և այս ենթադրեր ըզ-
խորտակումն կուսութե, զի ասէ.* որ քանայ զաղ-
,, գանդ ‖. (ելից. ԺԴ. 2 ։ Թուոց. Ը. 18 ։ զևտ.
ԺԲ. 6։) Այսպա այս օրինք ոչ պարտաւորեր զայն՝
որ չիցէ առեալ զսերմն, և մնայեալ իւր կոյս. և ոչ
և զայն՝ որ առանց սերման ծնեալ իցէ ի կուսէ.
ըստ որոյ այս օրինք՝ ազգ առնէր թէ ուրեմն որ ա-
ռանց սերման ծնանիցի և առանց բայման արգանդի,
ոչ պարտաւորի։ Այլ՝ զի այս օրինք ենթադրէ՝ թէ
այն մանուկ է սրբեալն՝ որ ի քառասներորդ աւուր
հոգևորեալ իցէ յարգանդի, որոյ վասն ի քառասն-
ներորդ աւուր մատուցանիւր ի տաճարն. իսկ արդ
քո ի նմին իսկ ի նախակին վայրկենին յղուէ նորոյ
հոգևորեալ եղև յարգանդի կուսին (տես ասացաք
ի ձառն. Ը. հատ. ա.) ապա չէր պարտական
պահել զայս օրինս։ Արդ՝ ոչ. եթէ ոք կոյս և
քո չէին պարտական ի պահպանուի այսր օրինաց,
ապա ընդէր կատարեցին։ Պէտ, թէ այդ մտածէ
ըստ պատշաճողուեն եթէ ի կոզմանէ ոք կուսին,
և եթէ ի կոզմանէ քոյ։ Ի կոզմանէ ոք կուսին
մտածեալ պատշաճ եղև նախ առ ի ազատ կա-
ցուցանել զինքն ի չարախօսուէ հրէից. զի որով
հետև գիտէին զծննանիլն նր զանդրանիկ որդի՝ և
ոչ գիտէին զկուսութե ծննանիլն, եթէ ոչ գնայր նա
ի տաճարն վասն սրբոյ ըստ օրինաց, դատափետէին
զնա, և բնաւ չարիս խօսէին զնմանէ. և ըստ այսմ
գոնէ առ արտաքս պարտաւորիւր։ Ա՛ռ այսմ քեզ
օրինակ զԼիսատուԹէնն քոյ. զի Թէպետ նա չէր
պարտական այնմ, բայց յանձն էառ առ ի զերծ
մնալոյ ի չարախօսուէ հրէից։ Պատշաճ էր երկ-
րորդ վասն խոնարհուե. զի որովհետև առ խոնարհու-

ԹԷ իւրոյ ընտրեցաւ լինել մայր ՝այ, արժան էր նմա հպատակել ղինքն այնպիսի օրինաց՝ որում էր պարտական, և այնու ցուցանել յանձն իւր զտիպ խոնարհուե. զի մի երևեսցի լինիլ տարացոյց հպարտուե։ Ի կողմանէ քո պատշաճ էգև նախ՝ զի ցուցցէ չհմարիտ լինել հին օրինաց՝ որ հրաժայեր զայս։ Երկրորդ՝ զի ցուցցէ զինքն պահօղ օրինադ. վ՚ս զի Թէպէտև իշխան օրինացն ազատ է՝ ի պահպանուԹէ, սակայն արժան է նմ ըստ օրինաց կեալ յօրինակ այնոցիկ՝ որք պարտաւորին պահել։ Այնպէս վարեցաւ ուրն մեր և յայլ խոտրական օրէնս։ Երրդ՝ զի կամաւ արկանելով զինքն ՚ի ներքոյ այսպիսի օրինաց՝ կամեցաւ ազատ կացուցանել զմեզ յայսպիսեաց ստոի։ Չրդ՝ ըստ ազաՀինացուցն. (մասն. գ. խնդ. լԷ. սլր. 3.) զի * արդարուն օրինացն յանդամն իւր Հոգևորսպ ՚ւլցցի ։ Հինգերորդ՝ զի լցցէ զբանս մարգարէիցն՝ որք գուշակեցին զայսմ դալստենե նր ըստ նախադրելոցդ։ Վեցերորդ՝ զի գալով ՚ի տաճարն ըստ օրինաց ՚ձգուե, սրբեսցէ զայն և ՚ի նորն փոխադրեցէ. և ըստ գոՀերլիկոսի զկորհուրդ ՚ձգուե օրինացն մեծացուցէ ՚ի նշանակել զՀոգևորականն։ Չօթներդ՝ զի ըստ օգոստինոսի ծաճկեսցէ զինքն ՚ի սմանէ՝ երևելով հաւասար այլոց տղայոց. ըստ որում և ոչ զկուստուք յղանալ նր իմացաւ սմանէ, և ոչ զկուստուք ծնանիլն, արդելեալ չայ. զի ԹէպՀ պետ կարէր նա յայտնի տեսանել զայս, բայց նահանջեալ միաց չաճային զօրուէ. ընդ որ և չէ մարեր յանձն իւր։ Ը՚րդ հայելով մեր ՚ի նախակարգեալ բանսդ և ՚ի խորհուրդ հանդիսի աստուրս՝ արժան էր մեզ խօսիլ աստ ՚ի վե՛ր քՀմտաե ՚ի

ելուէց ՚ձրյ կուսին. բայց պատշաճ ևս երևեցաւ

՚ի վ՟ր երկուց ևեթ խորհրդածել ՚ի ճառիս յերկուս հատուածս . մին՝ ՚ի վ՟ր մաքրութե և անմեղութե ն՟ր՝ զոր ունէր և զոր եցոյց յանձն իւր . և միւսն՝ ՚ի վ՟ր ցաւոց սրտի ն՟ր, զոր գուշակեաց նմ՟ սիմէոն ։

ՀԱՏՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ։

՚Ի վ՟ր մաքրութե և անմեղութե ս՟բյ կուսին։

ա. Մաքրութի և անմեղութի ասելով աստ՝ իմանամք զամենևին անարատն լինել յա՟մ մեղաց, և յա՟մ պակասութեց, և յա՟մ անկատարութեց հոգւոյ և մարմնոյ ։ Օ այսպիսի մաքրութի և անմեղութի դաւանիմք և խոստովանիմք ՚ի ս՟բ ածածինն. ը՟ որում դաւանի և ս՟բ եկեղեցի ը՟ ա՟մ տեղիս ։ Եւ այս ճշմարտութի համարի լինիլ առաքելական աւանդութի . քղի և յակոբ առաքեալ եղբայր տ՟ն ՚ի խորհրդատետրն իւր խոստովանի զնա * ամե-
,, նևին անարատ և յա՟մ անստգտանելի ‖ ։ Եւ թէպէտ այս խորհրդատետր անմիջա՟պ յիւրմէ ոչ գրեցաւ, բայց յաւանդութէ նորին գրեցին յետագայք ։ Այնպ՟ և ՚ի խորհրդատետրն եթէովպացւոց, որ համարեալ լինի եկեալ յառաքելոց՝ գրի վ՟ն ս՟բյ կուսին . * յա՟մ ս՟բ, յա՟մ անարատ ‖ ։ Ըստ սոյին խօսին և ս՟բ հարք առ հասարակ ՚ի ճառս իւրեանց . ը՟ որս և սոփրոնիոս եպիսկ, որ ընտրեալ եղև ՚ի վեցերորդ ը՟հանուր ժողովն, յասել ն՟ր ։ * Մարիամ ոչ միայն հաղորդ գտաւ ա՟ծայնոց,
,, այլև ազատ յա՟մ ախտից մարմնոյ և հոգւոյ մի-
,, անգամայն և մտաց . վ՟ն ս՟բ, և մաքուր, և անա-
,, րատ

,, բատ կոչի. որոյ ՚ի կուսական արենէ ածծ մար-
,, դապետ լիցի ։ Ակիպիանոս. (՚ի Հառն յաղ՚.
Ննն. քահ.) խոսելով ընդ կուսին, ասէ ։ * Ա.-
,, նօթին այն ընտրութիւնե բազում իրօք տարակայի
,, յայլոյ՝ որոյ հաղորդեալ է բնութիւն. ոչ
,, յանպատանք ինչ և ոչ օրինք մարմնոյ ՚ինամա, որպէս
,, յայլս. յորս զօրինս հոգւոյն հարստահարեաց
,, բնութիւն. և ոչինչ մարտ ղհանդիսատ հոգւոյ նէր
,, խռովեաց։ Իլարիոն խոսելոյաւ կոյսն ասէ. * ո՛
,, կոյս օրհնէ՛ ՚ի վեր ջ զամ կանայս. որ մաքրուի
,, յաղթես հրեշտակաց, և անմեղուի դերազան-
,, ցես քան զամ՚ոքս ։ Երոնիմոս. (՚ի ժող՚ գլ.
Ժ.) ասէ. * քան զամ սքս ազատ ՚ի մեղաց ծը-
,, նեալ, և այնչափ մաքրուն վիճակեալ, մինչև
,, արժանասցաւ լինիլ մայր ամ ։ Աւս (՚ի ա. գիրս)
ընդէմ պեղագեանց ասէ. * ամ սքք վայրապոյն են
,, քան զսրբուին մարիամու. զի սա միայն է, որոյ
,, պայծառ լոյսն ծածկէ զհրաշխալուխս այլոց ՚ոք
,, հանանց իւր զաստեղաց ։ Ա՛մբրոսիոս (գիրք
ք. յաղ. կուսին.) ասէ. * զինչ Հառապայթափայլ
,, ք զայն՝ զոր անստեղծ Հառապայթն ընտրեաց ։
Վարձեալ անդ զմաքրուն կուսին օրինակ տա-
լով այլոց, ասէ * այնպիսի էղև մարիամ, մինչ
,, զի միայն կեանք նէր խրատ լոյծ ամենն ։ Ծն-
,, ոդորետոս (գիրք. ք. երգոց երգոյն, ՚ի բանն՝ մի
է աղաւնի իմ,) ասէ. * այս մի միայն և ընտրել
,, և կատարեալ աղաւնիս է մարիամ. որ արդարև
,, մաքրուի դերազանցեաց քան զքերովբէս և քան
,, զսերովբէս ։
Ա՛բետաս (՚ի յոյժ. ժք.) կոչէ զնոք կոյսն. * մա-
,, քուր և յերկրայնոցս ազատ և մ՚ինեալ. որ թէ
,, պետև յերկրի մարմնով կենցաղէր, սակայն յեր-

„ կինս և նոցին իսկ հրեշտակաց հաւասարէր հոգ-
„ ւով ‖ ։ Կիւրղ. ('ի Ճառ. ծնն. կուսին.) կոչէ
„ զնա * ամենամաքուր գեղմն ընդունելի երկնա-
„ յին անձրևոյ, յորմէ զգեցաւ հովիւն հօտին ‖ ։
Անսելմոս ասէ. * վայել էր մօրն Այ այնպիսի մաք-
„ րութբ փայլիլ՝ քան զոր մեծագոյն ոչ մարթի է-
„ մանել արտաքոյ Այ ‖ ։ Եւ դարձեալ ասէ. * այն-
„ չափ եղև մաքրութին մարիամու, մինչև արժանա-
„ ցաւ զԹագաւորն հրեշտակաց տանել յորովայ-
„ նի. և այնքան մաքրութբ փայլեցաւ, որքան 'ի
„ վայր քան զԱծ ոչ կարէ ճանաչիլ ‖ ։ Զի թէ
չէր այսպէս՝ ոչ մարմնանայր 'ի նմ իմաստութին Այ. զի
եթէ * յանձն չարարուեստ ոչ մտանէ իմաստու-
„ թի (եղական) ‖. (իմաստ. ա. 4.) ապա և ոչ
յանձն արատաւորեալ մարմնանայ իմաստու-
թին անեղ ։ Եւ ո՛չ ասէ մեկնիչն. * եթէ մաք-
„ րութի Այ կուսին ոչ գերազանցէր քան զամմաք-
„ րութի համօրէն զի՝ ամենամաքուր էնն Ած ոչ առ-
„ նոյր մարմին 'ի նմանէ, և ոչ բնակէր 'ի նմ նո-
„ վին մարմնով զամիսս ինն ‖ ։ Եւ թէ հարկաւոր
եղև 'ի պատել զմեռեալ մարմինն քոի՝ մաքրութի
'ի կտաւն և 'ի գերեզմանն վն երից աւուրց, ապա
քանի՛ ևս հարկաւոր եղև մաքրութի մեծ յանձն
կոյն, որ ետ զայն մարմին կենդանի, և կրեաց
յինքեան զամիսս ինն ։ Բեռնարդոս. (Ճառ. դ.
յաղ. վերափ. կուսին.) ասէ. * ո՛ր մաքրութի հրեշ-
„ տակային կարէ համեմատիլ մաքրութե նորա՝ որ
„ արժանի եղև լինել սրբարան հոգւոյն Այ և
„ բնակարան որդւոյն Այ ‖ ։ Պետրոս դամիանեան
ասէ. * ո՛ սրբութի քան զամ՝ըս սրբագոյն, և հա-
„ մօրէն սրբութե ամենայնբ գանձ ‖ ։ Զվկայութիւն
Նարեկացւոյն տե՛ս 'ի գիրս նորա 'ի գով կուսին ։

ք. Եթէ ջնամ ոբս և ջնամ հրեշտակս ի մի հաւաքեալ հարցցուք զմաքրուհէ կուսին, ամքն աղաղակեն, մի միայն մաքուր, մի միայն անարատ։ Եւ ըստ հակառակն՝ եթէ ջնամ մարդիկ զանցեալսն և ըներկայս ի մի ժողովեալ հարցցուք՝ նոքեն արդեօք առանց մեղաց, ամքն միաբերան աղաղակեն. * եթէ ասիցեմք՝ թէ մեղս ինչ մեք ոչ ունիմք՝ զանձինս խաբեմք և ճշմարտուն ի մեզ ոչ գոյ ‖. (ա. յովհ. ա. 8.) միայն ոբ կոյսն կարէ ասել. ես միայն եմ որ ոչ ունիմ զմեղս։ Այր բանք լինին ի վէր մաքրուհէ՝ ի վեր առեալ լինին ոբ կոյսն նոքա պարագրիչ աւ մաքրուհեց, մինչ զի համաձակեալ լինի ասել ըստ լամիպսիոյ՝ թէ մաքրուհին ոչ հաճարի փաղանուն ըստ մաքրուհի կուսին և ըստ մաքրուհի այլոց արարածոց, այլ համեմատանուն. ուսուի և բառս նոտաբ կիմ անել՝ փաղանունաբար ոչ ստորոգի զնոյն կուսէն և զայլոց ոբց, այլ համեմատանունաբար. ոմն բառս օծեալ՝ զքոհ և զայլոց. և բառս աստուած՝ ըստ քո և ըստ առաքեալսն։ Եւ ըստ հակառակն՝ ըստ ասելոյ սրբոյն օգոստինոսի. (դիրք յաղ. քնուե և շնոր.) * երբ զոյզք լինին ‖ նոքա ի վէր մեղաց՝ ոչ փակի ի նմա մարիամ ‖. զոյն ասաց և ժողովին տրիտենդոյ. ի ցուցանել՝ թէ աստուածնեւին անըմունակ էր մեղաց՝ եւս և նեբելեաց, և ոչ և իցէ արատաւորութենէ և պակասութենէ։ Այսորոյ ասի՝ թէ մաքրուհի ոբց կուսին գերազանցեաց քան զանմաքրուհի մեղաց բոլոր աշխարհի. մինչ զի մաքրուհի նոր առաւել զօրեաց ձգել առ ինքն զաճ, քան զոր կարէր անմաքրուհի ձի հեռացուցանել յիւրմէ զաճ. և եւս մաքրուհի նոր առաւել զօրաւոր ի գտանել զաճ, քան անմաքրուհի մարդկան ի կորուսանել զաճ։ Այ կամիլ այ ջնջել զաճս՝ գրե-

թէ

Թէ՝ ի կրկնել զմաքրութիւն կուսին հանդէպ անմաքրութիւնէ ծի. և՝ ի ծանրանալ մաքրուհե կուսին նահանջեցաւ՝ ի ջնջելոյ ։

ջ. Ծանիր և՝ զի մաքրութիւն ոչ կուսին եղև կատարեալ, անընդհատ, և անեղծանելի։ Քաւսն նախ կատարել, զի երեքկին մաքուր էր. ծածկային, հրեշտակային, և մարդկային մաքրութիւնն ծածկային ունէր միանալով յաղթիւրն մաքրու է հոգւով և մարմնով։ Ծ. հրեշտակայինն ունէր կուսական սրբութիւն՝ հանդերձ այլոյք կատարելութիւք։ Քզմարդկայինն ունէր սկզբնական արդարութիւն՝ ոչ մարդն առաջին։ Քաւսն երկրորդ՝ անխառն. զի չունէր ինչ մանակցութիւն ոչ ի սկզբնական մեղացն՝ նախատապահեալ լինելոյ յորդւոյ. ոչ ի ներգործականէ՝ համահաւատատեալ գոլով՝ ի հօրէ. և ոչ ի կամ ի պակասաւորութեց կամ ի ներբեւեայ ինչ՝ ամբարիշտէ՝ ի հոգւոյն սրբոյ. և ինքն ամենևին * անխառն իբր զօդ, մաքուր ոսկի լոյս ‖. ոսկի ասէ նաբեկացին. (՝ի բանն. Ջ.) խոստովանելով՝ ինձ ի անաղտ մաքրութենն և զանբծութի՝ ի բարութե, յասելն առ նա. * ի անաղտ մաքրութեդ և անբիծ բաբի ‖։ Քև թէպէտ՝ ի հոգւածնելոցս էր և քաղաքեալ՝ ի տարերց, բայց ամենևին անմահն գտաւ մեղաց և ապականութենէ նոցին. վասն ասէ առ նա նոյն երանելին (՝ի գովեստն.) * ՝ի դրուէ խառնուած քաւից յեղանակեալ (լինելոյ) տարերց՝ անկցորդ մնացեր՝ ի մահէ (սկզբնական և ներգործական մեղաց և ապականութե) հոգեւոց ծնեալոցս հասարակաց. ոչ բերօղ ծանրութե բնակաց կիր համատեղծս կարեաց, այլ քրովբէօրէն հրաբերան բաղնոյ նշուլից ‖. * Թէ Թև պարզուցեալ՝ Թէ հիւ Թիւ բաղկացեալ ‖։ Քաւսն երրորդ՝

անընդհատ. զի մայրն էին յՔս, մայրն եկաց յՔսի, և մայրն եղ յՔսէ. ուստի 'ի վերանալն իւր յերկինս կարէր ասել զԻ յուդիթայ. * կեն-
,, դանի է տր, որ պահեաց զիս 'ի գնալս իմ աստի,
,, 'ի մնալս իմ անդ, և 'ի դառնալս իմ այսր ‖.
(յուդիթ. ժգ. 20.) և այս գնի զԻ այլում թարգմանութե։ Ասացի չՔդ՝ անեղծանելի. իբր զի անկարելի էր նմ մեղանչել՝ ոչ միայն մահացու մեղօք, որպիսի էին առաքելք, այլ և ոչ ներելեաւոք զԻ վերջադրելոյդ, որպիսի են երանելի հոգիք և հրեշտակք. զի որովհետև հարսն էր հոգւոյն սրբ, և դուստր հօրն երկնաւորի, և մայր որդւոյն միածնի, եթէ լինէր նմ մեղանչել, լինէր արատաւոր հարսն հոգւոյն սրբ, ստգտանելի դուստր հօրն երկնաւորի, և մեղաւոր մայր որդւոյն այ։ Անսխալելի է սբ եկեղեցի. ընդէր, վն զի է հարսն Քսի. զԻ որում գրէ առաքեալն. (բ. կոր. ժա. 2։ եփես. Ե. 23 = 32.) ապա ևս առաւել անսխալելի էր սբ կոյսն, զի միշտ էր հարսն հոգւոյն սբյ, միշտ էր հարսն հօրն երկնաւորի, միշտ էր հարսն որդւոյն այ. Եւ և միշտ էր դուստր հօրն երկնաւորի, և միշտ մայր որդւոյն այ։ Եւ արդարև եթէ սբ կոյսն կարէր մեղանչել՝ չլինէր յատուկ դուստր այ, այլ հասարակական, ոպ այլ կանայք և օրիորդք։
* Վաթսուն են թագուհիք և ութսուն հարճք. և
,, օրիորդք որոց ոչ գոյ թիւ. մի է աղաւնի իմ, կա-
,, տարեալ իմ. մի է մօր իւրոյ ‖. (երգ. Զ. 7։)
Գրի յերկրորդ գիրս թագաւորաց. (ժը. 18.) թէ աբիսողոմ չունէր որդի. որոյ վն ասէ կանգնեաց զարձան։ Իսկ 'ի գլ. ժդ. 25. ասի՝ թէ եղեն նմ երեք ուստերք և դուստր մի թամար։ Եւ ընդէր արդեօք ասի այս. վն զի աբիսողոմ դեղեցիկ էր

եր և անարատ 'ի մարմնի . իսկ նոքա չէին այս-
պիսի . ուստի Թէպէտ և ըստ բնական գոլոյ էին
որդիք նր , բայց ըստ անարատ գոլոյ ոչ աստացան
որդիքն նր : Ըստ այսմ եթէ և սր կոյսն կարէր ա-
րատաւորել մեղօք՝ ոչ ասիւր զաւակ կմ դուստր
Հօրն երկնաւորի : Այլ կոյսն ընտրեցաւ լինել մայր
Այ , առ 'ի բառնալ զմեղս , և առ 'ի հաշտեցու-
ցանել ընդ մեզ զԱծ . առ 'ի նորոգել զանմեղութիւն
ադամայ , և առ 'ի բառնալ զդուռն դրախտին ,
եւն . և զիա՞րդ կարելի լինէր նմ մեղանչել. զի մեղքն
եղծումն է այսր ամի :

Դ. Այս անմեղութի և մաքրութի որդ կուսին կարէ
ցուցանել ըստ ժը նմանութեց եւս . մի՝ զի է երկինք
վեհագոյն . և ըստ դամասկացւոյ". * երկինք հոգևորեալ‖.
որդ ոչ կարէ մերձենալ յերկինս ոչ արատ և ոչ
մեղք : Երկրորդ՝ զի է երկիր որդ, առ որ չէ հնար
մատչիլ աղտեղութե . որպս ասացաւ առ մովսէս. (Ե-
լից. Գ. 3.) հան զկօշիկս քո , զի երկիրդ յորում
դու կաս՝ սր է , ոչ կարէ կօշիկ արատոյ մերձե-
նալ 'ի դա : Երրորդ՝ զի է դրախտ երկնային՝ բայց
դրախտ փակեալ . ըստ այնմ (երգ. Դ. 12.) * պար-
,, տէզ փակեալ քոյր իմ հարսն ‖ : Յերկրաւոր
դրախտն եմուտ օձն և մեղք . զի չէր փակեալ ,
այլ բաց . իսկ որդ կոյսն ամենևին փակ . ըստ որոյ
նաև դուռն փակեալ կոչէ զնա եզեկիել . (խդ.
2:) Չորրորդ՝ զի է աթոռ Այ՝ եւս և խորան կմ վրան
նր հարեւ յարևու , (սաղ. ժը. 5.) որում անհնար
է աղտեղել մեղօք . ապա թէ ոչ՝ լինէր և աթոռ
սատնյի, և խորան նորին : Հինգերորդ՝ զի է սեղան
Այն՝ յոր չէր արժան գործի ձեռին մերձենալ ըստ
է մեղք, այլ բոլորովին որդ լինել : Վեցանն՝ զոր
կանգնեաց եղիա՝ բոլոր կիզաւ երկնային հրով ,

պէս մի լինի և սեղան կոտոյ. (գ. Թագ. ԺԸ. 38.) սոյնպէս և ըստ կոյսն հրով հոգւոյն բոլոր վառեցաւ, և ոչ կարէր լինիլ նաև սեղան սմին։ Ա՛ե ցերորդ՝ զի և բոց իմանալի, յոր ոչ կարէ մերձենալ Թլթեհան մեղաց. և ի՛թէ իշխեսցէ մերձենալ՝ վանի և այրի։ Հ՛օթներորդ՝ զի և տապանակ կտակի, որ արարեալ էր յանփուտ փայտից. որոյ ծառն ունի սպիտակ փուշս. որով նշանակի թէ ըստ կոյսն անփտելի էր՝ ի մեղաց. և փուշ այլ ոչ գոյր՝ ի նմ բայց եթէ փուշ սպիտակ, այր փուշ ցաւոց և ցաւակցութե. իսկ յայլս փուշ յանցանաց խոցոտիչ հոգւոյ։ Ը՛այս տապանակ օծաւ ոսկւով ըստ ներքոյ և արտաքոյ, ի ցուցանել զհամայն սրբբուսի ըստ երկս կուսին. (ելից. ի՛ե. 11.) ըստ որոյ օրինակի և ի սրբութիւնն ըստ՝ որ էր՝ ի տաճարին, այր՝ ի բովանդակութե ՅԵսու։ Ա՛ներորդ՝ զի և արեգակն. զորոյ զշառաւիղն այր զմաքրութիւն ոչ ջուր լուծանէ և ոչ հուր այրէ. ոչ օդ ապականէ, և ոչ աղտեղութի քեւկանէ. և ինքն միայ միշտ անշաղախ. ըստ այնմ (նարեկ. Ձ.) * անշաղախ ըստ նմանութե պատ՝ ,, կերի արուսեկին բարձրութե ||. այր անշաղախ նմանարևու՝ որ է՝ ի բարձունս։ Ի՛ններորդ՝ զի և ժամացոյց արևու՝ որոյ իւրաքանչիւր ժամք են տուընջեան. անուճաւոր ժամացոյցք ունին և ժամս գիշերոյ. ոչ է՝ ըստ կոյսն այսպիսի, այմ ժամք նորա լոյս են՝ անմահն ժամուց գիշերոյ մեղաց, կամ պակասուեց։ Ը՛ններորդ՝ զի և առանձին իմն կղզի արեգական. զորմէ գրե պղինիոս՝ թէ ոչ կարէ կեալ անդ անբան կենդանի, զի՝ ի կոխելն մեռանի. ըստ սմին ոչ կարէր կեալ՝ ի սէ կոյսն անբան կենդանի, այր յանցանք ինչ. որով և նմանեցաւ սինայ լերին, յոր ոչ կարէր գազան մերձենալ.

ասա

ասէ թէ ոչ՝ քարկոծ լինելը։ Վասն ձեալ ըէ հաշ
կառակն որովհետև մարդիկ նմանեցան անաս-
նոց անբանից՝ ի կոխել իւրեանց յերկիրը մեռա-
նելին և մեռանին. միայն թէ կոյսն կոխեաց և
մնաց կենդանի. դի ոչ իւիք նմանեցաւ նոքա՝ ի պա-
հասաւորութեան։ Ա՛ետասաներորդ՝ դի և աշտա-
րակ լերանանոյ բարձրացեալ՝ ի վէր լերանց. վի-
քանան՝ պայծառութիւն Յարդմանի, որով նշանակի
թէ թէ կոյսն պայծառութիւն անմեղութեան բարձրա-
ցեալ և իբրև զաշտարակ անմերձենալի՝ ի մեղաց
դեր՝ ի վերոյ քան զամ լերինս. այ քան զամ
հրեշտակս։ Ա՛յս աշտարակ վանից և եղև ամ
մեղաց առանց դինուց. յորոյ օրինակ՝ դաւիթ ոչ
կարօտեալով դինուց՝ քարամբ միայն սպան զգո-
ղիաթ. որով ցուցաւ թէ թէ կոյսն և ոչ՝ ի նախա-
հայր իւր կարօտացաւ դինուց՝ ի սպանանել ըզ-
մեղս. դինն նոքա էր վէմն Քենդանի՝ որ հատաւ՝ ի
նմանէ առանց ձեռին։ Ա՛րկոտասաներորդ՝ դի և հը-
բաշալի իմն մատնիս. որ յամի և միշտ՝ ի յղուէ իւր-
մէ միոնչ ցվախձան անշարժ հայեցաւ յանշարժ
բեւեռն յայծ * Ո՞այս մի ինչ ստոյգ գիտեմք (ա
,, սէ՝ ոբն օգոստինոս) , դի բովանդակ կեանք և
,, գործք մարիամու միշտ առ յայծ էին ։ և ինքն
ոչ երբեք իւիք յանցանօք խոտորեցաւ՝ ի հայելոյ
առ նա։

Ե. Ա՛յլ արդ՝ ոմն՝ ի զուր և ցուցանել զսպիտա-
կաւխայլուն ձեան՝ դի գոյուն նոր՝ ի սպիտակուէ և,
սոյնպէս՝ ի զուր և ինձ աշխատիլ՝ ի ցուցանել զան-
մեղուն և զանարատուն սքեմ կուսին՝ որ օրինակի
՝ի ձիւն։ Այս իսկ ոմն ձիւնն ոչ կարօտի սպի-
տականալոյ, սոյնպէս և սքեմ կոյսն ոչ կարօտեր ա-
պաշխարելոյ՝ ի վէր իւիք մեղաց և անկատարուեց։

ուստի և ոչ կատարեցաւ 'ի նմա խորհուրդն ապաշխարութեան: Գուցէ յայս հայելով քս ոչ յանձնեաց զնա սբյն պետրոսի, այլ սբյն յովհաննու. զի պետրոս էր պատկեր ապաշխարութեան, ևս և 'ի ձեռս նր տուեալ փականք արձակման. իսկ յովհաննէս էր տիպ շնորհաց և տիպար սիրոյ. որով ցուցանի՝ թէ ոչ կարէր լինել 'ի սբ կոյսն և ոչ բոպէ մի ժամու ապաշխարութեան. Կամ այսպէս ասացից՝ ապաշխարութիւն և ոչ առ կէտ մի կալաւ զնա առ իւր, այլ միայն շնորհքն: Սբ կոյսն ոչ միայն չկարէր մեղանչել, այլ և ոչ իսկ հաճէր գիտել զմեղս, և ոչ իսկ կամէր լսել զանուն նր. յայս իսկ հրեշտակն 'ի խօսիլն առ սուրբ կոյսն 'ի վերայ խորհրդոյ փրկութեան մարդկան 'ի մեղաց՝ ոչ իշխեաց յիշել զանուն մեղաց, այլ ասաց. * Ծնցիս որդի, և կոչեսցես զանուն նր յս‖. (ղուկ. ա. 11:) Իսկ 'ի խօսիլն առ սբն յովսէփ՝ յաւել ասել. * զի նա փրկեսցէ զժողովուրդ իւր 'ի մեղաց իւրեանց‖. (մատ. ա. 21:) Ու ընդէ՞ր է այս. վս զի սբ կոյսն ոչ կամէր գիտել՝ թէ զինչ իցէ մեղքն. և եթէ գիտէր ևս՝ ոչ կամէր թէ յիշատակեսցի անուն նր առաջի իւր. որովհետև և ոչ իսկ ստուէր նր նշմարիւր 'ի նմ: 'Ի վերջոյ ասեմ՝ կարծելն իսկ զսբյ կուսէն՝ թէ կարէր մեղանչել, է յանցանք ծանր՝ արժանի ծանր պատուհասի: Ողայ քահանայ պատուհասեցաւ 'ի ձգել զձեռն իւր 'ի տապանակն. իսկ թէ ընդէր պատուհասեցաւ՝ բզմ են պատճառք. բայց յաւելու ասել սբ գրիգոր պապն, թէ վս զի յանդգնեցաւ կարծել՝ թէ տապանակն կարաց կործանիլ. որոյ վասն կարկառեաց 'ի նա զձեռն իւր՝ զի մի անկցի. * մեռցի՛ ողայ՝ զի երկբայեցաւ թէ սբ կոյսն

,, կա-

,, կարաց մեղանչել ։ Ասացեալ՝ թէ սքեան յովհաննու
և երկբայեցաւ վկուսէն. ոչ է այդպէս. այլ
թէ ղիմարդ, լուր յովհաննու ասէ բերանէն որ
(՚ի մատ.) ասէ. * Յովհէփ առաւել հաւատաց
,, ողջախոհութէ կուսին՝ քան այսուցելոյ որովայ-
,, նին. առաւել ընտրհին ՚ք բնութէ. յղուն էառես,
,, բայց ոչ հաւատաց ընտի լինել. կարելի հաւա-
,, տայր՝ թէ կին ոք առանց առն յղասցի, քան թէ
,, մարիամ կարացեալ եցէ մեղանչել ։ Արդ ցու-
ցանէ թէ միոք սքեան յովհէփայ ոչ էր յերկբայուէ,
այլ ՚ի զարմացմանն. և այս այնչափ, մինչև յերկիւղ
և ըմբռնել նմ. ուստի ոչ ասաց նմ հրեշտակն,
մի երկբայիր՝ կամ մի կասկածիր, այլ թէ մի երկն-
չիր. և իմացոյց զկրօն և ստեղծուածն թէ կամիս ի մա-
նալ՝ թէ զիարդ եցէ լեալ այն՝ ծանիր, զի ՚ի հոգ-
ւոյն սքեայ է ։

ՀՈՒՄԱՐԵՑԱՒ ԱՅՍՕՐ

՚ի վէր գառոյ սքէ աճապանին ըստ յայտնելոյ նմա
՚ի սմէոնէ ։

Ձ Ումարեցաւ այսօր՚ի սկիզբ ձեր կուսին քո-
վանդակուն ցաւոց՝ զորս կրեաց նա՚ի կե-
նըս իւր. զի յասել առ նա սիմէոնի, * և ՚ը քո հոգ
,, անձն անցցէ սուր ։ յայս բան անցեալքն նո-
րոգեցան, և ապագայքն ներկայացան. համարձա-
կիմ ևս ասել՝թէ աղդումուն ցաւոց այսր աւուր առա-
ւել ղիմարդ՝ ըստ որում այսու բանիւ այն
աՀ ցաւք միահաղոյն տպաւորեցան՚ի հոգի նը՝ ոչ
ՀՀ ը կրեցոյն ներդործուէք, այլ ը ըմբռնեցոյն ։ Օ՚ի

որ ծանրութիւն մեծ ազգաւորին պնդակին եդեալ ի վէր տափարակ գետնոյ՝ գոմարն և բովանդակին ի մի կէտ տոյնել ծանրութեան ցաւոյ՝ զորս կրեաց և զորս կրէ լոյծ որ կոյսն, յերեսաւ ի կէտ սրտի հուսկին այնու քանիւ զոր յիշեաց սիմէոն՝ թէ * և ըզքո իսկ անձն ,, անցցէ սուր։ Զորդ սուր ցաւոյ՝ եօթնապատիկ խոցեաց զսիրտ հուսկին, ըստ որոյ եօթն թուին ցաւք նէ։ Զաջինն եղև ի թլփատուենն յոմն՝ ի տեսա նել անպ ոբոյ հուսկին զհեղանիլ արեան որդւոյ իւրոյ. որովհետև հաւատեաւ պիտեր՝ թէ հուսաածին մարմին նորա ոչ էր իբրև զայլոց, այլ փա փուկ յոյժ, և դիւրազգած. և որչափ յայտնի ըմբռներ զայս յորդին իւր, այնչափ ցաւս կրեր յինքեան։ Եւ ոչ զի առաւել յայտնի ցուցցի մեծու թիւն այսր ցաւոյ նէ, չէ ինչ տարադէպ քննել ասա թէ ուրեք պաշտօնեայ թլփատուենէն յոմն. յաւետ տարանի ինչ ոչ լիչի. և ասկայն ի պատմել զուկասաւ զթլփատուէ յովհաննու և յոմն՝ տեսս զնայրդ խօսի. ի խօսելն զթլփատուենէն յովհաննու՝ ասէ. * և եղև յաւուրն ութերորդի՝ եկին թլփատել զմա ,, նուկն, և կոչէին զնա յանուն հօր իւրոյ զաքա ,, րիա։ (ղուկ. ա. 59։) իսկ ի պատմել զթլփատուէն յոմն՝ ասէ. * և իբրև լցան աւուրք ութ ,, թլփատել զնա. և կոչեցաւ անուն նորա յս։ (ղուկ. բ. 21։) Այր ոմն և տեսանես՝ ոչ դնէ զուկաս պաշտօնեայ թլփատուէ, և ոչ զբառդ եկին՝ ոմն դնէ ի թլփատուենէն յովհաննու։ Յայս հայելով մարթ է ասել թէ այսմ պաշտօնեայ լեալ իցէ նա ինքն որ կոյսն, որով և զարիւն իւր՝ զոր եւս յոմն՝ եհեղ վա սիրոյ մերոյ։ Յայս կարծիս են որք հերոնիմոս. (դիրք յաղ. Ձմ. Թլփատ".) և որք բեռնարդոս. և քիմք ի քարոզեալ։ Եւ այս չէ ինչ ընդեմ, զի նաև սե

վո-

ինորոյ կին մովսէսի եղև պաշտօնեայ Թլփատուե
որդւոյ իւրոյ։ (ելից. գ. 25։) Եւ Թէպէտ՝ ի գիր
գանձուց դնի լինիլ զաքարիա հայր յովհաննու,
բայց ջունի տեղի. ապա Թէ ոչ՝ իւիք նշանակեր ա
ւետարանին։ Թէ արդարև այս ստոյգ էին՝ առա
ւել ևս սաստկանայր ցաւ սրտի՝ որ կուսին. ըստ որ
հիացեալ աւետրանչին՝ արդ ելաւ յիշեցուցանել երա
ժիշտ հզօր յերկրէ իւրում յորժամ հասանէ յայնպիսի
նշան բարձր՝ յոր չժամանէ հազագ իւր՝ ի կախ
Թողու ղձայնն, երգեցոյ մեայն զսկիզբն և զվերջ
ջըն, Թողեալ զմէջն. սոյնպէս և աւետարանիչն յա
ւանդել անդ զխորհուրդ ԹլփատուԹենն յոմէ՝ երբ
գեաց զսկիզբն ասելով.* և երբև լցան աւուրք ու Թ.
և յորժամ եհաս ի մէջն ուր պարտ էր ասել՝ եկին
պաշտօնեայքն, տեսեալ Թէ մարիամ է այն՝ ոչ ա
սաց՝ Թէ նա եղև պաշտօնեայն, կամ Թէ էառ
զսուրն և եհեղ զարիւնն նոր ի՛ը. այլ զայս բարձր
ձայն՝ երգեցայ անորոշակի ասելով.* Թլփատեցիցնա։
և վերջացոյց յասելն.* և կոչեցաւ անուն նոր յո ։
Այլ աստ գիտելի է՝ զի բնիկք զանց արարեալ զայսու
ցաւալի՛ոյ կուսին՝ ի տեղի առաջնոյն ցաւոց դասեն
զվիրաւորել սրտի նոր ի՛ բանիցն սիմէոնի. բայց ոմն
ասացաք, այն էր յայտարարուԹիւն ամ ցաւոց նորա,
իսկ այս կիրք մանաւանդ ցաւոց։
Է. Երկիր ցաւ՛ալի կուսին եղև՝ ի փախուցանելն զոր
դի իւր յեգիպտոս՝ ի սպառնալեաց հերովդէի՝ ի կամիլ
նոր սպանանել զյ՛ս. ոչ զի կասկածեր՛ալ կոյն Թէ հե
րովդէս կարէ ըմբռնել և սպանանել զնա, այլ զի
տառապեր ըստ հալածիլ որդւոյ իւրոյ և ըստ վտանգա
ւորիլ նոր. ևս և ըստ հեղուման արեան անմեղ ման
կանց՝ որ լինելոց էր ի պատճառս նոր։ Երկիր ցաւ
ալի կուսին եղև՝ ի կորուսանելն զորդի իւր յերկո

տա

տասան ամաց հասակին։ Այլ թէ քանի՛ մեծ եղև այս ցաւ նը, միայն զորով մարդ կարէ իմանալ փոքր մի. որոյ ոմանք՝ ի կորուսանել զորդիս իւրեանց՝ լինայրեցան, ոմանք հիւանդացան, ոմանք կաթուածոյ հանդիպեցան, և ոմանք մեռան։ Օ տաստկութի՛ այսր ցաւոյ յայտ արար՝ երբ կոյսն յոյն համառօտ բան՝ զոր ասաց զորդի իւր։ * որդեակ զինչ գործ գործե՞ ,, ծեր դու ըստ մեզ. ահաւասիկ հայր քո և ես տա՛ ,, ռապեաք, և խնդրեաք զքե՛զ։ (ղուկ. Ը. 48։) Այս մայրագոլով դանդատ ցուցանէր՝ թէ մեծ էր ցաւ նը. ապա թէ ոչ՝ ոչ լինքեան, այլ որդւոյն յոխեփայ պարտ էր ասել զայս. բայց առաւելուն ցաւոյն պատառեաց զսիրտ նը, և զեղաւ արտաքս։ Որդի ցաւ՝ որ յոսկին եղև՝ ի հրաժարիլ քո՛ ի նմէ. զի՝ ի մերձենալ չարչարանացն յայտնեաց նա մը իւրում զորս կրելոց էր. և ետ նմ՛ողջոյն հրաժարական. ահա գնամ մայր իմ, գնամ՝ ի տանջիլ, և՝ ի չարչարիլ, և՝ ի վէր խաչին մեռանիլ. և զայս զիմ մարմին՝ զոր՝ ի քէն առի՝ ի ձեռս դահճաց մատնել. այլ զոր ունին նք առնել իս՝ դու ևս տեսցես աչօք քո։ Օ՛ինչ արդեօք զգաց սուրբ կոյսն՝ ի լսել իւր զայսպիսի բանս. որպիսի կսկիծ ցաւոց յաւիշտակեաց զսիրտ նը, զորքան արտասուս հեղին ամենօրհնեալ աչք նը, մանաւանդ՝ ի մեռնել նը յիւրմէ. (երգ. ա՛. 6. 7։ և Ե. 46։) Զինչ՞ ևը դաւ սրտի նը եղև՝ ի տեսանել զորդի իւր ածիլ՝ ի մահ խաչի. զի որովհետև փողով և բազմութ զինուորաց և դահճաց տանէին զնա, ի հեծելոյ կուսին և՝ ի վարանիլ նը՝ մի արդեօք որդի իւր իցէ՝ եհաս առ նա յովհաննէս աւետարանիչ. (ոմն ասեն քէնկ.) և զեկոյց նմ՛ թէ ահա տանին զորդի քո զիմն իմ՝ ի մահ խաչի. յարեաւ ջք կոյսն վազվազ

զա-

ղակին, և առէը ըէ իւր զմօրիամ կղէօվսլայ և զմա-
րիամ մադդաղէնացի դնաց ըէ առաջ նը . և տե-
սեալ զնա՝ զի քարձեալ էր ինքնին զխաչափայտն՝
փշեայ պսակ՝ ի գլուխ և ինքն յարեան թաթաւ-
էը, թաթաւեցաւ սիրտ իւր յարիւն ցաւոց սաս-
տիկ յոյժ . * այս էցէ արդեօք իմ միածին որդի
,, ասէլով. այս էցէ ածն իմ՝ զոր ես ծնայ կուսու-
,, թէ. այս էցէ թագն փառաց՝ զոր հրեշտակք քա-
,, րեբանեն յերկինս ‖ : Յայսպիսի խորհրդս վա-
րակէը, յափշտակեցաւ՝ ի ցաւոց . և նովին ցաւով
սկսաւ երթալ զկնի որդւոյն իւրոյ՝ մատուցանել
զնա հրով սիրոյ աղջակէզ, ոյզ աբրահամ զիսա-
հակ : Այլեւ հարցաներ ցնա քո , ասա հուր սիրոյ
և ահա սուր ցաւոյ՝ ո՞ւր է աղջակէզ մայր իմ,
այնպէս նի՛ ոբ կոյսն . ածէ տեսցէ իւր աղջակէզ
ոչրդեակ . իբր լսէ ասել . ես եմ աղջակէզ, և այն-
պիսի աղջակէզ , զոր ածէ միայն տեսանէ , զի նա
միայն իմանայ զցաւս իմ, և ոչ այլ ոք ի յարա-
րածոց :

Ը.Ա եցէր զցաւոյն կուսին եղև՝ ի խաչելութե որդւոյ
նը, յորժամ ետես՝ թէ զիարդ անողորմ մերկացու-
ցանէին զնա , և զազանաբար հրամայէին նի՛ տա-
րածել զինքն՝ ի վր խաչափայտին : Ասէր զձայն
գործեաց և բևեռացն՝ զոր շառաչմամբ թօթափէ-
ին . լսէր և զձայն կռանոց , որով բևեռէին զձեռս
և զոտս անմեղ գառնին իւրոյ . լսէր և զձայն գահ-
ձոց՝ ի բարձրացուցանել նշ զխաչն առ՝ի կանգնել
և զետեղել զայն :

Հայէր այնուհետև յարիւնն՝ որք հեղանէին՝ ի
վիրացն և՝ ի գլխոյն փշով պսակեցելոյ . հայէր յե-
րեսս ածորդւոյն իւրոյ , և նա յերեսս այսպիսի
ցաւագնեալ մօր : Այլ զի՝ ի հայել մարդոյ՝ ի հայե-
լին

լին տպաւորի ՚ի նմ կերպարանք իւր, ըստ սմին և ՚ի հայիլ քան ՚ի ձեռ կոյսն, տպաւորեին ՚ի հոգին ձեռ այն ամ ցաւք՝ զորս կրեր նա ՚ի մարմնի. և զբեթէ իբրև հեղեղք իջեալ լինէին ՚ի լեռնէ անտի ՚ի քեռ ՚ի լայնացեալ ձոր սրտի ՚երց կուսին. ուստի ասի՝ թէ * վերջն քան՝ խաչելեալ ՚ի մարմնի՝ էին վերջ մոր ,, ցաւագնելոյ ՚ի հոգի ՚՚. և թէ * տատակացեալ ,, ցաւք մարմնոյն քան եղեն հոգւոյն ձանձրանայ ՚ի ,, հոգի մոր նէր ՚՚. զի ըստ ՚երց քեռնարդոսի, * խաչիւ որդւոյն խաչիւր մայրն. նա ՚ի մարմնի, ,, ան ՚ի հոգի ՚՚: Պարմինն որ տանջիւր և պատառելիւր ՚ի խաչին, առեալ էր ՚ի կուսէն. և զի հոգին ոչ էր առեալ ՚ի նմանէ՝ պատշաճ եղև տանջիլ հոգւոյ կուսին, զի ողջակէզն՝ որ մատուցանիւր ՚ի լերին անդ՝ իսկ ամբողջ՝ մարմնով և հոգւով. մարմնով յորդին, հոգւով ՚ի մայրն: Եւ թէպետ զոհ և ողջակէզ յարուճայ մատուցանիւր, բայց զոհն փրկութեան, որ և ասի զոհ խաղաղական՝ կարէր մատչիլ և լինդայ. (ղեւտ. Գ. 1.) և զի զոհ փրկութեան եղև քո, ըստ նմա մատուցաւ և ՚երբ կոյսն իւր զոհ քաւութեան և խաղաղութեան՝ միացեալ ըստ նմ ցաւօք ՚ի կիզանիլ և յայրիլ ՚ի վէր սեզանոյ սրտի իւրոյ՝ որ անմեռնելի էր ՚ի սրտին յաւիտեան. Այլ թէ այս կիզումն ցաւոց զինչ ներգործեր ՚ի սիրտ սրբոյ կուսին, ոչ հաւատամ թէ կարիցէ պատմիլ և կամ մտածիլ. այլ հաւատամ թէ այնքան ցաւ էր՝ որքան կարէր լինիլ այսպիսի մոր առ այսպիսի որդի. մանաւանդ զի գիտեր՝ թէ զիարդ յղացաւ, զիարդ ծնաւ, և ո՞ է զոր ծնաւ: Զիարդ էօք յոր տապնապ ոլորեցաւ սիրտ նէր յորժամ խօսեցաւ առնա որդի իւր. * կին դու՝ ահա որդի քո ՚՚. զինչ ասէ եթէ փեսկ ասելոյ կին դու՝ ասէր, մայր իմ. զայս ևս եթէ լսէր՝

քեր՝ոչ կարեր կեալ։ Յաւել որդւոյն կին դու, զինչ
՚ի սրտէ պինդեր մայրն. մայր քո եմ ես որդեակ իմ.
ես յղացայ զքեզ. ես ծնայ զքեզ. ծնայ այն ոչ
ցաւօք, այլ առ ՚ի ցաւս. և ցաւ քո յաւէտ տակաւին
զմայրութիւն իմ. այդ քո ցաւ ոչ տայ քեզ՝ մայր կո-
չել զիս. այլ մայր ցաւոց և կին վշտաց։

Յետ այսորիկ ՚ի լսել զցաւագին բարբառ նորին * ծա
,, րաւի եմ ‖ , զինչ զգաց ՚ի սրտի , և զինչ արար
պինդն. ոչ աղբիւրդ անմահութե բղխեցաւ ՚ի վիմէդ
ջուր կենդանութե, զի արբուցից զանկարօտդ ջրոյ.
ապա թէ ոչ՝ տուր լինձ՝ զի ես ծարաւեցայց վիմիկ
քո. ես նուճաղեցայց ՚ի ծարաւոյ. ես ընկզմեցայց
յանձիւրեն ծարաւոյ։ ՚ի տեսանել ապա՝ թէ վիմիկ
ջրոյ լեզի մատուցանելին նոր, յոր յորձանս կակծանաց
սուզաւ անարատ ոգի նոր. և զինչ բարբառեցաւ ՚ի
ներքս առ միածինն իւր. հուսական կամաձայն արբուչք
զծարաւ քո, և այժմ դառնութիւն տագնուցն զլեզուդ։
Ո՛ւր ինչ ապա սլացաւ յուսկնոնէ՝ իսկ ընդ զարթնապոչ
զայն ձայն որդւոյն. * ՚ծծ իմ՝ ծծ իմ ընկեր թողեր զիս ‖.
յորպիսի դնդիւն հնչեաց հոգի նորա. աւաղ լինձ
որդեակ իմ. եթող զքեզ հայր՝ ՚ի ժանիս գահճաց
և ՚ի հնոցս վշտաց. զինչ արարից մայրս՝ միամօր
որդւոյդ. զիարդ և ես թողից զորդիդ հօրն լուսոյ։
Ո՛պա յորժամ ետես զնա ՚ի յետին տագնապի
մերձ յաւանդումն հոգւոյն՝ զիարդ գալարեցան ա-
զիք նր. պիտոյ էր լինձ ասա հրաւիրել զդունդս
հրեշտակաց ՚ի խօսիլ զողբերդուէ քանս, և զխօսս
ցաւալիս՝ ՚ի բերանոյ այսպիսի մօր. քայց զի յայսմ
անկարանամ՝ կոչեցից զերանելին թեոնարդոս, որ
՚ի բերանոյ կուսին խօսեալով առ յն, ասէ. որդեակ
,, իմ ո տայր լինձ մեռանիլ փոխակ քո. աւ զնս առ
,, քեզ ո՛րդեակ , զի և ես մեռայց ըստ քեզ. ոչ ՚է

դէպ

,, դէպ է քեզ միայնակ մեռանիլ. մի՛ մեռանիր առանց
,, մօր: Այսպիս ահա ես առ խաչիդ՝ 'ի տեսանել
,, զքեզ, և դու տեսցես զիս. հայեցայց տառա_
,, պեալս սրտիւ յանձն իմ և յորդւոյ իմ կախելոյ զփայտէ.
,, և 'ի մեռանիլն ք՛ո անարգ մահուամբ՝ մեռայց և
,, ես առանց մեռանելոյ: Զի՞նչ մեծ է ինձ այս՝ զի
,, տեսանեմ զիս թողեալ 'ի նմէ զոր ծնայ, և ոչ
,, գոյ ոք հաւատար 'ի մխիթարել զիս. զի ո՛ կարէ
,, հաւատարիլ նմա: Փակեալ կայ ձայն իմ, տաց ընդ
,, այնր զարտասուս և զհառաչանս ցաւոց. փափա_
,, քիմ բարբառել, այլ ցաւս իմ հատանէ զհագա_
,, գնչումս. 'ի կերպարանել ձայնիս՝ առ ինքն ձգէ ցաւ
,, սրտիս. բամբէ աղետիցս. տեսանեմ մեռանել
,, զայն, զոր սիրէ անձն իմ, և ահա համայն հեղա_
,, նիմ յառաւելութէ ցաւոց՝ ոչ իմոցս՝ յորս տաչո_
,, րիմ, այլ որդւոյս, որում տագնապիմ և խորովիմ:
,, Զայն նա ամենաքաղցր աչօքն 'ի մայր իւր ցա_
,, ւօք վարակեալ՝ յառաւել ցաւոցն զոր ունի վ՛ս
,, իմ քան վ՛ս իւր: Արդ բանիւ զիս մխիթարել կա_
,, մի, զոր ոչ երկարութիւն հրեշտակային քաջալե_
,, րութեանց կարէ սփոփել: Ո՛վ մահ անողորմ՝ մի՛ ո_
,, ղորմիր ինձ. դու միայն ըստ ա՛մի հաճոյ ես ինձ
,, այժմ: Ո՛ հրէայք անողորմք մի՛ խնայէք եւ յիս. յոր_
,, մէ (առթէ) զծնեալն իմ խաչեցիք, նովին և զիս
,, խաչեցէք, կամ յայլ խստագոյն մահ ընդ նմին բար_
,, ձէք. միայն թէ ընդ որդւոյս 'ի միասին մեռայց.
,, Ընդէ՞ր տարեացի այսպիսի մայր յետ զրկելոյ յայս_
,, պիսի որդւոյ 'ի ցաւս. հարէք զմայրն ընդ զաւա_
,, կին. ոչ խնայեցիք որդւոյս, մի՛ խնայէք և ինձ:
,, Ո՛ որդեակ իմ ամենասիրելի. ո՛ իմ ծնունդ ա_
,, մենագորով. ողորմեա՛ մօր քում. դադարեա՛ 'ի
,, պահելոյ զիս անկօղ լինել 'ի վ՛ս երկրի. որ ա՛մին
իք ,, Եղէր

„ եղեր միշտ և յիւմի բարերար ընկալզմայր քո՛ի խաչ
„ ելին , զի միշտ կեցից ընդ քեզ յետ խաչի . ոչինչ
„ քաղցրագոյն է ինձ քան թէ փարել զքե՛ի խաչ
„ ելին՝ մեռանիլ ընդ քեզ՛ի խաչի ‖ : Ա՛յսպէս աստի՛ն և՝ ընդ
եփրեմ՛ի կտակի չարչարանացդ և խաչելութե՛ան
քաղցրութեան բանս խօսի՛ի բերանոյ սրբոյ կուսին լա
լագինս բարբառելով առ յի՛ս յասելն . * ո՛վ սիրելի
„ որդեա՛կ իմ , ո՛ղջ անարդեցար . ո՛վ ցնծութի՛ւն իմ
„ զիւրդ մատնեցար . ո՛վ խնդութիւն իմ զիւրդ
„ ըմբռնեցար . ո՛վ բերկրութիւն իմ զիւրդ նա
„ խատեցար . ո՛վ կեանք իմ զիւրդ՛ի մահ մատնե
„ ցար . ո՛վ անգին մարգարիտ իմ զիւրդ՛ի խաչ
„ բարձրացար . . . զի՞ դործեցիր մայրս վշտա
„ դին . աւա՛զ մօրս աղետից . աւա՛զ մօրս՛ի մէջ
„ ամենայն մարց . աւա՛զ և կրկին աւա՛զ աւա
„ զելոյս՛ի մէջ ամ կանանց . . . . . աւա՛զ՝ զի
„ տեսանեմ զորդի իմ՛ի տանջանս , և ոչ կարեմ
„ օգնել նմա . տեսանեմ զնա՛ծարաւի , և ոչ կարեմ
„ արբուցանել . տեսանեմ՝ զի մեռանի , և ես ոչ
„ մեռանիմ ընդ նմ . ո՞ւր է աւետիքն քո ո՛վ գաբրիէլ .
„ ո՞ւր ողջոյնն այն . զիւրդ ընդ հակառակն տեսանեմ
„ այսօր . ո՞չ ասպաքէն աւետարանեցեր ինձ ասե
„ լով , ուրախ լեր բերկրեա՛լ , և ահա այսօր՛ի սուգ
„ եմ տրտրեա՛լ . զի չնորհօք ձայնեցեր ինձ , և ահա
„ լի եմ դառնութի՛ւ . ասացեր ո՛ւր ընդ քեզ , և ահա
„ հանին այսօր զնո՛րն իմ յինէն . ո՛վ եղիսաբեթ
„ աղգական իմ ո՞ւր է երանին քո . է՛կ տե՛ս զայր
„ տուչն որովայնի իմոյ . զոր դու օրհնեա՛լ կոչեցեր ,
„ ահա թաւամեցաւ պտուղս , ձմլեցաւ և ցամաքե
„ ցաւ . է՛կ տե՛ս եսայի մրգրէ , սա է նա զորմէ ասաց
„ ցեր , տեսաք մեք զնա՝ և ոչ գոյր նէր տեսիլ և ոչ
„ գեղեցկութի՛ւն ... ո՛վ որդեակ իմ և ո՛ծ իմ , ահա

,, այլոց ողորմիս և վ՞ն այլոց մեռանիս, ինձ ը̄նէր ոչ
,, ողորմիս՝ զի մեռայց ը̄ քեզ. զաւազակն մխիթա_
,, րես ասելով. այսօր ը̄ իս իցես 'ի դրախտին, զիս
,, ը̄նէր թողուս . . . ա՛ռ զիս առ քեզ, զի կեանք իմ
,, մահ է, ուրախութ̃ի իմ սուգ, հանգիստ իմ չարչա_
,, րանք, լոյս իմ խ̃ր : Հրամայեա՛ մահու զի մի՛
,, ողորմեսցի ինձ. հրամայեա՛ երկնից՝ զի խաւարես_
,, ցի 'ի վ՞ր իմ. հրամայեա՛ երկրի՝ զի պատառեսցի, և
,, ը̄ քեզ առցէ զիս. հրամայեա՛ զի բացցին գերեզ_
,, մանք, և տացեն զմեռե̃լս իւրեանց, և զիս ընկալ_
,, ցին փ̃նկ ն̃ց . . . ո՛ քաղցր և անուշակ որդեակ.
,, ո՛ մօրս միայն միածին որդեակ. ո՛ աչացս լոյս
,, բարերար որդեակ. մի՛ թողուր զիս. մի՛ մեկնիր
,, յինէն. ընկա՛լ զիս զմայր քո, և տա՛ր ընդ քեզ ‖ :
Ա,յսպիսի բանք ոչ ցուցանեն զխստութ̃ի ցաւոցն ս̃բյ
կուսին, այլ զստուեր նորին : Ա,յլ թէ զիա՛րդ կա_
րաց տոկալ սիրտ ն̃ր՝ յաւէտ սպառ է ասել՝ քան
հասու լինիլ: Ա,րեգակն 'ի վերուստ խաւարեցաւ.
լուսին 'ի ներքուստ մերկացաւ զլոյս իւր. հաստա_
տուն երկրի շարժեցաւ. հիմունք ն̃ի սասանեցան.
վէմք հերձեալ պատառեցան. գերեզմանք անշարժք
բացան. վարագոյր տաճարին վերուստ 'ի վայր պա_
տառեցաւ. և այլք առ հս̃րկ խռովեցան. եթէ
ա՛մքին ն̃ք ոչ կարացին ժուժել տանջանաց որդւոյն
ն̃յ, ապա զիա՛րդ կարէր տանիլ ն̃ք կոյսն՝ որ ծնաւն
զնա : Ա,յս ցաւ անհաս իմն տեսանի և անբացատ_
րելի : Ե,թէ ցաւք մարտիրոսաց ի՞նչ հաւասարէին
ցաւոց ն̃ր, մարթ էր 'ի ցաւոց ն̃ց սակաւուք բա_
ցատրել զայն. բայց չիք հաւասարութ̃ի և ոչ իսկ
համեմատութ̃ի ը̄ ցաւս մարտիրոսաց. ուստի ասէ
ո̃րն անսկզբն, խօսելով առ ն̃ք կոյսն. * զոր ինչ
,, կրեցին մարտիրոսք՝ թեթև էին, մանաւանդ թէ
,, ոչ_

„ ոչինչ առ համեմատութեամբ կրից քոց. որք խուռեանց „ անչափութեամբ թափանցեցին յաղիս քո ներքինս, „ և 'ի գթալից սիրտ քո ։ Որչափ ցաւք եղեն 'ի մարտիրոսս և յայլ ցաւագնեալս՝ եթէ 'ի կիրս մատուցուք՝ ծանրանայ յոյժ ցաւ սրբոյ կուսին. որով և ասի մարտիրոս մարտիրոսաց, զի մարտիրոս բովանդակիչ ամենայն մարտիրոսութեանց, և գերագոյն է զամենայն մարտիրոսս բազմապատուելութեամբ ։ Մարտիրոսք 'ի մարմինս կրեցին. իսկ սուրբ կոյսն յանձին իւր 'ի հոգին. Ամ. * և ընդ քո իսկ անձն անցցէ սուր ։ Զի թէ սուրն ցաւոց անցցէ ընդ հոգի քո. ոչ ասէ հատցէ, կամ մնասցէ, կամ հարկանիցէ, այլ անցցէ. զի թափանցեաց մինչև ցորոշումն շնչոյ, յօդից, և ուղղոյ. որոյ վասն իսկ սուր կոչէ 'ի ցուցանել թէ էանց իբր սուր 'ի ներքին շարժմունս հոգւոյ նորա ։ Մարտիրոսք 'ի տանջելն մարմնով մխիթարեին հոգւով 'ի Քրիստոս. Քրիստոս ևս 'ի տանջելն անդ 'ի մարմնի երանեալ էր 'ի հոգին. իսկ հոգի սրբոյ կուսին տանջէր 'ի Քրիստոս, և սաստկութիւն տանջանացն գրաւեալ էր զբոլոր հոգի նորա, որպէս ջուր ծովու գրաւիցէ զպորունդ ։ Ոչ եղև ցաւ ըստ ցաւոցն՝ որք անցին 'ի մարմինն Քրիստոսի. սոյնպէս ոչ եղև ցաւ ըստ ցաւոցն՝ որք անցին 'ի սիրտ սրբոյ կուսին ։ Որքան էր ցաւ 'ի նմա, որքան տեսանէր զորդին կրող ցաւոց. տեսանէր զգլուխն պսակեալ փշով. տեսանէր զձեռսն և զոտսն հեղուսեն բևեռօք. տեսանէր և զաչսն լցեալ արեամբ. տեսանէր և զթաղծիլ որդւոյն 'ի վերայ մեղաց մարդկան և 'ի վերայ կորստեան բազմաց ևս և հաւատացելոց իւրոց՝ որք հանդերձեալ էին արհամարհել զմահ նորա. տեսանէր և ըզթողեալ լինիլ նորին 'ի հօրէ, և զնախատակոծ լինիլ յամենայնէ. տեսանէր զի և արարածք յիմարեին.

Եւ ահա տեսուն այսր ամի գրեթէ իբր երկաթի գրիչ տպաւորեր ՚ի սիրտ սըկ կուսին զնամ կիրս ցաւոց որդւոյն. և յամի յայսոսիկ նահատակիւր և խորհիւր հոգի նըր։ Արդ և չկարտիճ տեսա նիւր անդ արեգակն քո խաւարեալ տանջանօք ՚ի մարմնի, և ինքն լուսինն մարիամ ՚ի դոյն արեան բոլոր ՚ի սրտի հանդէպ արեւու. (յայտ. ՃԲ. 12.) * Եւ ,, ահա խաւար ծածկեաց զերկիր ։ այր թէ ծածկեաց խաւար ցաւոց զսիրտ մարիամու. (եսայ. Ի. 2։) Եւ կարեր յայսոսիկ և յայնքան չափ հասանել ցաւ մարտիրոսաց. վն զի ոչ այսպիսի որդի էին, և ոչ այսպիսի մայր. ոչ այսպիսի ծնունդ և ոչ այսպիսի անարգ մահ։ Մարտիրոսք վն հաւատոյ տանջէին. իսկ սը կոյն՝ ոչ վն հաւատոյ՝ այլ վն սիրոյ. և զի սեր առաւել ևս քան զհաւատս, և * ոչ երբեք անկանի ։ (ա. կոր. ԺԳ. 8.) ապա մարտիրոսուն սըկ կուսին ՚ի վեր էր ք զնմին. ուստի և բարբառէլով առ նա՝ասէ. (երգ. Է. 4.) * դրաւ ,, տերք եղիմ (դաւք մարտիրոսաց) . . . զարթուս ,, ջիք զսէրն ։ և ասասջիք նմ. * եթէ խանդաղ ,, կաթ եմ (ցաւոքս) ՚ի սէր քո ։ (երգ. Է. 8։) Եւ դարձեալ մարտիրոսք ոչ տանջէին սրովք քով, այլ այլովք. իսկ սը կոյն տանջիւր ՚ի հոգին նոր վին սրով՝ որով տանջիւր քն ՚ի մարմնի։ Եւ մարտիրոսանալ սըկ կուսին հոգւով՝ ոչ պակասեցաւ ՚ի մարմնաւոր մարտիրոսուէ, այլ մարմնաւոր մարտիրոսուէն պակասեցաւ ՚ի նմանէ. մանաւանդ զարհուրեցաւ ՚ի հոգևոր մարտիրոսուէ նը, և կամ ընկղմեցաւ ՚ի մեծուէ և յառաւելուէ նորին՝ ոմն կաթիլ մի ջրոյ արկեալ ՚ի կարաս գինւոյ. զի ոչ թէ մարտիրոսուի էր՝ զոր կրէը, այլ ՚ի վեր քան զմարտիրոսուի, ՚ի վեր քան զցաւ, և ՚ի վեր ք ըզ-

մահ.

մահ. ուստի ասէ սքն Հերոնիմոս.(՝ի Թուղթն առ
պաւլա) . * պայնպիսիս կրեաց (՝զբ կոյսն) որ էր
,, անկրելի. և խոստովանիմ ևս թէ մարմին նորա
,, հոգևորանալ տանջեցաւ սրով տանջանացն քրի.
,, և այս տանջանք առաւել եղև քան զմահ ։ Այս
սոփրոնիմոս ասէ. ցաւ՝ զբյ կուսին * առա-
,, ւել զօրաւոր եղև քան զմահ. զի զմահն քրիս՝
ն իւր արար ։ Նոյն Թէ յայսպիսի ցաւս տանջե-
լով ոչ մեռաւ՝ այն էր ՝ի պահպանուէն նմա , և
գործ հրաշից հոգւոյն սրբյ, յասել նր յումկիանոս
ցաւոցն. * յայդ վայր եկեսցես , և այլ մի անցանիր
,, ցես ։ (յոբ. լը. 11 .) որով ոչ միայն կենդանի
ճնաց նա , այլ և ՝ի խորհուրդն եկաց անսպրդ-
տոր , և ՝ի զգայուեան աներևակին անխոտոր . նաև
՝ի կալն անդ առ խաչին՝ երևեցաւ անշփոթ և ան-
փոփոխ . ըստ որոյ ասէ աւետարանիչն՝ Թէ զբ կոյսն
* կայր մօտ ։ առ խաչին . (յովհ. ժթ. 26.) կայր և
ոչ թաւկանայր . ըստ որ և նա ինքն քր իրրև Թէ
զարմացաւ . որոյ վ՚ը կոչեաց զնա կին , կամե-
լով ցուցանել՝ Թէ նա իցէ մի միայն ՝ի կանայս, որ
յայնպիսի կսկծանաց հնոյն ոչ նըմանէր և ոչ
թաւաւէր, ոյզ լինին կանանց. * վայելչացոյց կայր առ
,, խաչին՝ ասէ սքն անսելմոս՝ ոյզ վայել էր իւրում
,, կուսական պարկեշտութեանն , և ոչ իւիք թուլա-
,, նայր յայնքան սաստիկ դառնութենէ ։ * Այս և
,, ոչ շարժիւր՝ի վրէժխնդրութիւն ընդդէմ խաչահա-
,, նուիցս. ոչ անիծանէր , ոչ տրտնջէր , ոչ լնդրէր
,, յայլ զվրէժ քինու Թշնամեացն ։ Այս՝ զբն ամե-
րոսիոս ասէ (՝ի դիրս կրթութեան կուսանաց .) * կայր
,, առ խաչին մայրն . և ՝ի փախչիլ մարդկան ցնայր
,, աներկիւղ. զհոգի իւր ոչ այլայլելով հայեր գե-
,, Թաց աչօք՝ի վերս որդւոյն. որոյ զիտեր վիրաւո-

„ Թի լինել ամէն ‖. Իբր զի գիտէր թէ այն վէրք և այն տանջանք էին վասն փրկութեան ազգի մարդկան. Յայս փրկութիւն նկատելով սուրբ կուսին՝ և ինքն հրով ցաւոց սրտի իւրոյ պատարագէր զմիածին իւր՝ հօրն երկնաւորի. որով և ինքն եղև գործակից և օգնական որդւոյ իւրոյ 'ի փրկել զմեզ, այնու՝ զի և ինքն յողջակիզել զորդի իւր կիզաւ իսպառ 'ի սրտի իւրում: Ուստի թէպէտ ասաց տէր. (Եսայ. կգ. 5.) ոչ ոք օգնեաց ինձ 'ի փրկել զմարդիկ, բայց մեք կարեմք ասել, թէ կին մի օգնեաց քեզ, կալով առ խաչին ընդ քեզ: Զիրաւի սուրբ կոյսն ոչ եդ զանձն 'ի վերայ փրկութեան մերոյ, բայց եդ ևս կամելով և կրելով, և զորդի իւր պատարագ ընծայելով հօր. որդին եղև նժար մի կըշռոյ լի ցաւօք մարմնոյ, և սուրբ կոյսն եղև նժար մի կշռոյ լի ցաւօք հոգւոյ. որով հաւասարեցաւ և լրացաւ փրկութիւն մեր. և այս՝ ոչ վասն զի էր կին ոք, այլ զի էր ծնող այնր՝ որ տանջիւր 'ի խաչին վասն փրկութեան մերոյ:

Թ. Եօթներորդ ցաւ սրբոյ կուսին եղև 'ի մեռանիլ և 'ի թաղել որդւոյ իւրոյ: Մինչև էր աւանդեալ Քրիստոսին զհոգին, արդարև այրիւր և տոչորիւր սիրտ սրբոյ կուսին. բայց տակաւին կենդանի տեսանէր զնա 'ի ցաւակիր մարմնի: Իսկ յորժամ աղաղակեաց նա 'ի ձայն մեծ, * հայր 'ի ձեռս քո աւան-
„ դեմ զհոգի իմ ‖. (Ղուկ. իգ. 46.) և * խոնար-
„ հեցուցեալ զգլուխն աւանդեաց զհոգին ‖. (Յովհ. ժթ. 30.) յայնժամ տապ ցաւոց նորա պլագունեցաւ, և իբր բոց հնոցի մրրկեցաւ, զի ոչ ևս տեսանէր զնա կենդանի. և ահա հրաշից հրաշք, զի ոչ եհան և ինքն զհոգի իւր: Բայց արդ յորժամ իջուցին զմարմին նորա

'ի

՚ի խաչէն՝ առ ՚ի թաղել՝ զի՞ եղև նմա, զինչ արար արդեօք. զեղաւ զնուաւա, աւաղ աղետից առեալ, վայ ցաւած մօրս. ո՛ հաւատարեսցէ զիս մահու քո որդեա՛կ իմ. դարձուցէք հաւատացեք ինձ որդիք մարդկան, կամ զօրդին իմ զոր տեսանեմ մեռեալ, և կիսք եթէ առաւել ևս կամիցիք հաճոյ ինչ առնել ինձ ՚ի միխիթարել զիս, տուք և զիս ընդ որդւոցս ՚ի մահ. զի ընդ ցաւոց նոր անցցեն և իմ ցաւք ։ Օ այսպիսիս առեր, և ինքն անչափ և անհնարին տանջմամբ տրտմեալ՝ դրեթէ անընչացեալ լինէր. ո՛ մեծի և ծանու մարտիրոսուեա, ո՛ լայնատարած ընարձակումե սրտի հուսին, որ այսքան ցաւոց ատկայր և կեայր.ուր անքաւուլ աղետից զմայրական հոգին խաչէր, և լայնալն սրտի նոր զյորդուն ընթացից կակծանացն իբրև զյորձանս յորդանանու յակնակալ պիճ իւր ընուներ.(յոբ.կս.19։) ՚Ա՛յժմ ահա հատուցա. նեա տակաւիւք ոմ կոյս՝ անյաւ ծննդեան անդրանիկ կանդ. չիմացար ցաւ ՚ի ծնանիլդ զորդի, ըմբռնեցար ՚ի ցաւս ՚ի խաչիլ նոր ՚ի քումդ սրտի. բերկրութ լցար ՚ի ժամուն՝ յորում լոյս ծագեցեր ՚ի զմիածինդ Հաւտադային փառաց անեղին. կսկիծմամբ և տխրութ՛ք վեշար բիւրատատակաբար ՚ի տեսանելդ զնոյն ՚ի գբի ներքնում և ՚ի սուրբեր մահու ՚ի գերեզմանին։ ՚Ա՛յս ցաւ և սուգ սրտի հուսին յողբս շարժէր զհայեցողսն, և արտասուօք ըմբռներ զտեսօղս արտասուաց իւրոց ։ Նա զի լային և դառնային՝ որք զայնպիսի աղետս տեսանէին, (ղուկ.կգ.48.) ձայներ առ նոսա ասէր։ * ձէզ ասեմ, ձէզ ասեմ անցաւորք Հանապատ
,, հաց, դարձարո՛ւք, հայեցարո՛ւք և տեսէք, թէ ե
,, ցեն երբեք ցաւք ըն ցաւոցս լինի՞ որք ՚ի վէր իմ հա
,, սին (ողբ.ա.12։) ‖ ՚Ընդ այս և հրեշտակք ցաւակից

լինելին ՚ի վեր ՚ք զմարդիկ. հետամ թէ լայնն և եթէ կարելին, ՚ի թէ ամ ՚ի մարմնի տանջելոյ, զի՞ հաւատալն թէ նաև հրեշտակք լացեալ իցեն ՚ի վէր այսպիսի աղէտից. լացին արդարև, բայց հրեշտակօրէն. հեղին ոչ զարտասուս աչաց, այլ հոգւոյ. ոչ զդայական զդաճմամբ, այլ խմանալեաւ. առաւել զարմանալով ըստ մայրն յաւակից, քան ըստ որդին յաւակիր: ՚ի զարմանալ նոցա՝ բարբառեր առ նա սէր կոյսն ըստ նոեմեայ. (հռութ. ա. 20.) այսուհետև * մի՛ կոչէք զիս նոեմի, այլ ,, կոչեցէք զիս դառնայեէ. զի դառնացոյց զիս բա- ,, ւականն յոյժ ‖: Որ արժան է գիտել, զի բառդ նոեմի՝ Թարգմանի դեղեցիկ. և զի անհնարին ցաւք սրտի կուսին դառնացուցեալ էին զնա և յայլ հին կերպարանս փոխանակեալ, վ՚ասկ ասէր. մի՛ կոչէք զիս դեղեցիկ, այլ դառնացեալ. ուր Եբրայականն դնի մառա, որ է նոյն ըստ անուանն մորիա կամ մարիամ. և Թարգմանի դառն, կամ ծով դառնացեալ. զի դառնացոյց զնա բաւականն, ՚ի թէ որդին այ՝ որ բաւական է յայմ, ՚ի բևեռելին անդ ՚ի խաչին և ՚ի մեռանիլն՝ դառն ցաւօք լցոյց զնա, և տագնապեցոյց զնորս սրտի նր իբրև զծովու. * ՚ի ծովու են ձանաապարհք քո ‖. Ձանապարհք չարչարանաց խաչելոյն քո. (սաղ. հզ. 20.) յոր կարէ յարմարիլ բանն այն՝ որ գրի. (յովբ. խա. 22.) * եռացուցանէ զանդունդս (ծովու) իբրև զկատսայ ‖: ՚ի որ ոյժ սիրտ սըր կուսին որպէս եռայր սիրով՝ այնպէս այրիւր ցաւով: Երկու գոլորշիք են ծովու, նուրբ և թանձր. նուրբն ջերմուբ արևու ձգի ՚ի վեր. իսկ թանձրն յաղթեցուէ արևու՝ աղանայ և աղիացուցանէ ք դառնացուցանէ զջուրսն ՚ի

ներ-

ներքուստ. սոյնպէս և գոլորշիք սիրոյ նորա կուսին 'ի ժամ խաչելութեան իբր յանդիման արևու 'ի վեր ելանէր. իսկ գոլորշիք ցաւոյն այրեալ զսիրտ նորա դառնացուցանէր իբրև զծով: Այլ որպէս զի գիտասցես հաւաստեաւ թէ քանի մեծ եղև ցաւ սրբոյ կուսին՝ ծանիր. զի որչափ է սէր ուրուք, այնչափ է և ցաւ նորա առ վիշտս սիրեցելոյն. վասն զի սէրն է՝ որ տայ ցաւիլ. և պատճառն է, զի սէրն մի առնէ զսիրօղն ընդ սիրեցելոյն. այնպէս զի 'ի վշտանալ սիրելոյն՝ վշտանայ և սիրօղն, և 'ի բերկրելն բերկրի. եթէ լուիցէ սիրօղն՝ թէ հիւանդացեալ է սիրելին՝ ինքն ևս գրեթէ հիւանդանայ 'ի ցաւոցն. յաղքատանալ սիրելոյն, զաղքատութեան կիրս կրէ. յայրիլ նորա, այրի և սա. սմին իրի սէրն ասի լինիլ չափ ցաւոց. եթէ նուազ իցէ սէրն՝ նուազ է և ցաւն. եթէ առաւել, առաւել է և ցաւն: Արդ երրեակ է սէր, բնական՝ բանական՝ և գերբնական. բնական՝ որպէս ծնողի առ ծնեալն, կամ որպէս եղբօր առ եղբայր: Բանական՝ որպէս բարեկամի առ բարեկամ, ևս և որպէս հարսին առ փեսայն: Գերբնական՝ որպէս մարդոյ առ Ած, կամ ասացից՝ որպէս ստեղծուածոյ առ ստեղծօղն՝ ընդ որում է յինքեան: Բնական սիրոյ ցաւ յանփորձս անճանաչելի է. ծնողք միայն կարեն փորձել և իմանալ առանց կարելոյ իմացուցանել: Խոստանայր Դեմոսթենէս փիլիսոփայ կարօղ լինել յաղթելոյ ցաւոց սրտի. այլ իբրև եմուտ 'ի փորձ, 'ի տեսանելն անդ զմահ միածնին իւրոյ՝ բնական սէր նորա ոչ եթող նմա ժուժկալել. և 'ի խրատել յայլոց՝ զուսոյ ունիլ զինքն՝ ետ պատասխանի. այժմ գիտացի՝ թէ ցաւ միածնի ոչ իւիք չափի: Նաև անփորձն թաղէս՝ ոչ կամելով զփորձ առնուլ ցաւոյ զաւա-

ւակի՛ հրաժարեցաւ յամուսնանալոյ. ընտրեաց
մեռանիլ առանց տեսանելոյ զմեռանիլ որդւոց,
քան մնալ կենդանի կրելով զցաւ մահու նոցա: Աս-
տի յայսմանէ հնար է իմանալ՝ թէ որքան եղե-
ցաւ սրտի կուսին 'ի վերայ միածնին իւրոյ. և այն՝
ըստ որում սոսկ մայր. զինչ ապա եթէ զմտաւ
ածցուք զգերազանցութիւն մայրութեան նորա՝ որ ըստ եր-
կուց մտածի. մի՝ զի էր մայր ծնելոյ յիւրմէ ան-
հայր. այլ մարք ևս ծնանին, բայց ծնեալն ոչ
է սոսկ յիւրեանց, այլև 'ի հարց, իսկ կուսին միայն
յիւրմէ. ուստի և ցաւն միայն իւր էր և անբա-
ժան 'ի վերայ միոյ. երկրորդ՝ զի էր մայր անմայր
ծնելոյ 'ի հօրէ. և ըստ այսմ առարկայ սիրոյ և ցա-
ւոց նորա էր անսահման, և իբր առ այնմիկ որդի տա-
րածիւր սէր և ցաւ նորա. ուստի 'ի կողմանէ ա-
ռարկային՝ ք̅ս 'ի կողմանէ որդւոյն, սէր նորա և ցաւ
նորին էր իբր անսահման. որում ոչ կարէ տա-
կալ ստեղծական սիրտ: Եթէ 'ի բնական սիրոյ
յայսչափ ցաւս ըմբռնեցաւ սուրբ կոյսն, զմտաւ ած
թէ ապա յոր ցաւ կսկծանաց տագնապեալ եղև
'ի բանական սիրոյ՝ որ և ասի սէր բարեկամական.
զի սա առաւել է յոյժ քան զնա. վասն զի սա ըստ վերին
մասին կշռի, և նա ըստ ստորնոյն. սա ըստ հոգևո-
րին չափի՝ և նա ըստ մարմնաւորին. և յայտ է թէ
հոգի առաւել է քան զմարմին. (Մատ. Զ. 25.)
ըստ որոյ ասի, թէ հոգի յօժար է և մարմին տկար.
(Մատ. ԻԶ. 41.) սա 'ի բանաւորս իջևանի, և նա
յանբանս ևս. սա մի կացուցանէ զերկոսին, և
նա յերկոսին նշմարի. այնչափ է սրտի զօրութիւն մինչև
զմին առնել Դիոն. եւ: Եւ քանզի այս սէր անհամե-
մատաբար առաւել էր 'ի սուրբ կոյսն՝ քան յայլ ամենայն
բանաւոր արարածս, տես թէ յոր սահման ցա-
ւոց

ւոց տամնէր զսիրտ նր̃. յայն արդարև, յոր ոչ եհաս և ոչ կարէ հասանել ո՛ և իցէ ստեղծական եից զօրութի ։ Այս ցաւ ն̃րյ կուսին անձառ է ՚ի մէնջ. ապա եթէ կամիցիմք յառաւելն բերել, յայն ցաւ ասեմ՝ որ պատճառի ՚ի գերբնական սիրոյ, ամենևին անքննելի և անհասանելի մնայ. զի յառաջ գայ ՚ի շնորհաց, որ ՚ի վեր է քան զբնութի, և քան զբան. իսկ արդ շնորհք սր̃յ կուսին ա̃յ նմին և սէր նր̃ էր անկշռելի, (ո՞ր̃ ասացաք ՚ի ճառս. ժ̃. հատ. ժ̃.) ապա և ցաւն՝ որ պատճառիւր անտի՝ մնայ անկշռելի, և ամենևին անբացատրելի. վ̃ն յաւէտ ընտրելի համարիմ լռել և սքօղել՝ ք̃ ասել ինչ և կի՛մ քննել։ Պատկերահան ոմն ՚ի նկարելն զյուղարկաւորութի աղէտալի մահու դստերն յեփթայեայ՝ ջանացաւ ձևացուցանել զդէմս իւրաքանչիւր բազմականաց և յուղարկաւորաց պէսպէս կսկծատիպ կերպարանօք. մին ՚ի կոծ և միւսն ՚ի լաց. մին ՚ի ցետումն և միւսըն ՚ի փետումն. մին ՚ի կնձիռն երեսաց և միւսըն ՚ի ժանիս գիմաց. մին ՚ի նուաղումն և միւսն ՚ի գլորումն. որովք գրեթէ զամէն զցաւս ա̃յ կարի ներկայացոյց առաջի։ Իսկ իբրև եհաս ՚ի նկարել զտխրագին դէմս յեփթայեայ՝ տեսեալ թէ ոչ կարէ իւիք նկարագրութբ̃ երևեցուցանել՝ քող եարկ ՚ի վր̃ երեսաց նր̃, ՚ի ցուցանել թէ աննկարելի և անպատմելի է կսկիծ ցաւոց նր̃։ Զսոյն և մեզ պատշաճ է գործել աստ. զի թէև հնար լինէր զիւրաքանչիւր ցաւագնելոց և սգաւորաց զկիրս ցաւոց ՚ի յայտ ածել, բայց յորժամ ժամանեմք ՚ի նկարել զցաւս սր̃յ կուսին՝ կի՛մ խօսել ինչ զայնմանէ՝ բռնադատիմք սքօղել, ա̃յ լռել. զի անձառ է և անհաս յերկրաւորացս և յերկնա-

ւոր-

ւորաց։ Համարձակիմ ասել թէ ո՟պ անճառ է մայր ա՟յ լինել ն՟ր, սոյնպէս անճառ է և մայր ցա-ւոց լինել նորին։

Ժ. Աստանօր հայեցեալ յայսչափ և յայսպիսի կիրս ցաւոց ս՟րյ կուսին, գրեթէ տարակուսէին և հրեշտակք՝ թէ զինչ արդեօք կարիցէ մխիթա-րել զնա. ոչինչ արդարև, բայց եթէ տեսանել նմ՟ զորդի իւր կենդանի յարուցեալ ՚ի մեռելոց, որում ակն ունէր. ապա թէ ոչ՝ և ոչ իսկ ներգոր-ծումն հրաշից կարէր պահել զնա ՚ի կեանս։ Այս իսկ աւանդեն վարդապետք եկեղեցւոյ, ո՟պ և ս՟րբն Ամբրոսիոս. (՚ի Ճառն գերազանցութե կուսին.) և ս՟րբն Գրիգոր Նիւսացի. (Ճառ. ա՟. յաղ. յար.) և այլք բ՟զմք, թէ ք՟ս տ՟րն մեր է՟ յառնելն ՚ի գե-րեզմանէ նախ քան զերևիլ այլոց՝ նմա երևեցաւ ՚ի հասարակիլ գիշերոյ, յորժամ կայր յաղօթս ցաւալից, և յոգւոց հանէր. յորում պահու ՚ի տեսանելն զլուսածնունդ որդի իւր յարուցե՟լ՝ յարեաւ և սիրտ նորա ՚ի սգոյ և ՚ի ցաւոց. ահա գտի ասելով զա՟ծորդին իմ. դտեր և դու զիս ա՟ծ իմ, և կեանք իմ միածին որդի։ Փարեցաւ ըզ-կենդանի վիրօք ն՟ր ՚ի համբոյր սիրոյ։ Ուրախու-թի անչափ, զոր չէ հնար տանիլ ստեղծական սըր-տի։ Իսկ թէ զինչ խօսեցին ընդ միմեանս մայր և որդի ո՛վ կարէ ճառել։ Ասացի՝ նախքան զերևիլ այլոց. Զի հարկ իրացն այսպէս պահանջէր ըստ բ՟զմ գլխոց. նախ՝ զի որպէս արեգակն ՚ի ծագիլ իւրում յառաջագոյն լերանց երևեցուցանէ զինքն, սոյնպէս և ք՟ս ՚ի ծագիլն ՚ի գերեզմանէ, նախ երևե-ցոյց զինքն իմանալի լերինն՝ ի՟բ ս՟րյ կուսին, և ա-պա բլրոց, ի՟բ իւղաբեր կանանց. որք յարևա-ծագելն հասին ՚ի գերեզմանն։ Երկրորդ՝ զի ար-

ժան

ժան էր Քի նախ այնմ երևեցուցանել զմարմին
իւր՝ յորմէ եառ զայն. նախ այնմ՝ յորմէ ծնաւ.
նախ այնմ՝ յորմէ սնաւ. եթէ արդարև նա եղև
առաջինն՝ որ ետես զՔս յարդանդէ ծնեալ, ապա
նա եղև առաջինն որ ետես զՔս և 'ի գերեզմա-
նէ ծնեալ։ Երրորդ՝ զի Ը կարգի ընդունէ պատշաճ
էր Քի յառաջ քան այլոց ամի՝ մօր խնրում ե-
րևել, և նմ տալ զայս յարգումն զի այսմ պաշտօն-
ջեր պատիւ մօրն։ Չորրորդ՝ զի մեծութիւն ցաւոց և
սգոյ սրտի կուսին 'ի սոյն տախալէր ։ Ցաւ և սուգ
Մագդաղենացւոյն մեծ լինելով քան զայլոց՝ նախ
նմ երևեցաւ Քս քան այլոց կանանց. ապա քա-
նի առաւել ևս մօրն՝ որոյ ցաւն 'ի վեր էր քան
զամենայն ։ * Երանի սգաւորաց (ասաց Քս) զի նոքա
,, մխիթարեսցին ‖. ո՞ քան զնա կոյսն սգաւոր դը-
տանիւր յայնմ ժամանակի. և ո՞ կարէր մխիթա-
րել զնա՝ եթէ ոչ նա՝ յորոյ վէր սգայր։ Եթէ փոքու
սգաւորին երևեցաւ նախ 'ի մխիթարել՝ մեծին
ոչ երևեսցի։ Հինգերորդ՝ զի գրէ սողոմոն թէ իմաս-
տութիւն դիւրաւ * երևի սիրողաց իւրոց ‖. (Իմաստ.
Զ. 13.) և Քս ասէ. * որ սիրէն զիս . . . երևեցուցից
,, նմ զիս ‖. (յովհ. ժԴ. 21։) Իսկ արդ ո՞ք կոյսն
էր մի միայն առաջին 'ի սիրողսն՝ ապա յառաջ
քան զամենայն նմ երևեցաւ 'ի մխիթարել։ Վեցերորդ՝
եթէ յառաջն չէր երևեալ նմ Քս՝ ասէր հրեշտակն
զկանայս. երթայք ասացէք ցմայր նորա և ցաշա-
կերտսն։ Իսկ թէ աւետարանիչք ոչ գրեցին, չէ
ինչ. զի և ոչ զհասարակ երևմանսն գրեցին նոքա։
Նախ՝ զի ինքնին իմանիւր այդ. օրինակ այսմ,
մատթէոս գրէ թէ մոգքն իբրև տեսին զաստղն
խնդացին յոյժ. իսկ 'ի տեսանել նոյ զմարիամ և
զՆա՝ ոչ դնէ թէ ուրախացան, զի ինքնին իմանի
այն ։

այն։ Երկրորդ՝ զի աւետարանիչք զորոց գրեցին զՔս երեւմանն յետ՝ իբրեւ թէ վկայ բերին զնա յարութեն նր. եթէ գրէին և զՔր կուսէն՝ վկայ բերել և զնա՝ ոչ զօրէր. զի վկայութն մօր չազդէ ինչ. Նու դարձեալ՝ 'ի զուր էր նր գրել. վՏ զի մեք առանց գրելոյ նոցա հաւատամք զայն, և գրեմք զնոյն. եթէ գրէին և նք, հեթանոսք ոչ հաւատային. ապա առ ինչ պիտոյ էր գրել։ Նսկ զոր առարկեն ոմանք զբան սբյն պօղոսի՝ որ ասէ. (Ա. կոր. ԺԵ. 5.) թէ նախ երեւեցաւ կեփայի՝ չզօրէ ինչ. զի այդ նախնութն հայի 'ի կարգ երեւման աշակերտաց, իբր թէ 'ի մէջ աշակերտաց նախ կեփայի երեւեցաւ. ապա թէ ոչ՝ յայտ է յաւետարանէն թէ յառաջ քան զՔմ երեւեցաւ մագդաղենացւոյն. (մարկ. ԺԶ. 9։ յովհ. Ի. 14.) ապա ոՏ նախնութն երեւմանն կեփայի ոչ բառնայ զնախնութն երեւման մագդ", սոյնպէս և նախնութն երեւման մագդ" և այլոց ոչ բառնայ զնախնութն երեւման Տրյ կուսին. ՔՍ յասելն՝ զգրեալսն 'ի հրովարտակ արքայի գիտէ նախ ատենադպիրն՝ այս նախս ոչ 'ի բաց առնու զթագուհին կամ զայլ ոք խորհրդական արքայի. սոյնպէս և յասելն՝ Քս նախ երեւեցաւ կեփայի՝ նախին ոչ 'ի բաց առնու զթագուհին երկնի և երկրի.

Աստանօր վերջ տուեալ ընթացից ճառիս յաւելլից ասել ինչ մի եւս, թէ որովհետեւ Տր կոյսն առ խաչին կալով՝ հրովլ ցաւոց պատարագեաց հօր զորդի իւր, նա և զի 'ի սմին աւուր հրով ընծայեաց զնա հանձնի նորա, 'ի հարկէ և հայրն երկնաւոր հաճեցաւ պարգեւել նմ զՔմ՝ զոր արժէր այս ընծայութն։ Ի կամիլ աբրահ" պատարագել զորդի իւր, ասաց նմ Աճ. * փոխ զի ՍՆ ‖. (Ծնն. ԻԲ. 16.)

Նու

Նա զի յանչափս ազնիւ էր պատարագն՝ զոր մա_ տոյց ոչ կոյսն, ապա զանբաւս ետ նմա ած առե_ լով.փոխանակ զի արարեր զերդ զայդ,արարից և ես քեզ՝ զոր կարող է առնել ձեռն իմ։ Նաքեալքն յաւուր չէշինց թողին զքս և փախեան. բայց քզն յայլ փորձութիւնս ը՝ նմ էին՝ աստ ցնն քն. * և ես ,, ուխտեմ լը. || (ղուկ. իբ. 28.) զինչ ապա ը՝ մայր իւր։ Նթե նք 'ի սեղանի, ապա ոչ կոյսն 'ի գը_ լուխ սեղանոյն 'ի փառս արքայութե։

ՃԱՌ ԻՆՆԵՐՈՐԴ։

՚Ի տօնի վերափոխման սրբ̃ ած̃ածնին ։

Ո՞վ է սա՝ որ ելանէ յանապատէ յեցեալ յեղբօրորդին իւր ։ Երգ. Ը. 5 ։

Հիացան այսօր երկինք՝ զի կրկին տեսին զսքանչելիս ։ ՚Ի համբառնալ որդւոյն իմ̃ զարմացան, և հարցանելով ասէին. * ո՞վ է սա՝ որ գիմեալ գայ յեդովմայ . . . բուռն զօրութ̃ ‖. (Եսայ. կգ̃. 1.) և հաւաստեաւ թէ որդին իմ̃ է՝ ցնծութ̃ վերընկալան զնա ։ ՚Ի վերափոխել ապա և սրբոյ կուսին՝ տեսեալ զհանդէս նր̃ նման առաջնոյն՝ կրկին ևս զարմացան, և հարցանէին. * ո՞վ է սա՝ որ ելանէ յանապատէ՝ յեցեալ յեղբօրորդին իւր ‖. (Երգ. Ը. 5։) Այս միօրինակ հարցուած՝ ցուցանէր զնմանութիւն հանդիսի փառաց. մինչ դրեթէ մի և նոյն համարիլ զելս. յայսմ միայն երևիւր զանազանիլ, զի յառաջնումն հարցման ասի ելանել բուռն զօրութ̃, ըս̃ ինքնիշխան կարողութ̃. իսկ յերկրորդումն ասի ելանել՝ յե-

ցեալ յեղբօրորդին . յայլ հանգամանսն նման , մանաւանդ թէ հաւասար :

Եթէ չիցէ անտեղի՝ վստահիմ ասել՝ թէ կուսին շքեղագոյն եղև քան զՔսին . վն զի 'ի վերանալ Քսի՝ սոսկ հրեշտակք և երանելք հանդիսանային . իսկ 'ի վերանալ կուսին՝ նա ինքն Քս հանդիսադրէր և կարապետէր հանդերձ հրեշտակօք և այլովք սրբովք 'ի պատուել զմայր իւր : Հիացեալ է այս և երկրաւորս եկեղեցի սրբ՝ ցնծայ և պանծայ այսօր՝ տօնախմբելովն զշքեղաշուք այսր փառաւոր հանդիսի Է անուամբ վերափոխման : Այլ թէ երբ սկիզբն կալաւ տօնելոյ՝ անտարակոյս կարեմք ասել՝ թէ յառաքելոց անտի իցէ : Եւ թէպէտ որոշակի ոչ աւանդի այս , բայց հին աւանդութիւնք եկեղեցեաց և ձայնք սրբց հարց յայտնի ցուցանեն՝ թէ միշտ կատարիւր այս տօն 'ի մէջ եկեղեցւոյ : Եւ արդարև զիա՞րդ հնար էր յետ տեսանելոյ առաքելոց աչօք իւրեանց զայնպիսի սքանչելի վերափոխումն նր՝ անյիշատակ թողուլ զայն : Աստի և որք միանգամ ձայնս յօրինեցին 'ի վր այսր տօնի, որպէս և Լևոն իմաստասէր կայսր՝ անտարակոյս այսպէս համարին . և յաւելուն ասել՝ թէ ամ յամէ տօնեմք զտօն վերափոխման կուսին : Եւ զի ոմանք յայսմ աւուր և ոմանք յայլում կատարէին , մարկիանոս կայսր Ջան եդ՝ զի յամ տեղիս կատարեսցի 'ի 15 օգոստոսի . ոպ գրէ նիկեփորոս կալլիստեան . (յեկեղ . պատմ . ԺԷ . 18 :) Եւ աստ այս հանդէս է այն՝ զոր տօնէ այսօր Է հանուր սրբ եկեղեցին . ըստ որոյ և ընդ անուամբ վերափոխման՝ հաւաքէ զերկուս տօնախմբութիւնս . մին՝ ննջման կմ մահուան կուսին , յորում հոգւով վերացաւ նա յերկինս . և միւսն՝ յարութե նր , յորում մարմնով

նոյն ևս վերացաւ ՚ի նոյն։ ՚Ա. վէր ննջման կամ մահ-
ուան կուսին մարթ է առարկել, թէ որովհետև
ոք կոյսն ոչ անկաւ ընդ անիծիւքն ադամայ, ընդէր
ասլա ձաշակեսցէ զմահ. ասլաքէն ոմն ասէ առա-
քեալն. (հռոմ. Ե. 12.) * ՚ի միոջէ մարդոյ մեղք
,, յաշխարհս մտին, և ՚ի մեղացդ անդտի մահ, և այսպէս
,, յամենայն մարդիկ տարածեցաւ մահ ‖. իսկ արդ ոք
կոյսն ոչ դտաւ հաղորդ մեղացն ադամայ, ասլա և
ոչ մահուան։ ‖Քննեմ նախ՝ թէ մահ ոք կուսին
ոչ էր յանիծիցն ադամայ կամ ՚ի մեղացդ նը, այլ
՚ի հանգամանաց մարդկային բնուն՝ որ բաղադ-
րեալ դոլով ՚ի չորից տարերաց՝ ընդ ինքեան է մահ-
կանացու. ոմն ասէ արիստոտէլ. (դիրք. յայտ. ծննն.)
հայելով առ հասարակ յամենայն բաղադրեալս։ ‖Ասդի
նաև մարդն առաջին ընդ ինքեան առեալ՝ ևս և ընդ
հնորհայ՝ ոչ էր անմահ, այլ ընդ բնուն իւրում մահ-
կանացու. իսկ անմահութիւնն՝ զոր ունէր՝ էր ՚ի մաս-
նաւոր զօրուէ սկզբնական արդարուէ, որում և
նպաստ ունէր իբր զօրացուցիչ բնուն քննադ նկա-
տելոյ զպտուղ ծառոյն կենաց՝ ըստ ասելոյ աբէյն
օգոստինոսի, և ընդ յուշանելոյ սկսելոյ ածաբա-
նի։ ‖Ասդ սմին և ածք կոյսն ունելով զբնուէ մարդ-
կայինն բաղադրեալ ՚ի չորից տարերաց՝ ըստ այսմ
բնուէ էր մահկանացու, և ոչ ընդ որում անկեալ
ընդ մեղաւն ադամայ։ ‖Քննեմ երկրորդ՝ մեռանել
ածք կուսին ընդ արժանապատուհուէ իւրում մտածել՝
ոչ էր ընդ հարկի, այլ ընդ պատշաճի՝ վասն երից. ՚ի՝ առ
՚ի նմանիլ որդւոյ իւրում. զի չէր վայել դերագոյն
լինիլ յայս նիւթ քան զորդի իւր, որ անպարտա-
կան էր մահու։ ‖Երկրորդ՝ վասն արդիւնաւորելոյ.
զի արժան էր նմա նաև մահուամբ և չարչարա-
նօք արդիւնաւորիլ զայն՝ զոր իբր մայր արդէն ու-

նէր լիաւունս առանց մահու ժառանգելոյ, որպէս և քս. ուստի և յօժարութ յանձն էառ ոչ միայն ընդ քնի չարչարիլ, այլ և ըստ քնի մեռանիլ: Երրորդ՝ 'ի զօրացուցանել զմեզ ը̄դէմ մահու. զի բնականաբար ամ̄քն երկնչիմք 'ի մահուանէ. * որքան ծանր է մեռանիլ‖. ասէ կուինտիլիանոս ('ի գիրս բողոքմանց): Օ այս երկիւղ թէպէտ և քս արհամարհել եցոյց, սակայն կարէր ասացեալ լինիլ, թէ նա գոլով տր̄ կենաց և մահու՝ ած և կամեցաւ յանձն էառ զմահ. իսկ սբ կոյսն յօժարութ յանձն առնլով՝ օրինակ եղև մեզ՝ ը̄ նմին յօժարութ յանձն առնուլ զնոյն: Արդ թէպէտ և մեռաւ սբ կոյսն, բայց մարմին նր մնաց անապական. և ինքն յարուցեալ 'ի գերեզմանէ վերացաւ յերկինս. որպ ուսնիմք աստ յառաջիկայդ. ('ի հատ. ԺԲ:)

Այլ յառաջ քան զմատչիլ մեր 'ի Ճառդ՝ արժան է քննել զերիս. նախ՝ թէ քանի ամաց էր սբ կոյսն 'ի փոխիլն աստի. երկրորդ՝ թէ ուր բնակէր մինչև 'ի վերափոխիլ իւր. երրորդ՝ թէ զինչ առնէր: Ի առաջնոյն՝ ասէ հիւպողիտէս (առ եպիփանու երիցու,) թէ յիսուն և ութ ամաց էր սբ կոյսն յորժամ փոխեցաւ աստի. սոյնպ համարի և նիկեփորոս. ը̄դ սմին գնի և 'ի գիրս նմանութեց. երես. 6: Այլ եպիփան, և միքայէլ գղիկաս, և անդրէաս կրետացի, դնեն վաթսուն ամ՝ փոքր մի աւելի կամ պակաս. սոյնպէս դնէ և խորենացին 'ի թուղթն առ սահակ արծրունի: Ռափայէլ բողատերնացի ասէ՝ թէ գտի 'ի հնագոյն իմիք պատմագրի՝ զի սբ կոյսն ընդ ամ̄ եկաց զամս խթ. և յաւելու թէ այսպէս յայտնեցաւ սրբուհւոյն եղիսաբեթի՝ որ 'ի սկոյժնանիոյ յամի տն 1156: Յայսմաւուրսն օգոստ. ԺԵ. դնի ը̄դ խորենացւոյն, թէ 'ի համբառնալն քնի էր

սբ

ոբ կոյան լոր ամայ . և եկաց յետ համբարձմանն
Ջ ք ամ. և ի Ի ամայ հասակի փոխեցաւ յերկինս :
Հասարակաց կարծիք է ըլ եւսեբիոսեան տարե-
գրուե և ըլ կեդրենոսի՝ թէ ոբ կոյան եկաց յետ
համբարձմանն քրի զամս չորեքտասան ըլ յայտ
նուէն՝ զոր յիշէ պօղոս . (գաղ . բ . 2 .) և վերա
փոխիլ նորա եղև ի ժամանակս կղոպեայ կայսե
յաման ոն 48. գոլով նա 63. ամաց. զի ոնզ ասացաք
ի Ճառն ընծայման , երից ամաց էր նա՝ յորժամ
ընծայեցաւ ի տաճարն . եկաց անդ զամս մեծա
ոան , և անտի խօսեցեալ եղև ըլ յովսեփայ . և ի
հասակի 15 ամաց ծնաւ զքն . և եկաց ընդ քրի
զամս 33. և յետոյ զամս 14 . ըլ ոամ ամք 62. և ի
մտանելն ի հասակ 63. ամաց, փոխեցաւ յաստեացս:
Այս ըլ այսմ ոյն քան ռափայելի բոզատերնեայ՝
զոր եդաք՝ ոչ հայի ի վերափոխուէն կուսին , այլ
թէ կեցեալ էցէ նա մինչև ի համբարձուէն քրի
զամս 49. յոր յաւելեալ և զամս 14, գումարի ի 63.
ամ : Այս ըլ այսմ հասարակ աւանդութէ՝ ոյն ա
ղօթաշարք՝ որք կոչին պատակ կուսին, ի 63. ողջոյնս
բովանդակին : Այ երկդին պիտելի է՝ զի հասա
րակաց կարծիք է՝ թէ ոբ կոյան յետ համբարձ
մանն քրի բնակեր յէ՛ր . ըլ որում զրե սոփրոնի
մոս. (ի Ճառ.վերափ.) * բնակեր առ ոբ կոյան յերու
,, ոչ հեռի ի գերեզմանէ ոն ‖ : Այս նիկեփո
րոս (գիրք բ. եկեղ. պատմ .) ասէ , թէ ոբ կոյան
նատեր յերու ի տանն յովհաննու մերձ ի սիոն
մինչև ի մահ : Այայց ըզի ըլ աւանդելոյ աւետա
րանին՝ յովհաննէս պահէր զնա առ իւր և ծառայ
եր նմ , ասէն ոմանք թէ որովհետև յովհաննէս
գնաց յեփեսոս, և անդ եդ զաթոռ իւր, անդր տա
րաւ և զոբ կոյան . ըլ որոյ ասի ի Թուղքն գրե՛ ի

Հարց եփեսոսի 'որ ժողովոյն առ ժողովուրդն կոս-
տանդնուպօլսոյ, թէ * յովհաննէս աւետարանիչ
„ և 'որ ածածին կոյսն մարիամ բնակեցան երբեմն
„ 'ի քաղաքն եփեսոս ‖ : Գրէ և եպիփան. ('ի հե-
րետ. 78.) թէ * մարիամ եկեալ իցէ յեփեսոս,
„ կմ յասիա. և անդ բնակեալ ընդ իւրոյ պահապա-
„ նին յովհաննու ‖ : Այլ այս կարծիք ոչ երևի հա-
ւանական. զի անհաւատալի իմն թուի՝ թէ 'որ
կոյսն թողեալ զանօրինական տեղիս որդւոյ իւրոյ՝
յորս սփոփիւր, գնացեալ իցէ յայլ տեղի հեռա-
գոյն : Իսկ այն բան ժողովոյն չէ վճիռ՝ այլ պատ-
մական յարգութեան տեղւոյն : Աւանդի 'ի բազմաց,
թէ նաև 'որ ղուկաս աւետարանիչ կայր առ նմ 'ի
սպասու՝ իբր հոգաբարձու ընդ յովհաննու : Իսկ զի
սա քաջ գիտէր նկարել զպատկերս՝ ասի թէ նկա-
րեաց և զպատկեր 'որյ կուսին՝ եթէ առանձինն, և
եթէ յո 'ի գրկի. ոպի է և այն որ կայ յեկեղեց-
ւոջ 'որյն մարկոսի՝ որ 'ի վէնետիկ, փայլեալ բզմ
հրաշիւք, զոր և ցարդ իսկ գործէ : Գրէ խորե-
նացին 'ի թուղթն առ սահակ արծրունի, թէ
* սպասաւորէր 'որյ կուսին (նաև) յակոբ արդարն՝
„ 'ի յովսեփայ յանձնեալ. զի և առ յովսեփաւ նա
„ հոգայր ծառայապէս հեզն և արդարն, մինչև 'ի
„ քռէ յովհաննու յանձնեցաւ ‖ : Նորին գիտելի
է, զի գրէ սոփրոնիմոս 'ի բանից՝ ովտիլեայ. * է
„ թէ ասէ կամիցիմք իմանալ՝ թէ 'որ կոյս ածածինն
„ յետ յարութեն քսի յառաջ քան զվերափոխիլ իւր
„ յերկինս՝ զինչ առնէր, (ծանիր՝ զի) յաճախակի
„ այց ելանէր տեղեաց ածային ծննդեան, չարչա-
„ րանաց, և յարութե, և 'ի նոյին հեղոյր զար-
„ տասուս. և համբուրէր ամենայն բերանոյ իւրոյ
„ համբուրէր զայնս ‖ : Այլ գրէ խորենացին 'ի
վե-

վերոյիշեալ թղթի, թէ * «Եթէ կոյսն բնիկ չարչարանս
,, կրեաց և վտանգ ՚ի կայիսափայ, և հալածանս
,, ՚ի հրէից. զի ոչ տային նմա գնալ ՚ի գերեզմանն
,, կալ յաղօթս կամ ՚ի գերեզմանին յայտնանալ, կամ
,, յայլ տեղիս տնօրինականս փրկչին, բայց միայն
,, գաղտնի»։ Ասէ և զայլ ևս հալածանս և վիշտս
կրել ՚ի նմանէ մինչև ցվերափոխին իւրմէնս։ Զոր
աւանդելոյ բազմաց ՅԲՅ կոյսն ունէր առ ինքն զԲՅ
կուսանս. և հրեշտակակերպ խոսակցութիւն իւրով
ոչ միայն սփոփէր զնս, այլ և մարդկեր յառաքինա-
կան կեանս, և յԱծայինն գիտուն, և ՚ի հոգե-
ղէնարձ խորհուրդս, ևս և յԱծաշունչ գրոց տե-
ղեկուն։ Զրբեւն ընդ նոսա ուստեր, զոր ինչ պատ-
շաճ էր իւրում ամենազգաստ սպասկեշտութեանն. և
երբեմն ընդ նոսա գնայր և շրջէր ՚ի տնօրինական
տեղիս իւրոյ միածնի։ Այլ ըստ մեծի մասին
յափշտակեալ յաղօթս, յորս զմայլեալ լինէր երկ-
նային մխիթարութիւք, և վերանայր միտքմամբ
հոգւոյ ՚ի կարօտութիւն տեսութեանն որդւոյ իւրոյ. բայց
այս կարօտ ոչ նեղէր զնա, այլ քաղցրութիւն ինն
սայր նմա սպասել այլ ևս փոքր մի ժամանակ ՚ի
քաջալերուն առաքելոց և աշակերտաց և այլոց
հաւատացելոց, որք ՚ի տառապիլ իւրեանց գի-
մէին առ նա իբր ՚ի գանձարան մխիթարու-
թեան։ * Զոր ինքն Ծբ կոյսն (առ խորենացին ՚ի
,, Թադեոսէն առ սահակ արծրունի) աքանչելի վա-
,, րուք սրբութիւն առաւելեալ (լինէր) քան զամս ոք,
,, ըստ բանին սողոմոնի. բազմ դստերք ստացան զմե-
,, ծութիւն, բայց դու առաւել եղեր. ոչ աւետարա-
,, նեցաւ ՚ի նազարեթ ՚ի գաբրիէլէ»։ Զի գործք
նորա և կեանք նորին այնպիսի էին, զորպիսի ոչ
ոք ՚ի հողեղինաց կարէր ունել կամ առնել՝ հայե-

զօլ 'ի հաճոյս անձուենն, մինչև զմայլիլ 'ի վ̃ր նորա և նոցին իսկ հրեշտակաց, և կալ 'ի սպասու նորա, և զգուշանալ զատամբ ն̃ր. զի նոքա միայն կարեին ճանաչել զարժանաւորութի ն̃ր։ Արդ լցեալ ս̃րբյ կուսին զատհմանեալ չափ աստի կենացս՝ փոխեցաւ յարքայութի երկնից. զորմէ ունիմք խօսիլ յառաջիկայ ճառդ յերկուս հատուածս։ Յառաջնումն զննջմանէ ն̃ր և զփոխմանէ հոգւոյ նորուն յերկինս։ Յերկրորդումն զյարուէ ն̃ր և զվերանալոյ մարմնով ևս յերկինս։

Ըստ որում աւանդեն յայսմաւուրք զանազան ազգաց քրիստոնէից առեալ յաւանդութէ, և 'ի բանից դիոնեսիոսի արիսպագացւոյ. և որոշագոյն ևս մովսէս խորենացի 'ի ճառն վերափոխման որ 'ի թուղթըն գրեալ առ սահակ արծրունի. և ևս անդրէաս կրետացի պատրիարգ ե̃մի. և յոբնաղնոյնմ պատրիարգ ե̃մի. յովհան դամասկացի. նիկեփորոս կալլիստեան. (գիրք. Ե. եկեղ. պատմ. գլ. 22.) և այլք բ̃մք 'ի նախնեաց։ Այլ և տրակ մի վերափոխման ս̃րբյ կուսին, զոր թարգմանեաց ս̃րբն հերոնիմոս. ('ի գիրս նմանուէց. երես. 813. 1։) Ասի և յայսմաւուրս. օգոստ. ԺԵ. թէ յովհաննէս աւետարանիչ գրեաց զննջումն և զվերափոխումն ս̃րբյ կուսին. դուցէ այս էր տրակն թարգմանեալ 'ի ս̃րբյն հերոնիմոսէ։ Մատիցուք արդ 'ի ճառդ։

ՏԱՏՈՒԱԾ ԱՈՒԱՂՈՒ։

Հանփոխման ՝ի նոյնման ՝ի ձիաճինին և փոխման հոփոխ նորա յերկինս։

ՅԱ. ՅԵտ մեծամեծ յաղթուեցեալ՝ զորս սարար զա-
ւելն ընդեմ Թշնամեաց իւրոց՝ տեսեալ
զթշերուն իւր ՝ի խաղաղուե , յիշեաց զտապանակ
ուխտի կտակարանացն , որ կայր ՝ի տան աբեղ-
դարայ. (որ և օրհնել էր զտունն զայն). և կամեցաւ
բերել զնա ՝ի տունն՝ զոր պատրաստեաց վ՚ն նմ .
զի անդ կացցէ և փառաւորեսցի ։ Ա՚ռեալ ապա ընտիր
զբազմութենէ հազարաւոր զօրաց և անհամարս ՝ի
ժողովրդոց՝ հանդերձ երաժշտօք և դուսանօք՝ գնա-
նաց ՝ի տունն աբեղդարայ. և առեալ անտի զտա-
պանակն՝ սկսաւ բերել՝ բարձեալ զայն ՝ի վրայ ու-
սոյ քահանայից . և էած յեղիւ ՝ի սիոն լեառն,
և անդ զետեղեաց զնա փառաւք , և արար նաւա-
կատիս մեծ . կարգեաց և զբազմութեն սաղմոսասաց-
ից և նուագածուաց՝ օրհնութիւք և երգովք փա-
ռաւոր առնել զնոյն . (Բ . Թագ . Ճ. 12 . = 17։)
Այն այս հանդէս վերաբերուէ եղև տիպ կամ
ստուեր վերաւիոխման ՝ի յոյն հուսին . վ՚ր զի-որդին
այ յ՚ն քն , որ պատրաստեալ էր տեղի փառաւոր
յարքայութենէ երկնից վ՚ր տապանակի նմն՝ այ վ՚ր
՝ի յոյն հուսին , յետ կատարելոյ զզոհս յաղթութենէ
իւրոյ՝ զոր արար ընդեմ դիմաց և մահու, տեսեալ
զթագաւորութենի իւր ամրացեալ և խաղաղացեալ
հաճեցաւ փոխադրել զտապանակն զայն շինեալ
յանփուտ փայտից ։ Ա՚յս տապանակ էր ՝ի տանն
աբեդդարայ , այ ՝ի ժողովրդեան հրէից . որոյ վ՚ր

արար

արար նմա ողջագուրմ բարիս ՚ի պատիւ երեսաց նր, ոյք բուն տապանակին՝ տանն աբեդդարայ։ Եւ յորժ մինչչև եր համբարձեալ ՚ի նոսա փափաքելին զօրք երկնից վերանալոյ նորա յերկինս, և անձկանօք ասէին. արի՛ ՚ի հանգիստ քո. արի՛ և Ե՛կ առ մեզ։ Եւ տեսեալ Թէ գալստեամբ նորա Թեպետ և լցեալ լիներ երկինք ՚ի ծայրին փառաց, բայց պակասիւր տապանակ նր, յաւելլին ասել. * արի՛ ՚ի հանգիստ քո, դու և տապանակ կո՛ղ տակի սրբութե՛ քո։ իբր Թէ ասացեալ եր. բաւական է մնալդ այսչափ ժամանակ ՚ի վր երկրի. արի՛ արդ, Ե՛կ ՚ի հանգիստ քո. այծ և ընդ քեզ զմայր քո՝ զտապանակ կտակի սրբութե՛ քո՝ զզարդ արքայութե՛ երկնից։ Եւ իբրև համբարձաւ ՚ի մերս երկինս, և լցոյց փառօք զպալատն արքայութե՛, առաւել ևս սկսան անձկալ հրեշտակք և հոգիք արդարոց ընդունիլ յինքեանս և զմայր նր։ Եւ յանցանել իբր չորեքտասան ամաց՝ ոչ ևս կարէին ՚ի ժուժել՝ ստիպէին և Թախանձէին զՔր՝ փոխադրել և զնա, ասելով. Երբ արդեօք ՚ի՛ր, Երբ ունիս վերայուցանել զնա յերկինս, զի կատարեսցի լիով ուրախութի՛ մեր։ Յիշեաց յայնժամ ՚ի՛ր զհրաշալի տապանակ իւր, և անդէն հրամայեաց պատրաստիլ համօրէն երկնային զօրաց՝ ևս և երից ՚ի՛մին՝ զօրս ածեալ եր ընդ իւր ՚ի համբառնալ իւրում յերկինս. պատուիրեր ետ դարձեալ հրեշտակաց՝ փութալ աղդ առնել առաքելոց, ևս և պօղոսի, և այն՝ ՚ի ձեռն յայտնութե՛, ոյք ասացաք ՚ի վերոյ, զի եկեղեն յեղիւ։

Ը. ՚Ի մերձենալ ապա աւուրց փոխադրութե՛ կուսին, աղդեցաւ ՚ի հոգի նր ամենամեծ փափաք տեսանելոյ զմիածին զօրդի իւր. և Թէպետ զայս փափաք

փաք միշտ ունէր, բայց իբրև թէ զուսպ կայր ՚ի սրտի նր. իսկ յաղթել որդւոյն առաւելաւ յոյժ յոյժ։ Այս այնուհետև ոչ ևս մխիթարէր զնա տա՛ Հարն՝ ուր տեսեալ էր զնա ՚ի քարոզուէ. ոչ մխիթարէր զնա վերնատունն, ուր բազում անգամ եկեր ընդ նմ. ոչ լեառն գողգոթա, ուր ետես զնա ՚ի խաչին բևեռել. ոչ և լեառն Ձիթենեաց՝ ուստի համբառնաւ նա. ոչ մխիթարէր զնա կենցաղալարուԹի որդւոյ մարդկան կամ հրեշտակաց, և ոչ պայծառուն երկնից, և ոչ նոյն ինքն արքայուԹին և փառքն՝ որ պատրաստեալ էր նմա. այլ իբրև բոց սլանայր հոգի նր՝ միայն ՚ի տեսուն ածորդւոյն իւրոյ։ Յերկարել այսր անձկուԹէ հոգւոյ ոգւոյ կուսին՝ հրաման եղև ՚ի ձոնէ առ աւետաբեր հրեշտակն դաբրիէլ դնալ առ նա, և տալ նմա զաւետիս փոխադրուէ նր։ Այս նր փուԹանակի եկեալ առ աբ կոյսն՝ ողջոյն բերկրանաց հետ նմա. ուրախ լեր բերկրեալդ շնորհօք բարձրելոյն. ուրախ լեր տղաւար լուսատահման անքննին բանին ածուԹեն. ուրախ լեր շքեղաշուք հարսն երկնային հովանաւորուԹ ամենանաձ հոգւոյն պարասքողեալ. ուրախ լեր դուստր սիրելի ամենահօր վեհի և դշխոյ պանծալի երկնի և երկրի։ Ո՛ի ահա հաճեցաւ ամենաձք երրորդուԹին փոխադրել զարժանապատիւ տապանդ լուսոյ յերկինս ՚ի վայրն անմատոյց յաւուԹն արիւեանն խորան. ուր համօրէն դունդք երկնային քահանայապետուԹեց, և դումարք աւ՛որ կարօտիւ սպասեն մեծափափաք անձկանօք քումդ սխրալի տեսլեան։ Այ՛կ պատուեալդ և փառաւորեալդ, ՚ի կներ բողեալդ և բարեբանեալդ ՚ի շրԹունս աւից՝ մայրդ էմմանուէլի. Այ՛կ ցանկալիդ երկնաւորաց և երկրաւորաց, և սլսակդ յոդնանկատ ամ

արա-

արարածոց։ Այլ զի Թեկղեայ վերին արքայութիւնն
քան լսեալ բովանդակեացի. Եկ, իշխեա և Թա-
գաւորեա ըստ որդւոյ քո յաւիտեան՝ ի վեր ասի, ևս
և՝ ի վեր մեր։

Օ այս առացեալ հրեշտակին և տեսեալ զամենա-
բերկրալի հաճոյն կուսին՝ զարձաւ առ առաքինի
իւր. և ահա կրկին ևս հրաման՝ ի պատրաստի
կալ ամին նմ. յայտ արարեալ Թէ որդին նոյ ևս
ինքնին հանդերձեալ է ածային փառաւք իջանել առ
մայր իւր։

Ե. Յայնմ վայրի յանկարծակի հասին յերկինս քա-
ղաք՝ ոբ առաքեալք՝ ի ջրից ծագաց ծի. ըստ որս
և Եօթանասունքն ըստ յայսմաւուրաց. օգոստ. ԺԵ.
և տեսեալ զիրեարս՝ ի քաղաքի անդ յանակնու-
նելի ժամու՝ զարմացան. Հարցանէին ցմիմեանս՝
Թէ զիարդ եղև այս գալուստ նոցա, և զինչ ու-
նիցի յուցանել. վաղվաղակի ասպ դիմեցին առ
մայրն մխիթարուԹիւն, որ յաճախ լուծիչ էր տարա-
կուսանաց նմ. և տեսեալ զնա լցան խնդուԹիւն և
ուրախուԹիւն, և յարգական խոնարհուԹիւն պատեցին
զնովաւ իբրև զձագս աղաւնեաց։

Ա. Այլ՝ ի փափաքիլ նմ առնուլ՝ ի նմանէ լուծումն
տարակուսանաց, ծանեան՝ Թէ հանդերձեալ է նա
փոխիլ յաստեացս, և Թէ վաղ ժողովեալ իցէ ածք
զնա առ նա։ Այլ ահա հատան և լքան խորհուրդք
նմ. սկսան յոգւոց հանել, և արտասուալից հա-
ռաչմամբ հեծել և ճչել։ Հայէին առ միմեանս
և ձայնէին աղիողորմ. աւաղ մեզ ետղարիք. այս-
պէս եղև վախճան ուրախուԹե սրտից մերոց. ի
մեկնիլ ի մէնջ ցանկալի վիԹխին մերոյ և նա՝ ևս
Թող մեզ փոխանակ վշտաց մխիԹար զամենօրհ
նեալ մայրդ, և ահա գտանիմք զուրկ և՝ ի տեսու-

Թէ

Թէ և՝ ի մխիթարուէ քումմէ։ Օ այս ասէին, և յերեսս ոչ ածածկին հայելով հեղձամղձուկ մնալին։ Ա. սի յայսմաւուրսն. օգոստ ԺԵ. և Ի. Թէ նախ եհաս անդր ոչ յոլհաննէս աւետարանիչ. և՝ ի հրամայել ոչխ կուսին՝ մատոյց՝ ի տան անդր զոր պատարագն, և հաղորդեաց զնա. և՝ ի նմին ժամու ժամանեցին և ժողովեցան առ նա առաքեալքն։

Հրամայեաց ապա՛որ կոյսն աղդ առնել ոչխ կուսանաց՝ որք սպասաւորէին նմա, և կային՝ ի խորտոս նր. և՝ ի ժողովիլ նց առ նա, զի կոյս նց՝ թէ ահա մերձ է ժամ գալստեան նորն. զի նա խոստացաւ ինձ ասէ գալ՝ և առնուլ զիս առ ինքն։ Ա՛որ յետ բջմ յորդորական բանից, հրամայեաց նոցա լուցանել զլապտերս իւրեանց հանդերձ մոմեղինօք. զի նմքն վառեալք երևեսցին՝ ի գալստեան նորն։ Ա՛որ՝ ի Թուղթն խորհնացւոյն առ սահակ արծրունի, և յայսմաւուրսն օգոստ. ԺԵ. և Ի. Թէ յայնմ վայրի յոլհաննէս աւետարանիչ առեալ տախտակ մի կնիպարի, զոր ձևացուցեալ էր՝ ի պատկեր տիրամօրն՝ ետ՝ ի պետրոս. և պետրոս աղաչեաց զոր կոյսն՝ նոյնպէս և զբն պօղոս՝ օրհնել զտախտակն զայն։ Ա՛որ զոր կոյսն օրհնեաց՝ և եդ՝ ի վր երեսաց իւրոց, և նկարեցաւ՝ ի տախտակի անդ կերպարան կուսին ըստ նմին։ Ա՛ կատարել այսր և՝ ի պատրաստել աւուրն՝ պատրաստէին յերկինս և նահապետք և աւք երկնայինք, և հայէին առ սոսա՝ ցուցանելով զվսեմութիւն իւրեանց յընդունել զոր կոյսն առ ինքեանս։ Ա՛այլ որք ժողովեալ էին անդ՝ ոչ ցուցանէին զայդ վսեմութիւն, այլ մտմտէին թէ զնորդ ունիմք բաժանիլ՝ ի տեառնէ այնպիսի մօր. այս ցաւ ոչ յանհնարինս

մեծ

մեծ էր քան զփափաք նահապետաց և հրեշտակաց ։ Ահա կարելով ապա հանդուրժել այսմ, հեղուին զվտակս արտասուաց, և տորրէին սիրտք նոցա. խօսէին առ նա դարձեալ թաղծագինս. ով մայր մեր, ով թագուհի մեր, ով ցնծութի մեր, ուր թողուս զմեզ, ընդէ՞ր գնաս. եթէ գնաս, տար և զմեզ ընդ քեզ. զիարդ հնար իցէ մեզ առանց քո կալ 'ի վ̃ր երկրի։ Դու թռանխս տիրուհի տեսանել զորդի քո և վայելել զնա յաւիտեան. մեք 'ի վաղուց զրկեցաք 'ի նմանէ, և քև մխիթարէաք. և այժմ 'ի մեկնիլ քո 'ի մէնջ՝ զինչ արասցուք թշուառականքս. դու էիր ապաւէն մեր և պաշտպան, զինչ մնայ մեզ այսուհետև առնել, բայց եթէ անմխիթար լալ 'ի կեանս մեր և ողբալ։ Խօսեցաւ ընդ նոքօք ա̃ծածինն և ասէ. չէ ձեզ արժան որդեակք իմ այդպէս մորմոքիլ և մորմոքել զսիրտ իմ. գնամ ես այժմ, եկեսջիք և դուք յետ սակաւուց զհետ իմ. գնամ ես և լինիմ բարեխօս վ̃ն ձեր. այլ դուք զօրասջիք կատարել զհրաման որդւոյ իմոյ. եթէ աստ մխիթարէի զձեզ ներկայութ̃ իմով, անդ լինելովս՝ մխիթարեցից զձեզ բարեխօսութ̃ իմով. զի զամէն զձեզ ունիմ յանդիման աչաց իմոց՝ ով մայր զորդիս։ Նա արդ պատուիրեմ ձեզ՝ զոր պատուիրեաց որդին իմ. յայսմ ծանիցեն ամ̃ն՝ թէ իմ որդիք էք՝ եթէ սիրիցէք զմիմեանս։

Է. 'Ի խօսիլ ն̃ա ա̃ծածնին զայսպիսի բանս՝ պայծառացան երեսք ն̃ր և բոլորովին 'ի զուարթութի̃ դարձան։ Նա յայնմ վայրի սկսան հրեշտակք եղանակել քաղցր ձայնիւ յաներևոյթս. և 'ի բարձրանալ ձայնից ն̃ց՝ երևեցան անդէն բազմութիւնք յառաջընթաց զուարթնոց. երևեցան և գունդք նահապետաց և մարգարէից. և ամ̃ն խնդալից

բերկ-

քերկրուք և զմայլմամբ հայեին ՚ի նա ։ Յառա-
ջեաց անդէն ադամ, և բարբառեցաւ առ նոքա
կոյն. մի՛ զաւակդ օրհնեալ. դու իմ միխիթա-
րուի, դու աւետիս փրկուե մօր քումմէ եւայի, դու
ընչեցեր զպատիժ անհնազանդուե մերոյ. մեք
փակեցաք զդուռն դրախտին, դու զդուռն երկ-
նից բացեր. մեք մոլորեցաք, դու Քանապարհ
փրկուե ցուցեր. մեք կերաք ՚ի ծառոյն գիտուե
և մեռաք, դու զծառն կենաց ետուր մեզ. մեք
եղաք սանդուղք իջանելոյ մարդկան ՚ի դժոխս,
դու եղեր հուն և անցք ելանելոյ նոցա յերկինս ։
Ա՛ահն որ ապականեաց զմեզ, լիցի քեզ իբր նա-
ւակ անցանելոյ ընդ ծով Յիս ՚ի նաւահանգիստ յա-
ւիտենական կենաց ։ Արդարև քեզ դուստր իմ՝
որ ոչդպիսի մայր եղեր, և չոդպիսի պատիւ
բարձրացար ։ Ահաւասիկ և դասք նահապետաց և ե-
րանելեաց բարբառիլ առ նա. մի՛ երանելի՛դ աւիշն,
որոյ միջնորդուք կատարեաց ա՛ծ զա՛մ՝ զոր խոս-
տացաւ մեզ և ՚ի ձեռն մեր, և այժմ լցան փա-
փագք մեր. արի՛ արդ կո՛յդ գեղեցիկ, արի՛ ել
առ մեզ ։ Ո՞չոդպիսիս բարբառէին առ նա և հը-
րեշտակք. առանց քո անզարդ մնայ արքայութի՛ն
երկնից. առանց քո անկատար է ուրախութի՛ն մեր.
առանց քո ոչ լրանայ երանութի՛ն երկնաւորաց ։ արի՛
ել ՚ի հանդիստ քո, և հանգո՛ զկարօտ մեր. տե-
սանել փափաքէին զմիածինդ, ել և տե՛ս. դուք
աւազակ և նա առ քեզ, ընդ որում խոստացեալ էր
քեզ ՚ի հանդիսի աստ էին ընդ առաքեալն և բազմք
յաշակերտաց, ընդ որս և տիմոթէոս աշակերտ պօ-
ղոսի առաջին եպիսկոպոս եփեսոսի, և դիոնեսիոս արիս-
պագացի. ընդ սոսին և ա՛ծարեալն հռոմոս. մի՛
ասէ յոբնաղ պատրիարգ եղիցի ընդ վկայելոյ յովհան-

նու

նու զամասկացւոյ։ Ի բազբառիլ ապա հրեշտակացն առ նա եբ կոյն, յարուցեալ Հռոբէաս՝ խօսեցաւ զբանս հիանալիս առ հրեշտակն և առ առաքեալն, և առ նա ինքն եբ կոյն. մինչև ըստ վկայելոյ յայսմաւուրսն (յօգոստ ԺԵ.) * զՀրեղէն ,, լեզուան զարմացոյց ‖. և այս՝ յաւէտ ներքողելոյ տիրամօրն։ Նա մինչդեռ ապրեալ և հիացեալ կային ամբոխն՝ յանկարծակի ծագեաց լոյս սաստիկ ի վերնատան անդ. և երևեցաւ անդ արեգակն արդարուն միածին որդին՝ պարառեալ ի սերովբէից և ի քերովբէիցն. զոր և աւքն յայտնի տեսին, և սքանչացան. տրտմութիւն նոցա խառնեցաւ ըստ ուրախութեան. և անձկութի սրտից նոցա յափշտակեցաւ ի զարմացումն. ոչ վկայեցին որք անդն էին տիմոթէոս և դիոնեսիոս. (դիրք. յայլ. ածային անուանց. գլ. ե.) զորս և յառաջ բերէ յօբնատ, և դամասկացին։ Յորժամ երևեցաւ անդ միածին որդին՝ անուշութիւն իմն հայեցաւ յերեսս ամենօրհնեալ մօրն. և ցուցեալ զնա հրեշտակացն և ամ ՚ոբց՝ ասէ. տեսանիք զդա. դա աւասիկ ձիմայլիտ մայր իմ, մայր անբիծ և անարատ. ՚ի դմանէ և դովեաւ առի զմարդկայինս բնութի. դա զգեցոյց ինձ զմարմինս զայս. դա անոյց զիս. դա է նա, որ միայն հաճոյացաւ ինձ ՚ի մէջ բազմաբոյս ծիս։ Խօսեալ ապա և առ նա ինքն մայրն՝ ասէ. Ես մայր իմ՝ ես աւ նա. զիս կամէիր տեսանել, ես և տեսս, և վայելեա զիս յաւիտեան. ես մուտ յանձառ փառս իմ. և լեր ըստ նա ՚ի փառս քո՝ զոր պատրաստեցի քեզ յերկինս. արի ես մերձաւոր իմ, գեղեցիկ իմ, աղաւնի իմ, կատարեալ իմ, ես ՚ի լիբանանէ. արի ես, զի ահա ձմեռն էանց, և եհաս գարունն. ես և կաց ըստ ինձ ամէն իմմէ, և

իշխեա՛ի վէր ամի ։ Ասէ՝ թէ կոյն յաւիտենական՛ ի տեսութէն միածնին իւրոյ՝ բարբառեցաւ առ նա՝ ասէ որդեա՛կ իմ և ա՛ծ իմ ։ Եւ յաւել՝ նէ զայս՝ սէր նէ յանլափս սաստկացաւ ։ և յեղանակել նորոգ երկնային զօրաց վերջս հիանալիս ։ և՛ ի նոսա զնել նոյ զնոսա զմայլեցուցիչս ։ յառաւել ապաւկուե սիրոյ աւանդեաց՛որ կոյն զՀոգին ասելով առ միածին իւր ։ ՛ի ձեռս քո աւանդեմ զՀոգի իմ ։ ընկալ զոր սիրեցեր ։ ա՛ռ՝ զոր յա՛մ արատոյ պահեցեր ։ և փոխադրեա՛ զնս ա՛ռ քեզ ։ զի որ ես զաւակդ որովայնի իմոյ՝ անդ և ղեց և ես ե՛ք քեզ ։ Եկիր առ իս ո՛ղ և խոստացար ։ գա՛մ և ես առ քեզ՝ ո՛ղ և կամեցար ։ յանձն առնեմ քեզ և զմարմին իմ, քեզ տա՛մ և ո՛չ Հողոյ ։ Եւ զի յառաւելուե՛ սիրոյ աւանդեաց՛որ կոյն զՀոգի իւր, Հնարկ աւանդուե՛ն և եկեղեցւոյ, թէ՝ որ կոյն ո՛չ մեռաւ ՛ի հիւանդուե՛ն, այլ ՛ի սիրոյ ։ Յաւանդել՛ոյ կուսին զՀոգի իւր՝ բազմութի՛ք երկնային զօրաց կառք կաղմեցան ելից՝ նէ, և սկը՛ սան ամբառնալ զնա յերկինս ։ Եւ զի գերագոյն ինն խմանալի կարգ կոյ՛ ի մէջ նո՛ յոյն կարգ դասաւորեալ՛ը դասու անբաւ բազմութե՛ իւրեանց վերանային ։ Ամանք յառաջընթաց լինելով՛ ի վեր ՛ի յերկինս սլանային՛ ի պատրաստեալ և՛ ի բանալ՛ը դրունս երկնից, և այլք որք զկնի նո՛ երթային՝ աղաղակէին համբարձէ՛ք զդրունս ձեր՛ ի վեր ։ համբարձ՛ցին դրունք յաւիտենական, և մտցէ տապանակին տէր ։ Համբառնան և բացան դրունք վերին, և եմուտ օդոստատուկուհին՛ ի վայելս ան՛ճառ և անհաս փա՛ռաց տէրունէն ։

Ո՛ այսոսիկ համառօտիւ ինն նկարագրե՛լ նարե՛կացւոյն՝ մատչի՛ ի փառաբանուե՛ կուսին ասելով։

* խնդա և ուրախ լեր յարկ անձառ ծննելոյդ ի
,, քէն անեղդ այ. որ ի նմին որդւոյն քո խնամոց
,, հրաշալարդ փառօք ամբարձար ի կատարաւարտ
,, ման վերնայինն երկնի լուսապես. և Թևօք Թե-
,, Թևուէ հոգւոյն սլացեալ յիմանալիսն վերաչուէ-
,, ցեր ի կայանս հանդչիլ. ուստի և զանհասանե-
,, լին իշխանականս իմացման, զանկապտելին զգա-
,, յուէ սրտի նկատման՝ վայելս անտեսելոյն անձնա-
,, պես հոգևապրիկեալ, զանեղծին փառաց ձևսուն
,, քեզ սեպհականեցեր՝ որ ոճծածին ։

Է. Նոյն առաքելոյն գասք՝ և որք ըստ նմա, ակն յեր-
կինս կառուցեալ անքարբառ ղկնի Հայելին, և յատ-
շուէ ըմբռնեալ լինելին, և գրեթէ ընդարմացեալ
Թմրելին. Հայելին ապա առ միմեանս, և ոչ կա-
րելին ասել լինչ. և դարձեալ յերկինս հայելով ա-
սելին. ով լուսեղէնն երկինք, չէր քեզ բաւական
փառք միածնի որդւոյն այ. զնորոգ ապա յաւիշտա-
կեցեր զփառս մեր, և զդանձ մեր, և զկեանս
մեր. յաւիշտակեցեր այն, և ահա գայ առ քեզ փառ-
քըն լրբանանու. (եսայ. Ի 13։) Օ այսպիսիս ասելին,
և յանձառելի հանդէս վերանալոյ կուսին ակնար-
կելով հիանալին, Նա տեսեալ զինքեանս որկեալս
այնուհետև ի կենդանի տեսուԹէ մերն միԹԹա-
լուէ՝ հալելին և զեղուին զմարմնովն նէ։

Պրի յայսմաւուրս. (օգոստ. ԺԵ.) Թէ ի ննջման
սրբոյ կուսին՝ հոգի նորա * երևեցաւ սպիտակ
,, առաւել քան զձիւն ։, և պայծառ քան զարե-
գակն. ընդ որ հիացան առաքեալքն. յայնժամ
ակսաւ ասել պետրոս առ տէր. * տէր ա՛ուի և մեր
,, քո միածին որդի, ի մարդկանէ ոչ է քատակել՝
,, հոգւով պայծառ արփւոյ նմանեալ ոչ մեր քո
,, անարատի։. և առէն զպնդնի՝ Թէ հոգւոյ է պայ-

ծառ

ծառ լինիլ և սուրբ՝ քանի՛ ևս հոգւոյ մօրն լուսոյ։ Եւ ապա սկսան հանդէս կատարել. ոչ զհանդէս ուրախութեան՝ զորպիսի կատարէին հրեշտակք և նոքա յերկինս, այլ զհանդէս յուղարկաւորութեան և թաղման։ Իսկ և սուրբ կուսանքն որք անդ ժողովեալ էին՝ առժամայն ամփոփեցին զսուրբ մարմինն նորա 'ի սպիտակ կտաւս, և եդին զնա 'ի գագաղի։ Եւ առաքելոցն բարձեալ զայն տանէին 'ի գերեզմանս։ Ասի թէ հրէայք՝ որք անհնարին նախանձու վառեալ էին ընդդէմ սրբոյ կուսին, իբրև տեսին թէ տանին զնա գագաղաւ՝ առաւել ևս դրդուեցան. և մին 'ի նոցանէ կամ ըստ այսմաւուրաց օգոստ. ժե. մին 'ի քահանայից սոփոնիաս անուն, զոր և յիշէ խորենացին, յանդգնեալ մերձեցաւ 'ի գագաղն առ 'ի քարշել և ընկենուլ 'ի վայր. և առժամայն չորացան ձեռք նորա որպէս գրեն դամասկացին և մետափրաստէս. և կամ որպէս գրէ խորենացին հատան բազուկքն, և կախեցան զգագաղէ. այլ 'ի զղջանալն նորա՝ եգիտ զառողջութիւն։ Եւ այլոց ևս տեսեալ զայսպիսի հրաշս՝ լցան սարսափմամբ, և դարձան 'ի հաւատոյ՝ լսելով բանիցն պետրոսի և պօղոսի, և մկրտեցան անդի։ Իսկ և առաքեալքն անկասկած մնացին, և աներկիւղ թաղեցին զսուրբ մարմին կուսին 'ի գերեզմանի՝ որ էր 'ի գեթսեմանի. որպէս վկայէ անդրէաս կրետացի պատրիարգ երուսաղեմի, և այլք։ Կացին անդ առաքեալքն զաւուրս երիս, և երգէին զերգս սաղմոսաց. ձայնակից եղեն նոցա և հրեշտակք փոխ առ փոխ պատասխանելով. և զի զկնի երից աւուրց ոչ ևս լսեալ եղև 'ի հրեշտակաց քաղցրալուր այն սաղմոսերգութիւն, ինքեանք ևս լռեցին։

ՀԱՏՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ.

Հանգստանալն յառնելոյ որ մեռանին, եւ ծնանելոյ նոր մարմնով եւս յերկինս:

Է. 'Ի հանդիսի վերափոխման սրբյ կուսին, նոյնպէս և 'ի թաղմանն՝ ոչ գտաւ անդ սրբն բարթուղիմէոս առաքեալ, որպէս գնէ խորենացին. զի երթեալ էր աստ 'ի Հնդիկս ընդ Թովմայի. թէպէտ վն Թովմայի ասեն զայս. ոչ զի անարժան ինչ էր, այլ զի կամեցաւ ած միջնորդութբ նր հաւաքել մեծ ինչ, քն զպատուել սրբյ կուսին մարիամու. Քանզի յե՟րդում աւուր անդ յորժամ դադարեցաւ ձայն երգոց հրեշտակաց՝ եկն եհաս սրբն բարթուղիմէոս. և լուեալ զեղեալսն՝ սկսաւ լալ և մորմոքիլ՝ թէ զիարդ զրկեցաւ ինքն 'ի ներկայութէ ննջման և փոխման սբ ածածնին: Եւ թէպէտ մխիթարէին զնա առաքեալքն, բայց նա ոչ դադարէր յողբալոյ: Հուսկ յետոյ բզմ թախանձանօք աղաչեաց զնս՝ զի բացցեն զգերեզմանն նր, որպ զի և ինքն տեսցէ զսբ մարմին նորին: Ո֊ րքէ առաքելոց յաղաչանս նր՝ բացին զգերեզման սրբյ կուսին և ոչ տեսին 'ի նմ զսբ մարմին նր, այլ միայն զմաքուր կտաւսն՝ յորս պատեալ եղև. յորոց բուրեաց հոտ անուշուէ, և զմայլեցոյց զայնոսիկ՝ որք կային անդ: Ապա ուշ մնացին առաքեալքն 'ի վր այսր սքանչելեաց, և անտարակոյս եղեն, թէ որդին ան՝ որ 'ի մարմնոյ նր առեալ էր զմարմին, և լեալ էր մարդ յորովայնի նորին՝ յարուցեալ է զնա յառաջքան զյարութիւն

հա-

հանուրական , և վերափոխել յերկինս. ոչ և ազգ եղև նոյ ՚ի վերուստ ձայնիւ հրեշտակաց. զայսմանէ որոշագոյնս գրէ խորենացին ՚ի Թուղմն առասպհակ արծրունի ։

Պոհացեալ ասպա առաքելոցն՝ և փակեալ զդերեզմանն՝ մեկնեցան ՚ի միմեանց, և գնացին իւրաքանչիւր ՚ի գործս իւր ։ Այլ յառաջ քան զմեկնիլն աղաչեաց զնոսն բարթուղիմէոս զառաքեալսն տալ ինքեան զպատկերն զոյն զկիսպարեայ , զի նովաւ մխիթարեսցի ։ Այս նոքա զիջեալ յաղաչանս նորա՝ ետուն նմ զայն , և նա տարաւ ՚ի հայս . ըստ որում գրէ խորենացին ՚ի վերոյիշեալ Թղթի . և յայսմաւուրս . (օգոստ. ի։) Տէս և ՚ի պատմութ հայոց. (բ. 19. 4։)

Է. Յայսմ հրաշափառ վերափոխման սբոյ կուսին, երեք ինչ տեսանի ։ Առաջինն է՝ թէ մարմին նորա կիմ աւասիկ՝ նա ինքն միայ անապական ՚ի գերեզմանի պաւուրս երիս. երկրորդն է թէ յարեաւ ՚ի մեռելոց. երրն է թէ վերացաւ մարմնով յերկինս։ Ո՞ր անապական միալոյ նէր վկայէ ընդհանուր եկեղեցի ՚ի յայսմաւուրս պանագան աղաչայ քրիստոնէից. վկայեն և հարք ։ Այն օգոստինոս (՚ի ձառն վերափոխ . կուսին) ասէ. * դիտեմք՝ զի ,, յն կարօղ է ամի՝ այն որ ասաց գանձնէ՝ տուաւ ինձ ,, աւ իշխանութ յերկինս և յերկրի . ուրեմն եթէ ,, կամեցաւ անխախտ պահել զմայրն ՚ի կուսութ, ,, էր ոչ կամէր անապական պահել զնա ՚ի փտու- ,, թէ ։ Այս յաւելու զպատճառն . * անվայել է ,, ասել, թէ այն ամենազօր մարմինն՝ յորմէ մար- ,, մին հաւ բանն ամ՝ կերպակուր լեալ իցէ որ- ,, դանց ։ Այս դարձեալ ասէ ՚ի նմին ձառի. * որ ,, ՚ի կենդանութէ պատուեաց զմարիամ յղանալ

,, լով ('ի նմանէ առանց ապականութե), բարե-
,, պաշտութբ հաւատալի է՝ թէ մասնաւոր պահ-
,, պանութբ և առանձին խնամով պատուեալ իցէ
,, զնա 'ի մահուան, ազատ կացուցանելով զնա 'ի
,, փտութէ և 'ի հող դառնալոյ։ Եւ դարձեալ ասէ
անդ. * նա որ կարաց 'ի ծնանելն 'ի նմանէ՝ կոյս
,, պահել զնա, կարաց անապական ևս պահել
,, զնա ։ Եւ դարձեալ ասէ. * ազատ էր մարիամ
,, յայնպիսի ապականութէ, յորմէ ազատ էր յո բր-
,, նութբ. և զայս յայտնի եցոյց յո, յորժամ վե-
,, րափոխեաց զնա. զի մարմին յոր՝ մարմին մա-
,, րիամու է ։ Եթէ նր է՝ ապա ոչ զիւրն պահ-
եաց անապական, սոյնպէս և զնորայն ։ Եւ թէ-
պէտ վճիռ ապականութեն եդեալ էր 'ի վր ամ
մարդոյ, բայց յայսմ պարտուց ազատ գտաւ ոբ
կոյսն ա վերոյգրելոյդ. մանաւանդ թէ նոյն ինքն
պարտաւորութեն մահու պատկառեալ հեռացաւ 'ի
նմանէ, ոչ գրէ նարեկացին յասելն. * պատկա-
,, ռեաց ('ի նմանէ) ամօթով պարտիքն մահուն ։
Սբն աթանաս. ('ի ճառն՝ որ 'ի վր ածածնին)
ասէ, թէ որդին այ * զմայրական մարմին սբյ կու-
,, սին . . . զգածանեալն յամենայնբ հոգւոյ նր,
,, զոր իբրև զամենահաճոյ և զամենամաքուր տա-
,, ճար կազմեաց, ազատ պահեաց յապականութէ
,, և 'ի հող դառնալոյ. և էած յանանց փառս ար-
,, քայութե ։ Անդրէաս կրետացի ասէ. * ոչ մար-
,, մինն քի՝ որ առեալ եղև 'ի կուսէն՝ մնաց անա-
,, պական, սոյնպէս և մարմին կուսին՝ յորմէ էր
,, մարմինն քրիստոսի մնաց անապական ։ և
սբն գերմանոս ասէ՝ թէ * մարմին սրբոյ կուսին
,, ոչ ետես զապականութիւն ։ Սոյն ասեն և
այլ ոբ հարք. գրիգոր նիւսացի, եփրեմ խուրի,
և

և այլք. Լաս և ասէին նոքա, որք միանգամ գրե-
ցին Հառս ի վերոյ փոխանակ ասացն. Թէպ
զորս աւանդեցին հարքն մեր ի Հառս, և կերդս,
և ի շարակոնս. Ըստ սոսին և ասէն եպիփան. զոր-
մէ գիտելի է, զի սա վասն բանաւոր բարձրացու-
նելոյ ձայն կոյսն՝ կարծեցուցանէ զանձն ոչ հաւա-
տալ մահուան սմին կուսին. * ոչ իշխեմ (ասէ) ա-
,, սել Թէ մեռաւ ‖. և ապա յարէ * եթէ մեռաւ
,, և ես, ոչ եառնս զապականութիւն ‖։ Վասն
ձգեալ էր զձեռն իւր ի ծառն կենաց՝ անապական
պահէր զմարմին իւր. իսկ արդ ասէ կոյսն մարիամ
ոչ միայն ձգեաց ի նա զձեռն իւր, այլև յորովայ-
նէ իւրմէ բուսոյց զնոյն, ապա ըստ այսմ անապական
պահեաց զմարմին իւր։

ըստ. Վասն ձշմարիտ է անապական մնալ մարմնոյն զոր
կուսին, սոյնպէս ձշմարիտ է և յառնելն նր ի գերեզ-
մանէ՝ ըստ գաւանելոյ ասէ եկեղեցւոյ և ըստ հաստա-
տելոյ ասէ հարց։ Այսն աթանաս (ի բանն որ ի
վերն աւետարանին. յաղագս ասէ) ասէ. * ոչ
,, միայն քո՝ որ ծնար ի կուսէն՝ յետ մահու յա-
,, րեաւ և թագաւորեաց, այլ և ծնողն նր, որ ըզ-
,, տուգանս մահու ըստ իրջանիկ անմահութե փոխա-
,, նակեաց. և այժմ զգեցեալ զանապականութի-
,, մարմնոյ՝ նստի յերկինս ըստ որդւոյ իւրում իբրև
,, թագուհի և տիրուհի։ Թուղթ ինչ՝ որ ընդ
ծայի յոմանց դիոնեսիոսի արիսպագացւոյ, գրի՝ Թէ
* կոյսն մարիամ... Թէպէտ և ձաշակեաց զմահ,
,, Թէպէտ և իբրև զմարդ եդաւ ի գերեզմանի,
,, բայց յաղթանակեաց զսահման բնութե, և
,, բարձրացաւ. և ոչ կարաց ընկալել զնա գերեզ-
,, ման և մահ ընդ իշխանութե իւրում. զի յարեաւ
,, նա ի գերեզմանէ ‖։ Ո՞ասն զայս պէսպէս

վկայուԹք և պատմուԹք հաստատեն միԹոյեվդղե-
կաս. (յերդ մասին տարեգրուե.) և նիկեփորոս
կալլիստեան. (ա. գիրք. եկեղ. պատմ. գլ. լե։)
Օ սոյն հաստատեն և ամ՛ոծ ապեանք ըՀնդկ այնմ
կանոնի, Թե *այն ձիրք՝ որ շնորհի՛ Էջ՝ ոչ ե՛ զը-
,, լանալն Էջ կուսին ։ Նոկ արդ բազմայ շնոր-
հեցաւ յաուներ, ապա և առաւել Էջ կուսին։
Ա՛ստ աւանդելոյ Էջ հարց բազմաց՝ յովՀաննէս
աւետարանիչ առանց ապաւկանուե յարեաւ. Եթե
նա՝ որ ծառայեր Էջ կուսին՝ այսպէս յարեաւ,
ասա քանի՛ առաւել Էջ կոյսն։

Ք. Ա. յո՝ ոչ միայն յարեաւ փառօք, այլ և փառա-
աորեալ մարմնով վերացաւ յերկինս։ Ա՛ստի ասէ
Էջն գրիգոր նարեկացի. *գլխաւորեալ այսօր Է
,, քեզ զհմանալին փարԹամ մեծուԹի, որ սլաց
,, ցեալ հասեր Է բարձունս երկնից իբր անբն-
,, դունակ առապականուԹեան և մահու լուծման
,, մարմին ։. և դարձեալ ասէ. *հողեղէնն հաս-
,, տուճած (դոլով, ՚ի մարմին գոլով), Է քրով-
,, քեից աղի հանգուցար ։. յայս հայի և այն
զոր ասէ. *երագ ընԹացիւք հետոց Է վայրն
,, անմատոյց յարիւին վերին ընծայեցար ։ Օ այս
ցուցանեն և նախադրեալ վկայուԹիդ ըստ դա-
,, ւանելոյ ըՀանուր Էջ եկեղեցւոյ։

Ա կայեն այսմ և միտք մարդոյ. զի չէր արժան
զայսպիսի ակն պատուական Թողուլ յերկրի,
այլ յեառուլ յերկինս. կամ ըստ օգոստինոսի ասացիդ
(Է Հառ վերադ.) *զայսպիսի պատուական
,, գանձ լաւագոյն է երկնից պահել քան երը
,, կրի ։ Ա՛նաւանդ զի ոչ ասէ դամասկացին,
որովՀետև երկինք էր մարիամ՝ արժան էր յերկինս
ղետեղել։ Ա՛Թէ Էջ կոյսն Հիւրընկալաւ զՓրն Է ի
մարը

մարմին իւր մարմնով, որ ոչ հիւրընկալցի զնա յերկինս հանդերձ մարմնով. ըստ որում ասէ տա-
մասկացին : Աբ կոյսն ի ծնանիլն զքս՝ էառ զնա
ի գիրկս իւր մարմնով, և անոյշ զնա նոյնպէս ի
գիրկս իւր մարմնով. և յետ իջուցանելոյ զնա
ի խաչէն, ընկալաւ դարձեալ զնա ի գիրկս իւր
մարմնով. ապա արժան էր՝ զի և որդին իւր ա-
նուցու զնա ի գիրկս իւր մարմնով յերկինս : Ա-
պաքէն Աշմարիա մայր էր աբ կոյսն. ապա արդար
ինն էր, զի անդ իցէ մարմին մօրն՝ ուր էք մար-
մին որդւոյն. կամ այսպէս ասացից, անդ իցէ
մայրն մարմնով, ուր էր և որդին մարմնով : Աբ
կոյսն ի ձեռն մարմնոյն՝ զոր ետ որդւոյն, պատ-
ճառ եղև ուրախութեանն երկնից. ապա արժան
էր և իւրով մարմնով գնալ անդր : Այս ամ
ինքն լուսն կայսր իմաստասէր ասելով. * մարիամ
,, հանդերձ տաղաւարաւ մարմնոյ իւրոյ փոխեցաւ
,, առ որդին. և յոդիւ անմահնալի ընկերութեանն
,, և կենակցութեանն՝ անձկադոյնս և կատարեալ
,, գոյնս միացաւ ընդ նմա ‖ : Հաստատեն բնմք,
ընդ որս և բեզա և անսելմոս, թէ որք յարեան
ի խաչելութենէն քրի՝ ընդ նմա վերացան յերկինս
մարմնով. ընդ որս ապա և աբ կոյսն ոչ վերասցի մար-
մնով յերկինս : Ժամանն նոր կայ դատարկ, և
ոչ եղև մարմնոյ նր. եթէ ցրուեալ լինէր ուրեք,
գոնէ մասն ինչ՝ ի նշխարաց նր գտանիւր յեկե-
ղեցւոջ. ըստ որում տրամաբանեն աբն բեռնարդն
նոս ասելով. աճ յայտնեաց զբնմք մարմինս աբց՝
որք ծածկեալ էին ի զանազան տեղիս, որպէս զի
պատուեալ լիցին ի հաւատացելոց. ապա եթէ
և մարմին աբց կուսին կայր յերկրի, ի յայտ
ածէր և զայն. որովհետև ոչ զայնց ամենեցուն

ար-

արժանի էր պատուոյ. և զի 'ի բովանդակ տիեզերս մինչև ցայժմ չեղև գիտացեալ՝ թէ ո՞ւր իցէ, ապա ոչ ևս է յերկրի՝ այլ յերկինս։ Դու չափիցես՝ թէ 'ի յայտնիլն վտանգ լինէր պաշտելոյ ումանց զայն 'ի տեղի նրա. զի այդպիսի պաշտօն՝ ոչ ընծայի մարմնոյ. այսպիսի զգուշութի 'ի մէջ հրէից էր նկատելի. որոյ վն ծածկեցաւ 'ի նոցանէ մարմինն մովսէսի։ Բայց արդ մի թէ արժա՞ն էր այնպիսի օրհնեալ մարմնոյ մնալ 'ի վերայ անիծեալ երկրի։

Զայս ամ կնքէ սրն բեռնարդոս ասելով. ոչ գտանիւր տեղի 'ի վր երկրի արժանի ընդունելոյ և պահելոյ առ ինքն զորովայնն զայն՝ յորում բնակեցաւ որդին այ՝ իբր յայնպիսի իջևանի՝ որ ինքեան միայն էր արժանի, յորմէ և էառ՝ զոր էառն. արդ եթէ ոչ գտանիւր տեղի 'ի վր երկրի վն մարմնոյ նորա, ապա ոչ էր արժան թողուլ զնա յերկրի՝ այլ համբառնալ յերկինս, և փառաւորել զնա յայնպիսի փառս՝ քան զոր գերագոյն ոչ կարէ մտածիլ. և կացուցանել զնա իբրև զիւր արժանապատիւ մայր՝ թագուհի երկնի և երկրի, թագուհի հրեշտակաց և մարդկան, թագուհի 'ի վեր քան զամ թագաւորութիւնս, և 'ի վերոյ քան զամ իշխանութիւնս. որք երևին և որք ոչն երևին, այնպիսի մեծ պայծառութբ, զոր նարեկացին կոչէ պաշտելի և պսակելի, ամփայլ և լուսանշոյլ. քղի յաւարտել նրյն զճառն, յարէ 'ի վերջոյ խօսելով առ նա կոյսն. արժանի լիցուք ասէ յարքայութե երկնից՝ * փառաւորել զքեզ և զքոյն
„ յանդիման դիմաց պաշտելի և պսակելի քում
„ ամփայլ և լուսանշոյլ մեծ պայծառութեդ
„ չնուն անքակ և անքննելի ընդ երրորդութեն 'ի
„ մի-

,, վայնի քուռ ‖ . որդին այ և որդիք մարդկան . (տես և ՚ի Ձառն . ձ . Հատ . ք . 7.) ՚ի սոյն ակնարկեալ խօսի և քո առ սբ կոյսն , և ասէ . * որովայն ,, քո ոպ շեղջ ցորենոյ փակեալ շուշանաւ ‖ . (երգ . է . 2.) Նշանակութեան դնէ յաստէն . * շեղջ ցորենոյ ‖ . առ ՚ի ցուցանել զբեղմնաւորուն որովայնին , որ ծնաւ ոչ միայն զցորեանն կայն՝ որ անկեալ յերկիր՝ բազմ արդիւնս արար , այլև զբազմութիւն հաւատացելոց իբրև զշեղջ ցորենոյ. և այն փակեալ շուշանաւ , ՚ի կուսութիւն . զի ոպ զորդին այ կուսութիւն ծնաւ , սոյնպէս և զբազմութիւնս հաւատացելոց ամենևին կոյս գոլով։ Ո այս կուսական մտքուն ՚ի նէ հրաստարակեաց և հաստատեաց քո ՚ի յետին կտակի իւրում , յորժամ բևեռեալ կայր ՚ի խաչին . (յովհ . ժթ . 26 . 27.) Իր տեսեալ զմայր իւր՝ ազդ արար նմ զի զլինիլ նէ մայր յանձն աշակերտին իւրոյ յովհաննու . զի ասաց ցնա . * ահա որդի քո ‖ և առ յովհաննէս . * ահա մայր քո ‖ Յովհին այսու ըն առանձնելոյ երևելի վկայութիւն յայտ արար քն՝ թէ զմայր իւր կարգէ լինել մայր մեր , և իբր վճռով սահմանէ զմեզ լինիլ որդիս մօր իւրոյ . ապա թէ ոչ՝ ընդ անուճամբ մօր և անուճամբ որդւոյ յանձնէ , ՚ի հաստատութիւն այսր հաձելոյ նա ինքն որդին այ եղբարս անուճանել զմեզ . ըմ . (մատ . ԻԲ . 10.) * աստղիք եղբարցն իմոց ‖ . ըն որոյ ասէ պօղոս . * ոչ ամենի համարի եղբարս անուճանել զինս և ա ,, սել , պատմելոյ զանուն քո եղբարց իմոց . (երբ . բ . 12.) Նու ըն այսմ ոպ հայրն ամէ է հայր նէ և մեր , սոյնպէս և սբ կոյսն մայր նէ և մեր . նէ բնութ , և մեր շնորհօք , ոպ աստղաք ՚ի վերոյ . և յաղագս այսորիկ յանձն յովհաննու խօսեցաւ , ըն որում յովհաննէս շնորհք Թարգմանի . որոյ կամեցաւ

յայտ

յայս առնել, թէ ոչ 'ի ձեռն շնորհաց արար զմեզ որդիս այ, սոյնպէս արար և որդիս սբյ կուսին։ Կարեմ աստանօր համարձակութբ իմն ասել ես՝ թէ որդին այ վ՛ն զսբ կոյսն արար մայր իւր, զի լինիցի մայր մեր. և յայս ակնարկելով ասէ գիրն. (Երգ. Գ. 9.) *դահաւորակ արար իւր ար-
,, քայ սողոմոն. զսիւնս արար արծաթեղէնս, և
,, զյնարսն ոսկեղէնս, և զխարիսխսն ծիրա-
,, նի, և զմէջն ականակապ. տարածեալ զսէր 'ի
,, դստերացն եղմի ||. այս թէ քս, որ է ճշմարիտ սո-
ղոմոն՝ արար զարգանդ կուսին դահաւորակ իւր. զերկու բազուկս նր արար իբրև զսիւնս արծաթեղէնս առ 'ի բառնալոյ զնա սրբութբ. զլանջս նր արար իբրև զյնարս 'ի յենուլ ոսկեղէն սիրով. և զծունկսն արար իբրև զխարիսխս, յորոց վր կանգնեցաւ ծիրանազօն արծ բերկրութբ. և զմէջն այս զհոգին նր զարդարեաց զանազան ականմբք առաքինութեց։ Իսկ թէ ընդէր արար զայս ամ՝ տայ զպատճառն ասելով. *տարածեալ զսէր 'ի դստերացն
,, եղմի ||. այս վ՛ն սիրոյ դստերացն եղմի. իբր թէ
ասէր. յայնսակս քս արար զմարիամ դահաւորակ իւր՝ զի լիցի մայր դստերաց, ոչ այմն՝ այլ դստերացն եղմի, այս որդւոց նորոյ սիոնի. մանաւանդ թէ մայր սիոնի և մայր հիմնադրութն նորին. որոյ վ՛ս կոչէ զնա նարեկացին. *մայր հիմնադրութե
,, հաստատութե եկեղեցւոյ ||։ Իսկ արդ եթէ նա
կարգեցաւ լինել մայր մեր և մայր նորոյ սիոնի, ապա կարեմք և մեք պարծանօք ասել. *ունիմք մեք մայր զմարիամ ||. ոչ պարծելին հրեայք 'ի հայր իւրեանց յաբրահամ ասելով. *ունիմք մեք հայր զաբրա-
,, համ ||. (Մատ. Գ. 9։ Յովհ. Ը. 39։) Բայց ոչ քս
յանդիմանեաց զնս ասելով, *եթէ որդիք աբրա-
,, հա.

„Համու եղիք՝զգործան աբրահամու գործէիք‖։(յովհ. Ը. 39։) զգոյշ լինուք դի մի և զմեզ նոյնպէս յանդիմանեսցէ առելով։ *եթէ որդիք մեր իմոյ մարիամու ,, էիք , զգործան մարիամու գործէիք ‖ ։ ՚ի ծառայել ՚ոյ սրբութիւնք և խոնարհութիւնք , և ոչ թէ ՚ի ծառայել մեզոյ ։ ապա թէ ոչ՝ երևիմք հակառակ եկանել նմա, և չեն որդւոյ նորա ։ Այս առաւել ևս զգոյշ լինուք , դի մի գանգատեսցէ զմեզ քան առելով ։ *որդիք մեր իմոյ մարտեան ԸԼ իս ‖ ։ (երէմ ։ ա ։ 5 ։)

Ո՞ անիւր ևս՝ զի նաև նոյն ինքն ոբ կոյսն մարիամ ոչ Հանապէ զմեզ յորդիս իւր՝ եթէ ոչ տեսցէ ՚ի մեզ զնշան որդիութիւնե ։ որ է նմանակցուիլ անդրանիկ որդւոյ իւրոյ ։ զի ոմն արծուիւն եթէ ոչ տեսցէ ՚ի ձագս իւր զնմանութիւն հարազատ որդւոյ՝որ է նիստուածն արևու՝ մերժէ զնա, ոյնպէս և ոբ կոյսն Հայելով ՚ի մեզ ։ Արդեօ աստ տարակուսիլ թէ զի՞արդ զոյս նմանուիլ ատացայց.դու մի ինչ Հոգար.դի՞մեա որդիսպէս ՚ի դԹուխ ոբոյ կուսին , և նա իբրև մայր զգեցուսցէ քեզ զնոյն ։ ոյսիսկ գտանիս Հաճոյ ոչ միայն յաչս նորա, այլև յաչս Հօրն երկնաւորի և ընտունիս զօրհնուԹիւն նորա ։ Օ ի ոմն ուեբեկա զգեցոյց յակոբոյ զնմանուիլ ՚ի ձեռն Հանդերձի անդրանիկ որդւոյ իւրոյ աս ՚ի օրհնիլ հիսահակայ,(ծնն. իէ. 15=30.) այսպէս ևս ոբ կոյսն զգեցուցանէ մեզ իբրև մայր զնմանուԹիւն անդրանիկ որդւոյ իւրոյ քոյ՝ զի օրհնեսցուք յիւրմէ և յերկնաւոր Հօրէ ։ Այս քան առաք մեզ Հայիլ և ՚ի մայրուԹիւն եւայի ։ ասէ ածաղուննդն վ՚ոեւայի, Թէ *կոչեաց ադամ զանուն նոր կեանս‖։ և տայ զպատճառն ասելով ։ *զի նա է (առաջինն) ,, մայր ամ կենդանեաց ‖ ։ (ծնն. գ. 20.) ուր կենդ-

զա-

դանեօք յայտ է Թէ իմացեալ լինին մարդիկ, որք
վ՚ռ առաւել հաղորդ գտանելոյ կենաց՝ ախրասէս
կոչին կենդանիք։ Նայց արդ միթէ մարդիկ կեն
գանի ծնանի յեւայէ. ամքն մեռեալ ծնանի և մե
ռեալ ծնանին՝ ի նմանէ՝ ի ձեռն սկզբնական մե
ղաց. ապա յաւէտ պարտ էր կոչել զնա մայր ամ
մեռելոց՝ քան Թէ մայր ամ կենդանեաց։ Արդարև
լինելոց էր եւայ մայր այնոցիկ՝ որք ծնանելոց էին
կենդանի՝ ի ձեռն շնորհաց, զի շնորհքն է կենդա
նութիւն հոգւոյ. բայց եւայ կորոյս զայս արժանա
ւորութիւն վ՚ռ մեղս խնձորոյ. ուստի և որ լինելոցն
էր մայր ամենայն կենդանեաց շնորհօք, եղև
մայր ամենայն մեռելոց մեղօք։ Եւ յաղագս այսո
րիկ նշ և ևթ ասին որդիք եւայի որք ծնանին մեղօք
և ոչ որք մեռեալ են մեղօք. իսկ որք կենդանի են
շնորհօք՝ ոչ ունին մայր զեւայ, զի նա ոչ է մայր
շնորհաց. և յայտ է Թէ միայն շնորհօք հնար է
ծնանիլ կենդանի՝ ի հոգիս, ոյք յուսանեն աճա
բանք։ Եւ արդ՝ զի միայն սքբ կոյսն է մայր շնոր
հաց՝ նա միայն եղև Ⴃիմարիտ մայր այնոցիկ որք
կենդանի են շնորհօք. մինչև իրաւամբք ասիլ
զնմանէ՝ Թէ *նա է մայր ամ կենդանեաց ||. ոչ
գոչէ առ նա նաբեկացին. *խոստովանեաւ մայրդ
,, կենդանեաց ||. *ողջացուցիչ երկանցն եւայի ||,
մօրն մեռելոց։ Եւ եԹէ արդարև մայր է կենդա
նեաց, ապա ամքն կամի կեանս, և ոչ ումեք մահ։
Ասնայք երկու երեւեցան առաջի սջղմանի. մին
մայր մանկան մեռելոյ, և միւսն մայր կենդան
ւոյ. և՝ ի խնդրել երկոցունց զկենդանի մանուկն՝
հրամայեաց սողոմոն յերկուս բաժանել զկեն
դանի մանուկն. յայնժամ որ Ⴃիմարիտ մայրն
էր կենդանւոյն՝ աղաչեաց զսողոմոն մի սպանանել

զմանուկն, այլ թողուլ կենդանի. իսկ մայր մեռե-
լոյն տոխեր սպանանել. Հրամայեաց Սողոմոն
տալ զմանուկն մօր կենդանւոյն. * տուք սմա զմա
„զմանուկն կենդանի՝ որ սպանց թէ... մահու մի սպա-
„նանէք զդա. նա է մայր դր‖. (Գ. Թագ. Գ. 27.) Մայր
մեռելոյն է նախամայրն Եւայ, որ անկեալ ՚ի մէ որդւոց
իւրոց սպան զնս. իսկ մայր կենդանւոյն է Սբ Կոյսն Մա-
րիամ. Եւայ աղաղակէր՝ զի կենդանացեալքն շնորհօք
իւր լիցին մեռոք. եւ և մեղքն նր աղաղակէր մահու
մատնել զնս. իսկ Սբ Կոյսն աղաչէր և աղաչէ զՃշմա-
րիտն Սողոմոն՝ զի մի մեռցին. Ապա լուեալ նր աղա-
չանաց Սբյ Կուսին՝ ասաց և ասէ իսկ. * տուք զմա զմա-
„նուկն կենդանի ... նա է մայր դր‖. Եւ զայս
Հրատարակեաց ՚ի վերջին կտակի իւրում առ խա-
չին. ով ասասցաք այժմ ՚ի վերոյ. Այս բան այլով
իմն սեսութեմբ ևս յարմարի առաջադրութե Ճառիս.
իբր զի արդարութի և ողորմութի (որք առ Երբայե-
ցիս յիգական սեռի են) կռուէին առաջի իմաստու-
թեն այ. Արդարութին այ՝ որ ՚ի մահ մատնեաց
զնախահայր մեր ասելով, * մահու մեռանիցիս ‖.
տոխեր՝ զի մեռցի մարդն յաւիտենական մահ-
ուամբ. իսկ ողորմութի նր աղաչէր՝ զի մի մեռ-
ցի. Յայնժամ իմաստուին այ որոշեաց տալ զմա-
նուկն ՚ի ձեռս ողորմութե. Եւ Քզի միջնորդն այսր
դատաստանի ՚ի գործադրութե մտածել՝ եղև Սբ
Կոյսն Մարիամ, զի ՚ի նմա կատարեցաւ այս խոր-
հուրդ ամծային ողորմութե, իմաստութին այ առեալ
զմանուկն ետ ՚ի ձեռս Սբյ Կուսին ասելով. * նա է
„ մայր դր ‖.

Ահա մայր մեր, ահա մայր բարի, և մայր գթած.
ահա ապրեցուցիչ մեր և սպասաւորիչ. դիմեսցուք
առնա յամի որդիական համարձակութբ, եթէ ՚ի

յաջողութե և եթէ 'ի ձախորդութե. եթէ 'ի հանդարտութե և եթէ 'ի փորձութե. եթէ 'ի յանդորրութե և եթէ 'ի նեղութե. բայց առաւել ևս 'ի նեղութե. վ՞ զի նա նեղութ՞ք և ցաւօք ծնաւ զմեզ. իբր զի յորժ՞մ յանհնարին ցաւս էր առ խաչին՝ յայնժամ ցուցաւ լինիլ մայր մեր. և յայս սակս ստիպի ցուցանել զմայրական գութ իւր առ ցաւագնեալս և առ վշտագնեալս։ Նա զի 'ի սահմանին անդ մայր՝ ետես թէ քանի վշտօք գնեաց զմեզ որդին իւր, և յորպիսի թշուառութէ ազատեաց զմեզ. զայս գիտելով առաւել ևս գթայ 'ի մեզ. վ՞ զի տառապանօք և ցաւօք ստացեալքն առաւել պատուական համարին ստացողին, և մեծի գթութե արժանի լինին։ Գիտէ ևս թէ ինքն վ՞ մեր եղև մայր ոյ,ուստի և 'ի հաստուցումն այսր՝ զմայրական գութ իւր ոչ երբեք 'ի բաց առնէ 'ի մէնջ, այլ յամի և միշտ իբր ստնտու մայր դիեցուցանէ զմեզ նովաւ իբր կաթամբ։ Նւս և առեալ յանդրանիկ որդւոյ իւրմէ զպարգևս բարեաց՝ գրեթէ ծառայելով մատակարարէ մեզ. և երբեմն զեղու ևս։ Միայն թէ մի տեսցէ զմեզ 'ի կերպարանս մեղաւորի. զի անպատեհ իմն է՝ թէ մարդ մեղաւոր՝ իցէ որդի այնպիսի ամենամաքուր մօր։ Ո՜ ինչ կարծես, ո՜ համարեսցի թէ այս որ իցէ որդի նորա կուսին՝ եթէ նա անառակութե զհետ իցէ. ո՜ համարեսցի՝ թէ այս որ ջերմեռանդն իցէ առ տիրուհին երկնից, եթէ նա անհոգ իցէ 'ի ծառայութե նր. ո՜ համարեսցի՝ թէ այս որ ցնծայ է թևօք մօրն ու՝ եթէ նա խայտայ է թիւնալից թևօք դիւին. ո՜ համարեսցի՝ թէ այս որ բանիւն յոյի յանձնեալ է թագուհւոյն հրեշտակաց՝ եթէ նա կեայ ը հաճոյս ախտից, և շրջի յանառակ վարս, այսմ և ոչ խիղճ նր վկայէ։ Ո՛ գաստատացուք ուրեմն

բեմն յանձինս մեր. և հաւատարիմ գտեալ յորդե-
դրուե այնպիսի ամենանք մեր՝ բերկրալից ցնծա-
ցուք ի ծառայուե նր :

Յօդուած . ՀԸ :

Խաշիսոց հնարհաց :

Ջ. Ա՛ք կոյն մարիմոնի կորդել էղև մայր ողորմուե
և մայր մեր, ոյնպէս և կայուցաւ բաշխող հնարհաց, և
մատակարար պարգևաց . զի նուիրաւ և՛ ի նմանէ և՛ ի
ձեռն նր զեղանին՝ ի մեզ հնարհք և պարգևք . *եթէ
,, դոյ ինչ՝ ի մեզ՝ ի յուսոյ, ի հնարհաց և՝ ի փրկու-
,, թէ (ասէ բեռնարդոս,) ի նմանէ գիտացաք զե-
,, ղուլ . զգի այսպէս կամք եղեն այլ՝ զի մեք զնմ ինչ
,, ընկալցուք ձեռամբն մարիամու ‖ . և դարձեալ
ասէ . *յիրաւի նմ այք՝ ի քեզ հային ոմն սրբուհի
,, կոյս . զի ի քեզ՝ ի քէն և քեզ հնարհն մեզ նմ
,, բարինաց զի ոչինչ կամեցաւ ունել նմ՝ զոր ոչ ետ՝ ի
,, ձեռս քո ‖ : Օրոմէ նմ նմ բարուեց և նմ հնար-
հաց . և՝ ի ծոմէ ասաի ժողովին՝ ի՛նք կոյն իբր
յաղթիւր նմ հնարհք և պարգևք , և անտի հոսեն
առ նմանին , և զնման առաքանեն : Ջեռանեմք զի
իւրաքանչիւր աղբիւր առաքանէ զայս և զայն տե-
ղի . իսկ աղբիւրն եդեմայ՝ ի ծոմէ առեալ զզեղուն
ջուրց, առաքուներ զնմ երեսս երկրի ըստ վկայելոյ դրոյն.
(ծնն. ք . ։ . ճ . ։ ։) Ոյնպէս իւրաքանչիւր նրք զայս
ոք և զայն ոք առաքանեն նմանային հնարհօք . իսկ նր
կոյն զնմանն. նա զի՝ ի նմանէ իբր՝ ի սկզբնական
աղբերէ կենաց առնուն նրք զնմ և բաշխեն .
իսկ՝ նր կոյն անսիջանք՝ ի ծոմէ մի յայլ առեալ ծաւալէ
յանման . ուստի և կոչի եդեմական աղբիւր . յոր միտ

ասէ շարականն . * աղբիւր կենաց բղխեալ յեդե-
մայ՝ զբ ամաձին ‖ .

Այս իսկ վերատին հեղաւ յաղբիւրս յայս հոգին
՝որ իբրև զծով՝ի՝ոբ վերնատանն . զի թէպէտ և նա
լի էր , բայց զի հեղեալ և յայլս՝ կրկին էջ՝ի նա .
Ուր ասէ բերնարդոս . * ոչ զի լցոյր , այլ զի վերա-
,, լցոյր՝ ոչ վ՛ս ինքեան , այլ վ՛ս մեր ‖ . Որ աղբիւր
լցեալ՝ի վերայնանէն՝ ոչ ինքեան՝ այլ այլոց զեղու .
Այս աղբիւր է այն՝զորմէ ասէ զաքարիա.(ժգ. ւ.)
* եղիցի աղբիւր բացեալ տանն դաւթի՝ի լուա-
,, ցումն մեղաւորի և դաշտականաւորի ‖ . իբր զի
այս աղբիւր հոսեալ յաղգէ դաւթի՝ոչ միայն զար-
դարս ուրագանէ , այլ և զմեղաւորս լուանայ՝ ևս և
զսպանականէս մեղաց իբրև զդաշտականաւորս . մի-
այն թէ ոչ խոստովանի՝ի դառնալ ոմն առաջաք՝ի վե-
րոյ . ապա թէ ոչ՝ ոչ ևս բացեալ լինի առ նմա , այլ
միայն փակէ։Աստի՝ի դիրս երգոց երգոյն. (գ.շշ.)
սոյն այս աղբիւր կոչի կնքել . կիմ ըն թարգմանել զա-
յլոց՝փակել.զի արդարև փակէ միայն այնմ՝որ չու-
նի բանալի ապաշխարուէ. իսկ որ ունի՝բացէ լինի
նմա կիմ ըն ասպետի.*աղբիւր բացէ՝բարեաց,աղբիւր
փակէ՝ չարաց. բացել առ ապաշխարողս , փակել
,, առ անապաշխաս ‖ ։Ա՛ստ որոյ կոչի՝ և * աղբիւր
,, պարտիզաց ‖ , և ոչ աղբիւր դաշտաց . (երգ. գ.
ւ 5.)զի պատրաստ է ուրագանել զպաթեղս , այլ զայ-
նոսիկ՝ որք կամին լինել իբրև զպարտէզ ծաղկալից,
և ոչ զայնոսիկ՝որք կամին վայրենի մնալ ըն դաշտաց։
Ա՛թէ աստանօր էանք և դոյացուպէս առցուք զաղ-
բիւրն ընդ հայ,այնու իմացեալ լինի ածային բարու-
թին՝ի յոյժ . յոր միտ ասի (սաղ. լե. 10.) * ի քէն
,, է աղբիւր կենաց‖։Ա՛ւ ըն այսմ նմանուէ ոբ
կոյսն համեմատի խոզովակի,որ առեալ յածային
աղ-

աղբերէն անտի ղջուր ընտրեալ հոսէ յեկեղեցի աբ՝ եւս և ՚ի հոգիս իւրաքանչիւրոց . * իբրև (՚ի) ,, դրախտ օրոյ ոչ պռոցէ ջուր ‖ . (եսայ . ա . 30 :) Օ այս նմանութի ՚ի մէջ բերեալ աբէն բեռնաբ դոսի՝ ասէ . ընտրէն այ ՚ի ձեռն աբէյ հուսին իբր ՚ի ձեռն խողովակի առոգանէ զերիս ածուս հոգւոյն. զպիշողութինն՝ ՚ի բառնացանել զկենդանի տուն կ յիշատակութինե բարերարութինեցն այ . զմիտան՝ ՚ի յառաջ ածել զծաղիկս երկնայինն խոկմանց. զհամբարն՝ ՚ի բերել զպտուղս սիրոյն այ և ընկերին : Այս խողովակ ոչ միայն զընտրհան այ ածէ ՚ի մեզ, այլև զվերնժխնդրութի նէր քաղցրացուցանէ . ոմն ատորեր կրեայ կաւեղէն խողովակ առեալ զդառն ջուր ծովու քաղցրացուցանեն, և բարեհամ աղբիւրս դարձեն մեզ : Ա՛ստ այսմ հաստմատի աբ կոյան և ամպոյ . զի ոմն ամպք առեալ զդառն ջուր ՚ի ծովէ քաղցրացուցանեն և քաղցրութիւ անձրեւեն՝ ՚ի մեզ, ասէնայ և աբ կոյան զդառն վերնժխնդրութինն այ ՚ի քաղցրութի ընտրհայ դարձուցանէ , և առատութ հոսէ ՚ի մեզ՝ ի յաւիտեանս հոգւով . * իբրև զամպ ,, ցօղացին յաւուրս ամարայնոյ ‖. (եսայ . ԺԸ . 4 :) Որպ յօրինակ՝ առ եղիայիւ մարգարէին ամպ մի թեթև թաւթառն գործեալ (որ է խորհուրդ ծովու՝) էառ զդառն ջուր ծովուն՝ և քաղցրացուցէ ընտյն հոսեաց յերկիրն իւր առատ յոյժ , և զովացոյց . (Գ . Թագ . ԺԸ . 44 :) Յայտնի է որ գործ աբէյ հուսին հայելով կարեմք հոգևորական ատեանց և համեմատել. զի ոմն հիւթն այն՝ որ լինելոց է նեւթ արեան, անցեալ ընդ ստինս փոխարկի ՚ի կաթն ընդ խղիդ բոսին և ընդ բիկտուեցւոյն, որպէս և վերնժխնդրութինն այ, որ օրինակի ՚ի գինի և յարիւն՝ հասեալ ՚ի աբ կոյան՝ փոխարկի ՚ի կաթն . զի անցեալ ընդ խողովակս երա-

կայ գեղութե̄ նո̄ր քաղցրանայ և սպիտականայ. ը̄ որոյ ասեն ցնա որիորդք. * բարի են ստինք քո ք̄ „ դգինի‖. (Երգ. ա̄. 1.)

Յօդուած. Է.

Մատակարար պարգևաց.

Է. Որպէս զողորմութ̄ և զշնորհաց ասացաք, սոյնպ̄ արժան է ասել և զպարգևացն ա̄յ. Եթէ զի ոչ̄ զողորմութի̄ իւր և զշնորհս յանձն արար ք̄ս ն̄րյ կուսին, սոյնպ̄ և զպարգևս իւր ը̄ շնորհաց, առ 'ի մատակարարել որոց և կամիցի. և զայս եցոյց այնու, զի յանձնեաց նմա զյովհաննէս, որ թարգմանի պարգևք և շնորհք. որով և կամեցաւ՝ զի զխորհ և հանճոյ իցէ նմա՝ առեալ 'ի շտեմարանաց իւրոց զանազան պարգևս՝ բաշխեսցէ և մատակարարեսցէ ամէն՝ որոց արժանի տեսանէ. Յայս հայելով ('ի Ճառն. բ̄. հատ. ա̄.) լուսնի նմանեցուցաք զնա կոյսն, ը̄ որում ոչ̄ լուսինն առե՛ զլոյս 'ի շտեմարանէ լուսոյ ա̄ր յարեգակնէ՝ զեղու 'ի մեզ 'ի գիշերի, սոյնպ̄ և տ̄ր կոյսն առեալ զհոգևորական պարգևս յարեգակնէ արդարութե՛ զեղու 'ի մ̄ր մեր. կամք 'ի գիշերի կենցաղոյս, որով և կենդանացուցանէ զմեզ և զուարթացուցանէ զսիրտս մեր. Իսկ թէ 'ի ներգործութէ լուսնի գոյաւորի ցօղ, և ը̄ այսմ ոչ միայն ցօղն անեղական գոյացեալ ը̄ մեզ 'ի կուսէ ցօղեցաւ յը̄, այլև ամ̄ պարգևք երկնայինք 'ի մատակարարութէ ն̄րյ կուսին գոյաւորեալ ցօղեն յեկեղեցի. և * 'ի ցօղել ն̄ր զուարթ եղիցի բոյս „ նորա‖. (Սաղ. կ̄. 11.) Պարգևք և շնորհք հոգւոյն ն̄րյ՝ թէպէտ և ը̄ ինքեան սքանչելի են և զօրաւոր, բայց մատակարարութե̄ ն̄րյ կուսին փառա-

ւո

ուրագոյն եւս ազգեն եւ զօրագոյնս ։ Օ՛ի միթ շատա-
սիղք արեւու անցեալ ըլ ասպս զոնարհագոյնս ծա-
գեն, սոյնպէս եւ պարգեւք Հոգւոյն սրբոյ անցեալ ըլ
ձեռս սրբոյ կուսին, լուսաւորագոյնս եւ փառաւորա-
գոյնս Հասանեն առ մեզ՝ իբրեւ յայտարարք փա-
ռացն ձեն, մինչեւ Համարձակիլ մեզ ասել. * ահա
„ փառք ձեն երեւեցան ասպով ‖ . այլ սրբ կուսիւ .
(ելից . ժգ . 10։) Եւ ոպ Հաւատոյիք արեւու յան-
ցանելն ըլ ասպակի զօրանան եւ աստուկանան, վ՛ը զի
ոչ Հասպաղմամբ այլ Հաւաքմամբ զեղջն , սոյն-
պէս եւ զօրուիք ձեծոյին պարգեւաց Հաւաքմամբ
իմն անցանելով ըլ անասպական ասպակին մարիամ
աղգոզագոյնս եւ սաստկագոյնս ներգործեն։ Այլ
ոպ զի բարւոք իմասցիս՝ թէ զիարդ ձամ պարգեւք
եւ շնորհք ի ձեռն սրբոյ կուսին իջանեն առ մեզ՝ որք
եմք յեկեղեցւոջն քրիս՝ ծանիր , զի ըս առաքելոյն՝
քո է գլուխ եկեղեցւոյ , եւ եկեղեցին մարմին նր .
իսկ որ կոյսն է պարանոց , եւ այն՝ Հզօր . ըմ զոր
ասէ քո առ եկեղեցի որ . (երգ . է . 4 .) * պարա-
„ նոյ քո իբրեւ զաշտարակ փղոսկրեայ ‖ : Այդ
յայտ է թէ գլուխն է՛ի վերոյ ք զձամ անգամն եւս
և ք զպարանոցն.և պարանոցն է՛ի վայր ք զգլուխն և
՛ի վեր ք զայլ անգամս.որով մարմինն միանայ ըլ գլո-
խոյն : Այնպէս և քո՛ ի վերոյ է ք զձամ. իսկ որ կոյս՝ ի
վերոյ ք զայլ անգամս իբր պարանոց , որով եկեղե-
ցին միանայ ըլ քրիս . եթէ ոք ոչ է միացեալ ըլ այսմ
պարանոցի , ոչ է միացեալ ըլ քրիս : Եւ ըս այսմ նախ
առաջին՝ ոպ ազգուԹիք անգամոց ՛ի ձեռն պա-
րանոցի իջանեն ՛ի գլխոյ՛ի մարմինն, սոյնպէս ո և խոկ
պարգեւք և զօրուիք ՛ի ձեռն սրբոյ կուսին իջանեն ՛ի
քրիս ՛ի սբ եկեղեցի. զոր վ՛ը զօրագոյն գոլոյ՝ նման
նեցուցանէ փղոսկրեայ աշտարակի . ՛ի ցուցանել՝
թէ

Եթէ ներդործուիք ածային պարգեւաց զօրադոյնս աղքեն ըստ անցանելն ըստ ձեռս ոքոյ կուսին ։ Արդ՝ ոմն ըստ պարանոցն հասանեն ՚ի ներքս ուտելիք եւ ըմպելիք՝ եւս եւ դեղք, սոյնպէս միջնորդութիւն սքոյ կուսին հասանեն յեկեղեցի սքի եւ ՚ի հոգիս մեր պարգեւք եւ շնորհք եւ խորհուրդք՝ ինձեղ խորհուրդ սքոյ հաղորդուիւ՝ զոր իբրեւ զդեղ հասոյց յինքեան ։ Արդ՝ ոմն ըստ պարանոցն ելանէ շունչ՝ ի ներքուստ, եւ ըստ նոյն մտանէ օդ ՚ի ներքս, սոյնպէս ՚ի ձեռն սքոյ կուսին ելանեն ՚ի մէնջ աղօթք առ Աստ, եւ մտանեն ՚ի մեզ ձիրք ածային պարգեւաց ։ Ահա է՝ որով ունիմ դործք մեր՝ եթէ աղօթք եւ եթէ այլ ինչ բարի ներդործուիք ընծային ոյ, եւ հաճոյանան նմ։ եւ որ ինչ հաճոյ է ոյ՝ նոյնաւ դոյ առ մեզ ։ Ասա որով այլով ինն նմանուիք հասանել զնա իմաստունն բանեբեկնաւուն շինելոյ ձեռամբ ամենանաք երկրորդուիք։ որ տանի՚ի մէնջ առ Աստ զաղօթս եղբարի դործակցաց մեր, եւ բերէ առ մեզ յոյժ ղկիուիք ինամ բարուոյ ։ * Եւ եղեւ (ասէ) իբրեւ զնաւ շահաբեր։ որ՚ի հեռաստ ,, տանէ ժողովէ զմեծուիք ։ (առակ ։ լԻ ։ 24 ։) Օ՜ առաջինն եբեր՚ի հեռաստանէ յոր կերկնից ըզ յ՚ , և ապա յիւր զամենայն բարիս։ Նոյնպէս և զմեզ՝ որք յալեկոծուիք վտանգէաք՝ հաճ՚ի նաւ ահանդիստ եկեղեցւոյ , և ունի եւս վերածել յարքայուիք երկնից ։ Արդ արդ որովհետեւ զայս պիսի ունիմք շահաբեր նաւ , ՚ի նա դիցուք զբեռնիս յուսոյ մերոյ, և ՚ի նմանէ խնդրեսցուք զոր ինչ կարեւոր տեսանեմք առ փրկուիք մեր ։ աղաղակեսցուք եւս զհետ նոր անխոնջ ընթացիւք , մաքուր բերանով, անարատ մտօք , և ՚ոք արտիւ , եւս և ուղիղ դիտաւորուիք և արժանաւոր վարուք , և ոչ թէ ներհականօք ոտիկն։ Այլ թէ ոչ՝ զինչ օդուտ

է դիմել առ նա, և իբր խոնջեալ յետս կասիլ 'ի նմանէ: Որդ. կարէ համարձակ կարդալ առ նա բերանն այն, յորմէ ելանեն բամբասանք, նախատինք, և հայհոյանք (որ է քիւֆիւր:) Ո՞չ ապաքէն անվայել է ձայնիւ խօսիլ ընդ նմ, և մտօք յածիլ յայնս՝ յորս հայիլ ոչ կամի նա: Ո՞չ ապաքէն անպատեհ իմն է արտաքուստ պատուել զնա, և 'ի ներքուստ 'ի սրտէ բերել յայնս՝ որք ընդդէմ են նմ: Ո՜ ինչ շահ իցէ ամբառնալ առ նա զձեռս, և նովին ձեռամբ շաղախիլ 'ի պղծութիւնս: Ո՞ր օգուտ իցէ ունիլ առ ինքն զաղօթամատոյց նր կմ զհանդերձ նորին՝ և ոչ յետս կալ յառթից մեղաց: Որդ. համարձակիցի քրիստոնեայ ոք ողորմութի խնդրել 'ի նմանէ՝ եթէ ինքն անողորմ իցէ, և հեռի յողորմածութենէ: Մի՛ նմանիք նց՝ որք 'ի դիմելն առ նը կոյսն յարեալ են հոգւով 'ի նենգութիւնս և 'ի զազրագործութիւնս. Մի՛ նմանիք և նց՝ որք 'ի խնդրելն ինչ 'ի նրյ կուսէն՝ թշնամութի ունին 'ի սիրտս իւրեանց, և խորհին առնուլ վրէժս յատելեաց. Մի՛ և նմանիք նց՝ որք երևին լինիլ ջերմեռանդն պաշտօնեայ նրյ կուսին, և պաշտեն զախտս, և զդրամս և զսնոտի իրս կենցաղոյս: Նմանեաց հաւատարիմ ծառայից նր, և անարատ վարուք ծառայեա՛ նմ, որով ընկալցիս զվարձս ծառայութեն:

ՀԱՏՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ.

Թէ ո՛ր կոյսն կացուցաւ խնամօղ, օգնական, և պաշտպան:

Յօդուած. Ա.

Խնամօղ:

Է. Մատիցուք այժմ յե՜րդ կարգ պաշտաման ո՜րյ կուսին, յորում կացուցաւ նա խնամօղ մեզ, օգնական՝ ՚ի բարին, և պաշտպան ՚ի չարէ: Տեսանեմք՝ զի ՚ի ս՜բ գիրս որչափ ինչ նմանութի՜ք աւանդին վ՜ս ս՜յ կուսին՝ ոչ այնչափ ցուցանեն զնո՜ գոլն՝ որչափ զաւրբերար գոլն ՚ի խնամել, յօգնել, և ՚ի պաշտպանել: Արեգակն ասի՝ զի լուսաւորէ զաշխ՜ն՝ առ որս հայի, և ջերմեռանդս առնէ զն՜ս: Լուսինն՝ ՚ի մերժել զգիշեր մեղաց այնոցիկ՝ որք կարդան զնա յօգնութի: Աստղ (բևեռային)՝ զի նաւակարեմք ուղղել զընթացս մեր ՚ի մրրկալից ծովուս, և հասանել ՚ի նաւահանգիստ: Առաւօտ՝ զի է մայր տուընջեան շնորհաց: Գեղմն՝ ՚ի զգեստաւորել զմերկութի մեր: Որթ՝ ՚ի տալ մեզ զողկոյզն անմահութե: Ձիթենի պսակեալ՝ առ հաղորդս առնելոյ զմեզ իւրում պարարտութե: Արմաւենի յաղթական՝ առ մասնակից առնելոյ զմեզ իւրոց յաղթանակաց: Գաւազան՝ առ մատուցանելոյ մեզ զօգնութի իւր ՚ի նեցուկ: Ակն պատուական՝ առ ՚ի կազմել մեզ պսակս: Ահա յամի յայսմիկ և

յայլ

յայլ ազգին նմանն՝ յայտնի տեսանի խնամք, և օգնա-
կանութիւն և պաշտպանութիւն սրբոյ կուսին ։ Խնամք
նորա հիմնի 'ի սէրն՝ զոր ունի առ մեզ ․ և այս սէր
նորա հիմնի 'ի սէրն յայն, որով սիրէ նա զԱծ ․ զի
սոքա ոչ բաժանին 'ի միմեանց ․ (ա ․ յովհ ․ դ ․
21.) վն զի սէր այ և սէր ընկերին՝ է որպէս և կար-
գաւորէն սէր անձին՝ են իբրև միոյ լուսոյ երրեակ
ճառագայթք կմ շառաւիղք ․ և վն անբաժա-
նելի գոլոյ սը անուանս սէր՝ անյօգնական գնի ․ զի
միշտ եղանի վարի ․ վն զի ոչ երբեք ասեմք սէրք, այլ
երիւք տաւիւք սէր ․ 'ի ցուցանել զմի էութիւն սիրոյ
յերիս խոկութիս ։

Եւ քանզի սէր սբյ կուսին՝ որ առ Ած՝ է գրեթէ
անսահման, որովհետև առաւելութիւն սիրոյ նր չա-
փի յառաւելուէ անչափ շնորհաց նորին, (որպ յայտ
է 'ի գրելոցն 'ի ճառն ․ գ ․ հատ ․ բ ․) ապա և սէր նր
որ առ մեզ՝ գրեթէ անչափ է և սաստիկ յոյժ
յոյժ ։ Այս սէր նր այնքան եղև առ մեզ, մինչև մատու-
ցանել զորդի իւր պատարագ վն մեր ․ ուստի որ
ասի զայս հօրէ ․ (յովհ ․ գ ․ 16.) թէ * այնպէս սի-
,, րեաց Ած զաշխ, մինչև զորդին իւր միածին ետ ||,
զսոյն կարեմք ասել և զսբյ կուսէն՝ թէ * այնպէս
,, սիրեաց մարիամ զաշխ, մինչև զորդին իւր միածին
,, ետ ||։ Համեմատութբ սիրոյ սբ կուսին՝ սէր այ-
լոց սրբոց համարի իբրև զկայծակն ․ (որ կայծ՝ որ է
խլրձում ․) իսկ սբյ կուսին իբր հնոց ։ Եւ բ զի յատ-
կութիւն է սիրոյ որպ և հրոյ՝ յինքն փոխարկել յորս հպի,
սէր սբյ կուսին ևս յորս մերձենայ՝ իբրև թէ յինքն
փոխարկէ ․ և որք սիրենն զնա՝ 'ի հուր սիրոյ փոխա-
կերպէ զնս ․ * ես՝ որք զիս սիրեն սիրեմ || ․ (առակ ․
է ․ 17 ։) Այսու սիրով այնչափ խանդաղատի զմեօք
սբ կոյսն, մինչև մեօք մխիթարիլ և բերկրիլ ․ (ա-
ռակ ․

ռակ. Ը. 31.) ընդ Լոտ. * բերկրութիւն իմ է լինել
,, ընդ որդիս մարդկան ||: Ընդ հրեշտակս է յեր-
կինս, և թագուհի հրեշտակաց, պաշտի ևս և երկր-
պագի 'ի հրեշտակաց. բայց ոչ ասէ թէ բերկրիմ
'ի նոսա, այլ ընդ որդիս մարդկան՝ թէև մեղաւորք ի-
ցեն: Առաւել մեծ պարծանք է նմա խնամել զմար-
դիկ՝ որք աղաչեն զնա, քան հրամայել հրեշտակաց՝
որք սպասաւորեն նմա. առաւել հաճոյ է նմա սփոփել
զտառապեալսն երկրի, քան թագաւորել ընդ երանեալսն
յերկինս. քաղցրագոյն նուագ է սիրոյ նորա մի ևեթ
հառաչանք 'ի սրտէ 'ի պաղատիլ առ նա՝ քան հրեշ-
տակական երաժշտութիւնք 'ի հնչակել զմեծութիւն նորա:
Այնպէս է սէր նորա առ մեզ, որպէս թէ բոլոր առ
մեզ բերիցի 'ի խնամել զմեզ. և ինքն իսկ փոխար-
կեալ իցէ 'ի սէր վասն մեր: Սուրբն Եպիփան կոչէ զնա
* բոլոր աչք 'ի հայիլ 'ի մեզ և 'ի թշուառութիւն
,, մեր ||. բայց առաւել ևս արժան էր կոչել զնա
բոլոր սիրտ՝ 'ի սիրել և 'ի խնամել զմեզ: Խնամք
սրբոյ կուսին կարէ նմանութեամբ իմն համեմատիլ այլև-
այլ ներգործութեանց ձեան. զի ձիւնն նախ՝ ծածկէ
զտգեղութիւն երկրի. երկրորդ՝ զգեցուցանէ զհող. երրորդ՝
սպիտակացուցանէ զդաշտս և զլերինս. չորրորդ՝ խցանէ
զծակտիս հողոյն, որովք ոչ ևս կարեն գոլորշիք 'ի վեր
ելանել. հինգերորդ՝ 'ի ներքս փակելով զջերմութիւն
հողոյն՝ նովին տածէ զզօրութիւն արմատոցն. վեց-
երորդ՝ փտեցուցանէ զանպիտան խոտսն՝ զի մի վնա-
սեսցեն պիտանեաց. եօթներորդ՝ ցուցանէ զհետս
ոտից գազանաց: Այնպէս և խնամք սրբոյ կուսին՝ նախ
առաջին ծածկէ զաղտեղութիւն մեղաց մերոց՝ յա-
պաւինիլ մեր առ նա: Երկրորդ՝ իբրև զզգեստ կամ
իբր զասր արկանէ զմեօք զգութ իւր. ըստ այնմ. (Սաղ.
ՃԽԷ. 6.) * դնէ զձիւն որպէս զասր ||. զոր այսպէս ըն-
թեռ-

թեռնու բոստոս. *դնէ զգուեթ իւր ոյզ զծածկոյթ
,, մերկութէ մերոյ ։ Լուիր՝ զարտաքին գործս մեր
ևս բարեձևս առնէ, և իբրև թէ ձեամբ սպիտա-
կացուցանէ։ Ընդ՝ զբար ծակտիս կամաց խցանէ,
զի մի գոլորշիք մեղաց մերոց՝ ի վեր ելցեն իբրև
զթանձր ամպս, և խափանեսցեն զաղդօնութիւն
խնամոց նոր. ևս և փակէ զբողոքմունս՝ որք ելանեն
յերկրէ յերկինս՝ ի խնդրել յոյզ զվրէժ մարդկան։
Լինգերդ՝ տածէ ջերմեռանդութիւն՝ ի ներքուստ,
և յաջողակս գործէ զարմատս բարի գործոյ՝ յո
զառաքինանալն ունակութիւնս և զբարի յոժարմունս
հոգւոյն։ Ի ներդ՝ փտեցուցանէ և ջնջէ՝ ի միջոջ
զանկարդ ուխտ մեր իբր զանպիտան խոտս։ Լսո-
ղերդ՝ ցուցանէ զհետս և զհնարս չար դիւաց, և
զգուշացուցանէ զմեզ։ Լուսակ լետոյ որք միան-
գամ ապաւինին՝ ի խնամն նոր, խնամք նոր ևս փա-
րի զնոքօք, և լնու զնոս բարեբոյս բարեկարգութիւք,
և առնէ զնս առաքինիս՝ ևս և իմաստունս։ Որպէն
արիստոտէլ և պլինիոս, թէ *ուր ձգի աղեղն ծիա-
,, ծանին՝ զծագկունս տեղւոյն զնոշորան հոտս
,, ևէտս գործէ ։ սոյնպէս յոր իջանէ կիր բերի խնամք
Աբէլ կուսին՝ անուշահոտս գործէ զնս առաքինու-
թիւք. ոյզ տեսանի՝ ի ջերմեռանդն ծառայս նոր.
և այս՝ առաւել ևս՝ ի նիւթ ողջախոհութէ և
զգաստութէ։ Որոյ ծառ մի կոչեցեալ գաւնուկ
ողջախոհ. որոյ արմատն և բունն, Հիւղն և տե-
րևն, ծաղիկն և պտուղն, հակառակ են զողջախոհու-
թէ, և են դեղ ողջախոհութէ. սմին իրի ըստ ասե-
լոյ ոմանց՝ յառաջին դարուն անդ ողջախոհք կազ-
մէին մահիճս՝ ի փայտէ նորա. և կանայք սրբա-
կեաց ցանէին զտերևս նր՝ ի տունս իւրեանց։ Որ
կոյսն է ծառս այս, որոյ իւրաքանչիւր խնամք ընդեմ

են

են բղջախոհութեանէ և անկարգութեանէ, և են դարմանողջախոհութեանէ. և ինքն ըստ խոնարհ անուանն գտնուկ՝ օրինակ է ձշմարիտ խոնարհութեանէ. ապա և մեզ արժան է՝ ի խնամոյ նորա կազմել անկողինս զգաստութեանէ, և զտերևս ազդարարութեանէ նորա ընդունել՝ ի հոգիս մեր։

Այս խնամք ծերոյ կուսին՝ ոմն կիզուս զցանկութիւն մարմնոյ, սոյնպէս և զխոնարհ գործս մեր՝ զորս իբր պատարագս մատուցանեմք ամ՝ հաձոյ առնէ նմա։ Որպէս յայծաքնդի, (գաւա. ՟Ը. 21.) թէ՝ ի հասուցանել հրեշտակին զծայր գաւազանին՝ ի միս զոհին՝ եւ նմա՝ ի վիմէ անտի՝ յորոյ վէր մատչիւր զոհն, և ել կեր ջրիան։ Ծայր գաւազանին է խնամք ծերոյ կուսին՝ որ եղև գաւազան ծաղկեալ յարմատոյն յեսսեայ. ապա որ միանգամ մերձեցուցանէ զծայրն ընդ՝ այր զխնամն ընդ յանձն իւր՝ ելանէ՝ ի վիմացեալ սրտէ իւրմէ հնար ջերմեռանդութեանէ, և ծախէ զցանկութեանէ մոյ այր մարմնոյ. և նա ինքն մարդն զգործս իւր՝ զորս իբրև պատարագս մատուցանէ ամ՝ ընդունելի առնէ նմա ըստ ալպերտի։ Այս արդ՝ ո՛րովհետև այսպիսի է խնամք ծերոյ կուսին՝ մի՛ յետնեսցուք ապաւինել՝ ի նա, և մի՛ լքցուք՝ ի կարդալոյ առնա. եթէ նա թողուցու զմեզ, և հեռացուցանիցէ՝ ի մէնջ զխնամս իւր, ՝ի կարդալ մեր առնա՝ զկայ առնու. եթէ մեկնեսցի՝ ի մէնջ՝ յաղաղակել մեր զկնի նորա՝ չետս դառնայ. եթէ ծածկեսցէ զերեսս իւր՝ ի մէնջ, զայն վ՛ս օգտի մերոյ առնէ. եթէ՝ ի հաձիլ նմա հայիլ՝ ի մեզ՝ ոչ դարձցուք ընդ եդեմ, կանխէ՝ ի խնամել։ Այսոյիկ ունիմք յարատոյց զերեսին սքանչելիս արեգական՝ որք պատմին՝ ի նոր գիրս. առաջինն է այն՝ զի ասէ. (Լեսու. Ք. 13.) Թէ մի՛ թանալիկ՝ ի հեռանալ

ար-

արևու՝ իբրև գոչեաց յեսու՝ եկաց նա 'ի կայս իւ-
րում. որում օրինակն թէ 'ի թողուլ զմեզ 'որյ կու-
սին և 'ի հեռանալ՝ եթէ գոչեսցուք առ նա՝ զկայ
անու 'ի լսել։ Նշանակ է այն՝ զի սոփ (՚ի Դ. Թագ.
Ի. 11.) թէ յաղօթել եղեկիայ և 'ի խնդրել զա-
ռողջութիւն յետս դարձաւ արեգակն. որում ցուցա-
նի՝ թէ 'ի հիւանդանալ մեր հոգւով մերձ 'ի մահ՝
որում մեկնի 'ի մեզ իմանալի արեգակն Մարիամ,
եթէ աղաչեսցուք զնա՝ յետս դառնայ, և առող-
ջացուցանէ զմեզ։ Նշանակ է այն՝ զի սոփ յաւետա-
րանի, (Ղուկ. Ի. 44.) թէ 'ի խառնել հրեից զոր-
դին ոյ՝ ծածկեաց արև զերեսս իւր. որում ցուցա-
նի՝ թէ 'ի մեղանչել մարդոյ և 'ի վերստին 'ի խաչ
հանել զորդին ոյ՝ ծածկէ որ կոյսն զերեսս իւր,
զի մի տեսանել զայնպիսի անողորմութիւն մարդոյ՝
լքցէ զնա խոպան, և կիմ պատուհասեսցէ չարաչար։
Օրհն է այն՝ զի 'ի գիշերի յարութեան Քի Թարգման-
չաց ոմանց՝ կանխեաց արեգակն 'ի ծագել. Քր ո-
րում սոփ. *փառք քեզ Քր առաւօտն. (Ղուկ. Ի. 1.)
Քս 'ի փարփառել առաւօտու, կիմ 'ի յոյժ վաղ ծա-
գել. որում ցուցանի՝ թէ 'ի հանել 'որյ կուսին յա-
րուցանել զոք՝ կանխէ Քր զժամն, և գայ 'ի գերեզ-
մանն նր. Քս թէ փութով հասանէ 'ի յարուցանել
զնա 'ի հոգևոր մահուանէ։ Որ նմանութիւն և
բերից՝ յամենայնի գերազանց փայլէ խնամք սրբոյ
կուսին, և յոյժ սքանչելի ցուցանի, և 'ի վեր
երևի քան զամենայն։ Վայ որդ բառ ասելոյ և բառ
խանդաղատելոյ ուրուքն ուխտաւորի 'որյ կուսին՝
ասացից և ես Քր նմ.* եթէ ձանձրացցիս 'ի բանից
,, ասողի իմոց մայր 'որ, ես ոչ ձանձրացայց 'ի մեծա-
,, ցուցանելոյ զխնամս քո. եթէ տաղտկացեալ մեկ-
,, նեսցիս յինէն, ես ոչ դադարեցայց 'ի գովելոյ

առ

,, առ քեզ. եթէ լքցես զիս և թողցես, ես ոչ
,, լքայց յաղաղակելոյ առ քեզ. եւթէ՝ ի տուա-
,, սիրել իմում՝ ի յետին Ճշմարտութեանն ծած-
,, կեացես զերեսս քո յինէն, դողմամբ որդւոյ
,, քո՝ ի խաչէն պաղատեցայց առ քեզ: Նա ասէ-
,, ունիմ՝ թէ ոչ մերժիմ. զի ում որ կարդացեալ
,, իցէ առ քեզ յինչ և իցէ վիշտս՝ և չիցէ տե-
,, սեալ զինուամն դԹուԹեան քո. ում որ դիմեալ
,, իցէ առ քեզ յանձկուԹիւ, և՝ ի դառնուԹիւ իւ-
,, րում և՝ ի տխրուԹիւ, և չիցէ առ՝ ի քէն միսիԹար-
,, եալ. ում որ բողոքեալ իցէ յատեան խնամոյ քոյ,
,, և չիցէ ընկալեալ առատաձիռ զողորմուԹիւն առ՝ ի
,, քէն. ում որ հասեալ՝ ի յետին կէտ յուսա-
,, հատուԹիւն՝ յապաւինիլն առ քեզ՝ չիցէ գտեալ
,, զաղատուԹիւն փրկուԹեան ‖ . Նա արդարև ո՛
կարէ Թոփել՝ Թէ յորքանս եղեալ՝ ոք կոյսն զաքան-
չելիս խնամոյ իւրոյ. զորքան մեղաւորս էած յա-
պաշխարուԹիւն կենաց. զորքան խոստացեալս ա-
բեօք կախղացեալ ընդ հօր. զորքան վտանգեալն՝ ի փոր-
ձուԹիս ծանուննս զերծեալ. զորքան ընկղմեալս՝ ի ջուրս
ջուր սոլորուԹիս՝ ի վեր հառ. զորքան ըմբռնեալն
՝ի ձեռս դիւացն ազատեալ. զորքան պաշարեալս
յամօԹ անհնարին քօղով նմին սփոփեալ. զորքան
ցաւագարս փոքրու նմին ապաքինեալ. զորքան գերիս
՝ի կապանաց արձակեալ. զորքան նաւակոծեալս
՝ի խորոց ՚ևհան. զորքան առ՝ ի մահ վիրաւորեալս
յառողջուԹի պատուպարեալ. զորքան բազում՝ ի
ձեռաց աւազակաց փրկեալ. զորքան ոգիս յանհա-
մար վտանգից աղբեալ: Ա՛ի այսոցիկ զպատմու-
Թիս զանազան մասամբ կարես ընԹեռնուլ՝ ի
գիրս հրաշից նր: Ա՛ռաւել՝ ջ զայմ խնամք ողոր-
մուԹ՝ ոլոյ կուսին սքանչելի երևիլ յայսմ՝ զի զտա-

բամբռժեալս յերեսացն ամենայն, և զի՛ թող լքեալս յու-
սահատութիւն ինն՝ ի խոստովանահարց և՛ ի քարող-
ջոյ՝ յանկանիլ նոքա յոտս ողորմութիւնն՝ կանգնել
և առնու՛ ի կիրկս։ Յուդիթ գլխատ երթեալ հնձո-
ղաց յանդիման թոյոսի՝ժողովէր՝ ի գիրկս իւր գհատ-
սըն գայնոսիկ՝ զորս հնձողքն լքանէին. (Հուդիթ.
ժե. 3. 7. և 17։) Յուդիթ և օրինակ սրբոյ կուսին.
հնձողքն նշանակեն զքարոզիչս և զխոստովանա-
հարս. լքեալ հատիքն ցուցանեն զայնոսիկ մեղա-
ւորս, յորոց յուսահատեալ են խոստովանահարք
և քարոզիչք, ևս և ինձ, (ըստ մեղ խօսելոյ.) և
լքեալ են գնա. անդն թոյոսի նշանակէ զեկեղեցի
քրիստոսի։ Որդ շրջի՝ որ կոյտն՝ ի մէջ եկեղեցւոյ,
գտանել առաւելապէս զայնոսիկ մեղաւորս. զսոսա
խնդրէ. և զայնոսիկ ժողովէ. և՛ ի գտանելն ու-
րախանայ։ Այլ ոչ ուժգին արժան է յուսահատիլ
վասն մեղաց իւրոց Թէոփետաւ լքեալ էր յայրենեաց և
մերձեցեալ՝ ի դրունս դժոխոց. ոչ ասէ թեւնաթ-
դոս. *եթէ կոյտ փրկուէ քո պակասեսցի՝ ընդ
,, և ողորմութիւն որդ կուսին ոչ սպառի. ապրդ առնէ
,, նա՝ զի՛ յուսահատիցդ յուսացիս՝ ի նա՝ և մեր-
,, ձեսցիս առ նա. եթէ մերձեսցիս՝ ընկալցի զգ-
,, քեզ, և ոչ մերժեսցիս։

Յօդուած. ե.

Ընդհանուր.

ա. Պօղոս առաքեալ տեսեալ զորդիս մարդկան՝ ի խնդիր օգնականութեան անձանց, յորդորէ զամե-
նեսեան հանդերձ իւրեւ՝ մատչիլ առ աթոռ կոյսն, և
նովաւ գտանել զնոյն. *մատիցուք ասէ այսուհե-
,, տև հնարիկուք առաջի ամենայն շնորհայ նորա. զի
,, ընկա-

,, ընկալցուք զողորմութիւն. և գտցուք շնորհս ՚ի
,, դէպ ժամն օգնականութիւն։ (Եբր. Դ. 16։) Արդ
զաբ կոյսն աթոռ շնորհայ ըստ երից. մի՝ զի շնորհօք
է յօրինեալ և լի շնորհօք. երկրդ՝ զի ՚ի նմանէ զե-
ղուն շնորհք օգնականութե. երրդ՝ զի նովաւ շնորհէ
մեզ յաճ դնամ քարիս, ևս և զթողութիւն մեղայ։
Յայս աթոռ բազմեցաւ որդին այ՝ իբրև *նմա
,, նուէր առաւել ականց յաստղիսոյ և սարդիոնի։
(յայտ. Դ. 3.) ուր յաստղիսն որ է կանաչագոյն՝
հայի յաճծութիւնն. և սարդիոնն որ է կարմրագոյն՝
հայի ՚ի մարդկութիւն. յորում երևեցաւ կարմրա-
գեալ երբ ՚ի ձորձի. ըստ որում հարցին հրեշտակք.
*վա՞ր է կարմիր են ձորձք քո։ (Եսայ. կգ. 2։)
Ե ուրջ զայսու աթոռով ետես յովհաննէս զաղեղն,
այ զծխածան, որ է աղեղն առանց լարի և նետի.
զի իշխանութիւն նր ոչ է լարեալ ՚ի հարկանել, այլ
՚ի դեալ և յօդնել։ Այս աթոռ հաստատէ է յո-
ղորմուն և յիրաւունս, յողորմութիւն ՚ի դեալ, և
յիրաւունս ՚ի փրկել. (սաղ. ղէ. 2։) Օ այս աթոռ
պատրաստեաց ՚ար յերկինս. (սաղ. Ճ՛ք. 19.) իբր
զի այնպէ ձևացոյց՝ զի միշտ իցէ յերկինս՝ եթէ կեն-
ցաղավարութէ, և եթէ սրբութէ։ Յայսմ ա-
թոռոյ՝ (տես գրի ՚ի յայտ. Դ. 5.) ելանեն ֆայլաա-
նոնտ լուսաւորուե ՚ի միտս. յայնտ յորդորանաց առ
՚ի բարին՚ի կամս. և որոմոնտ սպառնալեաց ընդեմ
ախտից և դիմաց։ Ընդ ահա այս աթոռ է՝ յոր
միայն կարեմք եւտքն դնել զյոյս մեր առ՚ի դտանել
ըզ օգնականութի ՚ի կեանս յայս՝ որ է դեպ ժամ.
զի յետ որդւոյն այ՝ սա միայն կարէ տիրապէ օգնա-
կան լինիլ մեզ առ ՚ի գործել զբարին, և հասա-
նել ՚ի փրկուն յաւիտենական։

Վ՚ջ սակ անսեմոս. * յետ որդւոյ քո ո՛ կարասցէ

,, օգնական լինիլ մեզ՝ եթէ ոչ դու միայն ‖. Արդ եթէ դադարէր 'ի մէնջ օգնականութիւն սրբոյ կուսին՝ չէր մեզ հնարք հասանելոյ 'ի փրկութիւն. զայս խորհելով յովհաննու ոսկեբերանին ասէր. * տառապեալ
,, և տագնապեալ՝ եթէ չէր հասու լեալ նպաստից
,, օգնականութեան մարիամու. զի մեք չէաք փրկուելոց ‖
Դուռն երկնից է քո. եթէ ոչ օգնեսցէ մեզ կոյսն և բացցէ՝ ոչ կարեմք մտանել. դուռն է և սիրտ սրբոյ կուսին, զոր եհերձ և եբաց սուր ցաւոց. և ոչ ևս փակի ընդդէմ մեր յօգնել մեզ: Դուռն է և նա ինքն մեզ կոյսն՝ ոչ նեղ և անձուկ, այլ ընդարձակ. քզի ընդարձակ է ողորմութեան գթոյն և սրտի նր: Այս դուռն համեմատութբ քն ասի և պատուհան երկնից. որպ ոմն ասէ մեկնիչն, * եթէ փակեալ մես-
,, ցուք զդուռն, յօգնական լինիլ սրբոյ կուսին՝ բա-
,, ցեալ գտցուք զպատուհանն ‖. եթէ փեսայն եւս փակել զդուռն ընդդէմ յիմար կուսանաց, բացեալ լինի պատուհանն. և արդարև բացեալ լինէր՝ եթէ յետ ձայնելոյ նց՝ տր տր, ապաւինէին յօգնութիւն կուսին ասելով՝ տիրուհի տիրուհի: Այս պատուհան է՝ ընդ որ ծագեցաւ ած յս. և ընդ այս ծագէ հանապազ զլոյս և զնպաստ իւր: Յետ կորնչելոյ ջի հեղեղաւ ջուրց՝ եհաս մեզ դառնալ և մտանել ընդ այս պատուհան 'ի տապան փրկութեան ունելով տերև ձիթենւոյ օգնականութեան նր 'ի բերանս մեր, զի 'ի կոչել մեզ բերանով զօգնութիւն նր: Եւ զր մկրտութիւն լինի մեզ մտանել յեկեղեցի, սոյնպէս և օգնութիւն սրբոյ կուսին յարքայութիւն երկնից: Որպէս պօղոս. (ա. կոր. ժ. 2.) թէ ինչպէս մկրտեցան յամպն և 'ի ծովն. ընդէր և ոչ 'ի սիւնն. զի չէ յարմար 'ի մկրտել. (թէպէտ հրեղէն գոլով կարէ օրինակ բերել մկրտութեան հրոյ, զի սիրոյ.) իսկ ընդ խորհրդոյն սիւնն նշանակէ զքս ,

որ առաջնորդէ յերկինս ըստ օրինակի այնր սեան. բայց պարտ է օգնական ունել զամին, այսինքն զնր կոյսն, և զծով ընտրհաց նորին. և օգնականու-
թիւն նր իբր միրտուիթէ մտանել ՚ի ներքս։ ՚Ալաև զի ինքն է լայնատարած ծով բարուիթե. որոյ իբր
էզր է օգնականուն նր. յոր իբր ՚ի նաւահանգիստ կարեմք խարսխել զյոյս մեր յերեկոյի՝ ՚ի նեղու-
թիե. ոմն գրէէ զառաքելոյ, թէ * իբրև երեկոյ ,, եղև՝ լինի ՚ի ծովեզրն ‖. ՚ի յէզր օգնականուիթե նր. (յովհ. ձ. 16։) ՚Ալաւեմք ՚ի ծովու Ցիս յար-
քայուիթի երկնից՝ ունելով մեզ ուղեցոյց զանշարժ աստղն վէքս. բայց բնդմ անպատմ բնդմ ինչ արդեւ
լինին ուղղելոյ ՚ի նա. եթէ՝ թե կոյսն օգնական լիցի մեզ, և մագնիսիճ սիրոյ իւրոյ օծցէ զսիրտս մեր, նր
օծուիթեն ուղղիմք հանգոյն կողմնացուցի ՚ի գնացս մեր. մնենդ թէ նա ինքն լինի մեզ միանգամայն և
կողմնացոյց և աստղ անմոլար գնալոյ։ ՚Այս և ըստ գրելոյ մեր այժմ՝ նաւ բարեյաջող ՚ի դիմել յար-
քայուիթիւն երկնից։ Վերտինանատոս մագեղլեան ունէր նաւ մի, յորոյ վէր գրէէ կայր. * անմահն ՚ի նա ,, ւաբեկուիթէ ‖. և անուն նաւուն. * յաղթութիե ‖։ ՚Այսու նաւով չորեցաւ փերտինանատոս ՚ի վէր ծովու զամս երիս առնոյ վտանգաւորելոյ, ուր այլ բնդմ նաւք խորտակեցան, և ընկղմեցան։ Երաշալի իմն նաւ
է նր կոյսն, յորոյ վէր գրեալ կայ՝ * անմահն ՚ի նա ,, ւաբեկուիթէ ‖, եթէ յինքեան և եթէ ՚ի ծա-
ռայս իւր. յինքեան ոչ երբէք նաւաբեկեցաւ՝ ոչ ՚ի սկզբնական մեղաց, ոչ ՚ի մահացուաց, և ոչ ՚ի
ներելեաց. ՚ի ծառայս իւր հայելով՝ ոչ թողու զնա նաւաբեկիլ, այլ պահէ առանց նաւաբեկուիթե
հոգւոյ, և խաղաղուիթէ հաստուցանէ ՚ի կեանսն յաւիտենականս։ Յաղթուիթի է անուն այր նա

ՀՈՒ.

ւոս. եթէ ի նմ եմք՝ ամ ալեաց փորձուեց յաղ-
թեմք։ Այլ զայս միայն կասի ի մէնջ՝ զի մի ա՛ւդ՝
այլ նմ ընծայեսցուք զյաղթուին։ Նեղլորդւոցն
էլի ի սխատալ, դե բորա կին մարդ արէ ասաց ցքա-
րակ ելանել ի մարտ. և նա ասէ. * եթէ երթիցես ընդ
,, իս՝ երթայց. և եթէ ոչ երթիցես ընդ իս՝ ոչ երթայց...
,, և ասէ ցնա դե բորա. երթալով երթայց ընդ քեզ. բայց
,, գիտասջիր՝ զի ոչ քո լիցի քաջութիւն ի ճանապարհին՝
,, զոր երթիցես. քանզի ի ձեռն կնոջ մատնեսցէ Տէր
,, զսիսարա։. (դատ. դ. 8։) Այ՛սր ոյ՝ քո է յաղ-
թուԹիւն և քո լիցի քաջութիւն, միայն եկ ընդ մեզ. զի
քեզ յաղթեալ՝ քեզ դատուք զկեանս։ Լսեարդ՝ ըստ
յորդորելոյ սրբոյն բեռնարդոսի՝ որովհետև զոյս-
պիսի օգնական և առաջնորդ ունիմք՝ մի հե՛զ-
դասցուք դիմել առ նա յամեհայնի. * եթէ
,, ասէ անկցիս ի փորձութիւն, եթէ տրտմիս, եթէ
,, խռովիս, եթէ տարակուսիս, հայեաց ի մարիամ,
,, կարդա զմարիամ։. *ի հետևիլդ նմ՝ ոչ զարտու-
,, ղիս. ի պաշտպանիլդ առ նա՝ ոչ յուսահատիս. ի
,, խորհիլդ զնմանէ՝ ոչ մոլորիս. յունիլդ զնա՝ ոչ
,, կործանիս. ի պահպանել նմ ոչ երկիւղիս. յա-
,, ռաջնորդել նմ ոչ վաստակիս. յօժանդակել նմ՝
,, ի դուռն հասանես. և այսպէս դու ի քեզ փորձես,
,, թէ քանի՛ իրաւամբք կոչեցաւ անուն կուսին մա-
,, րիամ։ Լսեա անսեւմնա (Ճառ ը. ի վէր բանին ա-
ռաքելոյս)ասէ. * յունիլ նմ քեզ ոչ սասանիս. ի
,, պահպանել նորա ոչ երկնչիս. յուղել նորա
,, ոչ վհանդիս. ի դէմ ասիրել նորա ժամանես
,, (ուր գնալ ցանկաս)։ Այսոցիկ ապա ընդ մեծի
մեհնին. * ընթացսցուք ուրեմն զհետ քո ո՛վ մարի-
,, ամ ի հոտ իւղոց քոց. օգնեա՛ ընթացողացս.
,, ձգեա՛ զլքեալս, և ի վե՛ր առ. զի և մեք մտցուք

,, Ընդ քեզ յերկինս ||: Ի դիմել մեր առ նա՝ ոչ դարձուցանէ զերեսս. յապաւինել մեր առ նա՝ ոչ առնէ անտես. յաղաչել մեր զնա՝ ոչ արհամարհէ. 'ի յուսալ մեր 'ի նա՝ ոչ ամաչեցուցանէ: Ունկն է պատրաստ 'ի լսել և յօգնել. միանգամ միայն ունկն մատուցանելով հրեշտակին՝ փրկութե եղև աւետիս և մայր. և այժմ ճշմարիտ մայր գոլով՝ միշտ պատրաստ է ոչ իբր սոսկ արտաքին ունկն, այլ և իբրև մ̄յ ունկն՝ ոչ միայն 'ի լսել, այլ և 'ի զննել և յօգնել այնոցիկ, որք ուղիղ սրտիւ և աներկմիտ յուսով կարդան առ նա. * 'ի պատրաստութիւն սըր-
,, տից նոցա նայեցաւ ունկն քո||. (սաղ. Թ. 39.)
Համարձակիմ ես ասել, թէ հնար է առողջ ունկան չլսել՝ Սրբոյ կուսին անտես առնել 'ի լսել: Այո լսէ և օգնէ. լսէ օգնելով, և օգնէ լսելով, և ոչ երբեք պակասեցուցանէ զօգնութիւն իւր յայնցանէ որք կարդան առ նա. վ̄յ ասէ Ս̄րբն օգոստինոս զիւր զայն գերագոյն բան. * ով ամենօրհնեալ անուն մարի-
,, ամ, ով է որ կարդացէ առ քեզ, և ոչ (լուիցի և)
,, օգնեսցի 'ի քէն||: և բեռնարդոս զառաւելն խօսելով ասէ. * եթէ ոք 'ի նեղութե իւրում կարդաց-
,, եալ իցէ առ քեզ, և ոչ (լուեալ և) օգնեալ
,, առ 'ի քէն՝ լռեսցէ 'ի գովելոյ զքեզ||: Ո̆ սոյն ասէ և 'ի Է̄ ճառն վերափոխման կուսին. * լռեսցէ
,, զողորմութ̄ քումդ ով երանելդ կոյս՝ եթէ ոք 'ի
,, հարկաւոր պիտոյս իւրում կարդացեալ առ քեզ, և
,, գտցէ զինքն պակասեալ||:
Եւ սակայն 'ի կարդալ մեր առ նա՝ յոյս մեր մի իցէ մեռեալ. զորմէ գիտելի է, զի որ 'ի մեղս է և ոչ կամի դառնալ 'ի մեղաց՝ յոյս նր մեռեալ է և յանդգնական. իսկ որ 'ի մեղս է և ցանկայ դառնալ, յոյս նր ճշմարիտ է, բայց անկերպ. այլ որ 'ի

ընարհս դոլով յուսալ, յոյս նոր կենդանի է. ըստ որոյ
ասի (ա. պետ. ա. 3.) * Ծնաւ զմեզ վերստին ի
,, յոյսն կենդանի ։ Այսպիսի յոյս խնդրել յայնմ
որ կորդայ առ ոչ կոյան, կամ դնել յոյս ձիմա-
բիտ. զի ինքն է մայր այսպիսի յուսոյ. ըմ. (սի-
րաք. ին. 24.) * ես մայր գեղեցիկ ատրմանն
... և ոչ յուսոյ ։ Օ այս գիտելով երանուհի
կոյան սիրելինա՝ որ վառեալ էր ի սէր Հոգւոյն
սրբոյ՝ զոյս իւր բոլոր եդեալ էր ի տուրբ կոյան,
և ջանայր կենդանի պահել յինքեան զնոյն։
Ոխմեսցուք ապա և մեք այսպիսի յուսով առ նա
ըսյորդորելոյ բեզոյն. * զի ոչ լքանէ ասէ զյուսա-
,, ցեալսն առ ինքն ։ Յուցցուք նմի զկարօտութիւն
մեր, և մի վհատեսցուք. ընու նա զամ պետս մեր.
և յոր չեմք ձեռնհաս՝ խնդրեսցուք ի նմանէ. զի ըստ
առաքին. * զոր զօրութիւն մերով ոչ կարեմք, օգնու թ՝ ինձ
,, ածածկին ստանալ հաւատոյն ։ Օ այս ևս ա-
սեմ ըստ ասելոյ համօրէն վկայից թէ՝ ինձ կոյան ոչ մի-
այն ծառայողաց և յուսացողաց իւրոց ցուցանէ
զօգնութիւն իւր, այլև չարաց ևս, և անյուսից. զի
ոմն ածէ զարեգակն իւր ծագել՝ ի վերայ չարաց և բա-
րեաց, ոյնպէս և ինձ կոյան՝ որ արիւնէ զիւրում չարե-
գակն, (յայտ. ժբ. 1.) ծագէ զօգնութիւն իւր առ
բարիս և առ չարս ։ Այլ զի՞նչ ինձ ածելով զանձրև՝ ի
վերայ արդարոց և մեղաւորաց (մատ. է. 45.) զարե-
գարան ուրախացուցանէ, և զմեղաւորն ամաչե-
ցուցանելով առ ինքն կոչէ, ոյնպէս և ինձ կոյան
ցուցանելով զօգնութիւն իւր արդարոց և մեղաւո-
րաց, զարդարոն բարեգաւաչս առնէ՝ ի բարին, և
մեղաւորաց քաջալերս տայ. որով և յայտնի երևե-
ցուցանէ թէ աչք իւր հոգի են թէ՝ յարդարս և թէ՝
՝ի մեղաւորս, և վն ամենն հոգւոյ ։ Յորժամ կայր

Եթե կոյսն առ խաչին՝ զաչս իւր ծառայեցուցանէր՝ ի լսել ոչ միայն վ՚ա արդարոց, այլև վ՚ա մեղաւորաց՝ առ՝ ի արժանի առնել զնա փրկութեան։ Արդարև * աչք տեն՝ ի վե՛ր արդարոց ‖ . (սաղ. լէ. 16.) բայց աչք կուսին՝ ի վե՛ր արդարոց և մեղաւորաց. արդարոց՝՝ի վարձատրել և մեղաւորաց՝՝ի դարձուցանել. որով ոչ միայն արդարոց ասի տիրուհի. այլ և մեղաւորաց. ըստ արդարան ուրախանալով, և ըստ մեղաւորն զթալով, զի հայելով առնէ ոչ թէ մխիթարի. իսկ առ սոսա հայելով՝ ոչ թէ տխրի՝ և՝ ի գութ շարժի իբրև՝ ի վե՛ր որդւոյ կորուսեալ։ Այլ յիշի ուրեք յայտնի թէ եթե կոյսն յունկնէն առ իւր զորդին՝ կոչեցեալ էիցէ զնա՝ որդի կամ որդեակ. իսկ յորժամ կորոյս՝ ասաց ցնա. * որդեակ զինչ գործ գործեցեր ‖ . (ղուկ. բ. 48.) որով ցուցանի՝ թէ եթե կոյսն առաւել գթայ՝ ի վե՛ր կորուսեալին իբրև՝ ի վե՛ր որդւոյ՝ քան՝ ի վե՛ր ոչ կորուսեալին. և թէպետ կորուսեաւն կամ մեղաւորն ոչ ևս է որդի եղեալ կուսին, բայց գութ օգնականութեանն ընդ քեզի՝ ի վե՛ր նը՝ ոչ իբրև սոսկ՝ ի վե՛ր որդւոյ, այլ իբրև՝ ի վե՛ր կորուսեալ որդւոյ։ Եւ պարձէ սովաւ ցուցանի թէ յորժամ կորուսանեն մեղաւորք զքո՝ եթե կոյսն ձայնէ առ քո՝ որդեակ. զի՝ ի գութ շարժեսցէ զնա՝ ի վե՛ր նո՛ց, առ՝ ի փրկել զնա՝ ի թշնամանուէ և՝ ի գերութե՛ մեղաց. զի յայսմ է նը՛ մեծ օգնականութի, և յայսմ զօ՛ արձանայ նա, Յուսմայեցիք առաւել ախորժէին արձակել զգերի՝ քան՝ զարձրացուցանել զարժանաւորս։ Այնպէ և և՝ եթե կոյսն առաւել ախորժէ աղաւել զմեղաւորս՝ քան՝ փառաւորել զարդարս. զի առաւել պանծալի ցուցանի օգնականութի՛ նը՛ յազատելն զմեղաւորս՝ ի գերութե՛ մեղաց՝ քան՝ ի նպաստելն արդարոց. զի արդարք արժանի են այնմ, իսկ մեղաւորք օտար

են

էն յարժանաւորուէ . արդ մեծ է մարդոյ՝ անարժանից ցուցանել զօգնութի՝ քան արժանաւորաց . զի առիթն օգնելոյ այսպիսեաց՝ է արժանաւորութի նոցին . իսկ անարժանից՝ բարեսէր կամք օգնողին . վնյ առաւել փայլէ օգնուի՛ 'Տրյ կուսին յանարժանսն՝ քան յարժանաւորսն, 'ի հիւանդացեալս հոգւով՝ քան յառողջսն, 'ի վիրաւորեալսն մեղօք՝ քան յանվէրսն : 'Ի վիրաւորել մոյ 'ի զօրականաց մեծին աղեքսանդրի՝ եհան աղեքսանդր զփակեղն 'ի գլխոյ իւրմէ, և նովին պատեաց զվէրս նր : Այս գործ աղեքսանդրի առաւել մեծ փառկաւ փակեղ նր 'ի վր վիրաց վիրաւորեցելոյն՝ քզ 'ի վր գլխոյն աղեքսանդրի . զի 'ի գլուխ անդր պսակ էր զօրութե, իսկ 'ի վէրս զօրականի՝ պսակ գթութե : Այնպ և օգնականուի գթութե սրյ կուսին առաւել մեծ փարկանի, յորժ՚ պատէ նովաւ զվէրս մեղաւորաց և բժշկէ զնս, քզ յորժամ անօգնական

Թողու զնս :

Այլ որ զարմանալին է, 'ի վիրաւորել ես 'սրյ կուսին 'ի մեղաւորաց՝ փխկ մերժելոյ զնս՝ 'ի մեղաց նց երբեմն առիթ առեալ՝ գթայ 'ի վր նց, և զներգործութի իւրոյ օգնականութե առաւելեօք ցուցանէ 'ի նս : Յանցեաւ մովսէս 'ի հարկանել զվէմն յանապատի . (Թուոց . ի . 11 .) և վէմն 'ի յանցանաց անտի առիթ առեալ ետ ջուր առաւել քան որ եղև յառաջն . (Ելից . ժէ . 6 .) ըմ . * և ել ջուր ,, բազում || . (Թուոց . ի . 11) Այնպէս և 'ի վիրաւորել սրբոյ կուսին 'ի մեղաւորաց, պատճառա առնու երբեմն 'ի մեղաց նց՝ հոսել առ 'նս առատ զջուր գթութե իւրոյ : Ոչ թէ ոչ դարձցին մեղաւորք՝ սպասէ նց . և 'ի բողոքել երկնի և երկրի ջնջել զնս յերկրէ, ոչ զի մի և արդարք նմանեսցին նց, պատ-

ուէր

ոճիրե, * Թոյլ տուք երկոցունց աձել ‖. գուցե փոխոխեսցին մինչև ի ձմիս հնձոց. (մատ. ԺԳ. 30։) Ա՛պա թէ ոչ զգաստասցին՝ ոչ ևս օգնէ նոյ. և այնուհետև ոչ բուսանին ի նա խորհուրդք բարեաց. զի ներարամադրեալ չարութիւն նոյ արգելու և ոչ թողու։ Ա՛սե արիստոտէլ և պլինիոս՝ թէ * ուր ոսկի կղկղի՝ ոչ լինի անդ ծաղիկ (անուշահոտ) և ոչ ,, խոտ (պարարտ). զի ոսկին ձգէ բոլոր զաձողական ,, խոնաւութիւն տեղւոյն ‖. սոյնպէս է և յորս կղկղին մեղք։ Ո՛րանիք ևս՝ զի ըզ կոյսն թէպէտ և օգնէ ինայելոց ի մեղս և ննջելոց ի նոսին՝ ոչ զի զարթիչն, քայց որք ի քուն ևս լինին ի նմին չար ուրնակութեամբ՝ ոչինչ օգնէ նոցա. որպէս տեսանի ի յիմար կուսանսն, որք ի ննջել զատեին՝ ի քուն մտին, և յոգնականութենէ կուսին դուրկ մնացին։ Ա՛յսպիսեացս ոչ հասանէ օգնութիւն նէ՝ այլ յաւիտենական կորուստ նոցին. զի ոչ յոչ թողուլն զոք՝ գտանէ նա զիրկուն, սոյնպէս ի թողուլ նորա գնայ ի կորուստ. զի առակ է, * որում օգնական է ըզ կոյսն՝ փրկի. որում ոչ ,, օգնէ՝ կորնչի ‖. ըստ որոյ ասէ ըզն անսելմոս. * ոչ անկարելի է նոյ փրկիլ՝ յորոց կոյսն մարիամ ,, զաչս իւր ի բաց դարձուցանէ, սոյնպէս հարկ է նոյ ,, արդարանալ և փառաւորիլ առ որս հայեցեալ օգ,, նական լինին նոյ և բարեխօս ‖. զսոյն ասեն և այլ բազմ վիպք. մինդ ըզն բերանարդոս (ի Ճառն՝ առաջ քեցաւ ևն։) Ա՛ռարարդ հսուն կացեալ առ հիւանդին՝ եթէ հայեսցի ի նա, ցուցանէ՝ թէ հիւանդութիւն նէ չէ ի մահ՝ մինդ թէ ի հայեցուածոյ նէ դիւրաշնայ. իսկ եթէ դարձուսցէ զերեսս իւր ի նմանէ՝ նշան է մահու։ Սոյնպէս եթէ ըզ կոյսն հայեսցի ի մեղաւորն, գոյ յոյս փրկութե. իսկ եթէ դարձուսցէ

զե-

զերեսաիւր ՚ի մեղաւորէ իսպառ, չկայ յոյս։ Ապացի
իսպառ, զի եթէ առժամանակ մի թողուցու՝ դիմել
օգնէ. որով հնար լինի մեղաւորին դառնալ և կեն
դանանալ. Ասանձ հեղձեալ ՚ի մէջ իւղոյ՝ եթէ դէ
ղի յարևու՝ կենդանանայ. սոյնպէս և մարդ մեղա
ւոր հեղձեալ ՚ի յիւղ, այ ՚ի մեղս տկարութիւն ե.
թէ ընկալցի ՚ի նոր կուսէ զօգնուն, կենդանանայ։
Պարի՝ ՚ի գիրս արհատատելի ասացեալ՝ թէ գոյ աղ
բիւր մի ՚ի սիկիլիա * իբրև յորձանուտ՝ յո
,, րում եթէ ոք թանայցէ զթուչունս և զայլ
ընտաւորս նորոգ հեղձամուղձ եղեալս, (այսինքն
,, գկիսամեռս,) անդրէն կենդանանան ։ Սոյնպէս
և մեղաւորք ՚ի թաղեալինելն յօգնականութիւն նոր
կուսին, և ՚ի գտանելն զնա ինքն զնոր կոյսն՝ անդ
րէն կենդանանան. * որ գիտն գտանէ՝ գտանիցէ
,, գկեանս ։ (առակ. ը. 35.) ըստ որոյ կոչէ զնա
գամահակցին՝ * գանձ կենաց ։ (՚ի Հառն վերոյ.
կուսին.) գտեր զնոր կոյսն՝ գտեր ապա ըզ
կեանս. գտեր զծառն կենաց, գտեր անտարակոյս
և գկեանսն. ոչ որ գտանէ զշափիւղայ, գտանէ՝ նուի
գկարկեհան՝ որ համարեալ լինի գերագոյն քան
զայլ գոհարս, ևս և որ գտանէ զսատափ՝ գտանէ
զմարգարիտ. գիտ ուրեմն և դու զնոր կոյսն,
դի գտցես զմարգարիտն օգնականութեան նորա
՚ի բժշկութիւն հոգւոյ և ՚ի նորոգութիւն կե
նաց։ Հեղինակք ՚ի կարգի բժշկարար իրաց
դնեն զմարգարիտն, զի ե մաքրիչ վատթար հիւ
թոց, կազդուրիչ զօրութեան սրտի, և արգե
լիչ ապականութեան, և ե դէղ դողման սրտի.

որպես գրէ Հռուվէյոս։

Գտեր զնոր կոյսն, գտեր * զդեղն կենաց ։ զառաջ
ջարար մարգարիտն օգնականութենէ նր ՚ի մաքրիլ

յանդ-

յանցել մեղաց, ՚ի զօրանալ ընդէմ ներկայ փորձ
ձուլթեց, ՚ի զերծանիլ յասպատակ վտանգից, և յա-
զատ գտանիլ ՚ի դողմանէ սրտի՝ զոր ունիս վ՚ը կաս-
կածանաց յաւիտենական դնդպրտուե։ Այս իսկ
իբր օրինակ կուսին գոյացեալ ցուցաւ մարգարիտ
՚ի ծովէ. ուստի ասէ նարեկացին. * որոյ տեսչութ՚ն
,, այ նախագիծ (օրինակ) ՚ի ծովէ քարն պատուա-
,, կան հրաշեայլ և սպիտակ մարգարտին մաքուր
,, կերպարան գոյացեալ յուցաւ. քզի արդարև (ասէ)
,, դու ես ակն պատուական ՚ի յՅիս ծովէ ընտրու-
,, թե, որ զՅաճայեին տարար կերպարան։

Յօդուած. Ը։

Պաշտպան։

Ը. Այեսցուք ՚ի վերջոյ և ՚ի պաշտպանութ՚ն սրբոյ
կուսին, որով պահպանէ և ազատէ զապաւինեալս
իւր ՚ի չարէ։ Հրամայեաց Ած նոյի շինել տապան
առ ՚ի ապրեցուցանել զայնոսիկ որք մտանեն ՚ի նա։
(Ծննդ. Զ. 14։) Հրամայեաց զնոյն և որդւոյ
իւրում Նոր նոյի՝ ըստ որում Նոյ Թարգմանի
Հանգիստ և Հանգուցիչ, և նա շինեաց զ՚ըն զայս
տապան ՚ի փայտից տաշելոց և սրբելոց, այսինքն ՚ի
յովակիմայ և յանննայէ քառակուսի գործելոց չո-
րիւք առաքինութ՚ք։ Այս ըն գիրն՝ Թէ արար Նոյ ՚ի
տապանի ներքնատունս, և միջնատունս, և վերնա-
տունս. ուր գիտելի է, զի որք միանդամ յՅիեն ՚ի
կարգի ամուսնութ՚ն՝ յերիս վերածին. զի կամ
սոսկ կոյս են առանց ամուսնանալոյ, կամ ամուս-
նացեալ են և կոյս անորդի, կամ ամուսնացեալ
և ոչ կոյս։ Ամք սոսկ կոյս են՝ ՚ի ներքնատան
սրբոյ կուսին պաշտպանին. որք ամուսնացեալ
են

են և կոյս՝ 'ի վերնատան. այլ այս սակաւուց
եղև. և որք ամուսնացեալ են և ոչ կոյս՝ 'ի մէջ_
նատունս: Այլ կոյսն ոչ է 'ի համարի սց, զի է ա_
մուսնացեալ և կոյս և ծնող որդւոյ. վսյ ինքն ոչ
կարօտի պաշտպանութե, այլ կարգի 'ի պաշտպա_
նութի 'ի վր այլոց՝ իբր ծածկոյթ նց՝ որ 'ի մի կան_
գուն ասի բովանդակեալ (ծնն. ի. 16.) իբր լրումն
ամի և յամի: Երկայնութի հաւատոյ այսր տապանի
է երեքհարիւր կանգուն, ոք լի յամ հաւատալիս.
Լայնութի յուսոյն յիսուն՝ որ բովանդակէ զչափ յու_
սոյ. բարձրութի սիրոյն երեսուն կանգուն՝ ամենե_
լին կատարեալ: Պատուհան տեսական կենաց այսր
տապանի է երկինս ուղղեալ. իսկ դուռն գործնա_
կան կենաց յերկրի կատարեալ: Նմուտ յայս տա_
պան բանն ած, ես և հարսն նր, ոք իմաստութիւն.
(իմաստ. է. 2.) և ծնունդք նր՝ ոք շնորհք և պար_
գևք. և հարսունք նց, ոք առաքինութիք: 'Ի հասա_
նել ջրհեղեղաց ածային վրէժխնդրութե՝ սա միայն
եղև և է միշտ ապաւէն ազատութե ազգի մարդ_
կան՝ որք ապաստան լինին 'ի սա: Ըստ որոյ ասէ առ_
նա Նարեկացին. *եղեր մեր օգնական և տուն ա_
,, պաւինի յուղխից հեղեղաց յաւուր անձկութե‖:
Ըստ այսմ տեսութե համեմատի որք կոյսն և 'ի լեա_
ռն բարձր՝ յոր կարեմք զերծանիլ յերեսաց ո՛ և
իցէ փորձանաց. ըստ որում ասացին հրեշտակքն ցՂ_
ովտ. *ապրեցո զանձն քո . . . զերծիր 'ի լեառն‖.
(ծնն. ժթ . 19. 30:) Համեմատի և 'ի քաղաք ա_
պաստանի. ըստ որում յայս նմանութի վերաբնու_
զնա քն փոխաբերութե 'ի գիրս երգոց երգոյն.
(է. 4.) և զհնարս պաշտպանութե նր այլովք իմն փո_
խաբերութե 'ի վարսս այլաբանելով՝ ասէ. *վարսք
,, քո իբրև զերամակս այծից՝ որք երևեցան 'ի գա_
,, ղաա-

